ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՍՈՒՐԲ ԲԱԲԱՍԵԱՆ

ՍՐԲՈՅ ԲԱՐՍԱՂԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐԻՈՒ ԿԱՊԱԴՈՎԿԱՑԻՈՅ

ԾԸՌՈՒՐ

ՎԱՍՆ ՎԻՃՕՐԵԱՑ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆՆ

A/387

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄՍ 1830 ՌՄՀԹ

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱՇԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Լ՝թէ երախտահատոյց առ գրաւորական բարերարն պարտ է լինել, անշուշտ շնորհակալութիւն մեծ այն իցէ՝ արձանագրութեամբ տառիցն առ ամենասեան հանել զհռչակ նոցա և զօգուտ։ Այսն որոյ և մեր 'ի նախնեացն տպագրութեան զգոյն կէտ եդեալ, զառաւել պիտանիսն փութամբ վաղագոյն 'ի լոյս ընծայեցուցանել. որպէս և յառաջիկայդ զերանելոյն Յարսղն Կեսարեայ Գամրաց զվեցօրեայ արարչութեան Ճառսն՝ որ 'ի նորայսն զառաջին տեղին ունին. և թարգմանեալք են անբիկբայ յերանաշնորհ նախնեացն մերոց հինգերորդի դարուն, զի զժամանակին ունին զոՀ, և Շ իրակունին և այլք 'ի հնոցն բազումք 'ի Ճառից աստի գրեթէ նովին իսկ բառիւքն օրինակեն։

Այաղու և ձեռնարկեալ էր մեր 'ի տիպ սորա, եթէ հին և ստոյգ օրինակի չէր կալեալ ակն. բայց արդ 'ի դէրև եղեալ լաւ համարեցաք միով որ 'ի ձեռին շատանալ. թէպէտ և ոչ հին և ոչ ընտիր գրչութիւն, այլ վերպագիր բազում ուրեք և յանհրամտութենէ աղաւաղեալ։ Զորոյ թէպէտ ըստ կարի սրբեցաք 'ի բաց զսխալանսն զգուշութեամբ՝ ըստ յոյն բնագրին և մանաւանդ ըստ կարգի բանիցն պահան-

ջելոյ, սակայն մեաց տակաւին ոչ սակաւ մթութիւն և երկբայութիւն ստ և անդ։ Ապա զի այնպիսի ազատօրէն համարձակութեամբ ճախր առեալ սլա-նայ հայ թարգմանիչս, մինչ զի յոլով ուրեք անմարթ էր նշմարել զնա ընդ հետս շաւղաց բնագրին, և բա-նիցն թէ ոչ ինչ լուծումն հնորհէր։ Դաղմապիսի երկբայելեացն, զոր ոչ այնչափ 'ի կատարեալ հաւա-նութենէ մտաց՝ քան թէ առ երկիւղածութեան առ նախնիսն թողաք որպէս էին, օրինակ լինցի անսովոր եղանակ բային ԻՑԷՐ որ յԷջն 28. որում պատճառ խոշնմտութեան և չփոխելոյ այն եղև, զի և յայլ չորս և հինգ տեղիս գտաւ նմանօրինակս ինչ ասացեալ բուն նախնի լեզուագիտաց. և ոչ անհաւանելի ինչ թուի այժմս քերականացն։

Յիշեցուցանել և հարկ է յաղագս բարսեղեան բնախօսութեանս, թէ որպէս այլոց նախնի վարդա-պետացն՝ նոյնպէս և նմա ինչ ինչ այլազգ թուեցեալ էր 'ի ժամանակին 'ի զգալեացս գիտութենէ և 'ի նո-ցին պատճառաց, որք ժամանակաւ և յետնոցն ջա-նիւ ուղղեցան. վասն զի ոչ իբրև զուղիղ հաւատոց և վարուց օրէնս անշարժելիք էն և այնոքիկ, և ինքնին Տէր յերեսաց Խմաստնոյն յայտ առնէ՝ հետաքրքրու-թեան մարդոյն տուեալ զայն 'ի զբաղումն։ Ողջա-մտացն այն է փափաքելի, մի 'ի սակաւ բիծն նայել, այլ 'ի բազում լուսաւոր Աշխարհութեանցն զուարա-ճանալ և օգտել, մանաւանդ 'ի զեղուլ զիղձս սրտիցն յարարածոյն նկատողութենէ յօրհնել զՀաստիչն ա-մենայնի և զնախախնամողն Հայր, որ է օրհնեալ յա-վիտեանս։

ՀԱՆՈՒ

ՍՐԲՈՅ ԲԱՐՍԳԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐՈՅ ԿԱՊԱԴՈՎԿԱՑՒՈՅ

ՅԱՂԱԳՍ ՎԵՑՕՐԵԱՅ ԱՒՈՒՐՑ

ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

ՀԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ

Լ ՈՒԱՌ 'ի գիր՝ զի ասէ, «Խակզբանէ արար Ա՛ծ զերկին և զերկիր»։ Հանդի վայելուչ է և գեղեցիկ սկիզբն, այս որ եղև Հաստատութեան աշխարհիս լինելով, այնու՝ որ առնի պատմել զմանէ։ Հանդի զնա՛ռդ ոչ ցանկալի է երևելեացն սկիզբս այս, զոր եդ 'ի վերայ նոցա կանխաւ բանիւն իւրով զնա։ Օ 'ի զարարածս երկնի և երկրի կարգելով և պատմելով առ ընակիչս աշխարհի, թէ ո՛չ ինքն յանձնէ գտաւ այնպէս, որպէս ոմանք վրիպեցին ասել, այլ պատճառք լինելոյ սորա Ա՛ծ է։

Բ.ԷԴ որպիսի՛ ունկն բաւական իցէ արժանի լինելով լսել զմեծապատում Ճառն ընթերցուածոց՝ զոր ընթերցան, և որպիսի՛ միտք ժամանեսցէն արժանաւոր իրաք ընդ առաջ ելանել այնց ընթերցուածոց զոր լսելոց եմք։ Բայց եթէ ոք սրբեալք և զգաստացեալք իցեն 'ի կարեաց մարմնաւորաց, և չիցեն լեալք 'ի հոգս և 'ի զբօսանս մարդկեղէնս։ Յորժամ ամենևին յա՛մ ժամ 'ի վաստակս բարեաց և հաճոյս ա-

ռաքինութեաց գումն եդեալ մարմնոյցին, և յամ կողմանց դէտ յանձինն 'ի քնին 'լինելոյն, զի միտս արժանաւորս այ առցէ 'ի վերայ բանիցն՝ որ ասացին։ Եւ յառաջ քան զհարցանել փութով վասն պատգամացն և քննել զնուազագոյն զբարբառսն, տեսցէ նախ՝ ո՞վ իցէ որ խօսեցաւն զնոսա ընդ մեզ[2]։ Զի՞ պէտ և իցէ՝ 'ի խորս գիտութեան օրինակագրին, որպէս և վայել իցէ, չկարիցեմք հասանել վասն տկարութեան մնաց մերոց, այլ ընդ առաւելութեան ասողի բանիցն պարտ և պատշաճ է նայել փութով. որպէս զի ինքնակամ կամաւք կարասցուք միաբանել ընդ բանսն՝[3] որ պատմեցին։

Ա՝ոմանս էր օրինադիրն պատգամացն՝ զոր լուաքն. այն՝ վասն յորոյ վերայ եղև վկայութիւն յարարչէն, թէ հաճոյ և սիրելի է այ. յորում անդստին 'ի ստին դեաց ժամանակին այնպէս խնամարկեաց դուստրն Փարաւոնի արքային, զի որդեգիրս առցէ, որդի և ժառանգ գրեսցէ. որում մնունդ 'ի սպասս մեծի թագաւորութեանն առնէր. զնմաստունս եգիպտացւոց փութայր ածել վարդապետս մանկանն, և ուսուցանելով զնմ իմաստութիւնս եգիպտացւոց։ Որ զմեծ պատիւ զսպասս թագաւորութեան՝ մեծութիւ իւրով մնացն անարգէր, և առ 'ի խոնարհութեան որդւոց իւրոց ազգին փութայր հասանել. և այնպէս լաւ և պատշաճ համարէր՝ 'ի նեղութեան ընդ այ ժողովրդեանն լինել, և ոչ առ ժամանակ մի թաթաւել ընդ մեզն։ Որ զպարտս և պատշաճս այ սիրոյն՝ ինքնին 'ի մնաց գտանէր. որ յառաջ քան զառնուն հրաման լինել իշխանն որդւոց ազգին իւրոյ, յայտ յանդիման երևէր՝ թէ ինչս ստեղեաց և չարատեաց է. որ վասն պահանջելոյ վրիժուցն չարագործացն՝[4] յասահնման մանհու հասանէր։ Որում վասն բարի գործոցն զոր գործեր հասանէր։ Որում վասն բարի գործոցն զոր գործեր ոչ առ չարագործսն, զոր եղև փախուստն 'ի նոցեր ոչ առ չարագործսն, զոր եղև փախուստն 'ի նոցանէ, իբրև զայր մի կազմ և պատրաստական զամ ցանէ, իբրև զայր մի կազմ և պատրաստական զամ ցանէ զաղմուկ և զամբոխս եգիպտացւոցն թողոյր և գնայր, զաղմուկ և զամբոխս եգիպտացւոցն թողոյր և գնայր, և յերկիրս քուշացւոց[5] ՃԵսպեալ հասանէր, զի անդ

1 Յօրինակին ԽԿԿԻ։
2 Յօրինակին ՀԷ։
3 Յօր. ԸՍՏ ԲԱՆՍՆ։
4 Յօր. ԼՐԱԳՈՐԾԷՑՆ։
5 Յօր. ԳՈՒՇԱՅՈՅՑ։ Յայնն յեՐՈՒՇԱԼԷ։

երթիցէ լոյսն յապահով, և անհոգս եղելութեան զերծ ծեալ ապրեր 'ի բազմապատիր զբօսանաց՝ որ լինէին նմա արդէն և խտիան. որոյ 'ի կատարել քառասնամեայ [1] ժամանակին՝ եղև մշանջենաւորութիւն 'ի տեսիլ մեծամեծ և զարմանալի իրացն։ Որ երբև էհաս [2] 'ի թիւ ութսունամեայ ժամանակի՝ կենդանւոյն արժանի եղև տեսանել զնա, որպէս մարթիցէ տեսանել մարդոյ զանելուոյթ մեծութեան. և թերևս ըստ այմմ հաւասարութեան՝ որպէս երևի հրեշտակացն, նոյնպէս ըստ նմին նմանութեան և նմա երևեր, որպէս և ոչ երբեք ումեք 'ի մարդկանէ երևեցաւ այնպէս. որում [3] անդատին իսկ յայ վկայութենէն լինիմք տեղեկացեալք, ըստ այմմ որ ասէ, թէ՝ լինիցի մարգարէութիւն 'ի մէջ ձեր, ես ՝ի՛ր տեսլեամբ յայտնիմ ձեզ և երազօք խօսիմ. և ոչ այդպէս՝ որպէս ծառայն իմ Մովսէս. այլ նա յամ 'ի տան իմում հաւատարիմ է. բերան 'ի բերան խօսիմ ընդ նմա, յայտ յանդիման ՝Հշմարիտ տեսլեամբ և ոչ նմանութիւնք. որ և զիարամն ետես ՝ի՛ն։ Արդ սա է այն, որ արժանի եղև դէմ յանդիման ընդ ՝ի՛ն խօսել, և 'ի պատգամս բանիցն՝ զոր ընկալաւ յայ, խօսեցաւ ընդ մեզ։

Առիցուք այսուհետև ՝Հշմարիտ պատգամացն՝ որ պատմեցան. յորս ոչ գոն պաՀանջանք մարդկեղէն խնամատութեան, այլ բանք հաստատունք են վարդապետութեան ՝Հշմարիտ Հոգւոյն, որոց ոչ գործեն կատարումն 'ի լսողն արտաքին զարդն [4] իւրեանց, այլ հնարքն՝ որ ուսանին և առնեն զնոսա։ Ա՛ երասցուք այսուհետև բանիւք անդրէն 'ի սկիզբն՝ արարածոց։

«Լոկզբանէ արար ՝ե՛ն զերկինս և զերկիր»։ Հիա՛ նամ զարմանամ մտօք, և ոչ գիտեմ՝ ուստի սարտ և պատշաՀ իցէ առնել նախ սկիզբն Հառիս. եթէ 'ի յանդիմանութենէ [5] ընդունայնութեան արտաքնոցն, եթէ 'ի պատմութենէն փառաւորեալ իրաց ՝Հշմարտութեան մերոյ՝ որ կան և ունին հաստատութիւն զտեղն։ 'Ի բազում իրս փառաւորեալս բնութեան՝ աշխա-

1 Յօր. 'ի ՝Եբրայ. փառանուէրս։
2 Յօր. էառ։
3 Յօր. յորում։
4 Յօր. զէարդն։
5 Յօր. յանդիմանութենէ ընդունայնութենէ։

տեցան իմաստունքն Յունաց, և ոչ մի ինչ ՝ի բանից նոցա կալ ՝ի հաստատութեան անչարժ կարէ. քանզի երկրորդ իմաստուն որ կայր Յունաց, առաջին իմաստնոյն բանին քակիչ և լուծիչ լիներ։ Ա.յլ ես գործ աւելի համարիմ՝ կալ և դնել ընդ նոսա յանդիմանութիւն. քանզի բաւական են ինքեանք իւրեանց հերձուածովք տալ և առնուլ զսուտ և զմտոտի և զմտապարծ բանս ընդ միմեանս, որք զնոր ոչ կամեցան գիտել և ճանաչել։ Բ.անզի պարտ և պատշաՃ էր, նովին գիտութեամբն՝ զոր ունէին, ընտրել և գիտել՝ թէ ՝ուծ է պատՃառ ՝ամի, որ կանգնեցան կացին հրամանաւ նորա, ինքնակամ կամաք։

Որպէս երևի ՝ի սկզբանէ մինչև ՝ի կատարումն, զմոլորութիւն իւրեանց յանձանց պէտպէս յօժարութիւնք կատարեցին։ Օ.ր կէսք յիմաստնոցն առ հիղեայ, այս ինքն ՝ի նիւթ, ընթացան ապաւինել. և զայս առին ասել, եթէ պատՃառք երևելի աշխարհիս չորք բնութիւնք են։ Այ.ս դարձեալ կէսք ՝ի փիլիսոփայիցն վրիպեցին՝ ասել, թէ մինչ չև երևէլն արարածոցս երևեալ, փոչի մանրամաղ, որոյ ոչ կողմանք երևէին և ոչ դէմք յայտնէին, ուներ զնմա։ Այ.ս ՝ի մանրամաղ փոշւոյն, որ կցեցաւ եկն յարեցաւ ՝ի միմեանս, կանգնեցաւ եկաց աշխարհս ՝ամ. և անտի առին իւրաքանչիւր ՝ամ իրքն զմեծութիւն, կէսքն ՝ի խտանալ, կէսքն ՝ի պընդել, կէսքն ՝ի լայն բնութիւն, կէսք ՝ի լինել եղծանելոցն, կէսքն կալ միալ մշանջենակացք։

Այ.ս արդարև Ճշմարիտ սարդի ոստայն կամեցան անկանել՝ որ զայս այսպէսն գրոյնեցին ՝ի ստակիր գիրսն իւրեանց, ասել՝ թէ երկինք և երկիր և ծով[2] ՝ի մանրամաղ և անզօր փոշւոյն առին զսկիզն հաստատել։ Այ.ս զայն ոչ կամեցան ՝ի միտ առնուլ և ասել, թէ իսկզբանէ արար ՝ուծ զերկինս և զերկիր. և առ ՝ի չգիտելոյ ՝այ գիտութենն, զոր ընկալան յանձինս, եղև մոլորութիւն նոցա։ Ա.ման այնորիկ առին ասել զայն, թէ առանց առաջնորդի և վարչի և առանց տեսչութեանն վարի աշխարհս, և դիպուածոյ ինն պատահարից հաստատեալ կան ՝ամ իրք սորա։

1 Յոր. Հրեղէն։ 2 Յոր. երկիր ՝ի ծով։

Այլ զի մի մեք ևս անկանիցիմք յանհնարին կարծիս մոլորութեան, առցուք սկիզբն զկենդանի զբանն ի գիտութիւն մեր։ Այլ լուսաւորեաց զնա Ժամանակագիրն արարչութիւն արարչի աշխարհիս, և այսպէս ասաց ի սկզբան բանիցս, թէ ՝ծ է արարիչ աշխարհիս, իսկզբանէիւն զոր եդ ի վերայ սորա։ Անի գեղեցիկ է յօրինուած կարգին. զի նախ սկիզբն եղաւ լինելոյ արարածոցն։ զի մի կարծիցէ ոք, եթէ առանց սկզբան իցէ աշխարհս։ Այլ իբրև անուանեցաւ սկիզբն արարածոցն, ապա յետ նորուն ելին և այն, թէ արար ՝ծ զերկինս և զերկիր։ զի յայտ լիցի՝ թէ որ ինչ եղեալն, սակաւիկ ինչ է ի մեծութենէ զօրութեան ՝ծոյ։ Օ՛ի զոր օրինակ բրուտ իւրով աղբատն Ճարտարուն՝ առնէ ամենս բաղումս, իբր ոչ եթէ զՃարտարութիւն կորուսանէ, և ոչ զզօրութիւն իւր վատնէ։ սոյնպէս և արարիչն ամի ՝ծ՝ ի մեծազօրն իմաստուն իւրում՝ ոչ մի միայն չափ՝ արարչութիւն մեոյ աշխարհի ունէր զօրութեամբն առնելոյ այլ և մեծամեծս և անչափս այսպիսի երևելիս՝ բազմապատիկս ևս քան զայս՝ ակն արկելով միայն կամաց իւրոց կարող էր ածել՝ ի չգոյէ՝ ի գոյ և առնել յայսմանէ։

Այդ եթէ սկիզբն ունի աշխարհս, ապա յայտ է թէ արարած է։ Իմդրեա՝ այսուհետև և տես՝ ով լիցէ որ ետ նմա զսկիզբն, և ով լիցէ արարիչ արարածոցս։ Այլ զգուշ լինիջիր, գուցէ յորժամ մարդկեղէն մտօք կամիցես խնդրել՝ վրիպեալ գտանիցես՝ ի Ճշմարտութենէ Ճշմարիտ ՝ծութենն։ Այլ հաստատեալ դնիցես՝ ի յանձին քում զկաւաստի կնիքն Ճշմարտութեան, և զաղնուական և զվայելուչ դրոշմն անուանն՝ այ. և Ճեպեալ ընթանայցես առ անվրէպ վարդապետուին, որ յայտ յանդիման քարոզէ՝ եթէ «Իսկզբանէ արար ՝ծ զերկինս և զերկիր»։ Այն բնութիւն, որ ամենևին երանութիւն է, անսպասանձն բարերարութիւն, գեղն ցանկալի, անյագն վայելչուն, սկիզբն կենաց, կենդանութիւն արարածոց, բոլորումն կենդանութեան, լոյսն Ճանաչելի, անհամեմատ իմաստութիւն, որ սիրելին է ամենայն իմաստոց և ցանկալի

1 Յոր. ԺԸ։ Զ։

ամենեցուն՝ վասն վայելուչ և փափաքելի փառաւոր անուան իւրոյ, սա է այն՝ որ արար խոկզեանկ զերկինս և զերկիր։

Զ.Դ մի վրիպիցիս, ով մարդ, երթալ զկնի երևեալ լի արարածոցս, և դնիցես անսկիզբն զսկզբնաւորս. և մի, վասն զի գլուխ ի վերայ քո անցանեն ի շրջելն իւրեանց յորժամ շարժին գնալ յերկինս, և մի դարձեալ՝ վասն զի չէ դիւրին մտաց մերոց կալ ի վերայ իսկզբան աշխարհիս՝ որ եղև, թէ զմարդ և օրպէս լեալ իցէ, կարծիցեմք ի ընութիւնէ տարերցս՝ որ ի վերայ մեր և զմեզ շրջին՝ թէ անսկիզբն և առանց արարչի իցեն։ Օ որ օրինակ դրոշմեացի գիր բոլորակ յումմ և իցէ, և չիցէ որ մնասաւ՝ որ տեսանիցէ, թէ զմարդ և օրպէս դրոշմեցաւ գիրն, և կարծիցեն՝ որ յետոյն տեսանիցեն, թէ անսկիզբն է դրոշմն գրոյն. զի ոչ յայտ է՝ թէ յորմէ՞ վայրէ սկսեալ իցէ, և ոչ այն՝ թէ յորո՞ւմ տեղւոջ կատարեալ։ Զ.Ս այս յայտ է, թէ որ դրոշմեաց զգիրն, անդէն և ի նմին սկսաւ, և ի նմին և ի նոյն կատարեաց. արար նմա անդստին սկիզբն, և բովանդակեաց զնոյն կատարմամբն։ Զ.Ս մի, վասն զի չէաք ընդ արարչի աշխարհիս՝ տեսանել զսկիզբն աշխարհի արարածոցս՝ թէ օրպէս լինիցի, կարծեացուք՝ թէ անսկիզբն իցէ։ Զ.Ս մի, վասն զի ոչ հասանին գիտուք մերով բազում իրք՝ վասն իւրեանց դժուարին գիտուելոյ, որոց ոչ սկզբանցն [1] տեղեակք էաք և ոչ թէ օրպէս կայցեն [2] իմանալ կարիցեմք, առնիցեմք զնոսա անսկիզբն։ Օ ի յայտ է՝ թէ որ արարն զնոսա՝ սկիզբն արար լինելոյ և նոցա, և մեծագիտ երկայնութեամբն նոցա եղ սահման բովանդակիչ։ Զ.Ս մի, վասն զի ինքեանք զինքեանքն անդրէն զմեծամիտքն դառնան՝ որ ի վերայ մերն և զմեզ շրջին, և զնոյն զհարթ և զմիազգի գնացս ունին հանապազ զորդ, և չիք ինչ որ արդել և կրճիմ [3] լինիցի ի մէջ նոցա, մանաւանդ երկեւան երկնանութեան ի միտս մեր, վրիպել և ասել՝ թէ ոչ սկիզբն գոյ աշխարհիս և ոչ կատարած։ Զ.Ս ունկնդիր լիցուք բանին՝ որ

1 Ի լուսանցս օրինակին ուշ ենեսիկանցն գրէնէ։

2 Յօր. իարէնէն։

3 Յօրինակին կՃրէմ. ասա և զկնի դարձեալ միւս ևս անգամ։

ասէ, թէ անցանելոց է վայելչութիւն աշխարհիս. Այրկին և երկիր, ասէ, անցցին։

Այլ միտ եդեալ երթիցուք զհետ կատարեալ բարբառոյ պատգամացն այ, որ քարոզէն զկատարումն և զփոփոխումն աշխարհիս, որ 'ի վարդապետութենէ սուրբ Հոգւոյն դրոշմեցաւ մեզ Ճշմարտութիւն։ «Խակըզբանէ, ասէ, արար ՅԱ զերկինս և զերկիր»։ Այլ յայտ է թէ որ ինչ ժամանակաւ՝ սկսան՝ հարկ է թէ և ժամանակաւ կատարեսցի։ Զարդ եթէ սկիզբն ժամանակաւ կաւ եղև աշխարհիս, մի երկմտիր՝ թէ ոչ լինիցի սմա կատարումն վախճանի։ Այլ ՅԱՄ ինչ՝ որ արարեալ և եդեալ իցէ ընդ փոփոխմամբ աշխարհիս, և ընդ իշխանութիւն նշանակ տուրջեան և գիշերոյ մնանիցէ, կատարումն անվրէպ դրոշմեալ ունի 'ի վերայ սկզբանն իւրոյ։

Այսց երկրաչափութիւնն և համարողութիւն Ճշմարտութիւնն, գԺուարին շրջանակօքն և աշխատեցուցիչ նուրբ քննութիւնքն, հմտդերձ մեւս եւս անուանի Ճարտարութեամբն՝ որ զաշխմանն կատարէ և զկայանս ատեղացն նշմարէ, և նոքա՝ որ զհետ այսպիսի մտոտի աշխատութիւնք 'ի կիրթ անկեալ ընթանային մեծաւ փութով և բազում հոգաբարձութիւն, որ և այլք եւս բազումք հմտապազորդեին ընդունային այսու աշխատութիւն, այսպէս ասացին, թէ ընդ ինքնութենն խակութենն այ էր աշխարհս երևելի. և ընդ անարևոյթ և ընդ անսահման փառաւորութենն կշռեն զսահմանեալս բովանդակեալ, որ ունի տարերս եղծանելիս։ Այլ ոչ կասեցան գալ 'ի գիտուն, 'ի միտ առնուլ՝ թէ որ ինչ ունի մասունս եղծանելիս և փոփոխելիս, անիւ ամենևին նոցուն կայ 'ի հնազանդութիւն, և ընդ կարեօք եղծանելոցն 'ի վախճանի կան էլք իւր ասպականութիւն։ Զայլ այսպիսի Ճշմարտութիւն ընդունայնացան միտք իւրեանց, և խաւարեցան անմտութիւն սիրոք իւրեանց. և մինչ զանձինս առ իմաստուն ունէին, յիմարեցան այնոքիւք՝ զորոց զհետն մոլորեալ երթայինն. և վրիպեցան 'ի Ճշմարիտ գիտութենէ անտի։

Խակ կէսքն յիմաստնոցն Յունաց զերկինս ընդ [3] իւ

1 Յոր. 'ի ծանռայս։ 2 Յոր. ըստ։

կութեան այ դնեն, և կէսքն ՝ճծ անսկիզբն և անկատար դնեն զերկինս. և ՝ամ իրաց որ լինին և եղեն առ մեզ, որպէս և ասեն, անտի են պատճառք։ Այլ ինձ այսպէս թուի, թէ աւելորդ իմաստութիւնն նոցա այսպէսի յաւելեաց գանձեաց նոցա. զի անհնարին և դառն դատաստանս շահեսցին անձանց իւրեանց։ Օ՛ի այսպէս մեծաւ փութով ուշ եդեալ երթային զկնի մտոտեացն, և միշտ հանապազ ՝ի մտոտի գիւտս ծախեին զգիտութիւն, և ինքնակամ կամաք մուծանեին խաւար յիմաստութիւն՝ զոր ունեին. զի մի երբէք ծանիցեն զՀնմարիտ իմաստութիւն։ Այլ ոմանք ըստ կարծեաց մտաց իւրեանց համարին, թէ ՝ի վերայ չափոցն աստեղաց կացին, և անքնին գնացից նոցա եղեն հասու գիտութեամբն։ Այլ զհիւսիսային աստեղս՝ որ միշտ հանապազ երևին, արկին ընդ թըւով և համարով. և որ ունին կայանս ՝ի հարաւակոյս կողմանն՝ եղեն նոցա բուանդակիչք։ Այլ որպէս ասեն, յայտնի է ոմանց՝ որ ՝ի հարաւակոյս կողմանն ունին զանակութիւն, բայց մեզ չեն, ասեն, յայտնի։ Այլ ընդարձակութեան հիւսիսային կողմանն եղեն ծանուցիչք և դրոշմիչք, և նկարոյ աստեղաց եղեն մեկնիչք, և ՝ի վերայ շրջանաց աստեղաց և ՝ի վերայ չափոյ տեղեաց նոցա, որպէս ասեն, կացին. և զաղում՝ [2] ժամանոցա, և զմերձաւորութիւն և զպատահիլն միմեանց [3] գրով դրոշմեցին, և զնոտորուն և զկանխեալն աստեղաց քան զիմեանս՝ փոյթ յանձին կալան ասել։ Այլ միտ եդեալ պահեին զՀանդիպութիւն նոցա և զկերպարանս նոցա բազում հոգաբարձութեամբ, և թէ քանի ժամանակս ունին շրջանակք աստեղաց, որ կոչին մոլորեցուցիչք։

Այլ յայսմ ՝ամ յայնչափ և դժուարին մոլորութիւն զի ինչ պիտոյ էր ուսանել, և ոչ կամեցան գիտել և ճանաչել, թէ ՝ճծ միայն է արարիչ ՝ամի, և արդար դատաւոր որ հատուցանէ ըստ իւրաքանչիւր գործոց յաշխարհն հանդերձեալ։ Այլ և ոչ զկատարումն աշխարհիս, և ոչ զդատաստանն հանդերձեալ կամեցան

1 Յոր. Խմաստութիւն։
2 Յոր. Զբազում։
3 Յոր. Ի միմեանց։

ուսանել 'ի մերձաւոր իրացս՝ որ լինին մեզ վարդապետք, թէ փոխելոց է աշխարհս, վասն հանդերձելոց իրացն՝ որ լինելոց են մեզ։ Օ 'ի թէ մեք 'ի կերպարանս այլոց շրջելոցիսք նորոգութեամն՝ զոր ընդունելոց եմք 'ի մարմնիս մեր, ապա հարկ է և աշխարհին՝ զոր ընդունելոց եմք, առնուլ այլակերպ նորոգութիւն ըստ պատշաճի կենաց մերոց։ Օ 'ի զոր օրինակ այժմս կեանքս՝ որով եմք 'ի կենդանիքս, ունին հաղորդութիւն ընդ անցաւոր իրս աշխարհիս՝ որ խափանելոց են, սոյնպէս և բնակութիւն միւսոյ աշխարհին ունի[1] հաղորդութիւն ընդ անմահական կեանսն մեր, և միաբանեալ հաւասարի ընդ անեղծ կենդանութեան՝ զոր ընդունելոց եմք։ Իսկ նոքա այնպէս հեռի են 'ի ՃՇՄարտութենէ բանիցս՝ որ քարոզեն զՀառս հանդերձեալ աշխարհին, որպէս զի բնաւ ամենևին զմտաւ անգամ իսկ մի ածցեն, թէ արդարև Ճշմարիտ իցեն բանքս՝ զոր խօսիմք։ Ա.յլ և ծաղր ևս և այսն կատականաց առնեն, յորժամ լսեն 'ի մէնջ զլուր կատարածի աշխարհիս, և զաւետիս հանդերձեալ աշխարհին՝ որ խոստացան մեզ յանեղեն[2] զրոց։

Իսայց զայս գիտեմք, սիրելիք, զի ատէն բնութիւն աշխարհիս սկիզբն նախ դնի իրաց՝ որ լինելոց են, և որ սկսուած են. և այսր լինի 'ի հարկէ ընթանալ հաստատել զչափ ժամանակին։ Ա.յդ զսոյն զայս ըսկիզբն եդ նախ բանիսն և ասէ. "Իսկզբանէ արարածք զերկին և զերկիր"։ Իդև աշխարհս հրամանաւ կամացն ՀՍ, զի եղիցի բնակութիւն ամենեցուն՝ որ մտանելոց իցեն 'ի սա։ Իւ տեղի ուսման և խրատու պատրաստեցաւ յարարչէն բնակաց աշխարհիս. և հաղորդեալ միաբանի արարած աշխարհիս ընդ բնակիչս իւր։ Իյ ընդ ապականութիւնքն են իրք աշխարհիս բնակաց իւրոց. և մնդակիցք աշխարհիս են ամենեքեան՝ որ են 'ի սմա, եթէ անասունք և եթէ տունկք։ Իբանզի սոքօք հաստատեալ կայ ժամանակ և եկք կատարածի իւրոց, և Ճեպեալ ընթանայ հանապազորդ, զի մի լռեսցէ և դադարեսցէ միշտ ընթաց գնացիցն։ Կամ թէ չիցէ այսպէս ժամանակն, զի որք անցին

1 Յօր. «ունի։» 2 Յօր. «ծեղեն։»

ընդ նա՝ եղծեալ ապականեցան, և որք կանն ևս դեռ
ի նմա, մինչև կամին երևիլ՝ սկսանին փախչել, և որք
գալոց են՝ չե՛ ևս են յայտնեալ։ Զրդ այսպէս բնութ
իրաց՝ որ լինին ի ժամանակս. զի մինչ դեռ ի յառաջ
ջադէմ ընթանան՝ աՃին և զարգանան, և իբրև դաշ
դարեն յաՃմանէն՝ պակասեալ սպառին։ Զի ինչ
որ սկսանի և վարի ժամանակօք, լինել հաստատուն
անշարժ և կալ մնալ առանց փոխման ոչ կարէ։ Զի
պարտ և պատշաՃ է մարմնոցն անատնոց և տնկոց ըն
թանալ ըստ կարգի իւրաքանչիւր գնացից. զի իբրև
բուռն հարեալ ունելոյն զմիութեանց մի ըստ միոջէ ազգն,
որ միութիւնքն փոխիցին, որ շարժին և անցուցանին
զմիութիւնս՝ իւրաքանչիւր յայտնութիւնքն ըստ իւրաքանչ
իւր շարժումն ժամանակացն, զորս վարեն իբրև ի
հարկէ ժամանակաւքն, որով հաստատեալ կան բնու
թիւնք իւրեանց. և սոքա՝ որ ունին հաղորդութիւն
ընդ ժամանակն, այսպէս վարին։

Զայս ուրեմն բարւոք ուսաք վասն աշխարհիս՝ թէ
արարած է։ Զի այսպէս ասացաւ զսմանէ յարար
չէն, թէ «Լսկզբանէ արար զՃ զերկինս և զերկիր»։
այս ինքն այնու սկսմանն, որ եղև ի վերոյ քան զը
ժամանակս։ Զսի դարձեալ սկիզբն սկսուածի իրաց
ինչ՝ որ առնուցուն սկիզբն լինել. որպէս ասիցէ ոք,
թէ սկիզբն բարւոք Ճանապարհին արդարութիւն՝ որ
հասուցանէ ի հանգիստ երանելեաց աշխարհին։ Զսի
դարձեալ սկիզբն և այնմ՝ զոր ինչ խորհիցիմք ներ
գործել. կամ արկանել հիմն տան, կամ հարկանել
բուռն զգործս տաստակամած յատակաց նաւի, որ
է սկիզբն կտուածոյ կազմութիւն նաւին. կամ որպէս
գրեալն է Սկիզբն իմաստութիւն է երկեղ տեառն.
այս ինքն է հիմն ՃամՃ գործոց բարութեց։ Զսի դար
ձեալ սկիզբն և այլոց արուեստից ՃարտարութիւնՃն ըստ
իմաստութիւնն Լեսելիելն, որ եղև զարդ խորանին
վկայութեան, և կազմեալ ի վրանի ժամուն։ Զի
սկիզբն բարեաց գործոց բազում անգամ ի բարւոք
կատարումն ընթացեալ հասանէ. և ՃամՃ հաՃոյից՝ որ
և ընդունելի են ՃՃ, ըստ երևելի սկզբան լինի և կա
տարումն իրացն։ Զստ օրինակի այսր ամենայնի ասի
սկիզբն։ Զրդ նայեա՛ց, տես, եթէ ո՞չ միաբանեալ

հաւանեսցի ընդ իրս, որ յայտ առնէն զայսմ սկսուածէ, այն սկիզբն՝ որ եղև 'ի վերոյ քան զժամանակս առ'ի հաստատութիւն աշխարհի. և կարասցես յայսցանէ՝ որ ընդ քեզս էն միշտ ուսանել, եթէ դարձցիս նայեսցիս յայն՝ որ անցին, և երթիցես մտոք զհետ նոցա՝ մինչև հասցես կացցես 'ի վերոյ աւուրն առաջնոյն, յորում եղև սկիզբն աշխարհիս։

Լոյս այսպէս կարասցես 'ի միտ առնուլ յերրայն անցեալոց՝ և որ գալոցն են. մանաւանդ յորժամ ընդ հայց անկեալ ինդրեսցես, եթէ յորմէ՞ հետէ էր սկիզբն գնացից ժամանակաց, այսինքն հիմանց երկնի և երկրի։ Չանզի չիք ինչ՝ որ գնայ և անցանէ, եթէ ոչ սկիզբն իցէ գնացից նոցա. զի յերևևելեաց ասի կասցես կալ դու 'ի վերայ աներևութիցն։ Լոյս յայսմ սկսուածոյ՝ որ ունի կատարումն, կարես կալ 'ի վերայ այնց՝ որ ոչ ունի կատարումն։ Չանզի ոչ 'ի զուր և վայրապար ինչ կազմեցաւ աշխարհս իսկզբանէ. այլ 'ի վախճան մեծաշաշ երթան հասանէն ելք կատարածէ իւրոյ։ Լոյս ինչ մի, որ կարի պիտոյ և պատշաճ էր, կազմեցաւ ըստ արժանի պանդխտոց իւրոց։ Օ՛ի տեսչութիւ՞ մեծազօրին ՝այ եղև կազմած աշխարհս հիս հաստատուն՞. զի մտցեն բնակեսցեն 'ի սմա խօսունք, և եղիցի նոցա տեղի ուսման և խրատու՝ առ 'ի գիտել և ճանաչել զնա՝, և յերևևելեացս 'ի միտ առնուլ զպատշաճս աներևոյթն՝այ։ Լոյս 'ի սոցանէ՝ որ տայցէն նոցա ձեռն ազդմամբքն իւրեանց, իմասցին ըստ իւրաքանչիւր բնութեանց զարժանս նոցա. ստասցին 'ի նոցանէ զհանճար իմաստութեանն՝ լինել մտոք իւրեանց դէտք և ակամատեաք հեռաւոր իրաց։ Օ՛ի ծանիցեն ճանաչելեաքս զանծանօթն, և երևևելեաքս զաներևոյթն. ըստ այմմ զոր Ա՛ստուածն ասէ, թէ Աներևոյթքն՝այ յերևևելի արարածոց աստի իմացեալ տեսանին։

Կամ թէ արդեաք զի արագ է արարչութիւնորա քան զկան թօթափելն, և առանց ժամանակի է անուն արարչութիւն, ասացաւ՝ թէ Սկզբանէ. քանզի չիք մանսունս սկզբանն՝, ոչ կալ և հաստատել։ Օ՛զոր օրինակ

1 Յօր. ՀԷ՝ 'ի մասունս գան գիրանն։

սկիզբն Ճանապարհի ոչ Ճանապարհէ, և ոչ սկսուած տանն տուն, սոյնպէս և ոչ սկիզբն ժամանակին է ժամանակ, նա և ոչ մասն մի է 'ի փոքր մասանց նորա։ Այլպա եթէ յամառեսցի ոք՝ թէ սկիզբն ժամանակի ժամանակ է, զայս գիտասցէ՝ զի բաժանէ զսկիզբն 'ի մասունս ժամանակին, այս ինքն 'ի սկիզբն ' և 'ի մի-ջոց և 'ի կատարումն. զի զսկիզբն 'ի վերայ սկզբան դնել՝ ամենևին ծաղու արժանի է։ Այլ որ հատանէ զսկիզբն և երկուս առնէ և ոչ մի, այս ինքն բաղումն և անբաւս, և որ ինչ զհատուածն ընդունի՝ մարթի դարձեալ զի և նա հատանիցի։ Այլ զայս զի ասացի, զի ուսցուք և մեք զկամն ՆՈՅ, թէ հաստատութիւն աշխարհիս ոչ ժամանակաւ եղև յարարչութենէ անտի նորա։ Այլդ վասն այնորիկ ասացաւ, թէ «Սկզբանէ արար ՆՈՅ զերկինս և զերկիր»։ Այլոց այլ օրինակաւ գիրք ևս մեծապէս աւանդեցին մեզ 'ի մեկնել զմիտս բանին ՆՈՅ։ «Սկզբանէ, ասէն, արար ՆՈՅ զերկինս և զերկիր». այս ինքն յանկարծակի, յական Թօթափել 'ի միում 'ի սակաւ ինչ վայրկենէն։ Վասն Ճառիս խսկզբանն իսկ ասացաք փոքր 'ի շատէ և բաւական մինչև ցայս վայր։

Այլոց գիտէք, սիրելիք, զի կէսք յարուեստիցն արդեամբք հաստատին, և կէսք աչքք առ ժամանակ մի երևին։ Իր արդեամբք հաստատին՝ կան մնան ժամանակս բազումս. և որ կերպարանօք աչքն երևի, անդամաթք կատարի շարժումն նուազացն նոցա։ Օ՛յ ընդ լուել արուեստականացն՝ բառնայ և արուեստական՝ որ 'ի տեսլենէ աչացն, այս ինքն ըստ օրինակի կաքաւաչացն և երգեցիկ գուսանացն. զի ընդ լուելն նոցա՝ առնի կատարումն արուեստիցն նոցա։ Այսպէս որ արուեստաբ արդեամբ հաստատին, և յորժամ թողուն և գնան Ճարտարքն զգործն իւրեանց՝ գործն կայ հաստատուն և երևի տեսողաց. այս ինքն հիւանդութիւն, շինողութիւն, դարբնութիւն և ոստայնանկութիւն, և որ ինչ սոցին նմանողք իցէ։ Այլ կարեմք ուսանել 'ի շինուածոյն՝ թէ շինող գոյ նորա, և 'ի գործոյ դարբնին՝ թէ Ճարտարիւ գործն, և 'ի հանդերձից՝ թէ ոստայնանկի է անձ-

կեալ։ Սոյնպէս, զի յայտ լիցի՝ թէ արարած է՝ աշխարհս մեծաքանչ իմաստութեամբն ՝ այ, [2] եղաւ կանխաւ առաջի ամենեցուն տեսիլ արարածոց։ Այլ իբրև ոչ երևի, և՝ ի սմա է արարիչ աշխարհիս, առաջնորդութեն նորա ընթանայ յաշխարհիս պէսպէս օրինակօք և յօրինուածովք։ Այլ յարարածոցս աշխարհիս, որ հաստատեալ կայ իմաստութիւ արարչին, գիտութիւնն ՝ այ իմացեալ Ճանաչի ինդրողաց իւրոց գիտութեամբ։

Զանգի ոչ դոյր այլ բարբառ առաւելքան զայս բարբառել Մովսէսի, զոր բարբառեցաւ յասէն՝ թէ ՝ած է արարիչ աշխարհիս։ Զ ամն այսորիկ ասաց, թէ « Խսկզբանէ արար ՝ած զերկինն և զերկիրս »։ Այլ քանզի զայս բարբառ ոչ առին ՝ի միտ իմաստունքն Յունաց, ասել՝ թէ ընդ իսկութենն ՝ այ էր աշխարհս. և ոչ ասեն թէ ՝ի նմանէ արարաւ, այլ թէ ստուերք է աշխարհս զօրութենն ՝ այ, և ՝ի շքոց ՝ածուենն գտաւ կանգնումն սորա։ Իստուանան՝ թէ պատՃառք աշխարհիս ՝ած է, յանձնէ և ոչ ՝ի կամաց։ և զոր օրինակ, ասեն, ուղեկցեալ է ստուերք մարմնոյ, և նշոյլք զօրութեան հրոյ, նոյնպէս և աշխարհս ՝ այ է։ Այլդ զայսպիսի զայս ՝ամ մոլորութեն փոյթ յանձին ունէր Մովսէս ուղղել բանիւն ՝ այ. և մեծաւ հոգաբարձութիւ դրոշմեաց ՝ի նկարագիրս զՃշմարիտ պատգամսն, և ասէր այսպէս, թէ « Խսկզբանէ արար ՝ած զերկինս և զերկիրս »։

Այլ ոչ զայս միայն կամէր ցուցանել՝ թէ արարիչ աշխարհիս ՝ած է, այլ թէ իբրև զնոր բարերար արար զնմա՝ ինչ, որ պատՃաՃ և վայելուչ է։ Այլ ըստ իմաստութեէ մեծուէ իւրոյ զարդարեաց զՃամ ինչ պէսպէս զարդուք և գեղովք. ըստ անքնին մեծութեան իւրոյ հաստատեաց կացոյց զմեծութեէ աշխարհիս մեծաքանչ արուեստիւք առ ՝ի տեսիլ ՝ամ իսօնոց։

Այլ արդ, զի պատմեցաւ քեզ՝ թէ ՝ած է արարիչ աշխարհիս, մի այսպէս համարիցիս՝ թէ իբրև զաբուեստագէտ Ճարտար արարիչ առ իրօք ընութեէց. զի մի ըստ մեոջ ՝ի մի մի արասցէ և կատարեսցէ, և

[1] Յոր. յորոյնէ։ [2] Յոր. ՝այ է էրա։

զմինն ընդ միւսումն կցեսցէ և յօրէսցէ։ Զ.ՍԼ միա-
բան միանգամայն զամ բնութիւն մի ըստ միում յօ-
դեալ ընդ միմեանս միաբանեալ հաստատեաց կացոյց
յանկարծ վաղվաղակի։ «Լսակզանէ, ասէ, արար ՝ծ
զերկին և զերկիր»։ Զ.յս ինքն, յերկուս գլխաւորսն՝
որք եղէն, գանձեաց եդ ՝ծ զամ սէտս աշխարհս։
Երևեցոյց պատմութեամն զերկինս, և եդ ընդ նմին
երկրորդ նորին զերկիրս։ Զ.Ս յայտ է՝ թէ որ ինչ՝ի
մէջ երկուց գլխաւորացս գտանի, ընդ նոսին իբրև
զնոսա արարեալ և հաստատեալ գտանի, և նոքօք
սահմանի, թէպէտ և զՀառս բնութեանցն ոչ եմոյծ
յանուանէ, զՀրոյ և Ջրոյ և զՕդոյ։ Զ.ՍԼ մեք՝ի մտաց
իմաստուք զՀշմարիան իմաստութիւն. և յայտնի է այս
իմաստնոց, զի ՝ամ ինչ ընդ ՝ամի խառն և միջամուխ
գտանի։ Զ.Ս ասէն յերկրի, եթէ կամիս միտ դնել,
գտանես ջուր և օդ և հուր. զի հուր՝ի քարէ և յեր-
կաթոյ ելանէ. որպէս զի երկաթ անդստին յերկրէ
է, և՝ի բախել ընդ միմեանս երկաթոյ և քարի՝ երևի
լիով բնութիւն հրոյ։ Զարմանք մեծասքանչ են այս,
եթէ զնիւթդ բնակի հուր՝ի տարերս իրաց, և ոչ մե-
ղանչէ. և յորժամ երևի արտաքս՝ի նեղելոյ այսոցիկ՝
որ բռնադատեն զնա ելանել, իսկ և իսկ լինի կորու-
սիչ բնութեանցն՝ յորս բռնեալ կայր՝ի պահեստի։ Զ.Ս
դարձեալ բնութիւն ջրոյ ընդ ՝ամ երակս երկրի բաշ-
խեալ է, որպէս յանդիման ցուցանեն՝ որ ջրհորս փո-
րեն. զի ինքեանք՝ի վերայ ինքեանց՝ի վերայ երկրի
գտանին։ Զ.Ս օդ ևս դարձեալ ընդ երկրի խառն է,
և՝ի նմանէ համբառնայ ելանէ՝ի վեր. յորժամ ըն-
դունիցի երկիր զխոնաւութիւն և զջերմութիւն արեգա-
կան, փողէ յերկրէ օդ՝ վերանայ ելանել՝ի նմանէ
գոլոշոյ։

Զրկինք դարձեալ բնութիւք զլարձրարերձ[1] բար-
ձանց զտեղիս ունին, և երկիր բնութիւք զստորին կողմն
սանդարամետաց ունի։ Զ.Ս իբրք թեթևք ընդ երեսս
բարձրութիւն երկնից վերանան, և ծանունքն յերկիր
հակեն իջանել։ Զ.Ս վերին և նեղքին իբրն իբրև հա-
կառակ միմեանց երևին՝ վասն հեռաւորութեանն իւ-

[1] Յօր. Բարձրաբերձ։

բեանց առ միմեանց։ Պանդղ բազում երկարաձիգ երկայնութիւնք վայրաց կան կրնիմ 'ի մէջ նոցա, և լը են երկինք և երկիր իրօքն՝ որ ընդ նոսա հաստատեցան։ Բդ մի ինդրեսցես զմեկնութիւն իւրաքանչիւր պատմուեցն յայնցանէ՝ որք հաստատեցանն յաշխարհի, այլ որոց լուեցին գիրք՝ ամենիւք որ մեկնեցանն Ճանաչին։

"Լսկզբանէ արար ՅԾ զերկին և զերկիր"։ Մի թէ զենութիւն իրացն՝ որ եղև՝ կամիցիս՝ քննել, կամ մի թէ 'ի վերայ այսց՝ որ ընդ տեսլեամբ ակնս արկանին և կան առաջի աչաց մերոց, որոց առնումք իւիք զաստուն, ինդրիցես 'ի վերայ կալ։ Դթէ բազում բանս մեծամիգս երկայնատարածս առցուք 'ի պատմութիւն Ճառիս, անհնգիստ աշխատութիւք զուր և տարապարտուց զանանն ծախեմք, այլ հասանել ինչ իմիք չառնիմք բաւական։ Բայց որոց գոյ [2] հնար և մարթի պատմել առ 'ի շինած եկեղեցւոյ [3] և յօգուտ անձանց մերոց, 'ի նոսին կրթեսցուք և թեւակոխեսցուք։ Բաւական են ուսուցանել մեզ զպատմութիւն երկնից առանց պաՃուՃազարդ բանից Ճշմարիտ պատգամքն՝ զոր լուաք Յոսայեայ. զոր ցուցանէ այսպէս, թէ իբրև ըստ օրինակի ծխոյ հաստատեաց ՅԾ զհաստատութիւն երկնից. զի յայտ արասցէ՝ թէ ըստ օրինակի տկար բնութեան հաստատեաց մնդեաց զհաստատութիւն երկնից. քանզի ոչ եթէ խիստ ինչ և թանձր բնութիւն է տարբն երկնից։ Այլ դարձեալ և զկերպարանս ևս երկնից կամեցաւ ուսուցանել մեզ ինքն իսկ նոյն Յսայի՝ 'ի ժամանակի իբրև տայր փառս արարչին զարմանալով, և ասէր. թէ Ո ձգեաց զերկինս իբրև զկանք զմեթարդ [4], և հաստատեաց կանղնեաց զնա իբրև զխորան 'ի բնակութիւն։

Այլ ըստ սոցին օրինակի տամք խրատ և վասն երկրի, զի մի ոք աշխատեսցի 'ի քննել զենութիւն նորա, եթէ զինչ էցէ և որպիսի։ Այլ մի ոք արկցէ աշխատութիւն մնաց՝ թէ յէր վերայ կայցէ։ և մի ոք լեցի զհետ քննութեան արարածոց բնութեան, և անկանիցի 'ի

1 Յօր. Խարդն։
2 Յօր. գոյ։
3 Յօր. Եկեղեցի ՅՈ։
4 Յօր. գմրեթարգ։

խնդիրս մնոտիս՝ թէ ըստ գունոցս իցեն և բնութիւնք իւրեանց։ Այլ զայս ինչ հաստատուն մնօք խորհեա՛ցի, թէ որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս երևի բա՛րի և վայելուչ է, և գործ և արարած է հաստատն։ և ա՛մ գոյն՝ զոր ունի բնութիւն իրիցն, որ հաստատեաց՝ է 'ի նորուն կատարումն կազմեալ։ Այլա եթէ քննել սկսանիցիս իւրաքանչիւր զբնութիւնն՝ որ ունի զգոյնս ազգիազգիս, ոչ կարես հանել 'ի գլուխ զմեկնութիւնս նոցա։ Այլ որչափ առցես և դիցես քանս 'ի վերայ ձաւ՛ռին, աշխատութիւն միայն և ջան շահիս քեզ ամա՛ռ։ Զի եթէ կամիցիս 'ի միջոց բառնալ զգոյնս երևելեացն, որ արար զԹուխին և զցուրտն և զծանր և զբաթանձրն, և զա՛մ զձաշակս՝ որ գունովքն և ազդմամբն ճաշակին, և զա՛մ ինչ՝ որ երևին յերկրի իւրաքանչիւր գունովքն, չիք ինչ որ կայցէ մնայցէ 'ի գիտելոց արարածոց։ Դադարեցուք այսուհետև յաշխատեցուցիչ քննութեանն։

Այլ դարձեալ տամ խրատ հաւանութիւն, զի մի անկանիցիմք յայսպիսի աշխատութիւն, մտանել 'ի խնդիր և ասել, թէ յո՞ր 'վերայ կայցէ երկիրս, կամ յո՞ր վերայ հաստատեալ եղեալ իցեն զՀիմնունս սորա։ Զի և այս խնդիր ցնորեցուցիչ է մտաց և հանճարոյ, և առնէ զքեզ օտարացեալ 'ի ճշմարիտ և հաւատարիմ մեկնութենէն մտացդ, որով մարթիցիր եղանել 'ի գլուխ իրացն հասանել, և հաստատել կալ 'ի ճշգրիտ ճշմարտութիւն։ Այլ թէ ասիցես, թէ օդ տաբաձեալ կայ 'ի ներքոյ ընդարձակ սանդարամետացն երկրի, պարտեալ յաղթեալ լինի քանն քո. որպէս թէ զնա՛ւդ թոյլ և ցիր բնութիւն[2] կարող իցէ հանդարտել այսչափ ծանրութիւն երկրի, որ հաստատեալ կայ 'ի վերայ նորա։ Զի ծանրաբեռն և մեծանիստ բնակութիւն երկրի՝ որ կայր 'ի վերայ նորա, յա՛մ կողմանց զերծաներ փրծաներ 'ինեղբին սանդարամետացն, և 'ի վերոյ քան զերկիր երևեր իւրով թեթև բնութեամբն, և երկիր 'ի ներքին սանդարամետն հակեր ինքեր կործաներ։ Այլ եթէ ասիցես, թէ ջուրք կան 'ի ներքոյ երկրի՝ որ ունին 'ի վեր զսաս-

1 Յօր. ասա և զնոնի էր։ 2 Յ-ր. ծիր բնութեանն։

տիկ ծանրութիւնորա, դարձեալ սկսանիցես 'ի խընդրել՝ թէ զիարդ ոչ ընկղմեսցի 'ի ջրոյն ծանր և թանձր բնութիւն, և զնմա անբաւ մեծութիւն զիարդ կարիցէ ունել 'ի վերս տկար բնութիւն։ Եւ դարձեալ ածիցես զմտաւ անդրէն 'ի խնդրելս, թէ ջրոցն պիտոյ է այլ ինչ՝ որ ունիցի զնոսա 'ի վերս. և դարձեալ ծիսեսցիս մտաւք, թէ զի՞նչ իցէ՝ որ զոյժ և զնաղաց բնութիւն ջուրցն ունիցի 'ի վերս, և իցէ ունչ և սպառուած ոմն։ Եւ եթէ ասիցես, թէ է ինն խիստ և սերտ և հաստատուն՝ որ ունի 'ի վերս զջուրսն և զերկիրս՝ զի մի հակեսցին և զեղծցին ուրեք, սակայն և նա որ զնոսայն 'ի վերս ունի՝ պիտոյ էր ինչ մի որ և զնա 'ի վերս ունիցի, զի մի անկեալ կործանիցի։

Եւ որչափ երթիցուք զհետ խնդրոցն՝ զոր խնդրեմք, և դնիցեմք զսահման՝ որ ունիցի և զնա 'ի վերս, զնմ ինչ 'ի հարկէ նեղեմք խնդրել, թէ և սահմանին պիտոյ է ինչ՝ որ և զնա 'ի վերս ունիցի։ Եւ թէ դարձեալ ստեղծցուք ինչ 'ի մտաց, և դիցուք զայն սպառուած ոմն, սակայն և նմա պիտոյ է ինչ մի՝ որ և զնա 'ի վերս ունիցի։ Եւ յամէ յայնմանէ՝ զոր լուծանիցեմքն և կապիցեմքն, յանյաւ և յանի քննութիւն անկանիմք, և անկայան պատասարին գիւտիւքն մերովք, ասատուդութիւքն օգտակար իրացն մերոց առնեմք։ Եւ որչափ թոյլ տացուք երթալ արձակերասանակ մտաց մերոց, 'ի խնդիրս՝ որ լուծանէն զընկերս իւրեանց՝ միայն գտանեն։ Վասն այսորիկ պիտոյ է դնել կէտ և սահման խնդրոյ, զի մի յորժամ զանբնինս քննիցեմք և անհայիցն հասու լինել կամիցիմք, ելանիցէ մեզ դէպ բանն՝ որ եղև առ Յովբ, թէ ՅԷր վերայ կայցեն հիմունք երկրի։ Հաւանեցուսցէ զբեզ բան Սաղմոսին՝ որ ասէն, թէ Եւ հաստատեցի զսիւնս նորա։ Օ սեռանցն՝ զոր անուանեաց, այսպիսի ինչ ածմտաւ, թէ զօրութիւնն մեծազօր է՝ որ ունի զնա հաստատեալ, զի մի ուրեք թիւրեսցի։

Դարձեալ ասէ 'ի Սաղմոսին, թէ 'Ի ծովս եդ զհիմունս նորա, և 'ի վերայ գետոց պատրաստեաց զնա։ Եւ բան Սաղմոսին զի՞նչ ինչ յայտ առնիցէ, այլ զայս՝ թէ 'ի ներքոյ ամ երկրի ջուրք են։ Եւ զարմանք մեծաբանք են այս, որ 'ի վերայ լոյծ և խա-

ՀԱՅԿ. ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ

ղաց քնութեան, որ 'ի մէջս իւրեանց ժողովին միաբան և 'ի խորհնելոյն սանդարամետաց Ճեպին ընթանալ, թէ զիարդ կայցէն լուեալ[1] դադարեալ առանց գնա-ցից, և ունիցին զերկիր 'ի վերայ իւրեանց խոնաւ քնութիւն։ Այլ թէ զայս ածիցես զմտաւ և եթէ, եթէ զինքն ինքն ունիցի զերկիր զուր անձն 'ի վեր, դար-ձեալ տարակուսեալ 'ի վարանս մտեալ խնդրիցես, թէ զիարդ ինքն զինքն ունիցի 'ի վեր՝ զայն ոչ գիտի-ցես։ Այլ եթէ դարձեալ ածիցես զմտաւ, եթէ 'ի վերայ ջուրց կայցէ, հաստատեալ կացցէ[2] 'ի վերայ նոցա և ոչ շարժիցի, զոր և խորհիցիս՝ զարմանք մե-ծաքանչ էն։ Այլդ եթէ երկիր ինքն զինքն ունիցի 'ի վեր, և եթէ ջուրք ունիցին զնա 'ի վեր, յարժա-նաւորն խորհրդոց՝ զոր պարտ և պատշաճ է ածել զմտաւ զայ, մի ուրեք թիւրեսցուք, թէ նա է որ ու-նի զայմ իւրով մեծազօրն զօրութիւն։ Այլ զայս խոս-տովանեսցուք, թէ ժողովք ամ քնութեան՝ նորա մե-ծաքանչ իմաստութեամբն կախեալ կան հաստա-տունք։ Ո՞ այսպիսի օգտակարս ածցուք զմտաւ, և ուսուսցուք զայնոսիկ՝ որ զմեզ հարցանելոցն էն, այս չափ անքաւ և անպատում մեծութիւն յէր վերայ հաս-տատեալ կայցէ. զայս պատշաճ պատասխանի արաս-ցուք նոցա, թէ ձեռնն այ միայն բաւական է ունել հաստատուն անշարժ զամ քնուէս աշխարհի։ Ո՞ այս ածցուք զմտաւ և 'ի սոյն թեւակոխեսցուք, զի մեզ 'ի զգուշութիւն լինիցին, և լսողացն 'ի շահ օգտութիւն։

Այսէն դարձեալ ոմանք 'ի փիլիսոփայից, որ անուա-նեալ կոչին փսիկիանք[3], որ և նոքա ունին պատ-ճառս հաւանութիւն ասել զերկրէ, թէ անշարժ է։ Զանգի զամ միջավայրսն, ասեն, ինքն ունի. և քան-զի հաստարակ է, ասեն, ամենևին յամ կողմանց, չէ նման հնար ուրեք թիւրել, այլ որպէս է նա, նոյնպէս կայ հաստատեալ։ Այլ քանզի 'ի մի ինչ միայն ունի միոմն հաւասար կերպարանովք, և ոչ թուլանայ՝ է-թէ ուրեք շարժեսցի. և ունել զմիջավայրսն՝ ոչ եթէ, ասեն, ուստեք ի հաս նմա այն՝ կամ այնպէս եդիտ, այլ

1 Յօր. լուեալ։
2 Յօր. կացցի։
3 Յօր. քսիկիանք։

ինքն՝ ասեն՝ յիւրմէ բնութենէ այսպէս և յիւրում պատշաճ կայանին հաստատեալ կայ։ Այլ երկնից, ասեն, բնութիւն զվերին վայրսն ունի. և եթէ վերին վայրացն ունիցի ծանրութիւն ինչ, ի միջավայրս երկրիս գայ հասանել։ Այլ եամ ինչ որ ունի ծանրութիւն, ծանրութիւնն իւր ձգիչ նորուն է ի խոնարհն, եթէ քար և եթէ փայտ. և եամ ինչ՝ որ նմանութիւն երկրի ունի, սա երկիր ձգի ինքանել. այսպիսի ծանրութիւն ունի երկիր, և սոքիսք հաստատեալ կայ։ Այլ եթէ գտաւ նի ինչ, ասեն, թեթեւ ի մի վայրս վայրացն՝ զոր ուն երկիր, ի վեր հայի շարժիլ և վերանալ, և ինչ որ ծանր է՝ ի խոնարհ հայի ի ձգել ինքանել։

Բան Ճառիս վասն միջավայրաց երկրիս՝ այսպէս եցոյց վայր։ Բ.ՐԴ մի ընդ այն զարմանայցես, թէ զիարդ երկիր բնութիւն հաստատեալ կայ ի միջավայրս վայրացն. այլ ընդ այն զարմացիր, թէ զիարդ ոչ ուրեք թիւրել անկանել, և ամենեին յիւրում տեղւոջն հաստատեալ կայ. որչափ և շարժեսցի արտաքոյ քան զբնութիւն, յիմեքէ յորում։ Հաստատեալ կայ՝ չէ նմա հնար ուրեք խոտորել։ Բ.ՐԴ եթէ հաւանեցուցիչ թուիցին քեզ այս՝ որք ասացաս, առ՝ ի մեծասքանչ խնամոտութենն այ ածչիր զնոսա, թէ նա է նոցա արարիչ։ Բ.ԱՆԶԻ ոչ ինչ էն նուազագոյն մեծամեծքն այ քան զզարմանն՝ որ վասն նոցա լինիցին, մանաւանդ յորժամ ի գիւտից գործոյ կերպարանացն նոցա առնիցի փառաւորութիւն արարչին, որ արար զնոսա։ Բ.պա եթէ կամիցիս գալ ի հաւանութիւն, մեծ և կարեւոր թուէսցին յաչս քո հաւատքն իւրով մեկնակն հաւանութիւն քան զնմ՝ օրինակս անսպառ բանից։

Բ.ստ սոցին օրինակի ասեն և զբնութենէ երկնից խնամոտունքն [1]Յունաց, և բազում բանս յոգեն առ՝ ի պատՃառիցն իւրեանց։ Բ.սեն. յոգուած ունին երկինք՝ ի չորից բնութեց, և՝ ի ընին գան և ընդ տեսլեամբ ակն անկանին։ Այլ հաղորդակից էն բնութեց երկրի՝ այնու զի՝ ի ընին գան. և հրոյ, զի ընդ տեսլեամբ ակն անկանին, և այլոց բնութեցն՝ վասն յանկ

1 Յօր. ԷՔԵՔ որոմ։

և մերձաւոր հաղորդութեցն։ Իսկ այլ փիլիսոփայքն խոտեալ առին զանսն նոցա, և ամենևին իբրև անհամ իմն և անաղի համարեցան. և մեւս և բնութիւն գՀինգերորդ տարեր առ 'ի հաստատութիւն երկնից ստեղծին 'ի մտաց՝ մուծանել 'ի ճառս իւրեանց։ Եւ որպէս ասեն քանք իւրեանց, գոյ իմն և այլ բնութիւն եթերայ, որ ոչ հուր է և ոչ օդ և ոչ երկիր և ոչ ջուր. և չիք ինչ 'ի նմա խառնուած, քանզի ամենևին պարզ բնութիւն է։ Զ ի ՝ամ ինչ՝ որ պարզ բնութիւն է, ըստ շարժումն իւրոյ բնութեանն է յստակ. և ՝ամ իրիք՝ որ թեթև է, 'ի վերս հայի գնացք իւր. և ՝ամ որ ծանր է, 'ի խոնարհ հայի էջն իւր։ Եւ այլ նա, ասեն, ոչ ընդ վերիսն և ոչ ընդ ներքինսն միաբանի 'ի շարժիլն իւրում. քանզի յոյժ հեռի է յայնցանէ՝ որ քան զրջիլն և պատին զիմեամբքն։ Զ ի որք իւրեանց բնութեամբն շարժին, որպէս ասեն, այլակերպք են յայնցանէ՝ որք ոչ իւրեանց բնութեամբն շարժին։

Եւ ոչ յայնց տարերց, ասեն, որ կոչին առաջինք, այսինքն բնութիւնքն, մարթէր հաստատել կալ յօդուածոյն երկնից։ Վասանզի ինչ որ յայլակերպ[2] իրաց կայցէ, չէ մարթ թէ լինիցի հաասարակ միտարրն առանց քռնութեան[3]. զի իւրաքանչիւր պարզքն և յօդեալքն զգնացս իւրեանց անձանց ունին ըստ իւրաքանչիւր բնութեան։ Յօդեալքն, ասեն, քաղում աշխատութեան ունին 'ի շարժելն իւրեանց. զի չէ մարթ՝ թէ մի գնացք լինիցին բազմայօդ յօդուածոյն նոցա. և ոչ պատահել խաղաղութիւն հակառակորդացն իւրեանց՝ գոյ նոցա հնար, զի մարտ պատերազմի է միշտ թեթևացն ընդ ծանունսն։ Եւ թեթևան՝ որ 'ի վերս շարժին եղանել, չէ հնար թէ ոչ գուցէ գտնել սակաւ ինչ ծանրուն յերկրէ. և զծանունսն՝ որ 'ի խոնարհ շարժին իջանել, թեթևութիւն հրոյն ձգէ 'ի վերս բընտարար։ Եւ որոյ իւրեանց բնութեան, ասեն, ձգին թեթևքն 'ի խոնարհ, և ծանունքն՝ որ են հակառակ թեթևացն՝ 'ի վերս։ Եւ վասն ծանրութիւն բնութեցն՝ որ խառն են ընդ նոսա, առնին պատճառք անկանե-

1 Յոր. Ի-ոյ։
2 Յոր. ՈՒՐԻԵՐՈ։
3 Յոր. ԲԽՈՒԹԻՒՆ։

լոյ նոցա։ Լու՛ ամ ինչ, ասեն, որ հարկաւ կայցէ՝ թէ-
պէտ և սակաւիկ ինչ, և արտաքոյ իւրեանց բնութեան
ունիցին զանձն իւր, դարձեալ բնութաբար իբր 'ի հար-
կէ լուծանի դառնալ 'ի տեղի իւր՝ յայնցանէ որովք
յօդեցաւն և ընդ նոսա խառնեցաւն։

Լ.ուրդ վասն այսպիսի Ճառից՝ որ ոչ ունին հիմն հաս-
տատութեան, հարկ եղեալ դալ 'ի յայսպիսի խորհուրդս
բաժանեալս իմաստնոցն՝ Յունաց, և իւրաքանչիւր
զոր 'ի նոցանէն բանիցն ընկերին՝ որ էր յառաջ քան
զնա, եղև քակիչ։ Լու՛ միաբանեալ հաւանեցան ընդ
իրսն՝ զոր ստեղծինն 'ի մտաց, որք 'ի հինգերորդ
բնութենէն եդին զերկինս՝ [2], և զարեգակն և զլուսն
և զաստեղս՝ որ 'ի նմա են։ Մ՚ենք ևս դարձեալ
փիլիսոփոս, յայնցանէ որ յաղթաբանքն կոչին, 'ի վե-
րայ այսր ամի՝ որ ասացան յայլոց պատրաստեցան, բա-
զում՝ հաւանութիւնք իւրոյ Ճարտարաբանն խօսողուն
քակեաց ընկեց և եղոյծ զամ, և մեզ ևս ուսումն յա-
դեաց 'ի մտաց 'ի Ճառն իւր։ Լու՛ մեք մի՛ հաւանեա-
ցուք երկրորդել զայն, քանզի փնասեն. զի մի՝ անակա-
նիցիմք և մեք 'ի շատախօսուն ըստ նոցունց նմանուն։
Մ՚այլ թողցուք զնոսին մարմնել ընդ իրեարս, զի ինչ
քեանք [3] զմիմանց բանն լուիցեն և խոսփանեսցեն։

Լու՛ զաշխատիչ քննութիւն բնութեց հեռացուսցուք
'ի բանից մերոց, և միաբանեալ հաւանեսցուք Մ՚ով-
սէսի՝ որ ասացն, թէ «Խսկզբանէ արար ՅԱ՚ զերկինս
և զերկիր»։ Լ՚ղեցուք գովիչք մեծասքանչ Ճարտա-
րապետին, որ հաստատեաց կացոյց իմաստութիւնք զա-
ղարաածս. և 'ի մեծապայծառ գեղոյ երևելեաց՝ 'ի
միտ առցուք գիտութիւնք զայն՝ որ 'ի վերն է ամ գեղոյ
մարմնաւորաց։ Լու՛ 'ի մեծութենէն ազգելի և սահ-
մանելի տարերցս՝ ածցուք զմտաւ խորհուրդ օգտա-
կար, արժանաւոր ըստ անազգելի և անսահմանելի
մեծութեանն, որոյ ըստ ամ հաստատեալս և ըստ ամ
խորհուրդս անցանէ զօրութիւն իւրոյ մեծութեանն,
գիտել Ճանաչել՝ թէ ո՞րպէս իցէ։ Օ՚ի թէպէտ ամե-
նեխմբ ոչ կամիցիմք կալ 'ի վերայ բնութեանն՝ որ

1 Յոր. յիմաստնոցն։
2 Յոր. յերկինս։
3 Յոր. զնոսին զնոցին մարդան-
ն՝ ընդ իրեարս, զի ինչեանց։

հաստատեցան, տակայն յայնցանէ՝ որ անկանն ընդ գիտութիւն մերով և զարմացուցանեն՝ պարտիմք իմանալ, թէ օրէնսդիր մեծ ի՞նչ արարիցն նոցա։ Օ՛ի երբ զգաստացք ընթացք մերոյ գիտութիւնս յոյժ կաղագոյն գտանին հասանել կալ՝ի վերայ հաստատեալս քննութեանց[1]։

Ա.Յլ այս՝ որ ընդ ձեզ խօսիմք, եղիցին՝ի հանդիստ և՝ի հաճութիւն ՝ոյ, և տացէ մեզ՝ զի օգտակար բանիւք հանցուք՝ի գլուխ զմի մի՝ի Ճառից, զոր Ճառիցեմք. և արժանաւոր փառաւորութիւն՝ զոր պարտիմք, տացուք արարչին արարածոց. զի նորա են փառք և պատիւ այժմ՝ և միշտ և յաւիտեանս. ամէն։

1 Յոր. հասարակաւ ԶԷՆՈՆԻ։

ՀԱՌՈՒ ԵՐԿԻՐՈՐԴ

ՎԱՍՆ ՎԵՑՕՐԵԱՑ ԱՒՈՒՐՑ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

Ի ՍԱԿԱՒ քանս պատգամացն 'ի հարուստ ժամ աշխատ եղեալք ընդ այգ ընդ առաւօտս, և այսպէս ծածկեցաւ 'ի մէջ խորաքնին մեկնութեանն մտաց պատգամացն, որպէս ամենեին ոչ գիտացաք որպէս արժանն էր գիտել։ Օ ի թէ արտաքին դուռն վրան ժամուն այնչափ մեծաշուք էր, և արտաքին դուռն տաճարին ՝՝՝ այնչափ մեծասքանչ փառաւորութիւն և մեծապայծառ գեղ ունէր, յորմէ ծագեաց փոքր մի տեսիլ մերոյ գիտութեան, իսկ արդ ոչչափ ևս առաւել մեծութիւնք զսրբութենէ սրբութենէ սրբոցն։ Օ ինչ կամիցիմք ասել, և կամ ո՞վ իցէ այսպէս մեծ և պատուական, որ համարձակիցի հայիլ 'ի ծածուկ փառաւորութիւն նորա, և կամ ո՞վ իցէ բաւական տեսանել զանպատումն ըստ իւրեանց արժանաւորութեան։ Օ ի չէք տեսիլ՝ որ կարիցէ համեմատել տեսլեանն նոցա, և մեկնել լիով 'ի նոցանէն դժուարին է մեզ։ Այլ քանզի յարդար դատաւորէն խոստացեալ են վարձք մեծացն հատուցմանց, և ոչ իշխեն անխոյժ առնել և արհամարհել՝ որք միտ եղեալ անկեալ 'ի խնդիր դատանել զհաւատին և զգատակարսն, վասն այսորիկ մի ձանձրասցուք 'ի խնդրելոյ մեծաւ փութով զշահաւորսն։ Օ ի թէպէտ և յոյժ վրիպեալ գտանիցիմք կատարեալ մտաց մեծապատում առաւելութեան նոցա, սակայն 'ի մտաց նկարագիր գրելոյ նոցա ոչ ուրեք ելանեմք։ Այլ ունիմք յոյս ապաւէնի զՀոգին ՝՝՝ որ է մեզ օգնական, զի մի լիցուք ամենևին զրկեալք և տարագիրք 'ի մտաց ճառիս. այլ եղիցին մեզ զօրացուցիչ Հոգէքն ՝՝՝ առ 'ի ճառել զճառս 'ի շինուած եկեղեցւոյ ՝՝՝։

Օ ինչ իցէ զոր լուաք ընթերցուածոյ գրոցն։ "Այրկիր, ասէ, էր անեղևոյթ և անպատրաստ"։

Օ լինչ լինչ իցէն արդեւք միտք բանիս զի ահա էր-
դինք և երկիր միով հաւանութիւն միանգամայն առին
զիւրաքանչիւր արարածոց։ Այլ թէ իւրաքանչիւր երկինք ըն-
կալան զկատարումն արարածոց իւրեանց, և երկրի
պիտոյ ևս էր կազմութիւն. քանզի չէ ևս՝ էր կատա-
ռեալ։ Իսկ արդ զինչ իցէ անպատրաստութիւն երկրի,
և կամ զինչ իցէն պատճառք աներևութիւն նորա։
Պատարումն երկրի զարդք բուսոց նորա էն, յորժամ
ազգի ազգի տունկք բխեցեն, և պէտպէս բոյս քող-
քոջեալ, ծառք ըստ իւրաքանչիւր չափոց 'ի բարձրը-
բարձ բարձունս վերացեալք. կեաքն պտղաբերք և
կիսքն անպտուղք. ծաղիկք իւրաքանչիւր պայծառ
երփն երփն գունոց, և մարդք ըստ իւրաքանչիւր ա-
նուշահոտ խոտոցն՝ և արմատք ըստ իւրաքանչիւր համ՝
ազգութեան ճաշակաց։ Այլ եմ՝ որ միանգամ հայեցեալ
սպասէին ածաբարբառ հրամանի բուսանել երկրի 'ի
գեղ նորուն զարդարանաց, կանուխքն ըստ կանխուս-
թեան, և անագանքն ըստ անագանութեան։ Արդ քանզի
չէ ևս էր բուսեալ երկրի, վասն որոյ ասացաւ զմա-
նէն՝ թէ անպատրաստ էր։ Օ սոյն ուսանիմք ասել
և զերկնից, թէ չէ ևս էր բովանդակեալ նորայն կազ-
մութիւն և ոչ մեծագեղ զարդ փառաւորութեանն։
Օ 'ի ոչ արեգակն էր՝ որ լուսաւորեր քաղցրահայեացն
ճառագայթիւք, և ոչ լուսին՝ որ ծագէր ճաճանչա-
զարդն նշուլիւք, և ոչ աստեղք փայլէին մեծապայ-
ծառ վառմամբն։ Այլ այսու ամենայնիւ յայտ եղև՝
թէ չէ ևս էին երկինքք կատարեալք։

Այլ զի ասաց զերկրի՝ թէ աներևոյթ էր, թերևս
վասն երկուց պատճառացն։ Մին՝ զի մարդն ստեղծ
երկրի չէ ևս էր եղեալ. և կամ՝ զի ընդ ջրովք ծածկեալ կայր տեսիլ նորա. քանզի ջուրքն ունէին զերեսս երկրի, վասն այսորիկ ասաց թէ աներևոյթ էր. զի չէ ևս էին տակաւին ջուրքն ժողովեալ 'ի ժողովս իւրեանց, որ կոչեցան [2] յետոյ յայ ժողովք ջուրց բաղմաց՝ ծովք։ Աներևոյթ այն է՝ զոր ինչ չէ հնար բնութեան աչաց մարմնաւորաց տեսանել. որպէս ոչ երևին միտք մեր աչաց մերոց. իսկ որ ինչ երևելի իցէ

1 Յոր. տանդի ևս էր։ 2 Յոր. յոլովքն։

բնութիւն, թէպէտ և ունիցի առագաստ ղյօդուած տարեր իրիք և ծածկեցեալ, անեւևոյթ լինի, այլ վասն այնոցիկ՝ որովք ծածկեցան։ Իրրև զերկաթ՝ որ անկեալ գնիցի 'ի խորս անդրնդոց ջուրց, և իբրև յայտ է՝ թէ երևելի է, անեւևոյթ է. ըստ նմին օրինակի ասացաւ զերկրի՝ թէ անեւևոյթ էր, քանզի ջուրքն ևս ունէին տակաւին զերեսս նորա։ Այ՝ինչ չէ լեալ էր լուսոյն՝ ոչ ինչ երևեր յաշխարհի գեղեցկութիւն իրիք. քանզի առանց լուսոյ էր օդն՝ որ տարածեալ կայր 'ի վերայ երկրի. և վասն այնորիկ ասէ գիր, թէ անեւևոյթ էր երկիր։

Լոկ որք եղծին և կորուսին զկեանս իւրեանց 'ի Հշմարտութենէն անտի, քանզի ոչ ուղղեցին զմիտս իւրեանց 'ի Հշմարտութիւն գրոց ուսանել, այլ ինքնաբուղխ կամաք [1] իւրեանց՝ խոտորնակ խորհրդովք յեղուլ տապալել կամին զանս ածելոյն գրոց. այս բանք՝ ասէն՝ զՀիւղէ յայտ առնեն, որ էր անեւևոյթ և անպատրաստ, զի առանց գունոյ էր և առանց կերպարանաց և նմանութեան։ Այ՝ մինոյն զՀիւղայն, այսինքն զնիւթն, առ, ասեն, ածի իբրև զՀարատար և զարուեստագէտ, և իւրով հնարագէտն իմաստութիւն ածի զնա 'ի գոյս և 'ի կերպարանս և 'ի կարգս. նովաւ եկին 'ի բնութիւն և 'ի կերպարանս, և լինել յանմանմանոյն նման իրիք և երևելիք։

Բ. Զդ եթէ ասկ իցէ հիւղն, եթէ այդպէս է, զուգակից է ոյ և պատկերակից փառաց նորա. որ քաւ և մի լիցի։ Ամանզի չիք այլ ամբարշտութիւն մեծ քան զայս [2], զնել զՀիւղէ զուգակից ոյ իսկութեան, զայն՝ որ առանց գունոյ է և առանց նմանմանութեան, առանց տեսլեան և առանց կերպարանաց։ Ամենիւք կամակորացն վարիմք առ Ժամ՝ մի, որք այնպէս զուգեցին զՀիւղէ ոյ, համեմատել զանմանն ընդ մեծասքանչ իմաստութեան և ընդ մեծ զօրութեան և ընդ մեծապատիւ փառաւորութեան և ընդ զարմանագործ արարչութեան, որ է հաստիչ ամի։ Այ՝ այնպէս գտաւ մեծ հիւղն, զի 'ի նա բովանդակեսցի ամ՝ անբաւ ի-

1 'Ի լուս. ֆ։ ։

2 Յօր. լիգ այլ գան զամբարշտութիւն մեծ գան զայս։

մաստութիւն այ. և անյաւ զօրութիւն կերպարանս իմն իրիք յօդեցին կարկատեցին, զի մեծութիւն և խմաստութիւնն այ նոքաւ չափեսցի։ Այլ եթէ ասիցեն՝ թէ փոքր է հիւղն այն քան զարարչութիւն այ, սակայն և այսպէս հայհոյութիւն է. զի չէք նմա հաւասատ, և ոչ որ բերիցէ ընդ նմա կշիռ զուգութիւն, և խոնարհագոյն գտանիցի։

Այլ այնպէս եղև արդեւք կարօտութիւն այ 'ի չքաւորութենէն հիւղեայ, զի առանց նորա առանց արարչաւ [1] իցէ ՅԾ և դատարկ և անգործ։ Օ որպէս յիմաստութենէ իւրոց կամացն ունի ՅԾ առնել, 'ի հիւղն կապեցին լինել, և անկանել յայս ՅԱՄ ամբարշտութիւնս։ Զքաջութիւն իւրեանց բնութենէ մոլորեցոյց զմարդիկ խորհել զայսպիսի օրէն խորհուրդս զայ։ Այլ քանզի առ մեզ ՅԱՄ ՃարտարութԻ որ և իցէ՝ յիրաց որ արտաքոյ քան զնա գտանիցի՝ կանգնել զգործն իւր. իբրև զերկաթ առ դարբնուն, և իբրև զփայտ առ հիւսնութիւն. և որպէս առ մեզ իցէն իրք, որ են 'ի պատՃառս պիտոյից մերոց, և նկատեմք նախ նոցա կերպարանս 'ի կամաց մերոց՝ թէ որպէս կամ զիարդ պատշաՃ իցէ առնել, և ապա կատարեմք զնոսա 'ի գործն արդեամբք, սոյնպէս և զայ պատրիցիմք կարծել արդեւք. քաւ լիցի։ Վրանզի մեզ այսպէս պատշաՃ իցէ, յերկուց [2] իրաց՝ որ 'ի մեզ և արտաքոյ քան զմեզ են, կատարել զանօթն գործով 'ի պէտս պաշտաման [3] մերոյ. իսկ գայթակղեալքն 'ի կորուստ՝ և զայ այսպիսի իմն կարծիս կարծեցին, և 'ի վերայ մեծասքանչ իմաստութենէն արարչին առին ասել զայսպիսիս։ Այսպէս, ասեն, հաստատեցան կերպարանքք աշխարհիս յամենագործ [4] արարչէն։ Մինչև եգիտ՝ ասեն՝ զհիւղն, ոչ կարաց առանց նորա յօդել զաշխարհ երևելի իրօքս՝ որ երևին։ Այլ ուստ [5], ասեն, բնութիւն աշխարհիս, և յայ զկերպարանս միայն էառ և զնմանութիւնսն։

Այլ այսու բանիւք յուրացութիւն յայ առնիցին, և յամէն՝ որ նորա հրամանաւ հաստատեցան կացին

1 Յօր. Նորա արարչութեան։
2 Յօր. յերկուս։
3 Յօր. պաշտաման։
4 Յօր. յայ գործ։
5 Յօր. այլ ուստի։

միանգամայն։ Յայլ խնդրէ, ասէին, կազմեցաւ աշխարհս, և զկարօտութիւն իւր ելից ՝ի ամենօթ առնելով՝ զիրսն՝ որ գտան արտաքոյ քան զնա, զի ՝ի սակաւ մասանցն կազմեաց զայս՝ որ երևիցին։ Այլ ՝ի մեծութիւն ճշմարտութեան՝ նուազութիւն մտաց նոցա ոչ էր հայել։ Զի ճարտարութիւնքն՝ որ առ մեզ գտանին, զի թերի էին նոցա իրքն ՝ի նիւթ գործոցն և ՝ի պէտս աշխարհի. ըստ այսմ՝ օրինակի՝ որ յայտնիս է նա ամենեցուն, զի կանուխ է ասր [2] լինելով և պիտոյիւք քան զոստայնանկութեն նորա, որում պիտոյ եղէն. սոյնպէս և փայտ կանուխ է քան զհիւսնութիւն, և անդամտին ՝ի փայտէն առ ճարտարութիւնն տալ ազգի ազգի կերպարանս ըստ իւրաքանչիւր իրացն՝ որ պիտոյ եղէն նմա առնել, իբրև զղեկս նաւավարաց, կամ իբրև զհեծանոցս մշակաց։

Լոկ ՝ամ արարիչ աշխարհիս, մինչև լեալ էին երևելիքս, ամ ՝ի չգոյէ ՝ի գոյ իւրով անմոլորն գիտութեամբ, և էհան յայտնի երևեցոյց զարարածս ՝ի չգոյիցն։ Այլ անդէն ընդ խորհելն թէ որպէս պարտ և պատշաճ իցէ առնել զարարածս, կանգնեցաւ էակաց միանգամայն ՝ամ աշխարհս գոյիւ իւրով. և ըստ պատշաճի իւրաքանչիւր բնութեցն էտ զիւրաքանչիւր կերպարան։ Զգեաց զերկինս ըստ պատշաճի իւրոյ բնութեն, և հաստատեաց զերկիր ըստ պիտոյից իւրոց կերպարանացս, և զՀրոյ և զՋրոյ և զօդոյ ըստ հաճութեան կամաց իւրոց սփռեաց տարածեաց ընդ ՝ամ աշխարհս զկերպարանս նոցա. և որպէս պահանջէր բնութիւնն նոցա առնուլ կերպարանս, նոյնպէս և գտան հրամանաւ արարչին։ Կանգնեցաւ կաց աշխարհս պէս-պէս կերպարանօք, որ միմեանց ոչ նման էն, կապեալ ՝ի մի հաղորդութիւն և ՝ի մի յանքակ օդուած՝ ըստ օրինացն զոր առեալ ունի բնութիւն աշխարհիս ՝ի մի միաբանութիւն [3] սիրոյ։ Զի թէպէտ և զատեալ և մեկնեալ իցեն ՝ի միմեանց վասն բազմութեան և իւրաքանչիւր կերպարանաց և կայանիցն իւրեանց, սակայն միաբանք էն ընդ միմեանս՝ վասն կայ ունելոյ ազգմանց իւրեանց ընդ միմեանս։

1 Յօր. յամենի առնելով։
2 Յօր. այս։
3 Յօր. ՝ի մի միաբանութիւն։

Լ.ըդ կապեալ պապանձեսցին որ զանհաս պատ-
մութիւն ստեղծանեն յանհանձար մտացն իւրեանց ,
և կամին իւրեանց անգէտ գիտութեամբն հասու լի-
նել անհասիցն ։ Օ ինչ են ինչ բաւական շարժուն
բանք մարդկութեանն նոցա պատմել զբովանդակութիւն
բնութեանց, զոր ՝ած հաստատեաց կացոյց իւրով մեծա-
զօրն զօրութիւն։ Լ.ըար ՝ած զերկինս և զերկիր , ոչ եթէ
զմի մի իւրաքանչիւր կիսոյ հաստատեր , այլ միանգա-
մայն միով բանիւ զերկինս և զերկիր կատարեալ բը-
նութիւն և կերպարանաւք հաստատեաց կացոյց յիւրա-
քանչիւր կայեանս ։ Օ ի ՝ած իւրոմն սքանչելագործն
զօրութիւն ոչ միայն գոյիչ է կերպարանաց , այլ և արա-
րիչ բնութեանց 'ի չգոյէ և 'ի գոյէ ։ Լ.այս թէ ոչ այս-
պէս իցէ , ասասցին՝ զիարդ պատահէսցին միմեանց՝
՝ած իւրոմն մեծազօրն զօրութիւն և հիւղէ խաւարին
և անիրան ։ և անկերպարան և անմարմին բնութիւն,
զի լցցեն 'ի միմեանց զիւրաքանչիւր կարօտութիւնս ,
զի յարարչէն երևեսցի արուեստագիտութիւն , և հիւղն
գոցի պակասեալ 'ի գունոց և 'ի կերպարանաց ։

Ա՛ամն Ճառից հիւղեայ շատ է առ այժմ մինչև
ցայս վայր։ Դարձցուք անդրէն յառաջին Ճառն՝ զոր
առաք 'ի գրոց ։

"Լ.ուսի զերկիր , ասէ , աներևոյթ էր և անպատրաստ ,, .
և դարձեալ ասէ . " Լակզբանէ արար ՝ած զերկինս և
զերկիր ,, ։ Լ.ս այսու՝ զոր ասաց , 'ի բաղում իրաց
լուեաց , 'ի ջրոյ և 'ի յօդոյ և 'ի հրոյ և յայլոց իրաց՝
որ 'ի նոցանէն ծնանին ։ Լ.այլ սոքա ահա յայտնի են՝
թէ ընդ վնեալ աշխարհի ընդ նմին կազմեցան ։ Լ.ըդ
մնաց մեզ մի պատմութիւն , որով ցուցցէ զհանդէս
առաքինութեանն մտաց մերոց 'ի մի պատճառն՝ որ մնաց ։
Լ.աշխատեսցուք թէ զինչ պատշաճ իցէ ածել վասն
նորա զմտաւ ։ Լ.ըդ քանզի ոչ ասաց՝ թէ արար ՝ած
զշուրս , ասաց՝ ասէ " Լ.ուսի զերկիր աներևոյթ էր ,, . զի դու
քեզէն 'ի քոյոց մտացդ իմասցիս , թէ զինչ իցեր՝ որով
ծածկեալ էր զերկիր և էր աներևոյթ ։ Լ.սէ՝ թէ 'ի
հրոյ ծածկեալ էր՝ էր մարթ . զի հրոյ բնութիւն
լուսաւորիչ և երևեցուցիչ է իրաց ։ Լ.ս ուր երբէք

1 Յոր. ՝ՈՄՈՐՄԻ։

երևեսցի հուր 'ի խաւարի՝ լոյս ծագէ 'ի նմա։ Այլ ասել թէ օդով ծածկեալ էր երկիր՝ մնմանն է, զի օդոյ անօսր և լրթագոյնս բնութիւն է. զի 'ի վերայ երևելի կերպարանաց արձակէ գնչանակ իւրոց աղօտ աղօտն նշուլիւք. զի երևեսցին 'ի մօտոյ միմեանց երեսք տեսողաց նուազագոյն լուսով նորա։ Այպա զայն պարտ է ածել զմառ, եթէ ջուրք ծաւալեալ ուներին զամ երեսս երկրի. քանզի չև և սակաւին ժողովեալ խնաւութեն նոցա յերեսաց յերկրէ յիւրաքանչիւր կայանս իւրեանց։

Այլ յայսմանէ՝ զոր լուաք, յայտ եղև՝ եթէ ոչ միայն աներևոյթ էր երկիր, և անպատրաստ։ Պիտէք, սիրելիք, զի յորժամ ծովացեալ մթացեալ կայցեն բաղում ջուրք յանդաստանս, խափանիչ լինին բուսոյ ծնանդեան երկրի։ Այլ արդ յայտ եղև՝ եթէ ջուրքն էին պատճառն երկրին չերևելոյ, և անպատրաստ կազմութեն նոքին էին դարձեալ պատճառք։ Այս է պատրաստութիւն կազմութեն երկրի, բոլոքն՝ որ անդատին 'ի նմին լինին նմին զարդասրանք, աղգի աղգի բազմատոհմ բողբոջք խոտոց, որովք զարդարին ձորքն և հովիտքն, և ՀԵՄին ՀՕՀին 'ի վերայ երեսաց երկրի 'ի ՀՆՏԷլ քաղցրաշունչ հողմոյ, մարգքն ծաղկազարդք և դաշտք կանաչագեղք, արտք բուսաբաձակք՝ և վիճակք պտղալիցք, լերինք անտառախիտք և բլուրք պրակագեղք, ծառք վարսաւորք և տունկք հովանաւորք։ Այս ամենայն զարդք երկրիս չև էին երևեալ. այլ հայեցեալ ակն ունելին հրամանին՝ որ ՀԵպկցէ ծնանիլ նմա յիւրաքանչիւր ժամանակի զամ ինչ զոր յառաջագոյն պատրաստեաց և եդ 'ի նմա ակնարկելով կամաց իւրոց։

"Այլ խաւար, ասէ, ունէր զերեսս անդունդոց"։ Հա մեզ և պատճառ սրտայօդիցն, և սկիզբն գիւտից այնոցիկ՝ որ զամաքրշտութիւնն ստեղծանեն 'ի մնաց, որք ըստ իւրեանց չարութեն կամաց ստանդէն զանն ՀՇմարտութեն։ Զ 'ի խաւարն ոչ որպէս ասէն. քանզի օդ անլոյս է, և ստուեր տեղեաց՝ յոլոց արդելու լոյս 'ի պատճառս տարերց ինչ որ կաց-

1 Ցոր. մարդն ծաւալորդք և դաւոք խանգիեն։ Աւրդ բուսոյսն։

ցեն 'ի դիմաց։ Աչք ասեն 'ի զօրութենէ չարին է. այսինքն ընութեն չար, և յիւրմէ յանձնէ ունի զըստ կիզն իւր, և թշնամին է և հակառակորդ բարութեցն ոյ։ Օ ի եթէ ՝ն՝ծ, ասեն, լոյս է, ապա յայտ է՝ եթէ զօրութիւնն որ կայ հակառակ նմա՝ խաւար է։ Աչ ըստ նոցա մտացն այսպէս և մեկնութիւն բանիցն իւրաքանչիւր։ Որպէս ասեն, ոչ յիրիք պատճառանաց գտաւ, այլ ինչ մի չար է՝ որ ինչ յանձնէ եկաց։ Թշնամի է, ասեն, ոգւոց և պատճառք մահու, և հակառակորդ բարեաց. և այսպէս գտաւ ինքնին[1] և ոչ էղև նորա երբէք ՝ն՝ծ արարիչ։ Աչ նկաւ բազիք բանից գրոց եղեն պատճառք մոլորութեց նոցա։ Աչ զինչ ոչ բղխեաց յայտմ յտտակ բանէ՝ զոր լուան չարաչար կամակորքն։ Ա՞չ ահա ՝ամ անօրէն և առանց ՝ոյ ուսմունք աստի գտին պատճառս։ Ա՞ր գայլք յափշտակողք իցեն՝ որ ոչ աստին հարին խնամ, և հատին հօտս 'ի հօտից ՝Ռ՝ոի։ Օ ի յայտմ բարբառոյ, թէ խաւար ունէր զերեսս անդընդոց, առին սկիզբն մոլորութենէ արկանել յոգիս մարդկան՝ եթէ մարկիոնեստեայք, և եթէ ծայդանձիք[2], և եթէ պղտորեալ ուսմունք կողմանն Ա՝անեայ։ Աչ եթէ ոք կոչէ զնոսա փուտ եկեղեցեացն ՝Ռ՝ոի, ոչ ինչ մեղանչէ. զի ըստ արժանաւորութեն գրոցն նոցա անուանէ զնոսա։

Աչդ ընդէր փախչիցիք առ մոլորութիւնն 'ի ՝ճշմարտութենէ աստի, ով մարդիկ, և պատճառս 'ի կորուստ կենաց ձերոց կարկատէք ձեզ ձերոցդ անձամբ. զի պարզ և մեկին բանք էն պատգամք ՝ճշմարտութենն, և գիւրին առ 'ի յընդունել։ Աչդ զինչ պատճառք իցեն՝ որով երկիրն աներևոյթ էր, եթէ ոչ անդունդքն՝[3] որ հեղեալ կային 'ի վերայ նորա։ Աչ զինչ իցէ մեկնութիւն անդընդոցն, այլ ջուրքն բազումք ծովացեալք՝ որ ոչ անցանէին 'ի նեղբին կողմն երկրին սանդարամետաց։ Աչ իբր բազումք 'ի ջուրս յտտակս բազում անգամ երևին լուսով 'ի մէջ նոցա, յորժամ կայցէ ոք զեր 'ի վերոյ և հայեցի 'ի

1 Յօր. 'ի ՝Ներքսն։
2 Յօր. Ե՝ՐԵ մարկիոնեստայք.
Ե ԷՐԵ ծայդանձիք։
3 Յօր. անդունդն։

ներքս։ Այլ զիմարդ արդեւք ոչ ինչ երեւէր 'ի մասանց երկրի 'ի մէջ ջուրցն։ Այլ զի առանց լուսոյ ոչ երեւին, և օդն՝ որ տարածեալ կայր 'ի վերայ՝ խաւարաւ ծածկեալ էր։ Այսոյ Ճառագայթք արեգական յորժամ անցանեն 'ի մէջ ջուրց՝ յայտ յանդիման ցուցանեն զգաքարինս և զաղգի ազգի գոյս 'ի մէջ ջուրցն 'ի ծանաւ ծաղուտ տեղիս. իսկ յորժամ 'ի խաւար մթին աղջամղին իցէ, ոչ ինչ՝ երեւի 'ի մէջ ջուրց։ Այլ յայտ մանէ յայտ է, եթէ ջրովքն էր երկիր աներեւոյթ և անպատրաստ. մանաւանդ զի խաւարն էս ունէր ամենեւին զամ երեսս անդրնդոցն։

Այլ ոչ զօրութիւն բազմութեն ջուրք անդրնդոց էր հակառակ, որպէս վրիպեցին ոմանք ասել. և ոչ դարձեալ խաւար գլխաւոր զօրութի է չարին, որ գտաւ լինել զուգակից բարւոյն։ Օ 'ի երկու յորժամ գտաւ նիցին հակառակ միմեանց՝ մինն առաքինութիւ իւրով կորուսիչ է ընկերին իւրոյ. և բազում դժուարին իրօք պատրաստ են 'ի վերայ միմեանց, և անդադար կան միշտ հակառակ միմեանց, և առնեն մարտ պատերազմի մեծաւ ճգնութիւ։ Այլ յորժամ յաղթեսցէ մի ոք 'ի նոցանէն ընկերին, ամենեւին սպանիչ նորա լինի։ Այլ թէ, հասարակ զօրութ, ասիցեն, մարտնչի չարն ընդ բարւոյն, պատերազմ անհանգիստ և անդադար պատմեն, և եթէ սատակումն երկոցունց 'ի միմեանց լինի, յորժամ այնպէս միշտ 'ի վերայ միմեանց սատակացեալ զօրանայցեն։ Իսկ եթէ առաւել իցէ յոյժ բարին զօրութեամբ, զիմարդ տայր կալ ամենեւին ընութեան չարին, և ոչ բնաւին սատակաջինջ լինէր։

Այսց ես զարմացեալ եմ ընդ նոցա, թէ զիմարդ ինքն ոչ յինքեանց յանձանց անն ածեն, զի զոր ոչն է իշխանութիւն խօսել՝ խօսին։ Այլ յորպիսի՞ հայհոյութիւնս համարձակեցան մտանել Ճառիւքն իւրեանց. զի կեանք զմահ ոչ ծնանին, և ոչ երեւելոյ լուսոյ՝ խաւար ցուցանել, և ոչ հիւանդութիւն հաստատիչ է առողջութե. և 'ի հակառակ իրաց լինել իւրեանց հակառակորդացն չէ հնար. այլ ծնանիլ ազգ

1 Յոր. ։ Բ։

յազգէ իւրմէ մարթի, և ոչ'ի հակառակորդէն իւրմէ։
Զ.ՍԼ ԵԹԷ ոչ իսկ իցէ, ասեն, չարն[1] և ոչ յայ-
եղև, իսկ ուստի եղև։ Զսացաք. ոչ ոք յամառէ՝ եԹէ
ոչ գոն չարիք. այլ ոչ այնպէս՝ որպէս նոքայն ասեն.
այլ մեք ասեմք, եԹէ առնին չարիք գործովք՝ զոր
մեք գործեմք. և ոչ որպէս նոքայն ասեն՝ Թէ կենդ-
մանի է չարն քնուԹիւն։ Զ.Ս մեք մի կործեսցուք՝ եԹէ
արտաքոյ կամաց մերոց իցեն չարիքն, և մի վրիպես-
ցուք՝ եԹէ յառաջագոյն լեալ իցէ։ Զ.Ամենի իւրա-
քանչիւր ոք'ի մէնջ գիտէ, Թէ չարութիւն իւրոց
կամացն է, և կարծիք մեղացն՝ զոր ածէ մարդ զմտաւ՝
են հակառակորդ բարեաց։ որ լինին'ի ծուլութենէ
ոգւոցն՝ որ ախորժեն զչարիս[2]։ Զ.Ս զայս ամ իրմն՝
որ'ի քնուԹենէ մերմէ լինին, մի գիւցուք'ի կողմանէ
չարեաց, մի զծերութիւն և զհիւանդութիւն, և մի
զայլ ամ իրս՝ որք յիւրեանց անձանց ինքնին լինին,
կարծեսցուք զանմանն կարծիս՝ Թէ ինչ մի օտարոտի
է և ունի իւր սկիզբն յանձնէ, և'ի նմանէ գիպին
մեզ այնոքիկ[3], որովք տրտմիմք և կամ ուրախանամք։
Որպէս զի յորժամ սկսանիցի փորել ոք ջրհոր, և
գտանիցէ անդ գանձ. կամ յորժամ ելանիցէ ոք երա-
Թալ'ի հրապարակ, և պատահիցէ նմա շուն կատաղի։
Զ.այց'ի մեր ձեռս է այս, հնազանդել զցանկու-
Թիւնս մեր, և նահանջել զչարութիւն մտաց մերոց,
և արգելուլ զյանդգնութիւն[4] ցաստման մերոյ՝ յոր-
ժամ լինիցին յայլոց գրգռութենէն։ Զ.ս մեծարգի
համարեսցուք զանս ճշմարիտս առանց երդման՝ քան
զստութիւն ամբարշտութեան։ Զ.ս եղիցուք հեզ և
քաղցունք վարուք, խոնարհք հոգւով, և մի հպարտք
և ամբարհաւաք'ի միտս ամբարտաւանութեան։ Զ.ՐԴ
վկայեմք՝ եԹէ մեք եմք տեարք վարուց մերոց. մի
խնդրեսցուք Թէ այլ ուստեք ունիցին սկիզբն չարիքն։
Օ'ի եԹէ'ի մերոց ոչ լինէին չարիքն, ոչ էր մեզ երբ
կեղ օրինաց, և ոչ գան և պատուհաս'ի դատաւո-
րաց։ Օ'ի արժանաւոր չափով հատուցմունք են չա-
րագործաց ըստ գործոց գնացից իւրեանց։

1 Յօր. չարն։
2 Յօր. ղարն։
3 Յօր. այնոսիկ։
4 Յ'ր. յանդգնութիւն։

Օ այս ասացաք, զի ցուցցուք թէ չէք չար բնութիւն՝ որ ունիցի անձն կենդանի։ Բայց զՀիւանդութիւն և զաղքատութիւն և զմահ և զթշնամանս և զազգի ազգի ցաւս և զախտս, և զնա՛ ինչ՝ որ տրտմեցուցանէ զմարդիկ, չէ պարտ և պատշաճ՝ ի կողմանէ չարեացդ համարել. և ոչ զՀանգիստն՝ որ կարծեն թէ իցեն հաւասակ նոցա, ՝ի մեծ մտանէ առաւելութիւն համարել։ Օ ի կէսքն ՝ի նոցանէն՝ որ լինի, բնութիւն մերոյ են. և կէսքն ՝ի շահ օգտութիւն մերոյ լինին։ Բ.ուրդ զնա՛ կերպարանն և զընդունայնակարծ ՝ կարծիսն պատմութեաց հեռացուսցուք ՝ի մէնջ, և զպատմութիւն բանին՝ որ ցուցանէն զխաւարէն՝ պարզ մտօք առանց խորամանկուն կալցուք, և արժանաւոր խորհրդովք երթիցուք սակայ զՀետ մտացն գրոց։

Այս արդ խնդրեսցուք փութով, եթէ ընդ աշխարհ հի՛ որ եղև, և հաստատեցաւ խաւար. և եթէ կանուխ իցէ խաւարն քան զլոյսն. և զիա՞րդ իցէ՝ զի նախ խաւարն գոտաւ առաջին։ Այսմ զխաւարէն, թէ ոչ ինքն յիւրմէ անձնէ եղև, այլ առ ՝ի չգիւտից լուսոյ գոտաւ խաւարն, և ՝ի տարերս օդոյ։ Բ.ուրդ ո՞ր տեղի իցէ աշխարհի, որ ոչ լինիցի յանկարծակի աւելորդ ՝ի մտանէ լուսոյն, յորժամ ամփոփիցէ զՀառագայթս իւր, ըստ օրինակի խաւարին՝ որ ունէր զերեսս անդընդոց ջուրց։ Այս եթէ այժմ առ ՝ի չգոյէ լուսոյն առնի գիւտ խաւարի, յայտ է՝ եթէ և յայնժամ, վասն զի չէ էր ծագեալ լուսոյն, ունէր խաւար զերեսս անդնդոցն։

Բայց մի՛ կարծեսցուք, թէ էր ինչ հաստատեալ ազգելի և եղծանելի յաշխարհիս, կամ ընդ սմա։ Յայտ է՝ թէ ՝ի լոյս ելեալ՝ ամ վերինքն հոգեղէնք։ Բ.անզի ոչ մեծապատիւ կարգացն հրաշտակաց, և ոչ անհամար զօրացն երկնից, և ոչ, եթէ իցէ ինչ՝ որ անուանեսցի և որ ոչ անուանիցի, կամ ՝ի հոգեղէն պաշտօնեիցս, կամ ՝ի բնութենէ խօսնոց, ելիս բանակք նոցա երթեալ՝ ՝ի խաւարի, այլ՝ ՝ի լոյս և ՝ի հոգևոր խաւ զաղուեթ ըստ պատշաճին իւրաքանչիւր արարածոցն։

1 Յոր. գնդ-անայն կարգ։

Լոյս ընդ այսր ընդ դէմ Թերևս որ յամառէ. և ամենեքին որ սպասին ընդունել զպարգևսն, զոր խոս տացեալ է վասն հաճոյիցն և գործոցն բարութեան, լոյսն երկնաւոր է. ըստ այնմ զոր Պաղտմին ասէ, թէ լոյսն արդարոց մինչև ի նաւոր է. և ըստ այնմ՝ զոր Գրաբերն ասէ, թէ Գոհանամ զքեզ Հօրէ, որ արժանի արար զձեզ ամենեսին որ պատրաստեալն է սրբոց ի լոյս։ Օ՛ի թէ որք դատապարտին՝ ի խաւարն արտաքին առաքին, ապա յայտ է՝ թէ բարեգործք ի լոյսն բարձանց, որ ի վերս է քան զաշխարհս, պարգևին ըստ արժանաւորութեան իւրաքանչիւր վասոյ։

Երբոլ եղէն երկինք և ՃգԵցան յանկարծակի յաւկան թաթափել հրամանաւ արարչին, տարածեցաւ կալաւ բոլոր բոլորակ երկնից թաղուն սերտութեանն զտարերսն՝ որ ընդ իւրև, և բաւական եղև մեծատարած շրջան նորա, որ պատեաց զամ արտաքուստ, ցուցանել զմեծ ծոց փորածի նորա. և վայրքն՝ որ գտան փակեալ ընդ նովաւ, մնացին առանց լուսոյ՝ սահմանաբ երկնից և երկրի։ Զանգ երեք իրք են երևեցուցիչ ստուերի. լոյս[1], և տարր ինչ իրիք, և վայրք առանց լուսոյ։ Զորդ խաւարն որ ի նա եղև՝ արգելեալ փակեցաւ ի մէջ աշխարհի, ի տարերցն երկնից և երկրի գտաւ. և յայտնի օրինակ է, որ կայ առաջի աչաց քոց. ի միտ առ զայնս որ ասին։ Որպէս զի հարկանիցէ զք տաղաւար ի սաստիկ լուսաւորութեանէ ի մէջ օրէի ժամանակի, և պատիցէ զնդիցէ փայտիւ զամ կողմանս տաղաւարին, զի մի ուստեք լիցի ամենեքին մուտ նշուլից լուսոյ. ի ներքս հայեցեալ տեսանիցիր, որչափ թանձրամած խաւարաւ մթացեալ գտանիցի որ ի ներքս[2] ի տաղաւարի անդ դիպեսցի։ Ոստ նմին օրինակի եղև խաւար յայ առնուլ զկանխութիւնն լինելոյ ի ձեռն տարերցն արտաքնոց։ Զոր ի նոցն խաւարն որ եղև, ծածկեալ ուներ զերեսս անդնդոցն, հաղորդութեամբ օդոցն՝ որ տարածեալ ուներ զայսմանութիւնս մարմնոցն։ Զոր եթէ այսպէս էր, ապա ուրեմն բարւոք ասացեալ է՝ թէ խաւար և ջուր ունէին զերեսս ամի։

1 Յօր. Վայրս։ 2 Յօր. գտանէի ի ներսս։

Լոս գարձեալ ասէ թէ « Հողմ՝ այ շրջեր 'ի վերայ ջուրց »։ Լուդ եթէ վասն ընդելոյ հողմոյն և օդոյն ասացին գիրքք՝ ընկալ. զի և վասն հողմոյն պատուեցաւ քեզ 'ի գրոց. քանզի և նա մասն մի է յայնցանէ՝ որ հաստատեցան ընդ երկինս և ընդ երկիր, թէպէտ և ոչ անուանեցին գիրքք զլինելն նորա, որ ընդ օդոյ և ընդ հրոյ և ընդ ջրոյ առ և նա զիւր արարածն։ Բայց վասն Հոգւոյն այ պարտ է իմանալ զբանն, թէ նա երթայր և գայր 'ի վերայ ջուրցն։ Քանզի եղև հարցուած վասն սորին բանի 'ի մէջ առաջնոց՝ որ յառաջ քան զմեզն էին, և ասեն՝ թէ Հոգին սուրբ է. վասն այսորիկ ասեն ժամապահ գիրքք մուծանել միանձնուելեաւն և զարմանալով զյիշատակ նորա. զի կատարումն փառաւորեալ Երրորդութեան եղեցի հաւատարիմ։ Լոս մեզ զոյն պարտ և պատշաճ է ընդունել զի մեծաշահ օգտութիւնս գտցուք 'ի սմանէ։

Իսկ եթէ զինչ պատճառք իցեն երթևեկի նորա 'ի վերայ ջուրցն երեսաց, ասեմ՝ ոչ զիմ բանս՝ այլ զառն միոջ ասորւոյ. որպէս երևէր անչափ օտարոտի 'ի մարդկեղէն իմաստութեանէ աշխարհիս, առաւել քան զոյն մնաց և ընտանի էր վարժից ճշմարիտ վարդապետութեան։ Բայց զբանս 'ի բարբառս լեզուին Ասորւոց լուսաւոր ճառիւք. քանզի, որպէս ասեն, մնաց է ասորի լեզու 'ի հեբրայեցի, մանաւանդ 'ի միտս գրոց բանից։ Բայսպէս են, ասէ, միտք բանին որ ասէ, թէ երթայր և գայր 'ի վերայ ջուրց երեսաց. զի ընդ երթևեկիի նորին թխսելով թխսեցին ջուրքն՝ ըստ օրինակի հաւու, զի առ գրգռեալ գթոյն ջեռուցանէ և թխսիցէ զձուս՝ որ կայցեն ընդ նովաւ, տալ 'ի նոսա զկենդանութիւն և արկանել խլրտումն զեռալոյ։ Այսպէս և Հոգին այ երթայր և գայր 'ի վերայ ջուրցն երեսաց, և գրգիչ գթոյն հանդերձեր պատրաստեր զջուրսն՝ ծնանել զամ շունչ կենդանի ըստ ազգի իւրում։ Լոս յայսմանէ յայտ լիցի, թէ և Հոգին՝ զբարարիչ է, և չէ ինչ թերի յարարչութենէ անտի։

« Լոս ասաց ՅԾ. Եղիցի լոյս. և եղև լոյս »։ Լուսաւ ջին բանիւն այ կատարեալ կազմեալ լիով իւրով բնութեամբն։ Լոս այսու բարբառոյն լուծաւ եղծաւ խաւարն, և քակեցաւ ապականացու աղջամուղջն. սա-

տակեցաւ կորեաւ տխրութիւնն, և զուարթացան
և զուարճացան արարածք ամ. ծագեաց լոյս յաշ-
խարհս, և յայտնեցան երևեցան երեսք ամ ըստ իւ-
րաքանչիւր կերպարանաց։ Փարատեաց պարզեցաւ
խաւարն՝ որ մածեալ ունէր զերեսս երկրի, և յայտ-
նեցան ազգի ազգի գեղքն նորա ըստ իւրաքանչիւր
վայելչութեց. որպէս և վկայէն աչք ամ տեսողաց
մինչև ցայսօր ժամանակի՝ մեծասքանչ և դժուարա-
պատում զարմանալեացն։ Յայտ յանդիման երևէր
և օրն իւրով ցանկալի վայելչութեամբն, լուսաւո-
րեալ պայծառացեալ ամենևին 'ի քաղցրահայեաց
լուսոյ Ճառագայթից։ Վանդի տարածեաց արկ լոյսն
զիւր բոցաձաձանչ Ճառագայթսն՝ զամ մեծածիգ երա-
կայնատարած տարածիւք օդոյն, և արար երևելին
տեսիլ ականակեաղ աչաց տեսանելի։ Այլ մինչև 'ի
վերին եթերն և 'ի հաստատութիւն երկնից ձգեաց
զտարածածս իւրոյ նշողզարդ լուսաւորութեն։ Այլ
ամփոփեաց կալաւ ընդ լուսով իւրով պայծառութեն
զլայնութիւն և զերկայնութիւն երկրի, և արգելեալ
փակեաց 'ի ներքս զամ կողմանս և զչորս անկիւնս աշ-
խարհի, զարեւելս և զարևմուտս և զհիւսիս և զհա-
րաւ։ Այլ արագընթաց ակնարկելով իւրով մեծա-
սաստ հրամանատուին, տարածեալ սփռեցաւ տիրել
'ի վերայ ամի, զոր փակեալ ունի 'ի ներքս սահմանիչ
բանն երկնից և երկրի։

Վանդի բնութիւն լուսոյ նուրբ և երագ բնութե-
է, յանկարծածագ և վաղահաս ծագումն։ և չէք
ինչ այլ երագութիւն, և ոչ ակն թօթափել՝ թէ
զուգեսցի՝ ընդ երագածագ ծագումն մեծասքանչ
բնութենն։ Օ՜ որ օրինակ տեսիլ աչաց մերոց ոչ յա-
մելի ժամուք առնեմք 'ի վերայ իրաց ինչ՝ զոր կամ-
ցիմք տեսանել, նոյնպէս և լոյս իւրով երագընթացն
ծագմամբ ծագէ 'ի վերայ ամի յանկարծակի առանց
յամեցուցիչ ժամուք՝ 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկ-
րի միով երագահաս ակնարկելով. որ ոչ նկարի և ոչ
'ի միտս մարդոյ անկանի՝ թէ արդեսք ինչ իցէ փոքրը-
կութիւն ժամանն՝ որով լուսաւորէ միանգամայն զա-
մենայն արարածս։

3 Յօրինակին զ--գէոէ։

'Ի ծագել լուսոյն եղև օդն ուրախարար[1] տեսողաց, և ջուրք հաձոյ ազաց հայելոյ. ոչ միայն զի լուսաւորեացն զնոսա, այլ և յիւրեանց լուսաւորութեէ անտի առաքէն լոյս՝ լուսաւորել զայլ[2] տեղիս. ըստ օրէնսակի, որպէս երևի յորմն 'ի լուսաւորութեէ ջուրց, և առնու վազս վազս յայս կոյս յայն կոյս. և մեծապայծառ լուսաւորութիւնն՝[3] որ ծագէ 'ի նոսա, զեռայ և խաղայ 'ի նոցանէ յայլ տեղիս։ Այս յայտ է՝ թէ բարբառ ՅԾՈՒԹԵՆ զամ իրս հանգստեան և ուրախութեէ հաստատեաց 'ի վերայ ՅԱՄ լուսոյն։ Այս զոր օրինակ որք յանդունդս խորոց ջուրցն իջանիցեն, և 'ի լուսոյ իւրոց՝ զոր առաքէն առաջի իւրեանց, կալցեն կալ 'ի վերայ տեղեացն՝ զոր խնդրեսցեն, սոյնպէս և ամենատէրն ամենարարն արկ մեծազօր բանիւ իւրով մեծու�Ձ ակնարկելոցն յաշխարհ, և զլոյսն ընդհալից հաստատեաց եդ 'ի նմա, առ 'ի վայելել ամենեցուն՝ որ մտանիցեն 'ի նա։

"Այս ասաց, ասէ, ՅԱԾ. Այդ լոյս,,։ Այս կատարեաց զհրամանն գործն, և եղև լոյս ընութեամբ։ Իսկ որչափ ինչ քաղցրահայեաց և ցանկալի իցէ տեսիլ լուսոյն, անցանէ ըստ քնութեանն մտաց մամ մարդկան, և չէն բաւական հասու լինել անքնին վայելչութեանն նորա։ Այլ յորժամ լսես՝ թէ բարբառեցաւ ՅԱԾ և խօսեցաւ արարիչն և ետ հրամանն հաստիչն, մի կարծիցես՝ եթէ բարբառ էր որ ելանէր յանդամոց յօդս, և լեզու էր՝ որ բախեր ընդ գործիսն որ կազմեալ էին հանել զշնչիւն ձայնից և տան արտաքոյ զլուսն իւրեանց։ Օ՜ի այ՝ ակնարկելոցն մեծութեան իւրոյ կատարին կամք իւր յամենայնի՝ զոր և կամիցի առնել։ Այս վասն իմանալոյ այնոցիկ՝ որ գալոց են յուսումն վարդապետուութեան, կարծեցուցանէ՝ թէ մարդկեղէն խօսեացի բարբառով, և առնու զկերպարանս մարմնաւոր բանից վասն մերոյ օգտութեան։

"Այս ետես, ասէ, ՅԱԾ զլոյսն՝ զի բարի է,,։ Արդ զի՞նչ ինչ ունիցիմք արժանաւոր ասել ընդ լուսոյն՝ թէ բարի է, ուր արարիչ նորա[4] վկայեաց կանխաւ՝

1 Յօր. օդն ոչ խաւար։
2 Յօր. զայլ։
3 Յօր. լուսաւորութիւն։
4 Յօր. որմէնէ որ Վայեաց։

թէ բարի է. Թէպէտ և առաքէն բանք մեր յընտրո-
ղութիւն տեսանելեացս մերոց, լինել ընտրիչ՝ որ գէ-
ղեցիկն է և բարւոք երևին, սակայն չիք ինչ խօսել
բանից՝ որ կանուխ իցէ վկայութիւն մտացն քան զտե-
սիլ աչաց, որ տեսանիցեն զվայելչութիւն գեղոյն։
Օ՛ի եթէ է ինչ գեղեցիկ յայլ մարմնոն, ՝ի ջոյոյ և
՝ի մասանց՝ զոր ունին ըստ իւրաքանչիւր յօդուածոցն
բնութեանցն, որ գան ՝ի մի վայր բազումքն և լինին մի
գեղ, և է գեղ վայելչութեան. ոչ այնպէս և լոյս. զի
լուսոյ պարզ բնութիւն է և միատարր կերպարանք,
հաճոյ աչաց հայելոյ և գեղեցիկ ՝ի տեսանել։ Այս-
պէս զնիահարթ նմանութիւն ունի, և ոչ ՝ի բազում
մասանց հաստատեալ կայ ցանկալի բնութիւն նորա,
այլ ՝ի վայելուչ տեսլենէ և ՝ի քաղցրահայեաց լու-
սաւորութենէ իւրոյ մեծաբանչ պայծառութեան։
Այլ ոսկի դարձեալ վայելուչ և գեղեցիկ է գունով.
և ոչ ՝ի բազում մասանց ունի զգեղեցկութիւն, այլ
՝ի գունոյ իւրոյ վայելչութենէն ունի զգեղն ցանկալի։
Այլ աստղն առաւօտին, որ մերթ երեկոյին լինի, ըստ
նմին օրինակի վայելուչ և գեղեցիկ է. և ոչ ՝ի բա-
զում մասանց ունի զգեղեցկութիւն, այլ ինքնին իսկ
ամենևին գեղեցկութիւն է, այնու՝ զի ուրախ առնէ
վայելչութիւն զտեսիլ աչաց՝ որ հայեցին ընդ նա։
Իսկ այ ոչ երեսօք՝ որ հայեցին և ցանկացեալ փա-
փաքեցին բարւոյ, երևի բարին. այլ մեծաբանչ ի-
մաստութեամբն կանխաւ ասաց զլուսոյն՝ թէ բարի է.
Օ՛ի յայտ արասցէ՝ թէ որչափ օգտութիւնք և հան-
գիստ գտանին ՝ի նմա՝ այնոցիկ, վասն որոյ կազմե-
ցաւն լինել. մնանամդ զի ոչ ևս տակաւին լեալ էին
աչք մարդկան հայել ընտրել զգեղեցկութիւն լուսոյն։
«Այլ մեկնեաց, ասէ, ՝ած ՝ի մէջ լուսոյն և խա-
ւարի»։ Այլ իբրև խտրոց միջնորդաւ հեռացոյց ըզ-
բնակութիւս նոցա առ ՝ի միմեանց, այնպէս՝ թէ իբրև
հակառակ միմեանց արար զնոսա յարդարիչն յօրի-
նուածոց։ Այլ եղ սահման ՝ի միջի՝ զի գնասցեն մի-
մեանց զկնի, և զատոյց մեկնեաց զվարս գնացից նո-
ցա առ ՝ի միմեանց։
«Այլ կոչեաց, ասէ, ՝ած զլոյսն տիւ, և զխաւարն
կոչեաց գիշեր»։ Այլ ասա յետ լինելոյ արեգականն՝

որ կոչէր տիւ լուսոյ արեգական, որ 'ի վերայ օդոյ տարածանի ըստ գնացից լուսոյն՝ որ տիւն 'ի կիսոյ գնդին արեգական։ Լոյս գիշեր, որ է ստուեր երկրի և այլ ևս տարերցս, երևի 'ի մտանել արեգական։ Բայց լոյն որ եղև յաւուրն յառաջնումն, ոչ ըստ գնաց ցից արեգականն երևէր, որ լոյն էր ցիր ծագմամբ և ժողովելի կատարմամբն իւրով ըստ չափոյ՝ զոր եդ նմա ՅԾ. զի տիւ կատարէր, և զնորուն զինի գիշերն մտանէր։

"Լոյս եղև, ասէ, երեկոյ և եղև վաղորդեան, օր մի"։ Զի երեկոյն սահման է հասարակացն՝ գիշերոյն և տուրնջեան, և առաւօտն ըստ նմին օրինակի դրացի է գիշերոյն և տուրնջեան։ Բայց զի արասցէ պատիւ կանխուէ տուրնջեան՝ ասաց նախ զվախճան տուրնջեանն, և յետ նորին ապա և զմուտ գիշերոյն։ Բայց մինչ չև լեալ էր լոյն աշխարհի, ոչ գիշեր էր՝ այլ խաւար. իսկ յետ երևելոյ լուսոյն, եկն նախ ա-նուն տուրնջեանն, և ապա յետոյ և խաւարն գիշեր կոչեցաւ։

"Լոյս եղև երեկոյ և եղև վաղորդեան, օր մի"։ Ընդ տիւ և ընդ գիշերն համարեցաւ օր մի. և ոչ անուա-նեաց զանուն տուրնջեան և գիշերոյ, այլ միւսանուանն՝ ետ զընթացսն երկոցունց։ Լոյս զոյն սովորու-թեն գտանեմք անուանեալ 'ի գիրս. զի յորժամ զչափ ժամանակացն համարեացի, զտիւն միայն արկանէ 'ի թիւ, և ոչ զգիշերն ընդ տիւն համարի. ըստ այնմ՝ որ ասէն 'ի Սաղմոսին, թէ Լուրբք կենաց իմոց որ են 'ի մեզ եւթանասուն ամ. և դարձեալ ասէ, թէ Հնակեցայց 'ի տան տն զամ աւուրս կենաց իմոց։ Լոյս Յակոբ ասէր, թէ Լուրբք պանդխտութեան կենաց իմոց սակաւք են և վշտագինք։ Լոյս նոյն օրինակաւ պատմութեն աւանդեցաւ մեզ 'ի գրոց, որ ունի զո-ւրեխս մշանջենաւոր, և կարգի գայ 'ի սկզբանէ աշխարհս մինչև ցայսօր ժամանակի[2]։

"Լոյս, ասէ, երեկոյ և եղև տուրնջեան, օր մի"։ Իսկ ընդէր ոչ արդեւք ասաց առաջին, այլ օր մի. քանզի առաջին ասել՝ մերձաւորագոյն իմն է արկա-

1 Յօր. անուն։ 2 Յօր. ժամանակ։

նել՝ի կարգ երկուցն և երիցն և չորիցն։ Զ.յլ ասէ օր մի, զի սահմանեսցէ զչափ տուընջեան և գիշերոյ ՝ի միաբնակութիւն կողմանցն երկոցունց. զի ՝ի քսան և ՝ի չորից ժամուց իւրեանց կատարեսցին զերկայնութիւն աւուրն բովանդակի։ Զ.ի թէպէտ վասն փոփոխմանցն արեգականն անցանելն զմիմեանսիք, այլ իւրաքանչիւր ՝ի նոցանէ ժամանակ զատաւ, և մեկնեալ է ըստ իւրաքանչիւր ընթացից։ Զ.ի եթէ քսան և չորք ժամք տուընջեան և եթէ էին, տիւն միայն կատարեր զօրն առանց հաղորդութեան գիշերոյն։ Բ.այց քանզի ոչ ունի տիւ քսան և չորս ժամս, ՝ի նշանակէ երևեալոյ արեգականն մինչև ցմուս նշանակ երևեալոյ նորա առնէ կատարումն աւուրն քսան և չորիւք ժամուք տուընջեան և գիշերոյ։

Զ.ուդ յորչափ և լինիցի երեկոյ և վաղորդեան չորք ՝ի երեալոյ արեգական ըստ աշխարհիս, ՝ի կատարեալ ընթացից արեգական ժամէ ՝ի ժամ ընդ տիւն և ընդ գիշեր օր մի կատարէ։ Կամ թէ այսպէս ՃՀմարիտ իցէ. զի ոչ միայն գրելովքն որ պատմին՝ լինի. յայտ է թէ որպէս հաստատեաց ՝ուծ գնա ՝ի գնացս բնութ ժամանակաց, այսպէս և դառնալով նորա անդրէն ինքեանք լինիցի յայտ՝ թէ անցանելոց էն ժամանակք։ Զ.անզի մին օրն շրջի զշաբաթուն, թէպէտ և եւթն օրն անուանի, և նոցն մի օրն անցանէ զեւթնեքուանք, դարձեալ անդրէն գնոքիւք զառաջանի գալ հասանել ՝ի նմին։ Զ.ս օր կատարիչ է շաբաթուն, որ ինքն զինքեանք շրջի և անդրէն ՝ի նոյն դառնայ։

Զ.ս յայսմ՝ ամէն հասու լինիցիք՝ թէ ժամանակեան և անցաւոր է աշխարհս, և վասն այնորիկ ոչ անուանեցաւ ՝ի սկզբանն ժամանակաց օր առաջին, այլ օր մի. զի յանուանէ միոյ աւուրն, վասն միոյ ՃՀմարիտ աշխարհին, որ կայ մնայ յաւիտենական, զի ցուցցէ և յայտ արասցէ՝ թէ օրն միանձն մեկնաւոր ոչ ունի հաղորդութեան ընդ այլ աւուրսն։ Զ.ՀՀնշանակէ աւուրն՝ որ եդաւ սկիզբն արարածոց՝ մեկնեցաւ մեզ, զի արժանի և յիրաւի ասացաւ մեզ. թէպէտ և ուրեք ուրեք անուանեն գիրք յաւիտեանս. ըստ այնմ՝ զոր Զ.ուաքեանն ասէ, Զ.ի թէ ցուցցէ յաւիտեանց՝ որ գալոց է։ Զ.ի յայսմանէ յորում էանք, և ՝ի շրջիլն

զմեռք օր ըստ օրէ, յայնցանէ 'ի միտ առցուք զայն աշ-
խարհ՝ որ ոչ անցանէ։ Օ՛ի մի օր լինելոց է անդ, որ
ոչ ունի զթիւ առաջնոյ և զերկրորդի և զերրորդի,
և ոչ զփոփոխմունս ինչ ազգի ազգի իրաց, ոչ ելս և
ոչ սահմանս, և ոչ զտալ և զառնալ կարգաց ժա-
մանակաց, զանցելոց և որ գալոց իցէն, որպէս ունի
այսօրս այսր աւուր։ Օ՛ի օր մեծ է նա՝ մեծի ծագումն
ՅՍ լուսաւոր և վայելուչ, թէպէտ և անուանիցի խա-
ւարին՝ ըստ այնմ զոր մարգարէն ասէ. թէ Օ՛ի կայ
ձեր և աւուր ՅՈՒՆ, զի խաւար է նա և ոչ լոյս։ Այլ զի
անուանեցաւ խաւար, ոչ եթէ արդարև խաւարին
է, այլ վասն պատժոց պատուհասից այնոցիկ՝ որ առաջ-
քին 'ի խաւարն արտաքին վասն անարժան գործոց իւ-
րեանց՝ անուանեցաւ լուսաւորն խաւարին։ Այլ Դաւ-
թեալ ասէ, թէ Օ՛ի և վասն այլոց աւուր խոստա-
նեալ և ասէր. և դարձեալ ասէ, թէ Դպա ուրեմն
կայ և տակաւին շաբաթն ՅՍ. այս ինքն օրն մեծ՝
մեծին ՅՍ, որ է առանց երեկոյի և առանց կարգելոյ
'ի ժամանակաց 'ի ժամանակս և առանց կատարման։
Այլ զի օրն ութերորդ կոչեաց զնա Սաղմոսն արտա-
քոյ թուոյ գնացից եւթն աւուրց, ուր ոչ գոյ ժամա-
նակ, զի մի օր է 'ի միում աշխարհին։

Դ՛ուրդ եթէ օր ասիցես, և եթէ աշխարհ, զնոյն
զմին ասիցես։ Դայց քանզի 'ի հանդերձեալ աշխարհն
կազմեաց առ հայեցուցանել զմիտս մեր, և 'ի նոյն
կրթել ծածուկ իւրովք ակնարկութեամբք, 'ի միոջէ
օրէ անտի նկարեաց մեզ զմի աշխարհս, որ կայ մնայ
մշտնջենաւոր. այն օր՝ որ է սկիզբն ամենայն աւուրց,
զուգակից լուսոյն, յորում երևեցաւ լոյսն. օրն ՅՍ
միաշաբաթուն և պատուիչ յարութեան ՅՈՒՆ մերոյ 'ի
կեանս մարդկան։

"Այլև, ասէ, երեկոյ և եղև վաղորդեան՝ օր մի"։
Օ՛պատմութիւս քանից այնր երեկոյուոյ կատարեսցուք
յայսմ երեկոյուոջ, և 'ի նմին ժամու սահմանեսցուք
զՀնա՝ զոր առաք խօսել զնմանէն։ Այլ Հայրն բա-
րերար, յորմէ Որդին միածին, որ է լոյս Ճշմարտու-
թեան, զարդարիչն տուընջեան լուսոյն՝ զոր ծագէ
յերկնից, և զուարթացուցիչ գիշերոյ պայծառութիւն
լուսաւորաց, որ է պատրաստիչ Ճշմարիտ հանգըս-

տեանցն մերոց յաշխարհն հանդերձեալ, որ հրաւի-
րեաց զմեզ 'ի լոյս փառաւորեալ յամենեղջ և յան-
սպառ, լուսաւորեսցէ զսիրտս ձեր ճշմարտութեամբ իւ-
լով գիտութեան, և պահեսցէ զկեանս ձեր առանց
գայթակղութեան 'ի պատիւ իւրոյ փառաւորութեանն,
և տացէ ձեզ 'ի տուէ և 'ի գիշերի գնալ արժանաւոր
գնացիւք. զի իբրու զարեգակն ծագեսջիք լուսովն
սրբոց և արդարոց 'ի պարծանս յաւուրն մեծի յայտ-
նութեանն Քրիստոսի։ Օ՛ի նմա և Հօրն իւրում և Հո-
գւոյն սրբոյ հանցուք փառս և զպատիւ այժմ և միշտ
և յաւիտեանս. ամէն։

ՀԱՌՈ ԵՐԲՈՐԴ

ՎԱՍՆ ՎԻՃՈՐԵԱՑ ԱՒՈՒՑ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

Զ՝ՈՐԾՔ աւուրն առաջնոյ, որ և կոչեցաւ՝ որպէս էն ճշմարտիւ՝ մի, քանզի չէ օրէն առնուլ 'ի նմանէ 'ի բաց զանուանն՝ որ տուաւ յարարչէն 'ի պատիւ միոյ միայն բնութեանն նորա, կատարեցան [1] 'ի նմին աւուր։ Վասնզի ոչ եթէ ընդ կարգ այլոց աւուրցն համարի. այլ մի է միաւոր բնութիւն։ Այլ որ ինչ եղևն 'ի նմա, յերեկ որչափ հաստս եղաք՝ պատմեցաք զմեծասքանչ զարմանալին, որ եղև 'ի նմա։ Ինկալաքք 'ի մէջ յերեկ ընդ առաւօտն կերակուր կեցուցիչ ոգւոց ձեր ըստ, և երեկոյն ուրախութիւն զարմանիչ կենաց ձեր ըստ. արդ եկեսցուք և այսօր 'ի սքանչելի գործսն աւուրն երկրորդի։

Բայց զայս գիտասջիք. ոչ 'ի զօրութենէ այնր՝ որ պատմէ զՀաւատն, Հաստատի մեծութիւնն՝ որ բանիցն, այլ 'ի Հնարհաց տուողին նոցա՝ յորմէ է 'ի նկարագիրսն նոցա, և նորին շահեցուցանելոյն առնի շայէ կան [2] ընդունելեացն, ցանկալի լսելեացն լսողացն, և քաղցրացուցիչ մտաց նոցա։ Զ՝ի առաւել գործ գործեն՝ որ ախորժելոյն լսեն զսիրուն լուրն նոցա, քան որ փոյթ յանձին ունիցին մեծաւ պատուով ցուցանել զՀաւանութիւնս նոցա. ըստ այնմ՝ որ յայտ յանդիմանն ցուցանէ 'ի Սաղմոսին, թէ ախորժելոյն լուրն ճշմարիտ գործէ ոգւոցն ուրախութի. Վաղցր էն, ասէ, 'ի բիսն իմ՝ բանք քո քան զմեղր բերանոյ իմոյ։

Բ՝ընդ երեկ, որչափ կարող էաք, Հաւանիւք ճաշեղէնն բանիցն փոյթ յանձին կալաք ուրախ առնել զմիտս ձեր. և այսօր եկաք 'ի գործ աւուրն երկրորդի, զի մեծաւ զարմանալով լիցուք տեսօղ սքանչելագործ վայելչութեանն նոցա։ Այս այս չէ 'ի մէջ վրիպեալ և լեալ

[1] Յօր. խոպաբէան։ [2] Յօր. ... 'ի ջայեան։

մոռացօնք, թէ արուեստագէտքն միշտ հանապազ յիւրաքանչիւր արուեստից շահին զդարմանս կենաց իւրեանց, առ մեզ ժողովեալ կան՝ դատարկացեալք 'ի խափանիչ գործոց, որ առնին նոցա առ 'ի խափան լեալոյ զանն ՝այ, զի մի գոցեն զշահ անձանց իւրեանց և կեցցեն։ Օ այս ասեմ՝ զի յօժարեցուցից զմիտս ձեր՝ տալ սակաւ ժամս փոխ ՝այ, առ 'ի հատուցումն մեծաց վարձուց։

Այլ զամենայն խափանիչ իրս և զգործս պատաղնչս, որ անպտուղ առնեն զմեզ 'ի լուսոյն Աշմարիտ պատգամացն ՝այ, խափանեսցէ ՝ուրն և ՝ածն մեր, և տացէ համբերուն մարմնոց մերոց, և զաղնուականն պատրաստութեան ոգւոց մերոց, և բազմապատիկս փոխարէնս ընդ խափանածոյ գործոց մերոց։ Օ 'ի ՝ամի յաջողեալք և երջանիկք գոցին ամենեքեան՝ որ միանգամ զշահս շահին առաւել համարեցան քան զվաստակս անցաւոր իրաց աշխարհիս։ Օ 'ի թէպէտ և խափան եղև մարմնաւոր իրաց աշխարհիս, այլ 'ի պատճառս մեծաշահ գանձուց գտանին առ մեզ յաշխարհն հանդերձեալ. առ 'ի կրթուն ոգւոց մերոց, 'ի վաստակս զոր վաստակիցիւք փոխանակ պարգևաց՝ որ կան մնան յաւիտենից։ Խարձէք այսուհետև 'ի մտաց ձերոց զամենայն հոգս մարդկեղէնս, և առ իս ժողովեցէք ամենևին զսիրտս ձեր՝ հանդերձ խորհրդովք ձերովք և հանձարովք։ Բանզի ոչ ինչ օգուտ գործէք, թէ մարմնովդ ատ իցէք և մտաք յիրս աշխարհիս զաղէալ։ Այլ արդ լուիցուք զանն գրոյն՝ որ ասէ։

«ԲՆսաց, ասէ, ՝ած. ԼՆղիցի հաստատութիւն 'ի մէջ ջուրցդ, մեկնեալ զվերին ջուրսն 'ի ներքին ջրոց աստի»։ ԼՆրեկ և այսօր եղեաք լսողք բանիցն ՝այ, և լուաք՝ զի ասաց, թէ «ԼՆղիցի լոյս, և եղև լոյս»։ Այլ դարձեալ այսօր ասէ, թէ «ԼՆղիցի հաստատուն»։ և յայտ Է՝ թէ ինչ մի առաւել ծածկեալ կայ 'ի լուր այսց երկուց նմանի պատգամաց. և ոչ կաց մնաց հրամանն դատարկ առանց գործոց։ Բայց պատճառք իւրիքն՝ զոր կամիքն լսել, արարած հաստատութեան։

1 Յօր. հաստատութիւն։

երկնից է, որ հաստատեցաւ մեկնել զջուրս 'ի ջուրս՝

Բայց առ այժմ նախ դարձցուք անդրէն 'ի խրնդրել՝ թէ զիարդ խօսեսցի ՝ն՝ թէ ըստ մերումն նմանութեան խօսեսցի ՝ն՝, որպէս մեք յիրացն՝ որ անկանեն 'ի սերտս մեր, առնումք անդստին նոցին կերպարանս, թէ զիարդ պատՃառ իցէ առնել զնոսա. և յետ յուշն արկանելոյ, ապա նկարեմք և զգործս նոցա 'ի միտս մեր. և յետ այնորիկ նշանովք՝ որ ընտրեալսն բնութիւն անկեալ են 'ի մեզ, կցին գան յօդուած, շարժին ձայնիւ և գան հասանեն 'ի շնչուն շրթանց, և բախեն ելանեն լեզուաւ ընդ օդ։ Եւ իբրև անցանեն ընդ ականջս գործս սպասաւորս բաղնին, ապա ածեն 'ի յայտ և մեկնեն զղուղեալ խորհուրդն՝ որ նիւթեալ ծածկեալ կայր յաներևոյթ շտեմարանս։ Եւ արդ այսպիսի ինչ կարծել զնՃ՝ մեր բոսութեն մեծ է, թէ և նա ըստ որում օրինակի ընդ այսչափ ամենայն իրս մարմնաւորս անցանիցէ, և ապա խօսեցի զխորհեալն։ Բ.յլ պարտ և պատշաՃ է այսպէս, որպէս ասեմն, ածել զմտաւ զՃ, թէ խորհուրդք մեծութեան և սկիզբն կամաց նորա և բանք գիտութեն իւրոյ՝ ակնարկել մեծապանչ մեծութեան իւրոյ է։

Բայց զի առին գիրք զկերպարանս բանից պատմել զմանանէն, զայս ինչ յայտ առնեն՝ թէ ոչ միայն զարբարած աշխարհիս կամեցաւ ցուցանել, այլ և զպատմութեն Ողուոյ իւրոյ, թէ արարիչ էր ընդ նմա արարածոցն և ածիչ 'ի լոյս 'ի գոյ՝ այնց որ չէին և ապա եղեն։ Բ.անզի մնրեթ էր ասել 'ի վերայ ամենայն արարածոց լմնելոյ ըստ առաջին բանին, թէ «Լսկրզբանէ արար ՝ն՝ զերկինս և զերկիր»։ Բայց աստ ասէ, «Ասաց ՝ն՝ եղիցի լոյս». և դարձեալ ասէ «Եղիցի հաստատութիւն»։ Բ.րդ խօսեցաւ ՝ն՝ և ասաց ցայն՝ ընդ որում խօսէրն, թէ եղիցի լոյս. և ցնոյն ասէր ակնարկելով թէ եղիցի։ Եւ իբրև կարծին Ճշմարիտ բանքն՝ թէ ծածուկ իցեն, և ոչ արկանեն նախանձ և հակառակութեն 'ի գիտութեն մեր, այլ բորբոքեալ վառեն զմեզ ջերմեռանդն սիրով ՝ն՝ մերոյ։ Օ.ի գրոշմ և նշանակ առ իմանալ զՈրդի նորա հաստատեաց ՝ն՝ 'ի ծածուկ խորհրդոցն մե-

բոց։ Օ յ ամենայն ինչ որ աշխատութիւն[1] գտանի՝ ուրախութիւն առնի ընդունելի և զգուշութիւն պահի, և ամենայն ինչ՝ որ դիւրաւ անկանի 'ի բուռն, ընդ արհամարհանս ունիմք։

Ընդ Ճանապարհ յատակեալ[2] հորդեաց մեզ ՀԱԾ առ միածին Որդին իւր՝ բանիւն զոր ասաց, թէ Լցղիցի. իբր ոչ եթէ ինքն կարօտ ինչ էր յօդապատ բանիւն, որ մեծապատիւ մեծութեամբն հեռի և օտար է 'ի մարմնաւորութենէն. և զի ասացաւն թէ Լցղիցի, յայտ է թէ ցնա՝ որ ընդ նմին արարիչ էր՝ ասէր։ Ապէ զի՞նչ պիտոյ էին յօդապատ կերպարանք պիտոյից բանին առ այն զօրութիւն, որ մին է մի բնութեամբն, և մի և նոյն հաւասար կամաւք, թէ ոչ յայտ արասցէ զոր ինչ Ճշմարիտ Որդւոյն առնել կամէր։ Օ յ բարբառ վասն լսելեաց է, և լսելիք վասն բարբառոյ. իսկ ուր ոչ տեղի իցէ և ոչ օդ և ոչ լեզու և ոչ լսելիք, և ոչ փողք որ զբարբառն հանիցեն, քանզի յօդապատ բանից այսպիսի գործիք պիտոյ են առ 'ի հաստատութիւն, արդ զի՞նչ պիտոյ էին այնպիսի գործիք, ուր 'ի միոյէ կամացն Հօր լինել ակնարկել առ կամն Որդւոյ վասն միաբանութեան հաւասարուն կամացն երկոցունց։ Նա այս ամ՝ որ յօդապատ և մարմնապատ բանիւք պատմեցան, զի տացեն իմաստութիւք մտաց մերոց գտանել զՃշմարիտ գիտութիւն այնր՝ որ ընդ մեզն խօսեցաւ։ Պատ իմաստուն Ճարտասանութեամբ լեզուի Ճառեցան մեծամեծքն, զի մերովքս լեցուք հասու նոցա 'ի շահ մերոյ օգտութեան։

Դարձեալ պարտիմք խնդրել, թէ այլ երկինք քան զայն՝ որ եղեն յառաջագոյն, գուցէ. և կամ թէ նոքա արդեաք կուռեցան հաստատութեամբ, և եթէ երկու երկինք իցեն։ Ապէ լաւ համարին՝ որ յաՃախեցինն իմաստնանալ առ 'ի Ճառն երկնից, թէ լեզուք իւրեանց սատեցին[3], և ոչ մի Ճշմարիտ բանքն հաւատարիմ լինիցի նոցա։ Օ յ կէսքն 'ի նոցանէ պլսպէս ասեն, թէ մին են երկինք, և չիք այլ բնութեամբ երկնից երկրորդ կամ երրորդ կամ բազումք։ Օ յ ամենայն,

1 Յօր. սխատութիւն։
2 Յօր. յատկեալ։
3 Յօր. սատեցին։

ասէն, քնութիւն երկնից 'ի մի տարը երկնից ճուլեցաւ լինել. զի կանգնեսցին կացցեն մի երկինք։ Մի՞ մայն, ասէ, տարը երկնից՝ որ գայ շուրջ, և չիք նորա կատարած. զի եթէ կատարեալ էն, ասէ, առաջին երկինքն, ապա ոչ ինչ մնաց լինել երկրորդ կամ երրորդ երկինք։

Այս բանք այսպիսեաց էն, որք առնէն զարարիչն կարօտ հիւղեայ. զի յառաջին անհամ պատմուէցին՝ որ յանկէն 'ի ստութեանն նոցա, առ բազում իրս անմանս գայթակղեալ[1] կործանին։ Բայց մեք զայս ասացուք իմաստնոցն Յունաց, թէ մի արասցէն զմեղ ծաղր, մինչ նախ ինքեանք հաւանեսցին միմեանց՝ լռել և դադարել լինելոյ հակառակ միմեանց։ Զանազ զի կէաք 'ի նոցանէ երկինս բազում և աշխարհս անհամարս ասէն, և կէաք հակառակ նոցունց լինին յանդիմանիչք դիպող օրինակաք՝ զոր բերեն 'ի վկայութիւն յուսմանէ[2] երկրաչափութեանն, թէ չիք այլ քնութիւն երկնից, բայց միայն մին։

Բայց մեք զպաճուճազարդ զՀշմարտութիւնսն՝ որ ստեղծան 'ի մտաց՝ արհամարհեսցուք և այպանեսցուք, յորս ոչ գտանի ամենևին զօրութիւն Հշմարտութեանն։ Զանազի մեք ոչ հիւղեայ և ոչ յայլ խնբէ ասեմք արար ՅԾ մի երկինս կամ երկուս, կամ որչափ որ կամէր առնել։ Զանազի յոյժ գիւրին և մեկին է Հշմարիտ ՅՅն մերոյ ածել 'ի դոյ զչգոյսն. զի զանչափ մեծութիւնսն երկնից և զսակաւիկ ինչ նշանակ պղպջակաց՝ որ լինին յանձրևաց՝ ընդ մի համար է առնել ՅՅ թեթևութեամբն երագընթաց ակնարկելոյն իւրոյ։ Զանազի անչափ և բազմապատիկ երագընթաց են ակնարկութիւնք նորա, կատարեալ զգործն արդեամբք, քան զամենայն ինչ՝ որ արագախաղաց իցէ կամ 'ի միտսն կամ 'ի մարմինս մարդկան առ 'ի շարժել միայն։ Ոչիցէ տեսեալ քո զպղպջական՝ որ փչին բոլորին օդով 'ի խոնաւութէն անձրևաց, կամ զիսաՐդ առնուն զիւրաքանչիւր կերպարանս ըստ օրինակի գմբեթացն Հեպելով հոսանացն ջուրց՝ որ լեզուն ընդ միմեանք։

[1] Յօր. որ յանկէն ... գայ. [2] Յօր. յուսմանէ։ Բանդէս։

Բ.ՐԴ ԺՈՐԺԱՄ Հայիցիմք 'ի փառաւորեալ զօրութիւն՝ նուազեալ նուազէն ամենայն բանք մեր՝ առ 'ի պատմելոյ զանպատում Ճառս արարածոցն. բայց այս չասի միայն, զի հաւատասցուք թէ արար ՝ած զերկուս երկինս։ Այլ մերձ եմք հաւատալ այնմ՝ զոր ասանելի Դաւթեանն ասէ, թէ Յափշտակեցաւ յերրորդ յերկինս. իսկ Սաղմոսն զերկինս երկնից անուանէ, և այլ ոչ ևս մեկնէ զՃառն։ Մերոյ բանիցս պարտ և պատշաՃ է հաւատալ՝ զոր ասեմք, թէ առաՃ՝ ած հաՃուԹիՀ կամաց իւրոց, թէ մոլորելոցն՝ որ վրիպեցին և ստեղծին 'ի մտաց ըստ հաՃուԹեան իւրեանց կամացն։ Բ.սեն նոքին՝ թէ եւԹն բոլորակք են եւԹն աստեղացն՝ որովք շրջին, և բազումք 'ի նոցանէն զայս վկայուԹիւն այսց բանից՝ զոր պատմեմ զնոցունց, իբրու զկտեղս ՝ 'ի միմեանս եդեալ դիզեալ զմիմեանսիք՝ 'ի մէջ միոյն ատուՃանելոյ. և այսպէս յամենեսեան զնան աստեղք հակառակք ընդդէմ։

Այլ մեւս ևս զինչ ասեն. Թէ եԹերն, ասեն, պատուոյ առաջի երեսաց նոցա, և հնչուն սաստիկ բարբառոյ հատանի 'ի նոցանէ. և այնպէս քաղցր և հեշտ է, ասեն, ձայնն, զի չիք ամենևին յամենայն արուեստական՝ որ ածիցէ այնպիսի ձայն քաղցր։ Այլ ԺՈՐԺԱՄ սկսանիմք պահանջել զՀնմարտուԹիւն, թէ մեք զիարդ ոչ լսեմք զբարբառն, ասեն. վասն բազում բարբառոյ՝ որ ելանեն յերկրէ, զբաղեալ եմք, ոչ ամենայն 'ի լսելիս մեր բարբառն այն. ըստ օրինակի այնոցիկ՝ որ իցեն 'ի դարբնոցի, և յանդադար ձայնէ կռանին և ուռանին անդ դռնէին ականջքն նոցա, և յայնմ ձայնէ՝ որ միշտ անկանի 'ի լսելիս նոցա, զայլ իրիք ինչ բարբառ ոչ կարեն լսել։

Այլ ԺՈՐԺԱՄ յանդիմանին 'ի մէջ [2] ստայօղ իմաստուԹիւն ստոցն, յայլ ստեղծուած մտաց ՀԵպեալ ընԹանան. զորոց օր մի ողջոյն չեմք բաւական պատմել զբարբաջանսն, և ոչ օգուտ ինչ է լսողաց։ Զ՝ն անդր Թողցուք զստայօղն իւրեանց յօդուածս՝ նմանեացն իւրեանց ստայօղացն, և յօդտակար բանն եկեղեցւոյ

1 Յոր. զ՝՝՝ էզ։ 2 Յոր. 'ի Ղէ։

ՅՍ ուղղեսցուք զՀառս։ Յորմմ[1] ոմանց՝ որ յառաջ քան զմեզ եին, ասացեալ՝ եթէ չէք այլ երկինք բայց միայն յառաջնոյն, որ եղև. զնորուն պատմութիւն, ասէ, որ եղև իսկզբանէ ընդ երկրի, երկրորդէ գիւն. քանզի իւրաքանչիւր արարածոյն դարձեալ կրկնակի երկրորդէ. նոյնպէս և զերկնից։ Բայց մեք ասեմք, թէ վասն զի անուանն այլափոխ է և արարածն այլազգի, վասն այլոյ երկնից յայտ առնէ, որ եղև յետ առաջնոյն և կոչեցաւ հաստատութիւն, որ կարելոր պիտոյիւք պիտոյ եղև՝ի հաստատել օդուտ հաւասարակաց ամ աշխարհի։

«Եւ ասաց՝ ասէ՝ ՅԾ, Եղիցի հաստատութիւն՝ի մէջ ջուրցդ, և մեկնեսցին ջուրք՝ի ջուրց։ Եւ արար ՅԾ զհաստատութիւն. և անջրպետեաց՝ի մէջ ջրոյն՝ որ ինացին՝ի ներքոյ հաստատութենէն, և՝ի մէջ ջրոց՝ որ վերացան ելին՝ի վերոյ հաստատեցան. և եղև այսպէս։ Եւ կոչեաց ՅԾ զհաստատութիւն երկինս»։

Բայց զայս գիտացուք, զի յառաջ քան զմերձնալ՝ի միտս քանից գրոց՝ պարտիմք առնուլ զփորձ այնց՝ որ ասին ընդդէմ բանից գրոց։ Հարցանեն և ասեն, թէ ըստ կերպարանի գնդի իցէ տարին երկնից, որպէս և տեսին իսկ յայտ առնել, զնարդ ջուրն՝ լոյծ և խաղաց քնութիւն՝ հաստատեալ կացցեն՝ի վերայ գմբեթայարդ գլխոյն երկնից՝ի բարձրբարձ բարձունս վերինս պատեալ շուրջ զբոլորն բոլորակն երկնից։ Ասեմք, թէ ոչ որպէս երևի՝ի ներքոյ կողմանէ գմբեթայարդ խորանաձև՝ նոյնպէս իցէ և վերին կերպարանք յարտաքին կողմանէ։ Ել եթէ ըստ նմանութեան գնդի է վերին բարձրուն նորա, և ոչ ըստ նմանութեան բոլորակ ձախարակի. այլ տեղի հարթ յատակեալ՝ի վերայ. ըստ այնմ՝ օրինակի զոր տեսանեմք՝ի բաղանիսս, զի՝ի ներքս փորուածն գմբեթայարդ է, և՝ի վերոյ տանիքն միահարթ միատարը յատակեալ։ Ա՝ի արկցեն մեզ աշխատութիւն իմաստունքն Յունաց՝ մեկնել զայնս որ ՅԾ միայն են մեկնիք։ Զանզի լուան՝ի գրոց՝ ջուրք են՝ի վերոյ քան զերկինս, ասեն. չէ հնար կալ ջրոցն՝ի վերայ երկ-

[1] ՅՍ. յորմմն։

նից, եթէ իցէ և այսպէս՝ որպէս 'ի նեբբոյս երևեսցին՝ և 'ի վերին կողմանէ։ Օ այս ասասցուք, թէ ՅԾ իւրոյն սքանչելագործ զօրութիւն հաստատեաց կախեաց առանց հնարից զամենայն տարր ըստ կամաց իւրոց 'ի տեսիլ և 'ի զարմանս ամենայն տեսողաց։

Բայց աղէ տեսցուք ըստ պատմութեան գրոց՝ զինչ իցէ մեխնութիւն հաստատութեան, և կամ զինչ իցեն պատճառք վասն որոյ եդաւն միջնորդ։ Օ յ անուն հաստատութեան՝ ըստ սովորութեան բանից գրոց՝ իբրև ինչ մի որ սերտ և հաստատուն, և չիցէ խիստ, յայտ առնեն. ըստ այմմ որ 'ի Պաղմաին ասէ. Օրհնեցէք զՅԾ 'ի հաստատութիւն զօրութեան նորա։ Իսկ արտաքինքն զլի ինչ և զսերմ անուանեն հաստատութիւն. և յորժամ գայ լինի 'ի լայնութիւն և 'ի խորութիւն և 'ի բարձրութիւն, և ունի իւր նմանակից ուժգնութիւն։ Բայց գիրքս զայս ինչ, որ ունիցի ինքնին զանձն և ոչ շարժեսցի, կոչեն հաստատութիւն. ըստ օրինակի՝ եթէ մածեալ կցեսցի լոյծ և մեղկ քնութիւն օդոյ, և յորժամ կուտակեալ դիպանիցին ամպք իւրեանց թեթևութեամբն կախեալ 'ի վերայ օդոյն, որ ոչ ինչ ունին սեղմութիւն [1] և խստութիւն։ Դարձեալ և զորոտմանէ, [2] այսպէս ասէն, թէ 'ի հաստատութենէ հողմոյ՝ որ բախին ընդ միմեանս յամպս, 'ի սաստիկ բռնաւոր հողմոյն՝ յորժամ հարկանիցեն [3] յեթեր զգոգս ամպոյն՝ ՃայԼեթ, հատանի ՃայԼեթն որոտմանց։

Բայց մեք այսպէս ասեմք զհաստատութենէ, թէ ինչ մի հաստատուն է. և 'ի վերայ նորա կայ հաստատուն՝ լոյծ և խաղաց քնութիւն ջուրցն, և բանն այ բաւական է ունել զամենայն յիւրաքանչիւր տեղւոջ, որ ետ իսկզբանէ հրաման հաստատութեանն ունել 'ի վերոյ քան զինքն ջուրցն լուծութիւն։ Այլ ոչ որպէս ոմանք կարծեցին, թէ ինքեանք զանձինս ունիցին ջուրքն 'ի վեր. և ոչ 'ի քնութենէն ջուրցն եղև հաստատուն, և կոչեցաւ այնպէս. և ոչ պաղեցան ջուրքն փոխեալ 'ի խստութիւն. որպէս և վասն ակամէ ասէն,

1 Յոր. Դեղմանէ։
2 Յոր. զրոտոանէ։
3 Յոր. ընդ փիլանս ամպս ... հարկանիցին։

թէ 'ի ջուրց՝ որ պաղեալ խստանան մեծաւ հաստատուն կցուածով, առնու փոփոխումն՝ գալ 'ի կերպարանս ակնոց պատուականաց, կամ որպէս բնուն պաղպաղակի, որ յանձնէ ունի զլուսաւորութիւն. քանզի և նա բնութիւն լուսաւոր է պայծառագեղ գունով իւրով գեղեցկութեանն և վասն ականն մեծապայծառն լուսաւորութեամբն։ Այլ պաղպաղակ սուրբ և յստակ գեղեցկութեամբն, նմանեալ լուսաւորութեան և սրբութեան օդոյ և ջրոյ։

Արդ 'ի սոցանէ ինչ պարտ իցէ առնուլ օրինակ կերպարանաց, նմանեցուցանել՝ թէ ջուր էր հաստատութիւն, և ապա խստացաւ, և եղև այնպէս առնուլ ունել 'ի վերս զջուրսն վերինս. որով ևս 'ի վայր քան զողղոյս դատնիմք, եթէ զայս կարծիս կարծեսցուք։ Այլ ոչ թէ ասասցուք, թէ որպէս ամենայն ինչ յաւիտենական իմիք է՝ [1], հուր յերկրի և օդ 'ի ջուրս, և այլ իրք իւրաքանչիւր յընկերս իւրեանց։ Այլ ոչ 'ի չորից բնութեանց, որ անկանին ընդ ազդմամբ [2], և ունին զմիջավայրս վայրացն, և են իւիք իւիք հակառակ միմեանց, և են իւիք իւիք միաբան ընդ միմեանս, կարեմք ասել՝ թէ եղև 'ի նոցանէ հաստատութիւն երկնից. զի հաստատութիւն ոչ 'ի խառնուածոյ բնութեց եղև, և ոչ 'ի պարզ իմեքէ։ Ասասցանեն մեզ գիրքս, թէ հաստատեցաւ. և ոչ կարեմք տալ համարձակուն մնաց մերոյ՝ ելանել արտաքս քան զաստման, վերնպել և թափառել, զի զորոց ոչն ունիցին իշխանութիւն՝ ժպրհեսցին ճառել և խօսել։

Այլ մի անցցէ զմեզ և մեծապատիւ զօրութիւնն՝ որ ծածկեալ կայ 'ի ճառիս. ասէ, Բաց ՚ի՝՝ Այդոլոցի հաստատութիւն. ոչ կաց մնաց բանն լոկ մերկ՝ թէ եղև հաստատուն, այլ թէ Աբար ՚ի՝՝ զհաստատուն. և դարձեալ ասէ Մեկնեաց ՚ի՝՝ լոյսն լուիցեն, և կոյրքն տեսցեն. և ո՞ իցէ խուլ՝ եթէ ոչ այն, որ ոչ լսիցէ Հոգւոյն ՚ի՝՝, որ մեծաւ զօրութեամբ 'ի ձայն աղաղակէ։ Ո՞ իցէ կոյր, եթէ ոչ այն՝ որ ոչ տեսանիցէ զայսչափ մեծապայծառ լուսաւորուն օրինակաց, որ ցուցանեն զՀոգւոյն ՚ի՝՝։ "Այլ ասաց, ասէ, ՚ի՝՝.

1 Յոր. Խ.Դ.Է։ 2 'Ի լուս. ԷԴ ԲՈՒՆԷ։

Լղեցի հաստատութիւն ». ահաւասիկ բանն՝ որ էր ՝ իւ կրզանն, և պատճառք լինելոյ արարածոց։ Լոյս դարձեալ ասէ, թէ Բարի ՝ն զհաստատութիւն. ահաւասիկ ցուցաւ վասն արարչութեան Որդւոյն արարչի, այս ինքն է վկայուն ՝ն զորութեանն։ Լոյս արդ այսուհետև յայլ ևս մնացորդս ընթերցուածոյն՝ վերսցուք զբանս։

"Լոյս ասաց, ասէ, ՝ն. Արեւնեսցին ջուրքն ՝ի ջուրց, վերինքն ՝ի ներքնոց աստի »։ Լոյս որպէս իրքն յայտ առնէն, չև ևս տակաւին առեալ էր ջուրցն զվորձ գնացից. քանզի յամենայն կողմանց ալիք զաւեօք դիզանէին, և ինքեանք զմիմեանսքք դառնային ՝ի վերայ երեսաց երկրի. բարձրացեալ վերանային և ՝ի բարձունս ամբառնային, և ծփեալ կոծէին յամ կողմանս երկրի, և ՝ի սահմանս յայլոց բնութեանց ջանային հասանել. անտուստ ՝ի խորոց կոչէին բազում ջուրքն, որ յամենայն կողմանց տարածեալ ուշնէին զամենայն երեսս երկրի։ Բայց զինչ պատճառք իցեն բազմութեան ջուրցն։ Զորժամ մնտիցուք սակաւիկ ինչ յառաջագէմ՝, փոյթ յանձին ունիմք լինել հատուցանողք բանիս՝ զոր խոստացաք։

Իսկ եթէ լինիցի ոք պահանջող բնութիւն ջուրցն՝ թէ յէր վերայ կայցէ, յայնմանէ փախուցեալ հեռասցուք. այնպէս՝ զի բնաւ ամենևին մի տացուք պատասխանի, և միայն մեծազօր զորութիւնն ՝ն տացուք զկրան։ Վասանզի և յաւագայ իմաստնոց՝ որ կարի քաջ և վարժ իցեն մտաք, և հնարագէտ տեղեկութիւն մարթիցեն հայիլ ընդ իրան, այնչափ հեռացեալ փախչին, և ոչ կարեն գիտել ՝անասչել գոնէ սակաւիկ ինչ զակնարկեալ շարժման իրաց, որ հնազանդեալ կան ընդ ապականութիւն։ Վասանզի ՝ի մեր բանքս չիք ինչ մտացածին ստայոգ. վասն զի զնոյն գնեմք պատճառս ամենայնի. և կամ թէ զնարդ եղեն ապրարածք, և կամ յէր վերայ կայցեն, իմաստութիւնն իշխանութեան արարչին տամք զհաստատուն կայիցս արարածոց։ Լոյս ոչ որպէս զիմաստունսն Յունաց, որ ասեն՝ թէ ինքն զինքն ունի երկիր ՝ի վեր. և զայն

1 Յոր. ՝ի ՝ի։ 2 Յոր. ընթերցուածն։

ոչ կարէն ցուցանել, թէ զիմարդ ինքն զինքն այնչափ ծանրութիւն ունիցի 'ի վեր և կայցէ կախեալ։ Այս ուրեմն մերս Ճշմարիտ է, որ զամ զանհնարս և զգիր ժուարագործս՝ այ միայն աւանդեմք. քանզի նմա մի այն էն դիւրինք և հնարաւորք։ Վասն զի մեծապանչ և անսպատում զարմանալիք էն այս, թէ զիմարդ այնչափ բազմութիւք ջուրցն հոսանաց հեղեալ զեղեալ և արգելեալ կայցէն 'ի նեղբոյ երկրի. և նա այսպէս հաստատեալ սնդեալ կայ անշարժ և առանց խաղալոյ 'ի վերայ խաղաց և շարժուն բնութենն։ Այնչափ ծանրութիւք 'ի վերայ այնչափ լուծութենն, հանդերձ անչափ և անբաւ հոսանաւք ջուրց բազմաց՝ որ հեղեալ զեղեալ կան ընդ ամ երեսս երկրի, և 'ի պէտս պաշտաման արարածոց։

Այսպէս հայեցաւ խսկզբանէ իմաստութիւն մեծուն ճշմարտութեան 'ի պատճառս ինքոյց իրացն հանդերձելոց, որ պիտոյ էին ամի յաշխարհի. և համբարեաց եղ յաւաղագոյն զամ պատճառս պիտոյից մարդկան՝ որ գալոց էին յաշխարհ։ Այլ թէ ասիցես, թէ զի՞նչ պիտոյ էին այսչափ անչափ ջուրք՝ որք հեղեալ զեղեալ կան ընդ ամ երեսս երկրի, լուր. վասն զի հուր ընդ նոսին՝ 'ի նոցունց պէտս պիտոյ էր աշխարհի յամենայնի, ոչ միայն 'ի մերձաւոր պէտս՝ որ էն երկրի, այլ և առ 'ի լուութիւն կատարմանն[1] ամենայն աշխարհի. զի մի 'ի նոցանէ թէ նուազեսցի քան զընկերն՝ սպառուած և սատակումն լինել ամենայնի։ Ի հակառակ միմեանց էն հուր և ջուր, և միմեամբք սատակին՝ յորժամ մի քան զմի բազմասցին և լինիցին առաւել քան զմիմեանս. մարտ պատերազմի անդադար կայ 'ի մէջ նոցա, յորժամ նուազեսցի մին քան զմեւսն։ Այլ քանզի պարտ և պատշաճ էր այ ածել 'ի խաղաղութիւն զմարսն նոցա, վասն այնորիկ ած համբարեաց եղ աշխարհի զբազմութիւն խոնաւութենն, զի եղիցի առ 'ի հաստատութիւն արարածոց։ Ի յորժամ պակասեցուցէ հուր զխոնաւութիւն, բաւական լիցի նմա բազմութիւն խոնաւութենն մինչև 'ի կէտ ժամանակացն՝ ցոր վայր եղեալ նոցա լինել առ 'ի հաստատութիւն

[1] Յօր. Խոպարանն։

աշխարհն. որպէս զի կալցին ջուրքն իւրեանց պաշտամամբ հաստատուն անքակ՝ զխաղաղութիւն ամի։ Օ՛ի չափով և պայմանաւ և կշռով խառնեաց եդ ՃՃ զամենայն արարածն, զի տացէ կեանս ամենեցունց յամենեցունցն հնազանդութենէ՝ ըստ բանին Յով՛բայ, որ ասէ՝ թէ Ը՛ խթք անձրևի թուեալ են նմա։ Օ՛ի որպէս գիտէր՝ թէ պիտոյ են առ՛ի հաստատուն աշխարհի հուր և ջուր, և այսպէս համբարեաց եդ զնոսա՝ ի նմա։ Ա՛յս են պատճառք բազմութեանն ջրոյ, զի բաւական լիցին ունել ընդ կշռով զհուրն սպառիչ ամենայնի։

Եւ զայս ոմ՛ ոչ գիտիցէ և առանց ուսման, թէ հուր կարևոր պիտոյ է՛ի պէտս աշխարհի. ոչ միայն՛ի պէտս բազում ճարտարութեանն՝ որոյ ընդունն պէտք կենաց մերոյ, զի հուր է պատճառք գործոցն նոցա, դարբնութեանն և հիւսնութեանն և մշակութեանն ոստայնանկութեանն, հանդերձ այլ ևս բազում արուեստիւք, այլ և ոչ ծաղկիք ծառոց, և ոչ բոյսք սերմանց, և ոչ ծնունդք խոտոց, և ոչ հասանել եփել պտղոց, և ոչ անասունք և դազանք և սողունք երկրի, և ոչ զեռունք ջրոյց, և ոչ կայտառք ծովուց, և ոչ կերակուրք ամենայն՝ որ պիտոյ են ըստ իւրաքանչիւր զեռնոցն ամենայնի, և ամենայն իմիք միանգամայն՝ զոր համարեցաքս, հնար կալ և հաստատել իւրաքանչիւր յօրինուածի, և գալ՝ի կեանս և՝ի պէտս մարդկան և անասնոց, թէ պատճառք ջերմութեան չէին խառնեալ ընդ նոսա։ Ա՛յս ուրեմն յարժանի և ըստ պատշաճի եմուտ արարած ջերմութեանն յաշխարհ, զի հաստատեցին՝ ոլաւ յօդուած ամենայնի յաշխարհի։ Ա՛յոյսպէս և ջուրցն բազմութիւք և յորդութիւք տուան յարժանի և յիրաւի. զի հրոյ՝ ի ծծելոյ զնոսաւուն յիրաց որ եղէն և որ լինելոցն իցեն՝ չիք դադար։

Ա՛ռդ հայեաց ընդ ամ՛ արարածս և տես արդարի է զօրութեանն ջերմութեանն յամենայնի՝ ինչ որ եղէն և կազմեցան, և որ գալոցն իցեն յաշխարհ. իբր թէ ամենայն իմիք՝ նորա զօրութիւն գործէ. վասն այնորիկ եհեղ արկ ՃՃ զյորդութեանն ջրոյցն բազմութեաց ընդ

1 Յոր. ԽԷ։

ամենայն կողմանս երկրի, և յանապատ տեղիս՝ զոր ոչ ետես ամենևին ակն մարդոյ, և յանդունդս ներ-քինս սանդարամետաց։ Լոյս ծողովեաց համբարեաց գնոսա, զի անտի ակունք մշանջենաբուիք բխեսցեն՝ որ յորդեալ ելանեն անդադար և ոչ պակասին, և ջրհորք՝ որ բղխեն և ոչ սպառին, և գետք՝ որ ունին զգնացս մշանջենաւորս 'ի սկզբանէ ժամանակաց և ոչ հատանին, և ջրեղջք բազումք 'ի ձորս և 'ի հովիտս, և խողխողանք խոռոչաց՝ որ բխեն ի ջանեն 'ի գլխոց լերանց, և յորդութեամբ ջուրցն բազմաց. և համբարեաց եդ ՅԾ յընտրեմարանս երկրի։

Օ 'ի գետ մի, որ անուանեալ կոչի Հինդոս, յարևելից՝ ասեն՝ ելանէ. 'ի նմանէ այլ բազում գետք բաժանին, որպէս պատմեն՝ որ փոյթ յանձին կալան շրջել ընդ ամենայն աշխարհ, իւրեանց ազգ տեսանել զամենայն։ Լոյս 'ի միոյ յարևելից ելանեալ այլ գետք, որք անուանեալ կոչին Ղադրոս և Ոքոասպէս. և մեւս ևս գետ՝ որ անուանեալ կոչի Ղարաքսես, զՊՊեռոտին ծովակ հատանէ և ելանէ. և մեւս ևս 'ի Կովկասեան յաշխարհէ՝ որ անուանեալ կոչի Ոռվիասիս։ Լոյս այլ ևս անչափ և անհամար գետք ելանեն 'ի կողմանս հիւսիսոյ, և գան մտանեն Լոքսինոս [1] ծով, որ է 'ի սահմանս Պոնտոս աշխարհին։ Լոյս դարձեալ այլ ևս գետք, որք յարևմտից ելանեն 'ի Պիերիանոս լեռնէ, մին անուանեալ կոչի Տարտեսոս, և մեւսն Իստրոս [2], և անդր քան զարձանսն կանգնեալս 'ի սահմանս ծովուն մտանեն պեպեցւոց. բայց Իստրոս նախ ընդ աշխարհն բեպացւոց [3] անցանէ, և ապա երթայ մտանէ 'ի ծովն Պոնտոս աշխարհին։

Լոյս զինչ պիտոյ ևս իցէ թուել զգետսն յանուանէ, որ բազումք են քան զթիւս և անցանեն ըստ բանս մեր, և ամ գետք որ յամ կողմանց ելանեն։ Լոյս այլ գետք յայնց լերանց՝ որ անդր քան զՍԿիւթիա աշխարհ է՝ ելանեն, հանդերձ բազում և այլ գետովք որ են յաղթաթղուրք և գնացք նաւուց. եթէ 'ի

1 Յօր. Խէրսոնես։
2 Յօր. Իստրոպոս. և զնոսի յիս. գեպեցոց։
3 Յօր. ըբեպացոց. 'ի լուս.

բարբարոսս[1] և 'ի Պաղադիայ. զի անդ բազումք գետք խառնին ընդ միմեանս և Լիսպերիոս[2]։ Բազում գետք եղանեն 'ի հարաւոյ, և ընդ Բուռանոց աշխարհն անցանեն, և դան աստ 'ի մերում ծովուս մտանեն։ Իսկ այլ բազում գետք են, որ յայն ծով որ արտաքոյ քան զնաւագնացս մարդկան է, մտանեն. մին անուանեալ կոչի Գանգն, և մեւսն Հինխա, և մեւսն Արմիտես[3], հանդերձ 'Լեղոս գետով՝ որ և ոչ զկերպարանս գետոց ունի, այլ ծովու նշանք են, յորժամ եղանէ ընու զերկիրն եգիպտացւոց՝ արբուցանել զամենայն բոյս երկրին։

Արդ զամ տիեզերս լրիւ իւրով ունին ջուրք բազմք անհամար գետոց, ընդ որ կապեալ կան և ջուրք ծովուց և ազգի ազգի ակունք մեծամեծք՝ որք բղխեն յերկրէ 'ի սկզբանէ մինչև ցայսօր ժամանակի անդադար և մշտագնաց վտակովք։ Զի տեսչութիւն անհատ իմաստութեանն այ՝ ոչ կարէ հուր սպառել զհակառակորդն իւր 'ի յորդութենէ ջուրց բազմութեան։ Բանզի չէ ևս էր տակաւին յայտնեալ ժամանակն՝ յորում ամենայն ինչ իբրև զխոնջ այրեալց է յերեսաց հրոյ, ըստ այնմ՝ զոր Եսայիաս յերեսաց բանիւն այ ասէ զոր ասաց ցանդունդս՝ թէ աւերեսիք, և զջուրս գետոց ցամաքեցից։ Զն անդր թողցուք զանհամ իմաստութիւն Յունաց ստայօգոն, և ընկալցուք զմեր վարդապետութիւս, որոյ իմաստութիւնն իւր՝ Հշմարտութիւն է։ Զի թէպէտ և արտաքին երեսօք պատգամացն իբրև տգէտ ինն երևին, այլ զօրութիւնն մեծի գիտութեան ծածկեալ կայ 'ի նմա, յորմէ չքք հնար ամենեքին անկանել։

"Եւ եղեցի, ասէ, հաստատութիւն 'ի մէջ ջուրցդ, մեկնել զջուրս 'ի ջուրց, զվերինս 'ի ներքնոց"։ Եւ կոչէն գիրք անուն հաստատութիւն, ոչ եթէ զնաստութիւնն ինչ և զկարծր և զբիրտ բնութիւնն՝ որ ունիցի 'ի վեր զնոնարհահակ և զի վայրաձիգ ծանրութիւն յայտ առնեն. զի այսպիսի կարծր և ծանր խաստուիք զերկրիս հաստատութենէ յայտ առնեն։ Այլ վերին

1 Յոր. 'ի Բարբարոս։
2 Յոր. Լիսպոսիոս։
3 'Ի լուս. ուղղագրոյն Փրէ-դոն։

հաստատութիւն թեթև բնութիւն է, որ ունի զսեր-
տութիւն և զթաղուն կազմութիւն՝ ոչ եթէ ծանրութիւն
և խստութիւն, և անկանել ի միտս ազգելեաց՝ բնութիւն
նորա չէ հնար։ Իսկ համեմատի թեթևութիւն վերին
վայրացն, բարւոք էառ զթեթև տարրն ի պատճառս
պիտոյից. և վայրքն՝ որ զատեալ և մեկնեալ են ի նմա՝
նուրբ և պարզ և յստակ են նմա. և զխնաւութիւն
ծծէ, և ի տեղի թեթևութիւնն իւրոյ ի վեր հային
գնացք իւր, որ եղաւ լինել։ Օ. ի ինչ որ թանձր և
սեղմ և խնաւ իցէ, ի խնարհ հակէ իջանել. որ-
պէս ի սկզբանէ ժամանակաց մինչև ի կատարած յԶ
բինեալ խառնուածոնն պահեսցի խնաւութիւն. զի
առ սակաւ սակաւ առցէ ի շոգւոյ ջերմութեն խո-
նաւութիւն ջուրց։

Բայց թէ որչափ իցէն բազում ջուրք, ոչ ամենայն
ումեք հաւատալի է. սոյնպէս և հրոյ թէ որչափ ջեր-
մութիւն իցէ, ոչ ամենեցուն երևի։ Այս այնչափ ի
բազմութենէ թէ սակաւիկ ինչ նուազագոյն գտաներ
խնաւութիւն, սպառիչ նորա լինէր ջերմութիւն։ Ա.մէ
արժանաւոր չափով կշռեաց մնատակարարեաց եղ ա-
բարիչն զերկոսին յիւրում տեղւոջ. զի ջերմութիւնն
ծծէ և ձգէ զօրութիւն իւրով. ըստ օրինակի սրուակի
բժշկաց, որ ծծէ և ձգէ ջերմութեամբն զոր ունի՝
զխնաւութիւնն արեանն, և ժողովէ ածէ գնա առ
ինքն։ Այս որ ինչ ծծէն և ձգէն, ի սպառումն կրթէ
հասանէ՝ ըստ օրինակի պատրուկ ճրագի կամ բուծ-
նոյ, որ ծծեն քամեն զնչոն առ ի կերակուր հրոյ։
Այս իբրև սպառի որ ինչ ծծին և ձգի, և պակասէ
խնաւութիւնն արեան նորա, և շինանի յապչի՝ և այն
որ զջերմութիւն ունէր։

Իսկ որ երկմտիցէ ասել զթեթևոյ՝ թէ չիցէ ամե-
նևին հուր և այրիչ. զի եթէ ոչ արգելոյր գնա սահ-
ման արարչին և եղեալ կէտ անկարկելոյ հաստչին,
մերձ էր ի վաղճանին բորբոքել այրել զամենայն կի-
զիչն ջերմութեամբ, և ծծել առնուլ միանգամայն
զնմ խնաւութիւն։ Այս ի շոգւոյն նորա, որ գայ և
հասանէ ի տասս արեգական, և եթէ տայ ի վերայ

1 ՝Ի ԼՈՒՍ. ԽՈՓՆ։

ծովուց և ծովակաց և գետոց և աղբերականց և մե-
ղաց և ջրաշէջաց, և 'ի վերայ ամենայն խոնաւութե,
և 'ի վերայ ամպոց՝ որ յիւրեանց ՝ ժամանակս ընուէն
խոնաւութիւն և կախեալ կայցեն զօդոց, այսու ամե-
նայնիւ՝ որ ծծէ այսչափ խոնաւութեց ջուրց, զովա-
նայ մեղմանայ ցորբոքեալ գոլ ջերմութեանն, զի մի
սատակեսցէ կորուսցէ զնմա պատշաճեալս։ Այլ կամ
չիցէ՞ տեսեալ մեր ամպրանի զբաղում տեղիս մաքրա-
ցեալս ջրով, որ գան հասանեն 'ի տիղին և 'ի կաւ.
և յետոյ իբրև անցանէ և 'ի վերայ նոցա բաղում անգ-
գամ արեգակն, 'ի ցամաքութեն երաշտութեն դառ-
նան, և օտարացեալ գտանին ամենևին 'ի տամուկ
խոնաւութենն։ Արդ աղէ ասասցես մոլիքն, որ ընդ-
դժուարինն ևեթ մարտ եդեալ կռուիցեն, որ ա-
սեն զարեգականեդ՝ թէ չէ ջերմութիւն, յո՞ չոգան
հասին ջուրքն և բաղում խոնաւութիւն նոցա։ Ո՞չ
ահա յայտնի է ամենեցուն՝ թէ ջերմութենն արեգա-
կան ծծեաց խմեաց զնոսա իւրով բոցաճաճանչն ձա-
ռագայթիւք։

Այսեն կէսք վիմասանոցն Յունաց, թէ արեգական
ոչ է ջերմութեն։ Այ՝ետ եդեալ նայեսցուք, թէ սր-
չափ դիւրին է նոցա ամենևին զնմ զոր ինչ անկանի
'ի միտսն խօսել, և զօրաւոր կարծեն զպատասխանի
օրինակի՝ զոր առնեն յասելն, թէ արեգական գոյն
սպիտակ է, և ոչ կարմիր. և ոչ է ինչ յորմէ հարկա-
նիցի երթն կարմրութեն։ Այս բնութենն իւր, ասեն,
չէ հրեղէն, և ջերմութենն զոր ունի՝ 'ի շփելոյ երագ-
ընթացիցն և յանդադար գնացից իւրոց է։ Այս որ-
պէս ասենն չիք ինչ խնաւ, թէ կարօտ իցէ հասանել
ջերմութիւն արեգականն. և ոչ ինչ ունի կատարեալ
'ի խոնաւութենէ։ Զի՞ պէտ և չէ բանս Հնմարիտ որ
ասացաւ 'ի նոցանէ, և պատմութեն կցուածոյ է, ոչ
ինչ է մեզ փոյթ. թէպէտ և ասացաւ դարձեալ, թէ
ջերմութենն սպառիչ է, և կարևոր պիտոյիւք կազմե-
ցան նմա բնութիւք ջուրցն հոսանաց։ Այս մեք մի վասն
այսր աշխատ լինցուք. այլ զայս իմասցուք՝ թէ ջեր-
մութեն իցէ արարեալ բնութիւ, կայ ևեթ խոնաւութի։

1 Յոր. Ի-ԻԷՈՆ։

Դարձեալ, եթէ յիւրում բնութեան ունիցի արեգակն զջերմութիւն, և եթէ ի հաղորդութենէ, կամ ի պատճառանաց իրաց ինչ՝ որ դիցին, ծնանիցին, տացուք զսոսա ծածկագիտին, որ գիտէ զծածուկ զբուութիւնն արարողն նոցա։ Օ ի է յորժամ փայտ ըզփայտ շփի, հուր ծնանի. և եթէ անդատին ի բնութենէ հրոյն կարգի այլուր հուրն, ի բոցոյ անտի եր կոբին զսպառումն խոնաւութեանն ցուցանեն։ Այլ ահաւասիկ տեսանեմք զամենայն արութիւն մեծութիւն իւրով սքանչելագործ իմաստութեամբն. զի ի տեղւոջէ ի տեղի փոփոխէ զարեգակն, զի մի յորժամ ընդ նոսն եւեթ ընդ մի հետ գնասցէ, սատակիցէ կորուսանիցէ զամենայն ինչ որ բարւոք կազմեցան։ Օ ի ի ժամանակս ձմերայնոյ ի հարաւակողմն կոյս փոխէ գնացս արեգական, և յետ սակաւ ինչ ժամանակաց ի հասարակած տուընջեան և գիշերոյ ածէ դիպեցուցանէ։ Այս դարձեալ ի ժամանակս ամարայնոյ ի կողմանս հիւսիսոյ հրամայէ վերանալ երանել, զի սաստիցեալ ընդ բազում տեղիս խառնեսցէ արացէ միաբան զգնացս իւր ի վերայ երկրի, և պահեսցէ զկըշիռն հանգստեան պաշտաման իւրոյ առ ամենեսեսան՝ որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։

Ընդ միտ եդեալ նայեսցին խնամատուքն Յուսնաց, եթէ ոչ ինքեանք ընդ ինքեանս մարտ եդեալ կռուեցեալ ի ձառս իւրեանց։ Արանզի կէսք այսպէս ասեն զծովն, թէ վասն այնորիկ ոչ ընու ի գետոցն՝ որ մտանեն ի նա, և վասն այնորիկ է՝ ասեն՝ դառինք և աղի են ջուրքն ծովու, զի ըմպելի և յստակ ջուրքն քամին երանեն ջերմութեամբն արեգական։ Արանզի արեգակն է պարզիչ ջուրց ծովու, զթեթեանն և զնուրբսն և զբաղցունսն ձգէ առնու տապոնն իւրով, և զթանձրունսն և զծանունսն, այսինքն զմիրեանն և զպրդտորեալսն անդրէն թողու. և որ անդրէն մեկնեալ մնան, են աղիքն և դառինքն։ Այս ասու ամենայնիւ գտանի ծով միակշիռ, զի մի ընուցու ի գետոցն՝ որ մտանեն ի նա։ Այս նոքա որ զայս ասացին ի ծովէ, դարձեալ այլք անդտին ի նոցանէ դառնան ի վերայ նոցա, և այսպէս ասեն, թէ բնաւ ամենևին չէ արեգակն պակասեցուցիչ խոնաւութեան։ Այս այսու

ամենայնիւ ոչ գտանի հինն Ճառից նոցա։ Լայկեսցուք և մեք այսուհետև 'ի միտն։

«Լոյս կոչեաց, ասէ, ՝ՅԾ զՀաստատումն՝ երկին»։ Լոյս Ճշմարիտ անուն երկնից այն է, որ առաջնոյն կոչեցաւ. և անդի եդաւ և սմա կոչէլ ըստ նմին օրինակի։ Լոյս դարձեալ զվերին զվայրն օդոյ՝ որ ընդ տեսլեամբ ակամ անկանին՝ երկինս կոչէմք ըստ գրոց։ ՎանՁն և օդն հոծ և մած է, ըստ այմմ զոր ասէն թէ Լուսնունք երկնից։ Լոյս դարձեալ զայնն որ թրուչին ընդ երեսս երկնից, իբրու թէ յերկինս ելանիցեն, յայտ առնէ. ըստ այմմ՝ զն 'ի Ժամանակի իբրև օրհներ Մովսէս զազգն Յովսեփու, ասէր. Օրհնեալ 'ի տեառնէ երկիր նորա, 'ի ժամու 'ի ցողոյ յերկնից, և յարևամտից փոխմանց արեգական, և 'ի կանուխ անդնդոցն խորոց, և 'ի մրգոց՝ զոր մուցանէ լուսին, ընդ ժամանակի երկրին լուսէ, և 'ի գագաթանց բլրոց մշանՁնաւորաց։ Լոյս յայտ արար՝ թէ ամենայն յօրինուածք երկրի 'ի բարւոք առաՁնորդութենէն վերին բնութեցն լինին։ Լոյս 'ի ժամանակի իբրև գներ զանեծան 'ի վերայ Խարայելի, այսպէս ասէր, թէ Ա.բարից 'ի վերայ քո զերկինս պղնձի։ Լոյս զնչ՝ իցեն միտք բանին առնել 'ի վերայ նորա զերկինս պղնձիս, եթէ ոչ այս, զն եղեցի նուազութիւն ջուրց յօդոցն. յայտ է թէ ամենևին երաշտութիւն կատարեալ է։ ՎանՁն յօրինուածութեան պտղոց երկրի պատՃառք՝ օդոյն խոնաւութիւնն, որ անուանեցաւն երկինք։

Լայց յորժամ ասէ, թէ ցող և անձրև յերկնից գան, զխոնաւութենէ ջուրցն՝ զոր ունի օդն վերին, յայտ առնէ։ Լոյս ժողովք խոնաւութենն ջուրց 'ի տապոյ արեգական ձգին ընդ երեսս բարձանց, ելանել 'ի հոծ և 'ի թանձր օդն ժողովել. և յորժամ ՃեպՁն հողմք հնչել՝ այ առաՁնորդութեամբն, ընդ աղօտ 'ի վերայ ամպոց գայ ինքանէ նստի խոնաւութիւնն, և սկսանի յօրինել լինել յոլոն յոլոն զարմանագործ իմաստութիւն արարչին։ Լոյս այսպէս բազում ջուրքն զանանին մեկինին լինին շիթք շիթք, և ցանին սրսկին

1 Յոր. Ե- Խեն։

ընդ երեսս երկրի։ Ասեպէ ծանրութիւնն զանգս, և ընդունին ակնարկելով զհրամանն, և հեղեալ զեղուն անձրևքն 'ի բարձանց 'ի խորս երագնեցաց սլանալով։ Այլ յորժամ խոնաւութի՝ ամպոց ուցէ գնմանեալ փրփրոյ 'ի սաստկութենէ բռնութեան նոցմոյ հրամանաւ ՝այ, և սառնասառոյց ցրտութի՝ փրփրումն խոնաւութենն անկանիցին, վաղվաղակի առ ժամայն դառնան ջուրքն 'ի ձիւն. և նոքն հոծին ամենեւեւ ամպքն ձեռամբք. զի ակնարկելով հրամանին ՝այ լինին ձիւնաբերք՝ յորժամ և կամիցի։ Այլ կարեմք 'ի միտ առնուլ և տեսանել, զի զխոնաւութի՝ ունի օդն՝ որ ձգեալ տարածեալ կայ 'ի վերոյ քան զմեզ, 'ի ցաղոյ՝ որ արկանէ յերկիր 'ի պարզոյ։

Այս այսուհետև և մեք յաշխատութի՝ քննութի՝ երկնից մի անկցուք, որով ծիրքեցին ծնկեցին զանձինս իւրեանց փիլիսոփայքն։ Այլ միտ եդեալ միաբանեսցուք պարզ և մեկին ՃՇմարտութենն, յորում՝ ոչ գոն իրք պՃնեալք և պաՃուՃեալք. քանզի Հոգւոյն ՝այ է ուսումն վարդապետութեան նորա. և հրապոյրք պատրանաց մոլորութեան մի լցին մեզ փոխանակ ՃՇմարտութեանն հաւատալոյ։ Որպէս զի չէ ինչ կարօտ զարդարանաց գեղոյ՝ որ ինքն յանՃնէ ուներ զվայելչութի՝, նոյնպէս և ՝այ պատգամքն չէն կարօտ պաՃուՃանաց. զի առաւել քան զայնոսիկ՝ որ եղեն կարօտ պաՃուՃանաց մնացածին ստայօդ բանից։ Յունաց։ Ամանզի հաւանութիւնք ստայօդիցն 'ի բանից իմն զարդարանաց ունին զօրութիւն. իսկ մեր ՃՇմարտութիս կապուտ կողոպուտ 'ի պաՃուՃազարդ ստաբան բանից ստայօդոցն ունի անձամբ յանՃնէ զհաստատութի՝։

Այս մեզ անկանել յաշխատուի՝[1] ընդ իմաստունսն Յունաց առ 'ի յանդիմանել զստութիս նոցա, իբրև գործ իմն աւելի համարիմ. զի բաւական են մարտքն՝ որ կան 'ի գիրսն նոցա՝ արկանել զնոսա ընդ միմեանս։ Զ 'ի իբրև նոքա մարտ եդեալ ընդ միմեանս կռուիցին, մեք ինչ լուռ և խաղաղ նստիցիմք, լցուք տեղ սողք մարտին։ Այս որք այսպէս մոլորեցան՝ ոչ են սա-

1 Յօր. ՝ալեաց--՝ի։

կաւաւորք թուով, և ոչ անկածք ինչ 'ի պատուէ. և ոչ իւրաքանչիւր Ճառքն՝ զոր խօսեցան, սակաւք լցեն և նուազումք։ Այլ հակառակ միմեանց գոսան Ճառիւքն իւրեանց։

Մի՛ թա եդեալ երթան ստէպ զՀետ իւրեանց մնացն ծննդեան, ասել զաշխարհէս՝ թէ ամենևին ամենայն եղծանելոց է 'ի հրոյ։ Այլ դարձեալ, ասէն, միւսանգամ 'ի սակաւիկ ինչ 'ի սերմանէ՝ որ մնայ յայրեցուածոյ անտի, առնի նմա [1] անդրէն նորոգութիւն կենդանութիւն։ Այլ զապականութիւն աշխարհիս ասէն բազում իրաք և զանդրէն նորոգութիւն նորին այլով բանիւք։ Այլ այսպէս ըստ իւրաքանչիւր մնաց և զիւրաքանչիւր կողմն մեկնեցին 'ի Ճշմարտութիւն անտի, վրիպել դանդաղել անկանել 'ի պէսպէս մոլորութիւն, զի գտցեն զգիւտս կորստեան 'ի սատակումն իւրեանց անձանց։

Այսասցուք դարձեալ և ընդդէմ ուրումն՝ որ յեկեղեցւոյ է և դանդաղէ անմանն առակքն, ասել զՋուրցն վերնոցն զանս անմանս, և առնել նոցա մեկնութիւն զբարձրացեալ բարձանցն զգիտուն։ Ցուրքն, ասէ, որ մեկնեցան ելին 'ի վերայ քան զՀաստատութիւն, 'ի վերին զօրութենէն և հոգևորքն են։ և կերպարանքք Ջուրցն, ասէ, մուծին գիրք զՃառսն նոցա։ և վասն առաւելութեան և սրբութիւն իւրեանց, ասէ, են փառաւորիչք։ ըստ այմմ՝ զոր ասացեալն է զնոցանէն, թէ Ցուրքն որ 'ի վերոյ քան զերկինս՝ օրհնեցէք զանուն տն։ Այլ որ 'ի ներքոյ երկնից մնացին Ջուրքն՝ կալ 'ի վերայ [2] երկրի, Ժամանք և դարձելիք են, ասէ, և իբրև զխոտանս և զանարգս մնացին 'ի խոնարհ, զի պղտորեալք և դեղխեալք են, և միշտ անդադար պատերազմի մնարտ եդեալ կուռին, և այրք չարք դոն հանգչին 'ի վերայ նոցա, և միշտ ամբոխեալք և դղրդեալք են ալեօք։ Այլ վասն այնորիկ, ասէն, կոչեցաւ ծով, զի Հանապազ 'ի խռովութեան և 'ի ծփանի կան՝ ամբոխեալք ալեկոծեալք, ըստ օրինակի մնաց այնոցիկ՝ որ բնակեալ են յերկրի։

Այսոսիսի բանք իբրև երազոց պատմութեամ նման

[1] Յոր. Նմա։ [2] Յոր. 'Ի վերոյ։

էն, և իբրև զարբաց ծերութեանն՝ որ անցեալ զառամ-
ցեալ էին անկանել 'ի բանից հաստատութենէ։ Այլ
մեք զՔրիստոս՝ Քուրմ սաեմք, և այնպէս գիտեմք զնոսա՝
որպէս իւրեանց ընութիւն իսկ պահանջէ, և որպէս
մեկնեացն կալ 'ի վերոյ և 'ի նեղբոյ, նոյնպէս և խմա-
ցուք զնոսա։ Այս մի, վասն զի ասացաւ զվերնոյն՝ թէ
փառաւորիչք են ամենատեառնն և արարչին հասա-
րակաց, դիցուք զնոսա զնօսնոց ընութեան. և մի, վասն
զի գրեալ է թէ երկինք պատմեն զփառս աստուծոյ, շնչա-
ւորս և ազգէլս ասասցուք զնոցանէն։ և մի, վասն
զի զգործս նորա պատմէ հաստատութիւն, կարծեա-
ցուք զնմանէ՝ թէ կենդանութիւնք ունիցի գիտութիւն։
Այսպէս թէ ասասցէ սք, թէ պատմուելն երկնից՝ տե-
սին իւր մեծասքանչ է և մեծապայծառ զարդն վա-
յելչութեան զոր ունի, և գուշակելն հաստատութեան՝
գործքն աբանչելիք են, զոր արժանաւոր բանիւք ոք
պատմեսցէ զնմանէն առ 'ի հաւանութիւն, զայս ըն-
կալցուք ճշմարտութիւն, քանզի արդարութեամբ ասացան։
Այս մի, վասն զի գրեալ է յօրհնութենէն Դանիելի՝
թէ Օրհնեցէք ցօղ և ցուրտ և սառն զնոր, կարծեա-
ցուք զնոցանէն՝ թէ ունիցին բանս և գիտութիւնս.
քանզի 'ի ձեռն մարդկան՝ որ ունին զգիտութիւն և գէ
տեղ զարմանալ 'ի վերոյ երևելի արարածոցս, տուեալ
լինի փառաւորութիւն արարչին 'ի վերոյ ընտոյ և անբ-
խօսից խօսմովքս, թէ օրհնեալ վայելուչ և փառաւո-
րեալ էն փառօք արարչին իւրեանց։ Այս արդ ոչ եթէ
ջուրքն միայն՝ որ 'ի վերոյ քան զերկինս են՝ վասն պա-
տուականութեան իւրեանց տան զփառաւորութիւն, այլ
և որ յերկրիս են և չեն թշնամանեալք՝ տան զփառա-
ւորութիւնն. ըստ այնմ՝ զոր ասէ, թէ Օրհնեցէք
զնոր յերկրէ վիշապք և ամենայն խորք։ Այս ահաւասիկ և
ջուրքն՝ զոր անուանեալս խոստեաց բանդաղուցեալ,
փառաւորիչք են այ միահամուռ ամենայն ժո-
ղովք՝ ըստ վկայութեան Սաղմոսին. զի և նոքա 'ի ձեռն
մարդկան, վասն մեծասքանչ զարմանալեացն՝ զոր ու-
նին առ 'ի պէտս և 'ի հանդիստ ամենեցուն, տան
զփառաւորութիւն։

"Այս ետես, ասէ, ամ զի բարի է"։ Որոց ամ է
արարիչ, ոչ տեսլեամբ աչաց արարչին գովելի գեղ

վայելչութիւն տեսլեան արարածոցն. զի առ ՅԾ չէն մնա անդամք յոդոպատք և մարմնապատք, այլ իմաստութիւք արարչութիւնն նորա երևին կատարեալ գեղեցկութիւնք, վասն պէսպէս հնարից հանգամանն՝ որով լի են առ'ի պէտս այնոցիկ վասն որոց արարանն։ Իսկ որ յայտնի նշանակաւ կամիցի հայիլ յիրսն հաւատաւոր, մի այնպէս նայիցի՝ որպէս նորա տգիտութեանն երևիցին. այլ այսպէս դիցէ զնոսա կատարեալս և լցեալս, փառաւորեալս և վայելուչս, հանդրստաւէտս և որք կարօտութեան լցեալք են, և փառաւորիչս արարչին որ արարն զնոսա։ Այս մի հայեսցի՝ ի նոսա իբրև տգէտ, որ հայեսցի ընդ գործս ՃԱՌ տարի՝ որոյ կազմեալ իցէ զգլուխսն և զլանջսն և զմէջս և զոտս պատկերին, և չէ իցեն կցեալ ընդ մի մեանս իւրաքանչիւր կարգի անդամք մարմնոյն, և'ի վայրավատին անդամոց՝ որ ստ անդ դնիցին՝ կարծիցէ, թէ ոչ կարաց ՃԱՌՏԱՌՆ կատարել զպայման պատկերին։ Իսկ ՃԱՌՏԱՌՆ և մինչ չէ սկսեալ էր զգործն՝ նկարեալ ունէր'ի միտն զգործ պատկերին։ Այլ տգիտին, մինչ չէ գան հասանէն'ի չափ իւրաքանչիւր յոդուածոցն անդամքն, ոչ առնին զարմացուցիչք և սքանչելացուցիչք։ Այս արդ յայտ եղև, թէ փառաւորութեան այ իմաստութիւք մի մի'ի գործոց իւրոց դրոշմեալ է, և փառաւորեալ գոհութիւն նորա'ի կատարեալ կազմած'ի վայելչութիւն աշխարհի լցեալ առաւելու։

Այս արդ այսու հետեւ պատմութիւն աւուրն երկրորդի'ի նմին աւուր հանգիցէ և կատարեսցի, զի տացէ տէրն լսողաց՝ որ փոյթ անձին ունին լսել, հարցանելով զմիմեանս՝ զոր ինչ լուանն։ և որ ինչ հաճոյ և քաղցր թուեսցի՝ պահեսցի յուշի հանապազորդ ածելով զմտաւ. զի յորժամ դադարեսցին և զտեղն առցեն'ի նոսա՝ հանգիցեն միտք իւրեանց'ի շահեկան անուշութիւն նոցա՝ զորս որոնեսցին հալեսցին'ի շահ արդարութեան, և դարձեալ այլոց քաղցիցեն լինել լսողք ախորժելեաց։ Այս քանզի սքաղեալ է յաշխարհս'ի պէտս կարօտութիւն, տացուք զմիջոց աւուրս հոգոյն նորա, և ընդ նմին փոյթ անձին կալցուք ունել'ի մտի զհոգս հաճոյից, որ են պատճառք կե-

նաց մերոց. պատրաստեալք միսանգամ զանձինս խորտակաց ՝ն ծեղէն բանին, որ կոչէ զմեզ 'ի սեղան հր գլուոր 'ի ժամ երեկուն ժամանակին։

Այս ՝ն որն և ՝ն ծ, որ է արարիչ մեծամեծաց և տուիչ փոքունց՝ որ 'ի մէնջ պատմեցան, տացէ ձեզ միտս ի մնստութիւն առաւելուլ սիրոյն նորա և ՝ն ՀՀմարտութիւն. զի յերևելեաց աստի զաներևոյթն դիջիք 'ի մտի, և 'ի վայելուչ փառաւորս արարածոց անյաղ՝ փառաւորութիւն մեծազարդ ՝ն ծութեան նորա տայիք։ Ի յերկրէ և յօդոց և յերկնից և 'ի ջուրց և 'ի տուրնջենէ և 'ի գիշերոյ, և յամէ՝ որ կազմեցան և հաստատեցան, յիշատակ բարերարին հաստատեցի 'ի միտս մեր. զի մի ընդի մեզ տեղի մեղաց, և մի թագաւորեսցէ 'ի վերայ մեր թշնամին իւրով մահաշունչ չարութիւնքն. այլ հանապազորդ յիշատակովք հաՀՀոյեցն ընակեսցէ ՝ն ծ 'ի միտս մեր. և տացուք փառս և զգաստիւ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

1 Յօր. ՝ն ՝ն։

ՀԱՌՈՒ ՀՈՐՐՈՐԴ

ՎԱՍՆ ՎԻՃՈՐԵԱՑ ԱՒՈՒՐՑ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ։

Ազգի տեսիլք մոլեգինք լինին 'ի քաղաքս բազումս, և յայդուէ մինչև ցերեկոյ միտ եդեալ սրուցեալ Հային իբրև 'ի գարման ինն և 'ի կերակուր աչաց ցանկութիւնք ընակիչք նոցա, և լալ անդադար զձայնս աղտեղի երգոց՝ որ ընուն արկանեն 'ի լալիս նոցա զյիշատակս բազմաց աղտեղութեց, որ մնանեն բունեն յլշտեմարանս սրտից և մնաց. և այնպէս անյայտ են լալ զլուրն ինքասակար։ Նոյնպէս՝ որ ոչ ելին անդր մնա, երանի և տան բազմամբոխ ժողովոցն՝ որ երթեալ կցորդեալ կոսմեալ կան առ ինքասակարսն։ Նոյնպէս զշահ և վաճառացն, զոր ժողովեն միշտ 'ի հրապարակաց, թողուն և երթան անդր դատարանսն. և կեսքն զգործ արուեստից, որ դատանեն զդարման կենաց իւրեանց։ Նոյնպէս այսու ամենայնիւ մնա տի ցանկութիւնք զաւուրս կենաց ժամանակաց իւրեանց յունայնութիւն և 'ի մոռոիս ծախեն։

Նոյնպէս ոչ առնուն 'ի միտ, թէ գուսանութիւնն իւրովք պատիր արուեստիւք զապականութեն նշանակ գործէ 'ի տեսողս իւր, և իրք առականաց են անդ, որոց առաջին ամ՝ մարդկան դնեին ծանակութիւնն։ Նոյնպէս միաժողով միանգամայն նստին բազումք դեգերեալք ժամանակեալք 'ի մի ժամադրուն՝ լսել և տեսանել զապականութեն աղտեղութեանց։ Ի՞նչ երգչացն պէսպէս նուագովք գեղգեղեալք, և բարբառք լրստացն տեղի ապականուն և աղտեղուն յիշատակեն 'ի միտս նոցա. և այլ ինչ ոչ անկանի 'ի խորհուրդս նոցա, բայց այս՝ զի տեղն ամենայն մի գտանիցի 'ի նոսա։ Նոյնպէս յորժամ ցնծղայքն և տաւիղքն բարբառեսցին, առաւել և յաթիռս և յակռիս կան ընկնեալք, զի զորինակ կերպարանաց նոցա նկարեսցեն յանձինս իւրեանց։

Լուսակեաքն զերիվարս զայրացուցեալս զկծեցուցեալս արշաւէն յասպարիսի. զի և այնու պատրաստեսցէն զբօսուսցէն զմիտս ժողովրդոյն 'ի հանդէս պէսպէս խաղուց տեսանելոյ։ Լուսակեաքն փոխանակ երիվարացն՝ իւրեանցն հետիոտիւքն ցուցանէն զարշաւանս, և ըստ օրինակի մարտին երիվարացն մարտ եղեալ զմարտս կաց կիտեաւն կռուին. և յօրինեալ ինն բանիւքն կցէն կարկատէն զբանս իբրև զկառս արշաւելս, և հաստ ստեպ փոփոխեն զերիվարսն և զկառս. 'ի լուսաւորս տուընջեան իբրև զմթին գիշերի ընդ քունն բարբաջէն 'ի կորուստ իւրեանց անձանցն, և որք ա-խորժելով նոցին ընտիցին ունկնդիրք։

Այլ մեք ունիմք զտեսիլ մեծամեծաց սքանչե-լեացն այ, և զարմանալի գործոցն նորա. և ամենե-քեան հրաւիրեալ եմք գալ 'ի տեսիլ գործոց սարա-չին։ Իբրև աշխատութիւն ինն վերերեալ համարիմք զվայելուչ տեսիլ սքանչելեացն, և տաղտկացեալ ձանձ-րանամք առ 'ի լսել զլուր զարմանագործն արուեստ-տից, և որ Հոգւոյն այ աւանդեցան մեզ բանք հո-գւոքք՝ ուրախ լինել ձառիւքն նոցա։ Լուսակեաքն եմք և կեամք յաշխարհի, որ պէսպէս զարդուք զարդա-ւորեալ զօրութիւն արարչին, համբարձցուք երեթիցուք մնօք առ ժամանակն առաջինս, յորում առին ըս-կիզբն լինելոյ ամ արարածք, և իւրաքանչիւր ամենե-քեան լինցուք տեսողք իրացն՝ որովք հաստատեցան կացին արարածք ամենայն։

Լուսակեաքն նախ հայեցեալ տեսցուք զերկինս, որ ձգեցան խորանարդ գմբեթաձև ըստ բանի մարգարէին. և ապա զերկիր՝ որ է անբաւայօդ և անյատ, լայնատա-րած և երկայնաձիգ մեծութիւն, որ ունի ինքն զինքն 'ի վեր, և հաստատեալ կայ անշարժ զօրութեամբն՝ որ եդ 'ի հաստատութիւն զհիմունս նորա։ Դարձեալ և օդ՝ զնարդ իւրով լցեալ և տարած՝ ջերմ և խոնաւ բնութիւն, որ է հանապազորդ դարմանիչ ամենեցուն՝ որոց կարօտեալ կախին ոգիքն զմնանել, որ հնոցանն դին ամենեցուն՝ պատառելով և կցելով 'ի նոցանէ, յորժամ շարժիցին 'ի խաղալ յիւրաքանչիւր կողմանս վասն փափուկ և ցիր և ցան իւրոյ բնութեն, և ընդ նման գնան և ընդ նոյն դառնան և 'ի մէջ նորա շար-

ջին և 'ի նմին դատեսին. յետոյ կայ և առաջոյ դատեսի, և ոչ երբեք լինի նոցա արգել և խափանիչ վասն նուրբ և պարզ և սիրեան [1] բնութեան իւրոյ : Հայեցցուք դարձեալ և ընդ ջուրս դարմանիչս մեր, որովք ընուն և կատարին պէտք մերոյ կարօտութեանս, թէ զիարդ և նոքա յօրինեալ յարդարմամբք խաղան միանգամայն 'ի միասին, և 'ի նկատեալ տեղիսն նոցա փութան հասանել միով ժամադրութեամբ միահամուռ հրամանաւ ակնարկելոյ իւրեանց արարչին : Այլ 'ի բանիցն՝ որ ընթանան առաջի մեր, տեսանեմք այժմ զերազնութեաց գնացս նոցա :

"Այլ ասաց, ասէ, ՏԾ. Յորդորեցին ջուրքն՝ որք 'ի ներքոյ երկնից են՝ 'ի տեղի մի, և երևեսցի ցամաքն. և եղև այնպէս : Այլ կոչեաց ՏԾ զցամաքն՝ երկիր, և զժողովս ջուրցն կոչեաց ծով. և ետես ՏԾ զի բարի է ,, : Զարդ որչափ պատճառս եպիրանաց պահեսցիր յինէն, վասն որոյ արկեալ էր զՏառս : Լսես. զիարդ երկիր աներևոյթ և որ 'ի նմա էին, իբրև բարձաւ յերեսաց [2] նորա տարրն՝ որով ծածկեալ էր՝ երևեալ 'ի տեղին ուր նկատեցաւ նմա, և երևեցան իսկ և իսկ ազգի ազգի գոյիք՝ որ ծածկեալ էին 'ի նմա, և յայտնեցան իրքն՝ ամ, և մեկնեցան զատան գալ յիմաստս և 'ի տեսիլս, որք անծանօթք էին յիմանալոյ : Այլ թերևս ոչ թուիցին քեզ արժանաւորք բանքն՝ որ պատմեցաւ. զի առ 'ի մէնջ այսպէս ասացաւ բանն, թէ երկիր աներևոյթ բնութիւն և ոչ թէ բնակութիւն. քանզի բազմութիւք ջուրցն ծածկեալ ունէր զերեսս նորա : Լուր այսու հետև զբան գրոյն՝ որ ինքն զինքն մեկնէ : " Յորդորեցին, ասէ, ջուրքն 'ի տեղի մի, և երևեսցի ցամաքն ,, . այս ինքն բարձցի յերեսաց նորա՝ որ ինչ մածեալ ունի զդէմն նորա, և երևեսցի որ ցայժմ ոչ երևէր :

Այլ թերևս որ արժանաւոր կարդաւ խնդրեսցէ զայս, թէ բնութիւն ջուրցն՝ հրամանաւ սրդեւք այդ էառ զգնացսն ընթանալ յամենայն կողմանս : Զի ջուրքն յորժամ ունիցին [3] զառ զհարթ տեղի, ոչ ու-

1 Յոր. «ՔԻՒ» :
2 Յոր. Բուրյոց երեսաց :
3 Յոր. «Ի ՈՒՆԻՑԷն» :

րեք խոտորին զեռան յետեղեկալ յիւրեանց կայե-
նիցն. իսկ յորժամ գացեն տեղի զառ՝ի Թափ, իսկ
և իսկ իբր սկսանին շարժիլ գնացք նորա՝ յորդէն
ստիպեն յորդութիւնք բազմութեանց նոցա. բուռն հա-
րեալ պինդ ունին զգլուխս զգաբշապարս միմեանց, և
միմեանքք գնան[1], և զմիմեանս մղեն։ Այնաջինքն ձե-
պեալ ընթանան, և վերջինքն բուռն հարեալ վակ-
ժոյժ լեալ չհաւանին զառաջինսն թողուլ. և ամենե-
քին զմիմեանս ստիպեն երագընթացք գնացիւք, և
ծանրուէք միմեանց ստիպեն ի՝նչանել ընդ զառ՝ի վայր
տեղիս՝ գտանել միանգամայն՝ի խորխորատս խառ-
չաց։ Այս եթէ այսպէս էր իսկզբանէ բնութիւն ջուրցն,
զի՞արդ լիներ՝ի վերայ նոցա հրաման՝ ժողովել՝ի մի
տեղի. քանզի՝ի նմին, ասէ, պատրաստական կային՝
վասն խնայարհագնաց բնութիւնք նոցա՝ երթեալ հասա-
նել ինքեանք ինքեանքք՝ի հարթ և՝ի միատարր տե-
ղի։ Այլ ահա գոյր նոցա հարթել՝ի միատարր տե-
ղի, և յառաջ քան հրաման՝ ոչ ցուցին զգնացս իւ-
րեանց, քանզի ոչ ունէին հրաման խաղալ ելանել՝ի
կայանից անտի. քանզի՝ի վերայ հարթ և հաւասար
երկրին կային խաղաղացեալք։

Իսկ եթէ՝ի մի տեղի, ասէն, առին[2] հրաման ժո-
ղովել հասանել, իսկ այն զիսարդ իցէ՝ զի ծովք բա-
զումք գտանին հեռաւորք բացաձիգք՝ի միմեանց սահ-
մանեալք վայրովք ըստ իւրաքանչիւր սահմանաց։
Այնաջին խնդիր բանին մերոյ այս է, եթէ հրաման
ՅՍ առին ջուրքն զգնացս իւրեանց, և ոչ եթէ տեղի
ոչ գոյր նոցա, թէ ինքեանք յանձանց ելանիցեն միան-
գամայն խաղալ. իբրև գիտեմք՝ զի ջուրք խաղաց բնու-
թիւնք են, և չիք նոցա կայք ետեղակալք, եթէ ոչ
կամ՝ի հարթ կամ՝ի խոր վայրի։ Այդ մինչ չև ա-
ռեալ էր յՅՍ հրաման, ոչ շարժեցան ինքեանք յան-
ձանց ցուցանել զգնացս իւրեանց։ Կամ թէ չիցէ՞ տե-
սեալ քո զջուրս՝ զի ընթանան, և ո՞չ յայլմէ լուեալ
իցէ՝ թէ գնայունք են։ Այլ՝ի միտ առ, զի բանն ՅՍ
հաստիչ է բնութեց, և հրաման՝ որ լինէր՝ի վերայ
հաստատելոյն, և զկարգ կազմութեանն նոցա ցուցանէր,

1 Յօր. գոան. 2 Յօր. առ՝ի հրաման։

և զնոցուն յօրինուածն 'ի նոսին հաստատեր. զի ընթանալով ըստ իւրաքանչիւր արարածոյ՝ պաշտեսցեն զկարգ իւրաքանչիւր. քանզի տիւ և գիշեր միով հրամմանաւն՝ զոր առին՝ կանգնեցան և երևեցան. և խաղղեսցեն կարգին գան առ միմեանս զյաւելումն և զհասարակելն և զերթալն և կացուցանել զկարգ ժամանակացն բաժանմամբ անվրէպ և անդադար գնացիւք. "Դողոլեսցին, ասե, ջուրք 'ի տեղի մի"։ Այլ անդէն առին ջուրքն երագընթաց թեթևութեն, զի առանց աշխատութեց ցուցցեն զիւրեանց զերագասացն գնացս 'ի Ճեպել և ստիպել ՝այ հրամանին, զի միշտ անդադար զնորա զկամն պաշտեսցեն։

Այլ ես զայս կամիմ յայտ առնել, թէ ՝այ հրամանաւն ջուրքն առին զգնացս իւրաքանչիւր. ոչ միայն՝ զի յորժամ գտանիցեն զառ 'ի թափ տեղիս, այլ և 'ի նեղբոյ 'ի վեր համբարձցին ելանել երկնապողող. որպէս աղբերականք՝ զի 'ի նեղբոյ 'ի վեր բխեն, և գետք և վտակք ըստ նոցուն օրինակի։ Ոչ զտեղակալ ջուրցն մերացելոց ասեմ, որ պաշարեալ զետեղեալ զմի և զնոյն կայանս ունին, որ առանց գնացիլ և առանց շարժելոյ են, ըստ օրինակի ոմոց պաշարելոց՝ որ զեղ առեալ կան արգելեալ 'ի պաշարն։

Իցէ՞ երբեք տեսեալ քո զզղխումն աղբերականց, որ յորդեալ ելանեն 'ի նեղբեն սանդարամետաց դեպ ուղիղ 'ի հանդիպութեն բարձանց. կամ չիցէ՞ ածեալ զմնաւ ընդ այն զարմանալին զհանճար խնամատուին, թէ ո՞վ իցէ՝ որ Ճեպեալ ստիպիցէ զյորդաբուխ բբխումն աղբերաց, 'ի խորոց անդունդոց երկրի վերանալ ելանել 'ի բարձունս, և զինքանել զեղուլ անդէն ընդ երեսս երկրի. և ո՞վ իցէ յորում եդեալ մղիցէ զարգելեալ ընութեն նոցա, և 'ի սնդան արկեալ նեղիցէ զբազմութիւն ջուրց՝ 'ի նեղբեն կայեցիցն ատ 'ի վեր գտանել. և կամ որպիսի շտեմարանք իցեն՝ որ հանապազ բղխեն և ոչ սպառին, և 'ի յաճախելն զյորդութիւնն և ոչ պակասեն. և որք այսր 'ի վեր երևին՝ սպառեալ պակասին, և որք տանն և առաքեն ոչ երբեք նուազեն. եթէ [1] ոչ յառաջին բարբառոյ հրա-

[1] Յոր. Ը ԻԷ։

մանին՝ այ՝ որ անկաւ զնոքօք, որ ունին զանդադար զնացս և զանսխալն յորդութիւն։

Լ.ՐԴ ԵԿԻՆ ԵՀԱՍ ՅԾԱԲԱՐ [1] հրամանն՝ ի վերայ ջուրցն բազմութեան, զեռալ խաղալ միահոյլ՝ ի մի վայր ժողովել ամենեքին միանգամայն միով ակնաբանութիւն. և Ճեպելին ստիպելին՝ եմ միանգամայն բազմութիւնքն հոսանաց զմի և զնոյն զերագութեան արշաւանս ունել, հաստատել բանակել առնուլ զեռոլ և զկայանս՝ ի տեղւոջն՝ որ նկատեալ մեկնեցաւ նոցա՝ ի մեծասաստ հրամանէն։ Լ.Ե իբրև հասին կալան իւրաքանչիւր կայեանս, որ զատեալ մեկնեցաւ նոցա ակնարկելով արարչին, սահմանեալ զետեղեցան յիւր կայանի, զի մի իշխեսցեն ուրեք հեղուլ զեղուլ և ելանել, ըստ բանին որ ասացաւ՝ թէ Լ.մինայն գետք և վտակք՝ ի ծով մտանեն, և ծով ոչ լնու։ Լ.ՐԴ քանզի եղև՝ ի վերայ նոցա մեծասաստ հրամանի ժողովոյն՝ ամփոփել՝ ի մի վայր հասանել, սրտին զնացս և ընթացս Ճեպել ստիպել հաստատել արգելուլ զևրաքանչիւր տեղւոյն ետեղակալս, որ միտ եդեալ պահէին զսահմանս արարչին, թէպէտ և նեղ և անծուկ ի՞նչ տեղին մեծայաղթ և յորդ բազմութեն նոցա։ Կամին ելանել ըստ խաղաց բնութեան յընդարձակ տեղւոյն, այլ քանզի անդր առին հրամանն ժողովել և՝ ի նմին զետեղել, ոչ են՝ ի ձեռնհաս փոխել զհրամանն, թէպէտ և ալեկոծեալք կան՝ ի ծփումն՝ ի բախել միմեանքն զմիմեանս, ստիպեն սնդեն ինքեանք զինքեանս յելանել զեղուլ ընդ երկիր ծաւալել։

Լ.անզի միշտ հանապազ ամբոխեալ կայ ծով յերկրի՝ ի սաստկութենէ հողմոցն մրրկաց, և ելանեն վերանան ջուրքն՝ ի բարձունս վերինս դէզադէզ կուտակեալ, և իջանեն և բաղխեն շուրջ զեղերքն փըրփրեալք, սանձակոծեալք, և դարձեալ միանգամ անդրէն՝ ի ներքս առեալ շրջանս՝ անդրէն՝ ի նոյն նահանջին, լքեալք, յաղթեալք, մատնեալք՝ ի պարտուն սաստիկ և յաղթ զորութեամբն՝ ի ՀՀին աւազոյն, որ հարկանի՝ ի դիմի և նահանջ, ըստ այմ՝՝ որ գրեալն է, (Ով յինէն ոչ երկնչիցիք, ասէ՝ ՀՀ, որ եդի զա-

[1] Յօր. ՀՀ աբրահամա հրամանն։

ւաղ սահման ծովու և վերանան բարձրանան ջուրք նորա, և ոչ անցանել կարեն զսահմանաւ։ Մեծա-
մեծ զարմանք են, զի անզօր զօրութիւն աւազոյ սան-
ձեաց նահանջեաց ՝ի ՝ծ զսաստկութիւն բռնութիւն ծո-
վու, զի մի անցանիցէ ընդ սահմանս իւր։ Այսպա թէ
ոչ, զի՝նչ արդեալ էր կարմիր ծովուն ելանել ծածկել
զամ երկիրն եգիպտացւոց, քանզի ՝ի խորոյ կայ
Այգիպտոս և ծոմն ՝ի վերոյ կոդմանէ գեր ՝ի վերոյ,
և գալ խառնել ՝ի մեւս ծոմն՝ որ է ՝ի սահմանս եգիպ-
տացւոց, եթէ ոչ՝ զի սանձեալ սահմանեալ կայ հրա-
մանաւ արարչին։

Այս զի ՝ի խորոյ կայ երկիրն եգիպտացւոց քան
զծոմն կարմիր, արդեամբք հաւանեցուցին՝ որք կա-
մեցան ժարՀել կորել զսահմանն, և զերկուս ծովսն
ընդ միմեանս խառնել. այս ինքն զծոմն՝ որ է ՝ի սահ-
մանս եգիպտացւոց, և զՀնդիկեա ծով՝ այսինքն է
կարմիր ծով։ Դ՝ախ սկսան զայս գործ ժարՀուԹեան
գործել Մեսոպտարիս եգիպտացի, և յետ նորա Դա-
ութ՝ Հ արքայ Մ՝արաց։ Այս զի բերի զՀաւս ժարՀուՀ
աշխարՀակալաց, զի ցուցից՝ Թէ չկք ինչ զոր ամենա-
տեառն ամենագործ արարչին սահման ելից, Թէ կա-
ցիցեն մարդիկ իւրեանց տկարն զօրութիւն գամագիտ
լինել նմա Հնարիւք։ "Յողովեսցին, ասէ, Ջուրքն ՝ի
տեղիս "։ Զ՝ի յայտ արասցէ՝ Թէ չկք զոր, որ կարէ
Հանել զնոսա բան նկատեալ կայանս նոցա արտաքս,
այլ զի յոր տեղն ժողովեսցին, և անդէն ՝ի նմին կայ-
ցեն սահմանեալք։

Զ՝ի Ճրն ամենակալն զոր ասաց, Թէ ժողովեսցին
Ջուրքն ՝ի տեղի մի, եցոյց թէ՝ եթէ Ջուրք բազումք
յամ՝ տեղիս զերեալ կային միապաղաղ, և խորք և
ձորք և Հովիտք և խոռոչք, լերանցամէջք նեղուց են
նոքաք լցեալք, և առլցեալք կային միապաղաղ ծած-
կեալք։ Այս ամ՝ վեՀք և խորաձորք և դաշտք և լե-
ռինք և բարձունք բարձրաբերձն կատարովք ՝ի միասին
միանգամայն առ Հասարակ ծածկեալ կային ջուրցն
բազմութիւն՝, և ոչ գոյին փապարք կամ ծերաք, դա-
ռափորք և քարաքորկք և գլուխք լերանց և կատարք
բարձանց, եթէ ոչ ամենևին ամենեքին լեռ՝ ՝ի ծայր
՝ի ծայր կային ՝ի Ջուրց բազմութենէ. և միով մեծա-

սաստ հրամանաւն ՝ այ, որ անկաւ զամենեքումբք, առ հասարակ ամենեքին ՝ի մի տեղի Ժողովին։ Այլ մի՞ ոք ասասցէ, թէ ջուրք որ՝ի խորշս խորոցն՝ մնացին, վասն զի չէր մարթ ՝ի բարձրաբերձ բարձունսն վերանալ ելանել, երթալ՝ի տեղին՝ յոր առին հրաման երթալ Ժողովել։

Այլ թերևս ասիցէ ոք, եթէ այն ՝ամ ջուրք, որ զդաշտս և զհովիտս և զլերինս և զբարձունս և զամ երկիրք միասահման կամ միանդամայն ունէին մեծանեխան բաղմութ՝, յո՞ր վայր չոգան ամենիսեցան։ Զոմ զայս ասէն, պասացուք զայն, եթէ կայանք ըստ օրինակի ամենոց կազմեցան նոցա իւրաքանչիւր՝։, գործ յարարչէն, և անդ չոգան Ժողովեցան հրամանաւ հաստչին ՝ի պատշաճ տեղիսն, որ զատան լինել նոցա ետեղակալ ընութեանն։ Զի ոչ էր յայնժամ արտաքին աշխարհ Կատիրոնն ծովուն, և ոչ ծոնն մեծ՝ զոր ոչ երբեք կոխեաց ոտն մարդոյ նաւագնաց գնացիւք, որ ամենեին յամ ժամ յահ և երկեւղ մտմըռեալ գաղանացեալ սաստկանայ։ Այլ ոչ մեւս ծոնն Կուրատենայ կղզւոյն, և ոչ այն ծոնն՝ որ անուանեալ կոչի երեկոյնեայց, քանզի սահմանակալ մտիցն արևու է, և ոչ ծոնն Իբերեայ[2]. զի սոքին այսոքիկ ծովք մի՝ ի մի կցին, իբր թէ գիրկս արկեալ զմիմեանց՝ ունէիցին պինտ զմիմանս։ Այսպէս ամենազօր հրամանն ՝այ ընդարձակեաց կազմեաց կացոյց ՝ի կայանս ջրոցն բազմանալոյ, զի անդր Ժողովեսցին և ՝ի նոսին առցեն զտեղիս։

Այլ թերևս ասիցէ ոք, թէ ՝ամ միանդամայն ջուրքն[3] բարձան յերեսաց յերկրէ, երթեալ ՝ի տեղին նկատեալ. և ոչ մնրք անգամ տղմացեալք մնացին, և ոչ ՝ճահիճք ջրեղքք, և ոչ ջուրք աղբերակաց, և ոչ ջուրք սակաւանխտք ծովակաց։ Այ՞սմբ, թէ այն ջուրք՝ յորոց պարտ և պատշաճ էր լինել ժողովս ծովուց բաղմաց, մեկնեցան խաղացին[4] գնացին միանդամայն երթեալ ՝ի տեղին՝ ուր նկատեցաւ նոցա ՝ի բնակութեն հրամանաւն ՝այ։ Այլ որ երկրին

1 Յօր. Խրոտանէ։
2 Յօր. Տիբերեայ։
3 Յօր. Ջուրքն։
4 Յօր. Խաղաղին։

պիտոյ էին՝ աստէն անչարժ մնացին համբարեալք։ Յըշտեմարանս յերկրի իւրեանց խոնարհ քնութիւն։ Օ՛ի կէսքն ելցին ընդ աղբերակունս՝ երևեալ՝ի վերայ երեսաց երկրի, և կէսքն մնացին անդրէն՝ի ներքս՝ երևեալ ջրհորովք։ Այս յայտ է՝ թէ զՀառս յաղթ և ահագին ջուրցն բազմութիւն պատմեցին գիրք, յորոց պարտ և պատշաճ էր ժողովել՝ի մի տեղն։ Օ՛ որ օրինակ հուր իւրով տարած քնութեամբն ցրուեալ յաներեալ է ընդ աշխարհս պէսպէս մասամբք նուրբ և սիփհ ջերմութիւն. զի կէսքն յերկրի՝ի մեր պէտս առ մեզ գտանին, և [2] մեծ մասն՝ի նմանէ ընդ օդս խառնեալ տարածեալ կայ. սոյնպէս և զջուրսն՝ որ՝ի մեր պէտս պիտոյ էին, ժողովեաց համբարեաց առ մեզ այ տեսչութիւնն, և զաւելորդ բազմութիւն սահմանեաց եդ՝ի տեղիս, թէ զսակաւանիստ ծովակաց, և եթէ զմեծատարած ծովուց։ Ա՛ՐՕՐ ծովակք՝ի կողմանս հիւսիսոյ գտանին, և՝ի մեծանիստ աշխարհին Յունաց, եթէ՝ի Ա՛ակեդոնիա, և եթէ՝ի կողմանս բիւթանացւոց, և՝ի Պաղեստինէ աշխարհին. այլ և ջուրք սակաւանիստ ծովակացն՝ ընդ ժողովս ջուրցն համարին։

Ա՛ՅԼ մեր զաշխարհակալ ծովէն արկեալ է Հառս, որ քան զամ մեծանիստ երկայնաձիգ և լայնատարած է, քաջ քաջ ընդ երկրի զուգի համեմատութիւն։ Այս ընդդէմ այսմ բանի մի ոք յամառիցի, և մի զծովակն՝ ծով անուանեսցէ. թէպէտ և աղի և դառն Հաշակս ունիցին, և աւազով սահմանեալք գտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծին ծովու, սակայն չէ հնար՝ թէ՝ի կերպարանս մեծի ծովուն կայցեն, ոչ Ա՛տլանտիտէս [3] ծովակ՝ որ մեռ է յաշխարհին հրեաստանի, և ոչ Ա՛ներբունիտէս ծովակ՝ որ է ընդ Լիգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհ՝ի միջի, և գայ հասանէ մինչև՝ի կողմանս արաբայեցոց։ Օ՛ի սոքա՝ զորոց թուեցաք զանուանս, ծովակք են, և ոչ ծով. բայց բուն ծով՝ մին է, որպէս պատմին՝ որոց կամ եղև շրջել ընդ աշխարհս բաղումս։ Թէպէտ և

[1] Յօր. համբերեալ։
[2] Յօր. գոտնի յԼեռ։
[3] Յօր. ասֆալտիտէս։

ասէն ոմանք զծովէն՝ որ անուանեալ կոչի Հիւրկա-
նիայ, և զնորան ընկերէն՝ որ անուանեալ կոչի Կաս-
պիա, թէ զատեալք և մեկնեալք են սահմանօք, այլ
որք փոյթ յանձին կալան 'ի գրի առնել զերկիրս ամ՝
այսպէս ասացին, թէ Ծակին [1] 'ի միմեանս ծովքն, և
երթան կցին 'ի միմեանս մեծի ծովուն հայնն։

Բ. Զի զիարդ իցէ ամ, զի զժողովս ջուրցն բազմաց,
ասէն, զայն կոչեաց ամ ծովս, որ 'ի մի տեղի ժողո-
վեցան ամենեքեան։ Օ այս ասասցուք, եթէ ժո-
ղովք ջուրցն՝ որ կոչեցան ծովք, նորուն ծովու խորշք
և գոգք են, որ են յամ կողմանս երկրի, և իւրաքան-
չիւր խորշքն ունին առանձին զկերպարանսն. և ըզ-
նոյնսն կոչեաց ամ ծովս։ Դ. անոզի են իսկ այսպէս,
եթէ [2] ծովն հիւսիսոյ, եթէ հարաւոյ, եթէ ծովն ա-
ռևելից և ծովն արևմտից. և անուանս ևս ունին իւ-
րաքանչիւր գոգն բազում ծովուց։ Օ 'ի մին անուա-
նեալ կոչի Պոնդոս Եւքսինոս, և մեւնն Պրոփոն-
տիսոս և Հելլեսպոնտիոս [3], և մեւսն Լոգեւոս և Ոնե-
նինոս, և մեւս ծովն Սարդոնիկէ աշխարհի, և մեւսն
Սիկիլիա աշխարհին. դարձ բազում ևս այլ անուամբք,
որ անցանեն ըստ թիւ և ըստ համար մարդկան, վասն
անհասն բազմութեան՝ որ գտանի 'ի յազգս բազումս.
վասն այսր ամի կոչեաց ամ զժողովս ջուրցն ծովս։
Յորդորեաց հան զմեզ բանն զկետ Ճառից պատմու-
թեց ծովուցն, բայց արդ դարձցուք անդրէն 'ի Ճառս
գրոցն բանիցն։

"Եւ ասաց, ասէ, ամ. Ժողովեսցին ջուրքն 'ի տե-
ղի մի, և երևեսցի ցամաքն։" Եւ ոչ ասաց՝ թէ երևեսցի
երկիր. զի մի կարծիցի միամտամ՝ թէ զանպատ-
բաստ խմբէք իցէ պատմութիւն։ Եւ քանզի և երկիրք
'ի ջուրցն՝ որ կային 'ի վերայ նորա՝ տրմացեալ կաւա-
ցեալ էր, քանզի ջուրք բազումք ունէին զերեսս նո-
րա, և չէ ևս էր երևեալ գեղեցիկ գունսցն և կեր-
պարանաց նորա, և ոչ զօրութիւն ածեցուցիչ նախ-
ըեալ էր լինել պտղաբեր. զի մի կարծիցի՝ թէ պատ-

1 Յօր. Ծածկին։
2 Յօր. Է- թէ։
3 Յօր. Դրովոպոնոս և հիւս-
պոնիոս։

Ճառք սարսատելոյն [1] նորա արեգակն իցէ, յառաջագոյն քան զարեգակն սարսատեր ցամաքէր հրամանաւ ամենայարգաւ իմաստութեան։ Հայեսցուք մնոք ընդ գրեալսն, և տեսցուք՝ զի ոչ միայն բազմութիւն Ջուրցն բարձաւ յերեսաց յերկրէ, այլ և ՝ամ խոնաւութիւն՝ որ տամկացեալ ունէր և մինչև ՝ի խորս, դարձաւ անխափան վաղվաղակի ՝ի ցամաքութիւն հրամանաւ մեծազօր զօրութեան, յասելն՝ թէ Լուղեա այնպէս։ Լուսական եղև մի հրամանն՝ որ եղև ՝ի վերայ նորա, յայտ առնել՝ թէ ածաբարբառ ձայնին հնազանդեցաւ լինել այնպէս։

Լայց ՝ի կէս օրինակս այլ ազգ գրեալ է. ասէ. «ԼՀ ժողովեցան Ջուրքն՝ որ ՝ի տեղբոյ երկնից էն, ՝ի ժողովս իւրեանց, և երևեցաւ [2] ցամաքն»։ Օ որ ոչ՝ որ ՝ի ՃՀմարիտ օրինակագրաց կամ ՝ի մեկնչաց աւանդեաց մեզ զայս այսպէս։ Թուի ինձ՝ թէ և ոչ՝ ՝ի հեթրայեցւոց օրինակս գտանի այսպէս. քանզի ՝ի ստոյգ օրինակս արտաքսեալ և որոշեալ է զայս։

«ԼՀ կոչեաց ասէ ՃԾ զցամաքն երկիր, և ժողովս Ջուրցն ծովս»։ ԼՀ ահա նախ քան զայս գրեալ է, թէ «Լողովեսցին Ջուրքն ՝ի տեղի մի, և երևեսցի ցամաք»։ և չէ գրեալ՝ թէ երևեսցի երկիր, այլ թէ երևեսցի ցամաքն։ «ԼՀ կոչեաց ՃԾ զցամաքն երկիր»։ ԼԸրդ ցամաքն ինչ մի է երկրի, որ ունի յանկուածեն ընդ ընութեան նորա. ոչ եթէ այն անուն է երկրի, այլ յետոյ առ ՝ի պէտսն ասացաւ։ Օ որ օրինակ ասիցէ զբ զմարդոյ՝ խօսուն, զզօրութենէ մարդոյն յայտ առնել, և զընտրողութենէ՝ որ կայ ՝ի նմա մեկնել, սոյնպէս և ցամաքն ինչ մի է՝ որ ՝ի վերայ երկրի կոչի, ընդ նմին հաղորդի և ընդ նմին անուանի. որպէս և ձի ՝ի խրինջելոյ ունի զանուն անձին իւրոյ։

ԼՀ այս ոչ՝ ՝ի վերայ երկրի միայն ասի, այլ և ՝ի վերայ երկնք երկնք ընութեաց. ըստ այնմ՝ զինչ ազգ է, ունի անուն։ և ՝ի զօրութենէն՝ որ տուաւ նմա լինել, առեալ ունի զանուն։ և ամենեքին իւրաքանչիւր ըստ իւրաքանչիւր ընութեան յորում կան նոքին յայտ լինին։ Օ ՝ի ընութեան Ջրոց ունի ցրտութեան, և

[1] Յօր. սարսատելոյն։ [2] Յօր. Լաւոյ ՃԾ. ժողովեսցին. երևեսցի։

օդոյ՝ զիմնաւութիւն, և հրոյ՝ զջերմութիւն։ Այսպէս և բնութիւնք նախ յօդուած ունին 'ի միմեանց. և ապա իւրաքանչիւր ըստ կերպարանացն, որպէս և ասէին, այսպէս և երևին. և հասանին զօրութեանցն՝ զոր ունին։ Լ՚ըդ ինչ որ կազմեալ կայցեն 'ի բնութիւնցն, և անկցին ընդ ազդմամբ ըստ արարածի բնութեանց, ունին ըստ իւրաքանչիւր զօրութիւն իւրեանց, և չիք ինչ 'ի նոսա պարզ և լոկ և միանձն, թէ այնպէս երևեսցի։ Լ՚ս յայտ լնցի, թէ երկիր ցամաք է և ցուրտ, և ջուր խոնաւ և ցուրտ, և օդ ջերմ և խոնաւ, և հուր ջերմ և ցամաք։ Լ՚ս այսպէս իւրաքանչիւր ոք 'ի նոցանէն ընդ զօրութիւն իւրոյ ընկերին հաղորդեալ են, և լծակիցք միմեանց են հաղորդուած՝ բնութեանցն, և մերձաւորք միմեանց են զօրութիւն միաբանութեան։

Լ՚ս քանզի յանկակիցք միմեանց են հաղորդութիւն, և դարձեալ հակառակ միմեանց գտանին։ Լ՚ երկիր ցամաք և ցուրտ, և միաբանի ընդ ջրոյ յատկութիւն ցրտութեան. միաբանի դարձեալ և ջուրն ընդ օդոյ, քանզի 'ի մէջ երկուցն կայ ջուր. որպէս զի յար 'ի միմեանս են ձեռք զօրութիւն և մերձաւորութիւն, նոյնպէս մերձաւոր է ջուր ցրտութիւն երկրի և խոնաւութիւն օդոյ։ Այսպէս և օդ միջնորդութեամբն հաշտեցուցիչ է մարտին ջրոյ և հրոյ. ջրոյ՝ վասն խոնաւութեան, և հրոյ՝ վասն ջերմութեան, և 'ի պատճառն սոցա երբ կոչին կապեալ կան 'ի նմա։ Հուր ջերմ և ցամաք բնութիւն ունի, կապեալ է ընդ օդոյ վասն ջերմուն, և հաղորդին ընդ երկրի վասն ցամաքութեան, և միջնորդիւն՝ որ յարին ընդ միմեանս՝ հաստատեալ կայ մի բնութիւն նոցա։ Լ՚ս այս են Հնմարիտ պատճառք, որով կոչին բնութիւնք, զի ընդ միմեանս յօդեալ են և ընդ միմեանս կապեալք։

Լ՚ս վասն այսորիկ եկիր յայս ամ, զի ցուցից թէ յո՞ր սակս կոչեաց ՀԾ զցամաքն երկիր։ Լ՚ըդ յայնմ խնբէ՝ որ ինչ են պատճառք լմնելոյ մասանց տարերցն, անուանին նախ իբրև 'ի պատիս, և ապա լինի յորջորջումն արժանաւոր 'ի վերայ այնց՝ որ յաւաղ եին. զի յանուանէ անտի ծանիցին և մեկնեսցին անձինք նոցա։

"Լաւ ետես, ասէ, ՝ն՞ զի բարի է,,։ Ոչ եթէ վասն զի յարտաքին տեսլեանն երևեցաւ բարին, ասացաւ գծովի՝ թէ բարի է, և իբրև թէ այսպէս վկայեաց գնմանէն որ արարն գնա. բայց ՝ն՞ ոչ եթէ աչաց տեսլեամբ հայի ընդ գեղեցկութիւն արարածոց իւրեանց, այլ անՃառ խնամութիւն նորա էն բարի և գեղեցիկ, որոց յուրախարար հանգիստն իւրեանց ծածկեալ կայ գեղ վայելչութիւն իւրեանց։ Բարի և գեղեցիկ է ծով 'ի խաղաղ ժամանակի, յորժամ հանդարտացեալ կայցէ յալեաց և 'ի մրրկաց[1] 'ի պարզ և յստակ ժամանակի. յորժամ միտ եդեալ նայիցիս ընդ ծիծաղել ջուրց նորա, որ յազգի ազգի գոյնս ցուցանեն զերմին երմին նարօտուց[2], մերթ ծիրանեայ, մերթ կապուտակի, մերթ սեւաներկ երանգագ. և յորժամ քաղցրաշունչ սողոմս վէտս վէտս զմկանունսն ՃօՃեալ Ճեմեցուցանիցէ. յորժամ ոչ բնտուէ օդոյ յանդրգնութեան ծփեալ կոծիցէ զերկիր՝ զիւր դրացի, այլ խոր խաղաղութիւն և ջերմեռանդ սիրով գիրկս արկեալ պատեալ կայցէ զցամաքաւն։

Լաւ զի ասէ գիր զ՝այ, եթէ ետես ՝ն՞ գծով զի բարի է, մի կարծեսցուք՝ եթէ մերով կերպարանօքս է երևեսցին ՝այ գեղեցկութիւնքս. զի ինչ՝ զորմէ ՝ն՞ ասէ թէ բարի է, զՀանգիստն՝ որ ծածկեալ կայ յիմիքն զոր առնէ՝ կոչէ բարի։ Լրաջիկն գեղեցկութիւն ծովու այս է, զի նա է ամն մեծ խնամութիւն ջուրցն բազմութիւն, և յաներևոյթ և յանդունդս էն գնացք իւրոյ յորդումն. որպէս յայտ առնեն փորուածք երկրի և ցնցղկանՃ[3] երակք՝ որ էն 'ի միջի նորա։ Օ՝ի ջուրք ծովու փորէն ծակոտեն զերկիր, որ և գնան 'ի նմա մանուածապատ շրջանօքն, շրջին կոծին ընդ վայրս բազումս, մինչ քամին պարզին աղի Ճաշակքն և դառնութիւնք, և ապա բիեն 'ի ներքոյ 'ի վեր քաղցր և անուշ Ճաշակօք, և առնին[4] ըմպելի ուրախարար ամի, որ զերամն յերկիր։

Բարձեալ և ջերմկայ տեղիք նկատեալք էն յերկրի, և 'ի բազում ջերմութիւնսն՝ որ մեռերեալ կայ 'ի

1 Յոր. 'ի մրրկաց։
2 Յոր. գէրբն երբն նարօտաց։
3 Յոր. ցոնղայն։
4 Յոր. առին։

սիրտ երկրի, եռան ելանէն իբրև ջեռուցեալք հրատուք, վասն բազմութեան ջերմութեան հրատին՝ որ իբրև հնոց բորբոքի եռացուցանէ զնոսա։ Այլ ի կղզիս բազմութիւն գոտանին ըստ նմին օրինակի, և անդրէն զեղերք ծովուն ընդ բազում տեղիս գոտանին ջերմուկք։ Այլ շուրջ զգետովքն որ գնան ի ցամաքի՝ ջուրք ջերմակաղուրք բխեն խառնին ի ջուրսն ցրտաբուխս. և այսպէս յամ տեղիս զնոյն գտանես։ Այլ պատճառք Ճառիս այս են, զի ցուցից՝ թէ ամենևին յամ տեղիս փորեալ ծակոտեալ է երկիր ի ջուրց ներքին անդրս գոց, որ զնոյն ծակոտեն, և ի նմին գնան, և ի միջն նորուն շրջին։

Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով՝ այ, վասն երագ ընթացն գնացից ջուրցն անդընդոցն, որ պայմանաւոր չափով բաժանին բաշխին ընդ ամ կողմանս, լինել հանգիստ ամի։ Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, որ ասպնջական է հիւրասէրծաք գետոց բազմաց, որ յամ տեղեաց մտանեն ի նա։ Բազում ամենիսի զանձեսին, և ինքն կայ ի նոյն սակի և ի նոյն սահմանի առանց թերուն, յաւելուածութեան։ Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, զի նա է ակն գլխաւոր՝ ջուրցն օգոց, որ պարզին ելանեն ի նա ճառագայթիւք արեգական, յառնուլ ընդ աղօտ ի նուրբ ջերմութեամբն քաղցրացուցանել զջուրսն քաղցրացուցիչ տապոփն, որ ձգին ելանել ի բարձունս վերինս։ Այլ առնուն ջերմութիւն ի տապոյն արեգականն, և ապա դառնան հովանան հովանեօք ամպոց՝ որ զնոսա ընդունին, ի հնչել հողմոց ամպավարաց։ Այլ այս ամ ակնարկելով կամայն այ կազմին, և ապա գան հանսանին ջուրքն լինել յանձրևս. հրամանաւ արարչին Թանսան զերկիր, և արբուցանեն զնա։

Այլ այս բազմաց հաւատալն է թէ այսպէս է. և եթէ կամիք ցուցից զօրինակ մի, որով առաւել ստուգեսջիք գիտել ճանաչել՝ թէ արդարև այսպէս է։ Զիցէ՞ տեսեալ ձեր զկատաւս և զանս լի ջրով եռացուցեալս ի հրատի, և միտ եդեալ՝ թէ զկաթ լինի՝ ցի թերութեն ջրոյն ի գոլշոյն՝ որ ելանէ։ Զի թէ

1 Յօր. Ռեբրոնեն ջրոյն գոլշոյն։

յերկարեսցեն Թողցեն 'ի բորբոքեալ հրատին, մնաւ ամենևին իսկ ունայն գոտանին ամենք 'ի ջրոյ անտի, և զջուրն զոր ուտէ հուրն՝ 'ի խոնարհ առաքէ գոլովն 'ի վերս։ Այնպէս ունիս նայել և ընդ ջուրս ծովու, որ վերանան ելանեն 'ի վերս տապովն արեգական։ Այս ունիմ օրինակ 'ի նաւավարաց, որ թէ պակասիցի ջուր 'ի ծովու, առնուն զջուրս ծովուն զաղին և ըզդառն, արկանեն 'ի սանս կամ 'ի կաստայս, եռացուցանեն։ Այս դնեն սպունկս մեծամեծս խուփն կատասայիցն, և 'ի խոնաւութենէն՝ զոր առնուն սպունկքն 'ի գոլոշւոյն, ջուրս քաղցունս ժողովեն։ Այս այսպիսի հնարիւք առնեն դարման կենաց իւրեանց 'ի նուազ զութենէ ջուրցն, յորժամ պակասիցէ 'ի ծովու։

Արարողն և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառաք բարի. զի ինդ ամրացուցանէ զկղզին՝ որ 'ի միջի նորա, և պահին առանց ինասուս. և առանց նենգութենէ կերակրին 'ի նմանէ իբրև 'ի ցամաքի, և առնին 'ի նմա գեղեցիկ օթևանք տեղւոջէ 'ի տեղի, և 'ի հանգիստ այնոցիկ՝ որք շրջին 'ի նմա։ Արարի և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառաք բարի. քանզի նովին ընտրին և սահմանին աշխարհք 'ի միմեանց։ Այս է դարձեալ ճանապարհ յատակեալ 'ի շահ վաճառականաց, և ամ կերպարանօք լցուցիչ է կարօտութենէ մարդկան։ Շատ մեծաշահ է մեծատանց՝ բերելով զվաճառն ազգի ազգի. դարմանիչ և կերակրիչ է աղքատաց, զի գտանեն 'ի պատճառն նորա զպէտս կարօտութեան կենաց իւրեանց։ Այս ես զի՞նչ իցեմ տկար մի տառապեալ՝ կալ ճշգրտիւ պատմել զմեծապայծառ գեղ վայելչութենէ ծովու, որ յաբարչէ առ հրման՝ թէ բարի և վայելուչ է։

Իսկ եթէ ծով այնպէս վայելուչ և գեղեցիկ է ՝այ, ո՞րչափ ևս առաւել իցէ գեղեցիկ և վայելուչ եկեղեցի ՝այ իւրովք փառաւորեալ և մեծամեծ ժողովովք դովք, որ զձայնս խառնուածոյս գեղգեղեալս նուազս նուազս հանեն իւրովք որդւովքն, հանդերձ աղօթիւք և խնդրուածովք, արամբք և կանամբք, և խառնաղանգ տղայոց, և որ երգեն զերգս օրհնութեան։ Այս խոր և անշարժ խաղաղութիւն ՝այ պահեսցէ զեկեղեցի իւր 'ի դառնաշունչ հողմոց, այսինքն 'ի խռո-

վութեն հերձուածոցն, և 'ի չարեացն նենգաւորուս-
մանց անխայեսցէ զխաչն արօտի իւրոյ՝ պահել ողջ,
անարատ և առանց ապականութեան։ Եւ տացէ ձեզ՝
զի արժանի լինիջիք ընդունել զվարդապետութեն Հո-
գւոյն այ 'ի կեանս և 'ի փրկութեն, և 'ի նոյն խոկալ,
և 'ի նոյն թեւակոխել. և փառս և պատիւ հանցուք
Հօր և Որդւոյ և Ոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յա-
ւիտեանս. ամէն։

ԺԷ.Ա ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԱՍՆ ՎԵՑՈՐԵԱՑ ԱՒՈՒՐՑ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

«Եւ ասաց, ասէ, Աստ. Խղճեսցէ երկիր բանջար խոտոյ, սերմանեօք հանդերձ ըստ ազգի իւրում։ Եւ ծառ պտղաբեր առնիցէ պտուղ ըստ ազգի իւրում, զի տունկ իւր 'ի նմին իցէ ըստ ազգի իւրում»։ Պատշաճող յօրինուածով յետ հանդչելոյ երկրի 'ի ծանրութէ ջուրցն, որ ունէին զերեսս նորա, եղև 'ի վերայ նորա հրամանն արարչին՝ բիսել նախ զբոյսս, և ապա զփայտս, ըստ այնմ օրինակի՝ զոր և այժմս տեսանեմք։ Օ ի նախ 'ի բարբառ առաջին հրամանի արարչին՝ որ եղև 'ի վերայ երկրի, օրէնս հաստատեալս ետ նմա, և զօրութիւն կարգիչ որով ծնանիցի [1] հանապազորդ զամ և աճեցուցանիցէ զայն ինչ, որ համբարեաց եդ 'ի նմա յառաջագոյն։ Եւ արդ առաջին բիսումն երկրի բոյսն է. և իբրև երևի 'ի վեր բողբոջն 'ի հողոյ անտի, առնի դալարի. և իբրև ընդունի դալարին գյաւելուածս մնդեան արժանաւոր կարգաւ, լինի խոտ. և առ սակաւ սակաւ գայ հասանէ տակաւին 'ի չափ հասակի. կատարեալ չափ աճմանն՝ տայ յետոյ ապա և զսերմն։ Զարդ քանզի ամ ինչ՝ զոր բղխէ երկիր՝ զկանանչութեան գոյն ունի, վասն այնորիկ ասէ թէ բղխեսցէ երկիր դալարի. այսինքն տացէ զոր ինչ ունիցին։ Եւ ետ վաղվաղակի 'ի դուրս զամ՝, վասն որոյ առ զհրամանն. ոչ եղև կարօտութիւն երկրի առնուլ զպատսպարան և պատճառս օգնականութեան վասն ամ բուսոցն զոր բուսոյց։

Զանազն զարեգակնէ կարծեն մնոքեալքն, թէ նա իցէ պատճառք բուսոցն ամի, որ յերկրի բուսանին։ Օ ի նորա ջերմութեամբն, ասեն, զեռան սերմանիքն 'ի մէջ երկրի. խաղան ելանեն 'ի ներքուստ

1 Յոր. ծանիցէ։

'ի վեր, երևի բոյս և բողբոջ[1]։ Բ.ոդ մեք ցուցցուք թէ կանուխ էր զարդքն երկրի պէսպէս պտղովք քան զլինել արեգական։ Ա՝ սոն տեսչութեան նորա՝ որ 'ի վերայ երկրի ամենայնի եղև, հնազանդեցան նմա, որպէս ասեն երկրպագուք արեգական։ Բ.ս արդ կարելաւ պատմանձեսցին մոլորեալք, զի յայտ եղև թէ յառաջ քան զլինել արեգական զարդարեցաւ շինեցաւ երկիր սերմամբք և ծառովք։ Բ.ս զի ժպրհեցան ասել արևասպաշտքն՝ թէ 'ի նորա տեսչութենէ է ամ ինչ, զարմանք՝ որ կալան զնոսա վասն մեծութեան նորա՝ նոքաք լեցի նոցա յամթ և 'ի պատկառանս, զի բոյսք և բողբոջք երևեսցին քան զնա լինելով, և կրտսեր է քան զնոսա արարածով։ Բ.ոդ զ'ինչ արասցուք՝ զի զդարման անասնոցն, որ կարօտ են կերակրոյ, բղխեաց յառաջագոյն երկիր։ Բ.ս Ճառք այնց, որ մեզն պիտոյ են, չև և ս երևեցան թէ զինչ իցեն, այլ որ ինչ 'ի բերան ձիոյն և արջառաց և անասնոց ամենայնի գայր։ Վ.ասզի 'ի խոտոյ է դարման չորքոտանեաց՝ այն նախ ասացաւ. ապա ուրեմն զմեծութիւն համբարոց, որ մեզն պիտոյ են և այնոցիկ՝ որ զմեզն պաշտեն, պատրաստեաց ՝ն ծ կազմեաց յերկրի։ Օ.'ի որ ինչ զքո անասունն դարմանէ յաշխարհիս յորում քնակեալ ես, պատրաստեաց նոքօք քեզ զնոցա և զքո պէտսն։ Բ.ոդ ո՞ր ինչ իցէ՝ որ ոչ 'ի պէտս պաշտամանն պատշաճեալ իցէ. եթէ խոտ իցէ և եթէ բանջար և եթէ արմատք են, 'ի մեր պէտս են։ Բ.ս եթէ իցէ ինչ 'ի խոտոցն և յարմատոց, որ յայլ իրիք 'ի պէտս իցէ, սակայն այլոքք իրօք 'ի մեր շահ, և 'ի լրումն պիտոյից մերոց. թէ և կերակուր իցէ, սակայն այլովք իւիք և իցէ, մեզ օգտակար է ամ ինչ որ հաստատեցաւ և պատրաստեցաւ։

«Խնեսցէ, ասէ, երկիր բանջար խոտոյ սերմանեօք հանդերձ»։ Բ.ս արդ զիաՐդ իմնացուք զայս. զի թէ ամ իմիք որ ունի զբոյս՝ սերմն անուանեցաւ, և ահա տեսանեմք՝ զի եղեգան սերմն ոչ գոյ, և ոչ սիզոյ և ոչ քրքմի և ոչ պրտուի։ Բ.ս բաղում և այլ իրք են՝ զոր բղխէ երկիր, և ոչ գոյ սերմ 'ի ծայրս

1 Յօր. Խաղաւ էլանէն ... և 'ի բողբոջ։

նոցա. այլ որպէս երևի յարմատս նոցա է զօրութիւն սերմանց իւրեանց։ Զի եղեգն յորժամ կատարէ զաճումն մանդեան իւրոյ, այլ բոյս արձակի անդստին յարմատոցն, և զօրութիւն սերմանն կարգելոյ 'ի նեղ քուստ յարմատոցն ցուցանի։ Այլ բազում ևս և այլ են ազգ խոտոցն, որ ոչ ունին 'ի ծայրս հասակացն իւրեանց սերմանիս, և անդստին յարմատոցն կարգի սերմն իւրեանց. և ամ ինչ որ 'ի բոյս և 'ի մնունդ եղեալ իցէ, անդէն 'ի նմին ունի զսերմն կարգելոյն իւրոյ, եթէ սերմամբ, եթէ արմատով, և եթէ ոստեօք։ Այլ այս է զօրութիւն բանի գրոցն, եթէ ամ սերմն յազգ իւր գնայ, և ոչ այլ ինչ այլոյ բուսանի. և որպէս կազմեաց եդ յառաջնմէ զարմանագործ մեծութիւնն զյօրինուած ամենայնի, նոյնպէս պահի և գայ, և ունի զկարգ ազգին իւրոյ։

Օ արմանք մեծաբանչ են ընդ փոքր բան հրամանի մեծութեանն ՝այ, զի զգամաքն անպտուղ զիմգդ յանկարծ վաղվաղակի ակնարկելով արար ծնողական և պտղաբեր, և երագընթաց թեթևութեաբ արձակեաց զբոյսս, և երևեցոյց զպտուղս. և զայն ամ տիսուր տրտմութիւն՝ որ մանեալ ունէին զերեսս երկրի սքգազգածն կերպարանօք, լուսաւորեաց և զուարթացոյց։ Այլ անդստին յիւրոցն բուսոցն կանգնեցաւ կաց զուարթացեալ զուարճացեալ բուսովք բողբոջովք ծառովք ծաղկովք և ազգի ազգի պայծառազարդ գունիւք։

Այլ կամիմ, զի գտանիցին 'ի մեզ միտք ճշմարտասէրք, որ հաստատեսցեն նկարեսցեն 'ի մեզ մեծասքանչ զարմանալեօք զուրախութիւնն և զեղջ ոգւոյ. յորժամ կարկառեալ հայեցիմք 'ի ծաղկիս մեծապայծառս, որ չետ սակաւ ինչ ժամանակաց խամրին և թառամին։ Այլ կատեսցուք նոքօք միշտ 'ի միտս մեր զահ և զերկեւդ մերոց կերպարանացս եղծանելոյս, և յիշատակ բարերարին մերոյ թագաւորեսցէ 'ի խորհուրդս մեր, առ 'ի լուսաւորել և իմանալ, եթէ ըստ վայելչութեան վաղահասուկ և արագախամուր ծաղկանցն են վայելչութիւն մարդկութեան մերոյ. ունելով կիրթ 'ի բերան և զվկայութիւնն Այսայեայ մարգարէի իմաստնոյ ՝այ, որ քարոզէր մեծաբարբառ աղաղակաւ

և ասեր, թէ Յ՚մեռեալս մարմին խոտ է, և ամ վայելչութիւն մարդոյ իբրև ցծաղիկ խոտոյ։ Այլ այդ միտ եդեալ նայեսցուք, զի սակաւ օրեայ կարճակեաց նուազ ուրախութիւն է ազգ մարդկան. զի ամ հանգիստք և ամ ուրախութիւք նոցա ի սակաւ աւուրս և ընդ հուլ ժամանակս սպառեալ պակասին։ իբրև դալարի բուսեալ և իբրև զխոտ ծաղկեալ թառամեալ խամրին, և ամ վայելչութիւն նոցա իբրև զերազ թռանի, և ըստ բանի մարգարէին արժանաւոր օրինակի նմանեցան։

Այլեսցուք այսուհետև և ընդ մարդ՚ի ժամանակ ողջութիւն, զիարդ է առողջ մարմնով, զուարթ երեսօք, գունեան գունով, հոգւոյ զօրութիւն, զուարճալից բերկրութիւն, կայտառ՚ի մանկութիւն, շոյտ յերիտասարդութիւն, գրգեալ գրգռանօք[1], փափկասուն, փափկակեաց, բարեկեցիկ, դիւրամտնեղ, երանիկ, երջանիկ, չարայօժար և մեղասէր։ Այլ այսու ամենայնիւ մինչ դեռ զուարճացեալ վայելէր՝ յանկարծակի վաղվաղակի հասանէ՚ի թշուառութիւն, վատէ՚ի զօրութենէն, անկանի՚ի կենաց, ծնկի ծիւրի, հիւանդութիւք ջերանի, յաղթի և թերևս սակաւակեաց աւուրքք վճարի։

Այլեաց դարձեալ ընդ մեւս ևս՝ որ սմին նման է. մեծատուն ընչաւատ, խաշնաւէտ, նշանաւոր, երևէ լի տեր՝ ծառայից և աղախնեաց, յոր եկեալ յեցեալ և թիկունս արարեալ վասն մեծութեան՝ օտարաց և պանտխտոց. կէսքն շութափէն, կէսքն հպատակուն մատուցանեն, կէսքն սեղանակիցք լինին, կէսքն ակնառութիս կատարեն. կէսքն առաջի սուրհանդակք, կէսքն յետոյ ունին պատիւ, ընթանան աստի և անտի, շուրջանակի բարեկամք և բարեսասցք, և բազում ազգատոհմն և թարաթոտք։ Այլ նորա այսպէս թուի, եթէ նորա է աշխարհս գոյիւ իւրով. և այսպէս խաղացեալ երթան զկետ նորա բազմամբոխք ժողովուրդք մարդկան. զոմանս՚ի գործ առնէ, զոմանս՚ի ճանապարհ, և բազումք անդէն շուրջ զնովաւ նմին սպասիկք, և ամենեին նախանձելի է ամենեցուն՝ որ

[1] Յօր. գրգռեալ գրգռանօք։ [2] Յօր. գեաբ։

պատահէին նմա։ Յաւել դարձեալ 'ի վերայ այսր մեծութեանն զլիշմանութենն մեծութեան, և զպատիւս արքունականս, լինել զօրագլուխ զօրաց, հրամանատար ազգաց, դատաւոր քաղաքաց. առնուլ յանձն և պատուեալ յօրինեալ սպասուք, հրապարակացն յարդարելոյ, փողոցացն զարդարանաց, ճանապարհացն յատակելոց, դռեհացն մաքրեցելոց, յօրինեալ կարգաւ սպասաւորացն՝ որ կարգեալ տոգեալ երթան զեղկայնաձիգ հրապարակն։ Լոյս այսպէս խաղացեալ երթան մեծաւ շքով և բազում պատուով. քարոզքն առաջի աղաղակեն, մի մի զգեղգեղեալ բարբառն նուագեն, որոտան, հնչեն, ընուն աղաղակաւ զհրապարակն. աստի անտի նուիրակք հպարտացեալք ամբարհաւաճձեալք ստիպեն ձեպեն, զնառնաղանձ ամբոխն 'ի բաց պարզեն. նկարեալ ունին յաչս և յերեսս զաչ և զերկեւոր սպառնալեացն, արկանել շտապ տագնապի ամենեցուն՝ որ խառն'իխուռն նոցա 'ի դիմի հարկանիցեն։ Լինդ են[1] տեսիլք ահագինք, և արհաւիրք սրտաբեկութեան, կապանք շղթայից և պէս պէս կերպարանք հարուածոց, տանջանք ազգի ազգի, մահք դառնաշունչք. և ժողովք ռամիկ մարդկան սրտաթափ սրտաբեկ լինին յահէն և յերկիւղէն 'ի միջէ 'ի վիշապաշունչ բարբառոյն իւրեանց ազգին և նմանոց։ Լոյս այլ զի՞նչ ևս։ Յետ այսր ամենայնի գայցէ հասանիցի 'ի վերայ հպարտացեալ ասց ամբարտաւանին, յանկարծակի 'ի միում գիշերի հասանի ցաւ յանկարծակի իբրև զնետ մոլորական, և ջերմ և տենտ տապախառն[2] իբրև զհուր բորբոքեալ հնոցի. սկսանի այսուհետև մերթ յորանջել յողն երթալ, մերթ ձկտել պարապատել։ Լոյս անդէն վաղվաղակի իբրև ժամանդիր ժամանակաւ բառնան կենաց հպարտացելոյն, և իջանէ լինի հող 'ի բարձրացեալ հպարտութենէ. ելանէ 'ի բնակութենէ մարդկան, հեռանայ 'ի կենդանեաց և 'ի բազմամբոխ ժողովրդոց՝ որով ամբարհաւաճձեալ մեծամտեր. և այն ամ մեծասպաս փառաւորութիւնքն իբրև զերազ թռան։ Լոյս յիրաւի և յարժանի նմանեցոյց մարգարէն։

[1] Յոր. անդէն։ [2] Յոր. գաղանառ։

ՅՍ զփառս մարդկան ծաղկի խոտոյ, որ ընդ ծաղկեալն՝ անդէն վաղվաղակի խամրին։

« Բղխեսցէ, ասէ, երկիր զանձաւոր խոտոյ սերմանեօք հանդերձ ըստ ազգի իւրում »։ Յայսմանէ զոր այժմս տեսանեմք, 'ի կարգեցելոյ բուսոցն՝ որ բուսանին, վկայութիւն ունիմք այնց՝ որ խակբանէն հաստատեցան։ Զի ինչ որ 'ի յերկրէ ելանէ, նախ բոյս արձակի, ապա դալարի լինի, և յետոյ գայ լինի խոտ կատարեալ։ Զի եթէ 'ի ներքուստ յարմատոցն արձակիցի բոյսն, գայ յետ նորին դալարին, իբրև զեղեգան և զսիզոյ. սակայն նախ 'ի բոյսն է կարօտութիւն. և եթէ 'ի սերմանէ արձակիցէ բոյսն, գայ յետ նորին դալարին, և ապա կարգի 'ի խոտ. իսկ ապա և սերմն հաստատի. 'ի կատարեալ հասակի խոտոյ կամ փայտի թանձրութիւն և ծնկակալ կազմածոյ ցորնոյն՝ կատարի հասին նորա հանդերձ սերմամբ, որ պատկանի 'ի գլուխն։

« Բղխեսցէ, ասէ, երկիր զբոյս խոտոյ սերմանեօքն հանդերձ »։ Յորժամ և անկանիցի սերմն յերկիր, և անդ հով և ջերմութիւն հասարակակշիռ գտանիցի, սկսանի այսուհետև թուլանալ պատուհիլ խիրոյս արկանել, վակժոյժ լինել զերկրին՝ յոր եդաւ, գղեռեալ ձգել զնա առ իւր։ Այս սկսանի այսուհետև 'ի վերին կողմն ուղղել և 'ի խոնարհ գնալ. զի զբոյսս 'ի վեր երևեցուսցէ, և զարմանն 'ի ներքս սնդեսցէ, և ըստ թուոյ արմատոցն որ 'ի խոնարհ արձակին, նոյնպէս երևեցուսցէ 'ի վեր և զջով բուսոցն տայ։ Որպէս երևի 'ի վեր բոյսն դալար, նոյնպէս երևի ներքոյ արմատքն հաստատուն. խոնաւութիւն մանի հիւթով երկրին, որ է նորա կենդանութիւն մերձաւորութեամբ ջերմութիւն հաւասարակշիռ չափով. և ապա անտի բաժանի 'ի ցօղն և 'ի պատիճ, և 'ի գոդաձև փոշոկս ցորենոյ, և 'ի հատ և 'ի քիստ։ Այս այսպէս 'ի սակաւ բուսոցն 'ի կատարեալ չափ սերմանդան՝ ամ սերմանիք, որ պատշաճեալ են 'ի բոյս և յաճումն, եթէ ցորենոյ, եթէ սեխոյ, և եթէ այլոց սերմանեաց, և՝ ամ խոտոց, և ազգի ազգի բանջարաց։

Այս արդ երկոքեան իրքն, նախաբուխ բոյսն՝ և

2 Յօր. Բ. ոյսոյն։

յետոյ պատկան սերմանեաց, առ հասարակ սքանչա-
ցուցանեն, յորժամ միտ եդեալ մեզմովն նպատեսցիս[1]։
Եւ ոմանք զարմանալ ընդ ցորն ցորենոյն, թէ զի-
արդ պնդեալ հաստատեալ վերանայ ծնկակապ կա-
պօքն. զի հաստակապ հանգուցիւքն զօրասցի, ժուժ-
կալեսցի առ 'ի բառնալ զծանրութիւն հակացն, որ
պատկանին 'ի գլուխն, զի մի 'ի ծանրութենէ հաս-
կոյն զոր ունիցի 'ի գլուխն՝ գլխարկեալ գտանիցի ծան-
րաբեկ 'ի յերկիր անկեալ։ Իսկ ցորն վարսակոյ ամե-
նևին փոր և մտամէջ է, քանզի չիք ծանրութիւն 'ի
գլուխ նորա. իսկ ցող ցորենոյն ծնկակապ կապօք
հանգոյց առ հանգոյց հաստատեաց. դարձեալ հա-
տոյն փոՀՃոկս գոգաձև կազմեաց 'ի հասկին, և շուրջ
պատեալ ամրացոյց քստով, իբրև ամրածածուկ պատ-
նիշօք, զի մի լեցի դիւրին սերմանաքաղ թռչնոց առ-
նուլ ինչ 'ի նմանէ և փնաս առնել։

Եւ զոր ինչ ասացիցս, և զոր թողից 'ի յորդառատ
մեծութեան գանձուց արարչին արարածոց. զի անցա-
նեն ըստ չափ մերոյ տկարութեան մեծամեծքն և փո-
քունք[2] իրաց, զարմանագործ արուեստիւք. և եթէ
արհամարհեալ անփոյթ արասցուք զառ 'ի զարմա-
նալոյն և պատմելոյ, անհնարին մեզք են առանց քա-
ւութեան։

"Ուղիս ասցէ, ասէ, երկիր զբոյս խոտոյ սերմանեօքն
հանդերձ ըստ ազգի իւրում»։ Եւ բուսան այսու միով
պատգամաւ 'ի միասին կեցուցիչ և սպանիչ արմատքն[3]։
Բուսանի ընդ ցորենոյ կոնիոնն արմատ. ընդ այլ սեր-
մանիս՝ որ են 'ի դարման կերակրոց մերոց, տուան
դարձեալ այլ արմատք՝ որ անուանեալ կոչին եղեբ-
րոս և անկոնիտոն և մանրագոր, և կաթն մեկոնիոն[4]
արմատոյ։ Եւ զինչ ասասցուք. թողցո՞ւք զգտհա-
նալ և լինել շնորհակալ 'ի վերայ այնց՝ որ 'ի պէտս
պաշտաման մերոյ պատրաստեցան, և առցուք բամ-
բասել և մեղադիր լինել վասն այնր՝ որ փնասակարքն
լինին կենաց մերոց։ Եւ այլ թէ կամեսցուք՝ մարթի
Հշմարտասէր մտաք զպատՃառն իմանալ, եթէ ոչ

[1] Յօր. Նպէսցի։
[2] Յօր. քոյոանց։
[3] Յօր. սպանիչ արմատն։
[4] Յօր. Ե խանիկոնիան։

ամ ինչ որ հաստատեցաւ՝ 'ի պէտս որովայնից մերոց կազմեցաւ. զի որք 'ի պէտս կերակրոց մերոց տուան, յայտնի է և երևելի ամ ումբք. և այլքն ևս, որք եղեն լցուցիչքն պիտոյից արարածոց, զի թէպէտ և մեզ չիցեն յայտ, այլ բազում անդամ յայտնի են պէտք նոցա։ Այդ վասն զի ինասակար է արիւն ցլու, թէրևս անպէսն կամիցիս՝ զի բնաւ ամենևին մի մնցէ ազգ եզանց յերկիր, կամ եթէ առանց արեանն կա- միցիս առնել զլցուցիչն կարօտութեամբ մարդկան՝ իւրով ուժաւորք զօրութեամբն. բայց դու բանիւդ և գի- տութեամբ՝ զոր ունիս, մարթես զգուշանալ 'ի ինա- սակարացն։

Այդ աղէ ասա, միթէ դժուարին ինչ իցէ զգու- շանալ 'ի ինասակարացն, որք ոչ եթէ վայրապար և կամ թէ արդարև 'ի ինասակարութի ինչ հաստա- տեցան, այլ 'ի դարման կերակրոց իւրաքանչիւր ա- նամսնոց տուան, և մեզ 'ի պէտս բժշկութեան, զի եղե- ցին ցածուցիչք և յաւիրացուցիչք ցաւոց մերոց միա- խառն խառնուածով իւրեանց։ Այլ զկոնիոնն արմատ հօրալաք ուտեն. քանզի այնպէս կազմեալ են մարմինք նոցա, զի մի ինասեսցին 'ի ինասակարութենէ ինա- սակար արմատոց։ Այլ քանզի նուրբ կոկորդս ունին, և նեղ խամծիս, զոր ինչ կլանեն՝ վաղվաղակի հա- լեն. և մինչև ազդեալ ինասակարացն՝ ընկենուն ե- բաց երագ արտաքս։ Այլ զեղեբորոս արմատ լորք ու- տեն. և այնպէս ունին խառնուած մարմինք նոցա, զի բնաւ ամենևին առ ոչինչ համարին զինասակարուն ինասակար արմատոցն։ Այլ նոքին որք ինասակարք կարծին, երբեք երբեք և մեզ 'ի պէտս գտանին. զի մանրագորաւ բազում անգամ բժիշկք քուն ածեն այ- նոցիկ՝ որոց քուն հատեալ իցէ յաչաց. և կաթամբ մեկոնիոնի [1] արմատոյ զնիթս կարևորս զհիւանդաց դարձուցանեն յախտից, և կոնիոնն արմատոնն զշը- ջեալ ուղիղ և զնեբս ուղղեն, և եղեբորոս արմա- տոնն զհինօրեայ զցաւն ցածուցանեն։

Այլ այս ամ՝ զոր կարծիցիս թէ ինասակարք իցեն, և բամբասիցիս՝ եթէ հակառակք իցեն արարչին, գտան՝

1 Յոր. եկոնիոնն։

զի երկպատիկ գոհանալոյ արժանի են, զի պէտս օգտութեան հաստատեաց զնոսա արարիչն։ Իսկ օդիքն և այծիքն և այլ ևս անասունք գիտեն հեռացուցանել զկեանս իւրեանց յորոց վնասակար արմատոց, և հոտով և համով ընտրեն զայս՝ որ նոցա վնասակարք են։ Այլ դու որ ունիս զառաւել գիտութիւնդ՝ հանդերձ մեծապատիւ բանիւդ, և զՀարատարութիւն բժշկութեդ, որ գիտես ընտրել զօգտակարսն 'ի վնասակարացն անտի, մարթիս զգուշանալ 'ի վնասակարացն. զի փորձն ընտրող՝ զոր ունիմք 'ի գիտութեան մերում, յուշարար է վնասակարացն։

"Իսեսցէ երկիր բոյս խոտոյ սերմանեօքն հանդերձ ըստ ազգի իւրում"։ Զ.ՐԴ քանի՞ իրք իցեն՝ որք անդստին ինքնաբուխ բուսովք իւրեանց տուան մեզ 'ի կերակուր առանց աշխատութեան. կիսոց արմատք, կիսոց բոյսք, և կիսոց պտուղք. դարձեալ՞ ոչչափ իրք 'ի գործոց վաստակոց մշակաց պատրաստին մեզ կերակուր։ Այլ ոչ առ ժամայն վաղվաղակի իբրև եղև հրաման՝ կազմեցան պտուղքն՝ բոյսքն, այլ նախ բոյսքն արձակեցաւ, և բազմացաւ կանանչութիւն ընդ երեսս երկրի տերևալից ծնկակապ, և ապա կատարեալ առնմամբ հասկացն սերմանցն՝ պատկանեցաւ և սերմն 'ի գլուխն. և որպէս ուսաք 'ի հրամանէ ՅՀ, զնոսն կարգունի և կայ 'ի բնութեան ամ իւիք՝ որ հաստատեցաւ։

Զ.ՅԼԹերևս ասիցես, թէ զնա՞ռդ երկիր զամ սերմանիս ըստ ազգի իւրում բղխէ. զի ահա և բազում անգամ ազնիւ ցորեան սերմանեմք, և գայ բերէ այլ կերպարանս՝ շրջեալ 'ի թուխ նմանութիւն։ Զ.յսու ոչ եթէ յազգէն իւրեանց փոփոխեցան այլ ինն լինել, այլ նշանակ ինն կերպարանաց ախտի և հիւանդութեան դիպեցաւ նոցա. և ոչ վրիպեցաւ ցորեանն՝ չլինել ցորեան՝ զգոյնն փոփոխելով, այլ 'ի ցրտակեզ այրեցուաւ ծոյն առ զկերպարան թխութեան։ Զ.յս անդստին յանուանակ անտի կարես ուսանիլ զիրն Ճշմարտութեան, զի 'ի խստութենէ սառնասառոյց սառնամանեաց պտղոյ այրեցաւ և դարձաւ այլագոյն և այլազգի համ։ Զ.այց ասես բաղումք՝ որք գիտեն զփորձ սերմանց. եթէ լինիցի, ասես, օդ ամոքախառն քաղցրաշունչ յերկիր բարիոք, դարձեալ միսանչամ անդրէն 'ի նոյն կեր-

պարանս դառնայ։ Բայց առանց հրամանի՝ այլ լինել փոփոխումն բուսոց երկրի յայլ կերպարանս չէ հնար, իսկ որոմն և այլ ևս սերմանիս խոտոց, որոց են 'ի պէտս մեր և 'ի կերակուր, խառն բուսանին յերկրէս։ Բայց գիրք որոմն 'ի մէջ ցորենոյ անուանէն, զի առնցեն առ ժամանակ մի, օրինակ այնոցիկ՝ որ զստուերն 'ի մէջ Աշմարտուէն ուսուցանեն. իսկ զի որոմն ոչ 'ի ցորենոյ լինի, ամենեցուն յայտնի է. այլ 'ի քանէ արարածոյ ըստ իւրաքանչիւր կարգին սերմանիքն յերկրէ։ Եւ ապականիչք վարդապետութեան՝ այ, և որ ոչ առողջ մտաւք ուսուցանեն, յորոմն առակեցան. զի 'ի վարդապետութէ չարին ուսուցանեն զուսումն ապականութեան. որ դան խառնեն զանձինս յողջ անդամս։ Եկեղեցւոյ՝ այ, զի 'ի ծածուկ և անյայտ կերպարանաւք արկցեն զմասակարս 'ի միամիտս. որպէս և տերն մեր զկատարումն [2] մարդկան՝ որ հաւատացին 'ի նա, էած 'ի նմանութեան մանրոց սերմանեաց, յասելն՝ թէ Երբեմն այր մի՝ որ սերմանիցէ զսերմանիս յագարակի իւրում, և հնձեսցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ, և սերմանիքն առնեն և զօրանան. և զայն ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ նախ զխոտն, և ապա զհասկն, և ապա զցորեանն կատարեալ։

"Իսեսցէ երկիր զբոյս խոտոյ սերմանեաւքն հանդերձ"։ Եւ ակնարկելով հրամանին յանկարծակի վաղվաղակի տեսաներ երկիր բղխեալ բոյսս առ 'ի պահել զօրենս արարչին իւրոյ. և պէսպէս բոյսք խոտոց գային հասանէին 'ի չափ կատարեալ հասակի։ Այ՝ ազգք ըստ իւրաքանչիւր վայելչութեան ազգի ազգի խոտովք և պէսպէս ծաղկովք, և հովիտք և ձորք երկրի առ հասարակ կանանչացեալք դալարով զնդրէին։ Եւ դաշտք ամ՝ ազգի ազգի սերմանքք զարդարեալ զուարճանային։ Նկարեալ ունէին յանձինս իւրեանց զնշանակ ալեաց ծովուն 'ի ժամանակի քաղցրաշունչ օդոցն՝ որ ձօձեալ ձեմեցուցանեն զվէտս վէտս ալեացս, որ աշտիճանիցին 'ի ջուրցն ծիծաղելոյ։ Եւ ամ՝ արմատք և բոյսք և ազգի ազգի խոտ ծաղկեալք գունակ գունակ սերմանքք զուարճացեալք երևէին [3]

1 Յոր. ուղիղդամս։ 2 Յոր. վարարման։ 3 Յոր. երեւին։

միանգամայն 'ի վերայ երեսաց երկրի։ Եւ ոչ ինչ էր՝ որ ոչ ՀԵպեալ ընթանայր յառաջել քան զընկերն հրամանաւ զարմանագործ իմաստութեամբն, և ոչ ինչ գոյին 'ի ներքոյ յապաղիչք, որ լինէին նոցա խափանիչք, ոչ կանուխ և ոչ անագան գործք մշակաց, և ոչ դառնաշունչ հողմոց սառնասառոյց սառնամանիք, և ոչ այլ ինչ պատճառք փնասակարք և խափանիչք. քանզի չէ էին եկեալ պատիժք պատուհասիցն 'ի վերայ երկրի, լինել խափանիչք պէս պէս զարդուց նորա։ Վասնզի կանուխ էր հրամանն՝ որ ետ բխել 'ի վերայ երկրի զպէսպէս վայելչութիւնս՝ քան զմեղսն որով պարտաւորեցան. քանզի 'ի քիրսն երեսաց մերոց կերիցուք զհաց, և անկցուք 'ի տառապանս և յաշխատութիւս։

Ասէ դարձեալ՝ թէ "Ծառ պտղաբեր՝ որ առնիցէ պտուղ, զի տունկ իւր անդստին 'ի նմին իցէ ըստ ազգի իւրում 'ի վերայ երկրի"։ Եւ այսու իշխանաւ կան բանիւ այ կանգնեցան կացին ծառք ամ անտառախիտ մայրովք յիւրաքանչիւր տեղիս, և ամ տունկք մատաղատունկ զարգացեալ վերանային հասանել 'ի չափ հասակաց բարձրաբերձ և կարձաբերձք, սօսեաքն և սարդեաքն մայրք և կաղամաղէքն, ծառք պտղաբերք և ծառք տերևաազարդք, և ամ ծառք 'ի պէտս գործոյ և 'ի հոտ անուշութեան. մուրտ և տօսախ, գէք և դաքնիք, վարդենիք և նռնենիք և թթենիք, հանդերձ բազում ազգի ազգի ծառովք՝ որ լինէին 'ի տեղիս տեղիս, զորոց ոչ ոք կարէ բովանդակել զանուանս։ Այս ամ վայելչութիւք կանգնեցան կացին միանգամայն՝ միով ակնարկելով մեծազօր զօրութեամբն։ Եւ յայտ է՝ եթէ ոչ էին յառաջ քան զարարեալ հրամանին. և իբրև եհաս հրամանն, կանգնեցան կացին միանգամայն, զատեալք և մեկնեալք 'ի միմեանց իւրաքանչիւր գունովքն և կերպարանովք։ Եւ գեղեցիկ վայելչութիւն վարդենեաց առանց փշոյ էր յառաջ քան զանէծն, և ապա յետոյ էին յարեցաւ 'ի վայելչութիւն նորա փուշն փնասակար. զի յորժամ հայեցեալ տեսցուք, թէ յորպիսի հոտ անուշութեան և յորպիսի տեսիլ ցանկալի զինչ ժանդ յարեալ է, 'ի մեծոյ 'ի սմին յուշարար յիշատակէ 'ի միտ առեալ

իմասցուք, եթէ զորպիսի փնասս շահեցաք մեք մեզ մերով անձամբ, և նկարեալ նկատեալ ունիցիմք զաւաղին զմեղն 'ի մտի, և յոր պատճառս բուսաւ փուշ և տատասկ յերկրէ 'ի պարտաւորուն յանցանացն։ Այսեն, եթէ առ երկիր հրաման՝ բղխել ծառս պտղաբերս, որ առնիցեն պտուղ ըստ ազգի իւրեանց 'ի վերայ երկրի, զի սերմանիքն նորա անդստին 'ի նմին իցէ. և ահաւասիկ տեսանեմք զազգում ծառս, զի ոչ պտուղ տան և ոչ սերմն ինչ երևեցուցանեն։ Այս արդ զի՞նչ արասցուք նոցա պատասխանի. այլ զայս Թերևս. որ ինչ պատուական էր 'ի բնութիւնն՝ այն մեզ տուաւ, և զնորին ճառսն մուծանեն գիրքն յաւաղադոյն։ Այսպա եթէ ոք միտ եդեալ մեղմով ուշ 'ի կուրծն, կամ սերմանիս կամ այլ ինչ նման սերմանց գտանէ 'ի ծառսն', 'ի սօսքն և կնճնիք և 'ի կաղամախիքն, և այլ բազում ծառք՝ որ նոցին նմանք էն, պտուղ իմն ունին Թանձրախիտ տերևօք. Թերևս նոյն իակ կերպարանք ինչ իցեն սերման և պտղոյ. և զնոյն որ երևին 'ի ծառ՝ կորիւն կոչեն անուանագէտք իրաց բազմաց, որ հանապազ 'ի նոյնն միանջնեաւորին։ Այսպա ուրեմն զօրուն իմն սերման է 'ի կորիւնն՝ որ երևին ընդ տերևօք ծառոցն զոր առնուս յոստն կարգին. և տունկ յարմատոցն նշանակ սերման են, և այնպէս յաճուն մնդեան, որպէս տեսանեմք և իմանամք 'ի գործոց տնկարկաց, զի այսպէս իմն հնարին առնել զսեր [2] և զսերմ տնկոց։

Այս որպէս յառաջագոյն ասացաք, Թէ ծառք՝ որ պատրաստեցան 'ի պէտս կենաց մերոց իւրեանց ուրախարար պտղովքն, անուանեցան նախ 'ի գրոց իբրև զպատիւ, և որ դարմանիչք էն մարդկան անուշահոտ ծաղկօքն՝ պատրաստեցան ամենախնամ 'ի կերակուր։ Հաստատեաց մեզ ՝ած այգի, ուստի լինի գինի ուրախարար սրտից մերոց. արար և ձիթենիս, զի լցցի 'ի նմանէ եւղ զուարթացուցիչ երեսաց մերոց։ Որչափ անհամար իրք ՝ձեպեալ ընթանան լինել հրամանաւ ՝այ, որ լցուցանեն զամ պէտս կենաց մերոց՝ իւրեանց ուրախարար բնութեամբքն։ Այս այս

1 Յօր. 'ի ծառսն։ 2 Յօր. սեր։

պէս փութացան լինել միանգամայն, զի 'ի մի[3] անուն այգւոյ՝ բազում իրք անուանաւորք յօրինեալք պէս պէս կերպարանովք կանգնեցան կացին, արմատք և տունկք, կողք և տերևք, խաւարծի և ծաղիկք, բաժակ, ողկոյզ, գնդակ, պատաղեմ։

Բայց տեսիլ կերպարանաց այգւոյ զառակ քնուէ մարդկութեան մերոյ բաւական է նկարեալ. եդ զուլեղ վարս նոցա առաջի երեսաց մերոց։ Լողեցի միշտ յիշատակս նկարեալ 'ի միտս մեր, զի ՝ներն մեր զիւր անձն այգի կոչեաց, և զՀայր իւր մշակ, և զիւրաքանչիւր ոք 'ի մէնք որ 'ի նա հաւատացեալքն, տունկս և ուռա՝ որք 'ի բարիոք արմատոց որթոյն արձակիցին և յամ կողմանս տարածիցին։ Մնուանեաց զմեզ յեկեղեցւոջ, և ուսոյց զմեզ՝ զի լեցուք պտղաբերք. և յամ բարութիւս յորդորեալ յօժարեցոյց, զի մի լինիցիմք ապաշնորհք երախտակորոյսք երախտեացն նորա, և բորբոքեալ հրոյն յաւիտենից մատնիցիմք յայրուն։ Բայց ՝ներ զմեզ իսկ նմանեցոյց գրովք այգւոյ, յասելն՝ թէ Լ.յգի տնկեցի յանկեան միոջ 'ի պարարտ երկրի. ցանկով փակեցի և ամրուք պարբսպեցի. աշտարակ կանգնեցի, գուբ հնձան շինեցի։ Լ.ուդ այգին մեք եմք մարդիկ, և գործելն և ամրացուցանելն ցանկովք՝ պահպանութիւք և զգուշութիւք պատուիրանացն է, որով ամրածածուկ պարսպեաց զմեզ յամ ինասակարաց. ըստ այսմ՝ որ գրեալն է, թէ Լանակ հրշտակաց ՝ներն շուրջ էն զերկիւղածովք իւրովք և պահէն զնոսա։

Լ.ուդ ի՞ ոչ օգնեաց մեզ ՝ներ և ամրացոյց պահպանութիւքք զանձինս մեր յամ չարութէ. այս ինքն ՝ներշմարիտ վարդապետութիւն, առաքելովք և մարգարէիւք և վարդապետօք, զոր եդ յեկեղեցւոջ իւրում հանդերձ բազում օրինակօք ՝ներ հարցն առաջնոց՝ զորոյ նկարեաց եդ զուլեղ վարս նոցա առաջի երեսաց մերոց։ Լ.ուդ ՝ներ հնարիւք և պէսպէս պատճառանօք հնարեցաւ վերացուցանել հանել զմիտս մեր 'ի բարձունս բարձրութեան. զի մի տասպաստ անկեալ կոխեալ գտանիցիմք 'ի չարեացն հնազանդութէ։ Լ.ա

1 Յոր. Ա. Գ.

այսպէս կամի՝ զի շաղեալք պատեսցուք [1] ընդ սէր պաշտամբեալ նորա գործովք բարութեան. որպէս մանեալ պատի գնդակ՝ որ յայգւոյն է՝ անդէն զորթոփն, նոյնպէս և մեք ըստ նմին օրինակի մերձեսցուք սիրով առ ՅԾ, և յարեսցուք և հպեսցուք առ մերձաւորս մեր։ Այլ զոր օրինակ ուռք բարուն՝ակացն պատին մանին զծառովքն՝ որ շուրջ զնոքօք լցեն, և համբառնան եւանեն մինչև 'ի ծայրս ծառոյն, նոյնպէս և մեք գիրկ ընդ գիրկ խառնեսցուք սիրոփն՝ որ առ ՅԾ, և 'ի նմանէ առ սէրն մարդկան հաղորդեսցուք 'ի բարուք [2] գործոցն՝ զոր առնիցեմք մեք նոցա։

Այլ այսու՝ զի ասէ, թէ գործեաց զայգին, յայտ առնէ՝ թէ գործին մարդիկ պատուիրանքն ՅՍ. զի սրբեսցին 'ի մարդկեղէն հոգոյ և 'ի դառնութենէ աշխատութենէն մեղայ։ Զի ծանրատաղտուկ բեռինք են հոգք աշխարհիս, որ ծանրացուցանեն ըզմիտս մարդկան 'ի պատիր զբօսանաց։ Զի մարդ՝ որ զմարմնաւոր սէրն հատանիցէ ընկենուցու յանձնէ, և զհոգս ստացուածոց թեթեւացուցանէ 'ի մտաց, և մնասարծի փառասիրութիւնն՝ որ է ապականիչ ամ հաճոյից՝ մերժեսցէ 'ի սրտէ, և իբրև 'ի գաղջելի իւրաց հեռանայցէ յամ իրաց ապականութեց, և առ ոչինչ համարեսցի զամ իրս պատաղիչս, նա է որ գործեցաւ ճշմարտիւ և մերկեաց ընկէց ամենեին զծանրատաղտուկ լուծն մեղայ, և խափանեաց համբրէն յիւրմէ զամ անառակութիւս և զնորհուրդս երկրաւորս։

Զոր որչափ ձեռնհաս իցեմք և կայցէ 'ի կարի մեր, մի վրիպեսցուք՝ երթալ զհետ մնոտի փառասիրութ, զի գուցէ որսացեալ գտանիցին հաճոյքն մեր 'ի մարդկեղէն գովութեանց. և մի 'ի ցոյցս արասցուք զբարի գործսն մեր մարդկան, որպէս ոմանք՝ որ փափաքեալ ցանկանայցեն ցուցանել զհաճոյն իւրեանց մարդկան, զի փառաւորեսցին 'ի մարդկանէ։ Այլ մեք ծածկեսցուք զհաճոյն մեր՝ յրշտեմարանն սրտից մերոց, և աւանդեսցուք ՅՍ, և ակն կալցուք 'ի նմանէ հատուցմանցն։ Այս եթէ ոչ մերով կամքք յայտ-

1 Յօր. գոտէցուք։ 2 Յօր. 'ի բարիս։

նեսցին, տացուք զնոսա 'ի փառս ՅՍ. և մի մեծամըտեալ հպարտասցուք և ուրախասցուք յորժամ յայտնի լինիցին հաճոյքն մեր մարդկան. զի մի կողոպտեալ գտանիցին ըստ լեալսն մեր յանարուեստ գովեստից նոցա։ Այլ եղեցուք իբրև զՀիթենին վայելուչ գործովք բարութեամբ 'ի տան ՅՍ, որ 'ի տերևոցն ոչ մերկանայ, և 'ի պտղոյն ոչ պակասէ. և առցուք զկերպարանս ձիթենեաց յանձինս մեր, որ հանապազորդ դալարացեալ կանանչագեղ է, և ուրախարար և հանգուցիչ է ազնուական պտղոյն. նոյնպէս և մեք արկցուք զգուութ և զողորմութեամբ 'ի վերայ ՅՍ մարդոյ, և յուսասցի ՅՍ հաստատեսցուք 'ի հաւատս, ակն ունել կենացն յաւիտենականացն։

Այլ արդ դարձցուք անդրէն 'ի Ճառս գործոցն ՅՍ, որ կանգնեցան կացին հրամանաւ զարմանագործ աբարչին. և տեսցուք ուրչափ ազգ իցեն ծառոց, և բիսեցին լինել յաչխարհէ։ Այնքան պտղաբեր, և կենաց անպտուղ 'ի գործ փայտեղէն անօթոյ, և յայրուելոյ հրոյ 'ի պէտս պաշտաման մերոյ։ Ոչ ատեալք և մեկնեալք ըստ իւրաքանչիւր ազգաց վայելուչ պտղովք, գունակք գունակք տերևովք իւրաքանչիւր, ամենեքեան ըստ իւրաքանչիւր կերպարանաց պատշաճեալք։ Բազմադիմիք, բիւրազգիք, որ միմեանց ինչ ոչ նմանեն, զորս մեք մերով տկարութեամբ չեմք բաւական գիտել և ընտրել մի ըստ միոջէ զամենեսեան։ Բայանչ կեաք 'ի ծառոց խորարմատք են և տարածատակք, և կենաց սողկագնագք նսարաբոյսք՝ են. և կենաց միաՃետիք յատակաբուխք, և կենաց բազմոստք խստոտեալք. և կենաց գեմնատարածք, զի ըստ շաքելել արմատոցն 'ի ներքս՝ նոյնպէս գեմնատարած ոստքն յամ կողմանս առ երկրաւ տարածանին, և կենաց բարձրաբերեալք 'ի բարձրավանդակսն վերանան ելանեն հասակագեղ երկայնաձիգքն երկարոշն. և ըստ վերանալ հասակացն 'ի վեր, նոյնպէս և արմատքն 'ի խորս ներքինս ձգին հասանին, զի մի գուցէ մեծաբերձ բարձրութեանն յարմատոցն խլեսցէ զտական յողդողդունս, և կամ բռնութեան հողմոց 'ի բռնաշունչ

1 Յօր. Նորաբոյսք։

հնչէլոյ։ Զայսցուբ դարձեալ և 'ի կեղեւս ծառոյն, զիարդ ոչ նմանեն միմեանց. զի կէսքն ուղղակեւ-զեւք են, և կէսքն զկերպարանս քուսոյ ունին խոժոռն խոշորութիւն, կէսքն միակեղեւք և կէսքն խաւ'խիսաւոյք, կէսքն թանձրոյք և կէսքն անսօսրունք։

Այս ընդ այն է զարմանալ՝ զի և 'ի ծառսն համրաչեալս գտանին կերպարանք մարդկան, իբրու թէ մանկութիւն և ծերութիւն երևի 'ի նոսա. զի մատաղաւուն կան դալարացեալ զուարճացեալ երևի 'ի նոսա, և կեղևն անդրէն պինդ յինքեան հաստատեալ կայ. և հինաւորեալքն կարկամեալ խորշանկեալ քոսոտեալ՝ ցամաք երևի կեղևն։ Այս կէսքն իբրև կորին, այլ շառաւիղս արձակեն յարմատոց. և կէսքն իբրև յապաւին, կան մնան առանց շառաւիղաց, և առանց բուսոյ և առանց կարգելոյ միասնագամ 'ի տունկս և 'ի ծառս. և 'ի կորեալս առնուն համարիչն կերպարանս մահու։ Այս դարձեալ յորժամ մայրքն կորին, կան մնան կորածքն լնեալ բնակութիւն մեղուաց. քանզի ոչ եւս այլ արձակեն շառաւիղս 'ի կորածէն։ Այս դարձեալ կէսքն 'ի ծառոց, որ 'ի բնէ արարածոց իւրեանց զթթութիւնն և զդաժանութիւն ունեցին, փոյթ անձին ունելով մշակացն՝ առնուն փոփոխումն և յարդարին, իբրև զնոնենիս թթութենիս, և զնշենիս դառնենիս, յորժամ վարիցին առ արմատովք երիվ ուռն պարարտ 'ի բևեռին 'ի պէրկէս[1] փայտ, և վարիցի ուռն և մտանիցէ 'ի սիրտ ծառոյն, իսկ և իսկ դառնան 'ի քաղցրութիւն և յանուշութիւն. քանզի հալի և կորնչի 'ի նոցանէ դառնութիւն և թթութիւն։

Զարդ մի ոք 'ի մարդկանէ հաստատեցցի և կայցէ 'ի գործս չարութեան, և ծախիցէ հանիցէ զաւուրս իւր աղտեղութեան, ուր և ծառքն համրացեալք առնուն զփոփոխումն 'ի հոգաբարձութենէ մշակացն. զի 'ի դառն և 'ի թթու ճաշակացն 'ի քաղցրութիւն և յանուշութիւն ճաշակս շրջին։ Այս թէ արասցեն մարդիկ հոգաբարձութիւն անձանց իւրեանց 'ի բարիս, չեք ինչ չար՝ որ կայցէ ընդդէմ և բռնադատիցէ զնոսա, և ոչ բարի ինչ որ ապստամբեալ գտանիցի 'ի նոցանէ։

1 Յար. դարձեալ 'ի բեռին 'ի գերեն։

Բազում են ծառք պտղաբերք ըստ ազգի ազգի կերպարանաց իւրեանց, որպէս զի անչափ գտանին պակասեալ քանք մեր գիտել Ճանաչել զնոսա ըստ իւրաքանչիւր բնութեանց և կայենից իւրեանց։ Բանզի ոչ եթէ այլակերպ և այլազգի ծառոցն միայն չլինիմք բաւական, այլ և ոչ անդէնն որ 'ի նմին ազգէնն փոփոխմունքն են՝ ոչ կարեմք հասու լինել, զի զարմանալի և աքանչելի են իւրաքանչիւր բարձրութիքն և կերպարանովք։ Յորժամ տեսանիցեմք զծառս, զի կէսքն 'ի կերպարանս և 'ի մասունս[1] արուաց անուանին իւրաքանչիւր պտղովքն, և կէսքն զկերպարանս և զնմանութիւն իգաց ունին ըստ իւրաքանչիւր մրգոցն. և վկայեն՝ որ միշտ մնկեն զտունկս ծառոցն, զի այսպէս զնեն նոցա անուանս՝ արուս և էգս, և զատեալ մեկնին 'ի պտղոցն անտի և կերպարանաց։

Զի յարմաւենիս՝ արուս և էգս անուանին. զի որ էգ արմաւենին անուանի, խոնարհեցուցանէ կորացուցանէ զոստս իւր 'ի կողմն արու արմաւենոյն, և 'ի մերձենալ ոստոցն առ միմեանս՝ իբրև սեր իմն և գութ և ամուսնութիւն կատարի։ Իսկ մշակքն՝ որ մնկոցն տեղեակք են և գիտեն զչափս իրացն, առնուն յոստոց արուին իմն՝ որ անուանեալ կոչի փսենաս, որ է 'ի նմանութիւն սերման, տանին յարեն յէգ արմաւենին։ Իսկ և իսկ վաղվաղակի իբրև ընդունի յարմաւենոյն զսակաւ ինչ նշանակն, ուղղին անդէն 'ի վերոստքն[2], և հաստատի պնդի կայ 'ի կանգուն ծառն 'ի լոյծ մեղկութենէ անտի, իբրև թէ ընկալաւ այնուհետև հանգիստ ինչ, և կատարեցան կամք իւր։

Եւ ըստ այսմ օրինակի առնի և յայլ ծառս, և 'ի թզենիս։ Բանզի գոյ 'ի թզենիս, որ անուանեալ կոչի կատաղենիս, այսինքն վայրի մոլաթուզ. և բերեն մնկէն գնա առ ընտանի թզենւոջ, զի 'ի նորա շոգւոյն պահեսցի թուզն յընտանի թզենւոջն, և եթէ կեսցէ հասցէ 'ի չափ, և եթէսցի առանց վնասելոյ։ Եւ եթէ չիցէ տունկն այն մօտ յընտանի թզենւոջն, զթուզն մոլաթզենւոյն քաղեն բերեն կախեն ընդ ընտանի թզենւոյն. զի լիցի պահապան, և ոչ տացի

1 Յոր. իմասցուն։ 2 Յոր. 'ի վերոստքն։

թափել և ընդ վայր ընկենուլ ընտանի և քաղցր թզենւոյն։

Ինկալցուք այսուհետև և մեք օրինակ 'ի համր և յանշունչ բնութեանն, և առցուք շահ օգտութեանց յայնցանէ՝ որ օտարացեալքն են 'ի մերմէ Ճշմարտութենէս, զի յանհմանութենէ արտաքնոցն ստացուք զաղմուսական հաճոստութիւն յանձինս մեր, այս ինքն է, զգործս Ճշմարիտս. զի անկանիցին և երկիր պագանիցեն, խոստման լինիցին և ասացեն՝ թէ արդարև ՝ծ գոյ նոցա։ Այնթէ գտանիցի ոք, որ իցէ կուսապարիւտ կամ յօտար ուսմանց, կամ բաժանեալ քակեալ իցէ յեկեղեցւոյ ՝այ իւրով դառն դաժանութեամբն, յորժամ տեսանիցէ 'ի մեզ զպարկեշտ կերպարանս և զհաստատութիւն Ճշմարտութիւն և զվարս գեղեցիկս, և յորժամ փոյթ յանձին ունիցիմք ձեռնկալու իւիք լինել նմա, և իբրև զայս նմ տեսանիցէ՝ թերևս պարտի կալ առ մեզ, և մեք նովաւ մեծաշահ օգտութիւս գտցուք. որպէս օգտի թզենին քաղցուեանի 'ի կատաղի թզենւոյ անտի, առնուալ զօրուն և պահել ողջ և անարատ զպտուղն իւր։

Ընդ այսպիսի ազգի ազգի փոփոխմունք գտանին առ այն՝ որ հաստատեցան. զի 'ի մեծամեծացն՝ զոր ունին 'ի բնութիւնէ իւրեանց՝ սակաւիկ ինչ կարացաք պատմել մեր տկարութեամբն։ Վասնզի ո՞վ կարիցէ կալ 'ի վերայ չափոյ պտղոյ այնոցիկ, որ հաստատեցանն, զի բազումք են ազգաք և կերպարանաք, Ճաշակովք և համովք, և պէս պէս հանգստեամբ՝ որ 'ի նոսա գտանի դարման ՝ամի։ Այլ զիարդ կէաք 'ի պտղոց մերկանդամ 'ի հանդերձից և 'ի փոՃոկաց՝ Եփինարեդակամբ, և կէաք 'ի պտղոցն Ժողովեալք ամիոփեալք իբրև 'ի պատեանս՝ և փոՃոկուն առնուն ըզկերպարանս եփելոյն։ Որ զդալար և զփափուկ պտուղն ունին, թանձր տերևովքն սփածեալք են ըստ օրինակի թզենւոյ. և որ 'ի պատեանս փոՃոկացն ամրացեալ են ընդ անօար տերևովքն ծածկեալ կան, ըստ օրինակի ընկուզեաց. զի փափուկ և տկար պտղոցն եղջի պաշտպան տերևն թանձրախիտ, և

1 Յոր. ֆՃՈՒ։

պիտաց և հաստատուն պտղոցն անօսր տերևն եղեցի հո-
վանոց. և այսպէս ըստ իւրաքանչիւր պիտոյից պաշտե-
ցան պէտք իւրաքանչիւր 'ի զարմանագործ արարչէն։
Զի միտ եդեալ նայեսցուք՝ թէ զիարդ ծակո-
տեալ դրոշմեալ էն իբրև զգործ քանդակագործի
զարմանալի տերևովքն այգի. զի կրիս խառնուա-
ծով, յօրինեալ յօրինուածով և յարդարեալ յար-
դարմամբ ընկալցին ողկոյզք որթոյն զբաղցրահամ-
եաց նշուլից արեգականն. նոյնպէս նովին կշռութն առ-
ցէն զօգս քաղցրաշունչս, զի մի փնասեալ գտանիցին
'ի խստաշունչ հողմոցն բռնութենէ. և ընդ քանդա-
կագործ տերևոցն անօսրութիւն մնոցէ մեղմով արևն
և եփեսցէ, և անդէն յիւրեանց տերևոցն առցէն զհո-
վանին և զովասցին. և ամենայնառն խառնուածոփն
առցէն զկատարումն մնոգեան սրտաշունչ պի-
տոյից իւրեանց։ Վասնզի չիք ինչ յարարածոց՝ որոյ
ոչ իցէ բարի պատճառս արարածոյն իւրոյ. և չիք ինչ
'ի հաստատելոցս՝ որ ինքն իւրով անձամբն հաստա-
տեցաւ. այլ ամ արարածք միանգամայն զանձառ
իմաստութիւն արարչին պատմեն իւրաքանչիւր կեր-
պարանօք, և լի են փառաւորութեամբ հաստչին ըստ իւ-
րաքանչիւր զօրութեանն՝ զոր ունէն յանձինս։
Զարդ որ քանք բաւական իցեն առ 'ի պատմելոյ՝ թէ
որչափ իցեն վայելչութիւնք հաստատելոցն, կամ որ-
պիսի միտք մարդկեղինք կարող իցեն այնչափ իմա-
նալ ածել զմտաւ զտեսչուն արարչին, որ սիրեալ
էն 'ի վերայ արարածոցս, հասու լինել ճշմարտիւ զի-
տակաւ պատմել զամ միանգամայն, և կալ 'ի վերայ
ազգի ազգի բնութեց և անձանց նոցա և պէս պէս կեր-
պարանաց և խառնուածոց և պատճառանացն, որ 'ի
նոսա թաղեալ և համբարեալ կան աներևոյթքն։
Օ արմանք մեծասքանչ էն, զի զի համ ճաշակաց
ջուրց՝ զոր ըմպէ արմատն և դարմանի, զարմատն այլ
ազգ մնուցանէ, և զբողբոջն յայլ կերպարանս երևե-
ցուցանէ, զուռն յայլ նմանութեան շրջէ, և զտերևն
այլովք տպովք տպաւորէ, և զպտուղն այլով օրինա-
կաւ նկարէ. և այնպէս յամ երկս ծառոյն [1] պէտպէս

1 Յոր. յամ երկոցառոյն։

կերպարանօք բաժանի, կէսն 'ի կաթն և կէսն 'ի կէզ և, կէսն 'ի հոյզ և կէսն ըստ իւրաքանչիւր իրաց. նոյնպէս և զգոյնս կատարէ, ընդ որմ երակս ծառոյն ազգի ազգի ճաշակս առաքէ. և չիք ոք որ բանիւք կարէ մեկնել զարս նոցա, թէ որպիսիք իցեն. քանզի այլազգի կերպարանս ունի հոյզն ծառոյն՝ որ առնուամեալ կոչի սքինոս, այլազգի կերպարանս ունի հոյզն բաղսամոս ծառոյ, և այլազգի կերպարանս հոյզն և կաթն նարդէս ծառոյ՝ որ լինի Յ[ն]գիպտոս և 'ի Լիբիայ աշխարհին։ Յ[ն]ս զերեկտրիոնէ դարձեալ ասէն, թէ և նա հոյզ է ծառոյ, և 'ի հոյզն կերպարանսդ 'ի կերպարանս ական փոփոխի և խատանայ. որում վկայէն շիղք և մանր զեռունք ինչ և թռչունք ինչ, որ նոսաւ ըմբռնին. զի զկերպարանս խոնաւուն ջրոյ ունին և զլուսաւորութիւն, որ անուանեալ կոչի գերկտորն։ Բ[ա]յց որ ոչ գիտէ զգօրութիւն այնմ հոյզ՝ եթէ 'ի ծառոյ է, և չիցէ տեղեկացեալ նմա փորձիւ, ոչ կարէ կալ 'ի մերայ պէս պէս փոփոխմանց նորա, և ոչ իմանալ մարթէ զերան՝ որ 'ի նմանէ լինի։

Օ արմանք մեծասքանչ են՝ եթէ զիարդ անդստին 'ի մի և 'ի նոյն խոնաւութիւն որթ զոր ըմպէն՝ 'ի գինի դարձուցանէ, և ձիթենի յեղ, և 'ի միում ծառն շրջի 'ի քաղցրութիւն և 'ի միւսումն ջուր դառնայ 'ի պարարտութիւն։ Յ[ն]ս 'ի քաղցր պտուղս ծառոյն՝ ոչ մի համ քաղցրութիւն, այլ պէս պէս. այլազգի այն քաղցրութիւն է՝ որ յորթոյն լինի, և այլազգ[1] այն որ 'ի խնձորոյն կամ յարմատոյն։ Յ[ն]ս այսու հարցուածով կամիմ զի ցուցանիցես զսէրն՝ զոր ունիցիս փութով առ 'ի լուրն զոր լսիցես, զարմանալ աքանչանալ ընդ իրսն՝ զոր լսիցես։ Յ[ն]ս արդ միտ դիր զարմանալով, զիարդ նոյն ջուրք զմի կերպարանս ունին մինչ չեն ուրեք հասեալ իցեն, և յորժամ մտանեն 'ի տունկսն և առնուն 'ի նոցանէ զճաշակս քաղցրութեան, և 'ի սկզբան երևելոյ պտղոյն թթուք, դաժանք և փոթոթաւ համք. և զի յօշինտր և 'ի սակամունիայ փայտի ճաշակ դառնութեան գտանի, և կաղնեաց և գավարտից պտուղ՝ ճաշակս գղտորահամն ունին, և 'ի բևեկնոջ

1 Յոր. այլ ազգայն։

և ընկուզաւոր քաղցրաճաշակս պարարտուն իւղոյ են։
Եւ զինչ հարկ իցէ ասել 'ի վկայութիւնս ճառիս զծառս՝ որ[1] յօտարս յաշխարհի են, զի ասասէն 'ի Թղթեն՝ որ ընդ մեզ և առ մեզ գտանին՝ կարեմք ուսանել զամ որ 'ի հեռաստանեայ ծառոյն գտանին փոփոխմունք ազգիազգիք։ Զի ընդ երևել Թղթեանցն և ընդ աՀեղն՝ դառնութիւն լի է։ և իբրև գայ հասանել չափ լնոյն ամենևին քաղցրութիւն։ Սոյնպէս և յերևել խաղողոյ յորթոյ՝ ջուր թթու և աղտաղտ ունի, և յաղոին թթու և գիտորահամն, և իբրև հասանի չափ խաղողոյն, առնի ամենևին անուշարար քաղցրութիւն։ Եւ այլ զինչ ևս ասացից վասն ազգի ազգի փոփոխմանց և պէսպէս կերպարանաց՝ որ ունին 'ի բոյսս և 'ի խոտս, և 'ի ծաղիկս գտանին, իբրև ամենեքին զմի ըմպելի ըմպեն։ Ցեսանես 'ի միում ծաղկի գոյն գլխաւոր ծերանոյ, և 'ի միսումն զգոյն կարմրութիւն, և 'ի միսումն զգոյն կապուտակի, և 'ի միսումն զգոյն սևագոյն, և 'ի միսումն զգոյն սպիտակութիւն, հանդերձ այլ պէս պէս գունովք, զորոց անուանմն ոչ ոք գիտէ ասել 'ի մերում աշխարհիս։ Զի գունակ գունակ ծաղկովք զարդարեալ է առ հասարակ ամ երկիր, և հարկանին 'ի նոցանէ երբեմն երբեմն[2] գեղեցկութիւք, որոց ոչ կարեն նմանեցուցանել նարօտանեերիք իւրեանց ճարտար արուեստագիտութեամբն։ Եւ ունին իւրաքանչիւր ծաղիկքն ազգի ազգի հոտ անուշութեան, և են խնկիչք և ուրախարարք ամ հոտոտելեաց։

Եւ այնպէս եղաք անյագ և անդադար՝ երթալ զհետ ճառիցն մեծասքանչ գործոցն՝ այ, մինչ զի եղաք արտաքս քան զչափն։ Զդդ՝ եթէ ոչ կապեսցուք 'ի հարկէ զանս ընդ լուութեան, 'ի զարմանալ երթալ ստիպաւ 'ի վերայ զարմանագործ արուեստիցն՝ այ՝ արտաքոյ անյագ սահմանին հանէ զմեզ յանասատելի յանդունդս արշաւանաց իւրոց։ Զի կարի փոքր և սակաւ է ինձ օրս ողջոյն իւրով կատարեալ ժամովքն՝ առ 'ի պատմելինձ զՃառս փոքրս արարածոյ անՃառիմաստութեանն՝ այ։ « Լաղնեսցէ, ասէ, երկիր ծառ

1 Յօր. զծառս յօտարս։ 2 Յօր. երբեմն երբեմն։

պտղաբեր ըստ ազգի իւրում,, ։ Վ աղվաղակի յական Թ օԹ ափել կանգնեցան կացին զարդարեալք լերինք և գլուխք լերանց բարձանց ազգի ազգի ծառովք վաղ սաւորօք և անտառախիտ մայրովք, և կանանչագեղ զարդարեցան յամ կողմանց պրակ պրակ անտառովք. և յօրինեալ զարդարեցան դաշտք ամ դրախտիւք և բուրաստանօք և նկարեալ գեղովքն՝ որ խաղային ե- լանէին արքունական զնոսա, և վտակօք աղբերաց՝ որ բխեին ընդ ամ երեսս երկրի շրջել առուգանել զնո- ւրատունկ դարաստանս, որ կանգնեցան կացին հրա- մանաւ մեծազօրին այ։ Ա յնպէս պտակեալ զարդա- ւրեցաւ ամ երկիր առ հասարակ բոլորաձևս պտակօք։

Այս արդ կէաք ի զարդուց՝ որով աշխարհ զարդա- ւրեցաւ, ի մեր պէտս պատրաստեցաւ. կէաք ի նոցանէ ի կերակուր անասնոց, զի մեք պտղովքն վայելեսցուք և նոքա տերևովքն դարմանեսցին, հանդերձ և այլ ևս բազմատոհմ խոտովք իւրեանց. և կէաքն յարմատոցն՝ որ եղէն ի պէտս բժշկութեան և ի դարման ցաւոց մերոց պատրաստեցան։ Այս ինչ՝ զոր ուսուցին մեզ ընդերկարութիւն ժամանակացս, յօգուտ մեր է առանց նենգութեան և ստեսելոյ. և զոր ինչ գտաւ փորձիւ ընդ ժամանակս արարածոցն այ, ի դարման պիտոյից մերոց յառաջադոյն նկարեալ էդեալ էր արարչին ի հանգիստ մեր և յօգուտ Թին։ Այս այս ամենայն՝ որով հասու եղաք առանց մերոց՝ ի պատրաստութեանցն այ գիտութիւն ամ մարդկան, որով ակնարկելոյն հրամանին այ կանգնեցան կացին։ Վ ասնզի յառաջադոյն գիտաց արարիչն զպէտս մեր, և ըստ պատշաճի պիտոյիցն՝ նոյնպէս և պատրաստեաց զամենայն։

Օ արմանացուք դարձեալ և սքանչանացուք ընդ արարածս, եԹէ զիարդ կէս ծառք ջրասէրք են, և կիսոցն յոստինս տեղիս են ծնունդք և մնունդք իւրեանց. կէաքն անգործք և ընդվայրամնունդք՝ առաւարինք, և կէաքն ծաղկաբերք, և կէաքն անծաղիկք։ Այս յորժամ ուսանիցիս ի փոքր արարածոցս զմեծամեծս նորա, և յաձախեսցես զարմացիս, յաւելլիր փառաւորութի ի վերայ փառաւորութի. և յայսմ յամէ յորդեալ յաձախեսցէ ի քեզ սէրն այ արար-

չին քոյ։ Այլ դարձեալ առաւել զարմասջիր, եթէ զիարդ կէաք ի ծառոց միշտ դալարութիւն տերևոց ունին, և կէաք մերկացեալ կողոպտին ի տերևոց ի ժամ ձմերայնոյ։ Այլ որք միշտ զտերևսն ունին, յանդգայս փոխէն զտերևսն, և ոչ է մարթ՝ եթէ ամենևին մերկ և կապուտ գտանիցին։ Այլ որ՝ փոխէն զտերևս, ձիթենին և մայր և այլ ևս ծառք՝ որ սոցին նման են, ունին միշտ զտերևսն. իսկ արմատենին ի ծննդենէն մինչև ցկատարումն նոցն տերևոքն կայ։ Այսպէս դարձեալ և ընդ մեւս ևս ծառ՝ որ կոչի միրիկէ, որ ջրաբերին և ոստին է. զի ընդ ջրաբերիս ջրաբերի է, և ընդ ոստինս ոստին համարի. և Յրեմիաս մարգարէ յիրաւի նմանեցոյց նոսա զմարդիկ՝ որ ունիցին զգործս իւրեանց զչարութիւն յերկուս կերպարանս աշխարհի։

"Լուղեսցէ, ասէ, երկիր ծառս պտղաբերս՝ որ ունի պտուղ ըստ ազգի իւրում,"։ Այլ այս սակաւանշան հրամանն ի բնութիւնս մեծամեծս հաստատեաց, կացոյց իմաստութիւն արարչութիւն հրամանատուին, և առաւել քան զերագութիւն ակնարկելոյ մտաց մերոց՝ բերբք բիւրոց բոյսք և բողբոջք կանգնեցան և կացին միանգամայն ի միասին։ Այլ նոյն հրաման՝ որ եղև ի վերայ երկրի, մինչև ցայժմ ստէպ անդադար կարգի գայ ի նմա և բղխէ ամի ամի զամ ինչ զոր եդաւ ի նմա, զի ի վերայ նորին կարգեսցի. և ի նոյն ի ծնունդ խոտոց յարմատոց և սերմանեաց և ծառոց և ամ ազգաց՝ անցանէ ի վերայ մեր ըստ առաջին նմանութեանն։ Զոր օրինակ ստորովբիղք յառաջին հարկաւորելոյ անտի՝ զոր ընդունին,[2] շրջանս հանաւ պաղորդս առնուն և ինքեանք յինքեանս շրջին, սոյնպէս առաւել ունին ամ բնութիւնք՝ որ հաստատեցան ի մի վայելուչ յօրինուած ըստ իւրաքանչիւր պէս պէս ընթացից իւրեանց՝ յառաջին հրամանէն որ եղև սկիզբն կարգելոյ նոցա. և ոչ եղանէն յիւրաքանչիւր կարգեալ[3] հրամանէն անտի, և ոչ՝ ի յօրինեալ գնացից իւրեանց վրիպել և սիսալեն մինչև ի կատարումն հասարակաց, այս ինքն ի վախճան աշխարհ-

1 Յօր. Ա ու ֆոխէն։
2 Յօր. ընդունի ի շրջանս։
3 Յօր. խարտանչիւր կարգեալ որ հրամանէն։

հիս։ Օ՛ի և մեք՝ որ ամենատես տեսչութեամբն հաւ տատեցաք, պտուղս հաճուք տացուք ՅՍ ինքնակամ յօժարութիւն՝ հանդերձ ամենայնիւ, որ հաստատեցան տալ զպտուղս իւրաքանչիւր ինուն։ Այլ կեանք մեր բարի գործովք կատարին 'ի փառս ՅՍ, զի տընկեալ լիցուք 'ի տան նոն և 'ի սրահ սրբութեան ՅՍ մերոյ ՅՍ արդարութիւն և սրբութիւն, և 'ի նմին ծաղկեալ ցուք և զուարճասցուք յՅՍ հաճութիւն. և փառս և պատիւ հանցուք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

ԱՌԱՔ ՎԵՑՑԵՐՈՐԴ

ՎԱՍՆ ՎԵՑՈՐԵԱՑ ԱՒՈՒՐՑ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

Որ երթեալ նստիցի լինել տեսող նահատակացն մարտի, պարտի այնուհետև ժուժկալութիւն համբերուն ունել յանձին։ Այս զայս 'ի կարգէ ըմբշամարտիցն պարտիսն իմանալ. զի ամենեքին՝ որ միանգամ 'ի տեսիլ մարտիկին ժողովեսցին, գլխիբացք նստին միով հաւանութիւն 'ի միասին շուրջ զմարտկոցաւն տեղեաւ, յորժամ կէտ եղեալ ժամանեսցին ասենեքեան։ Այս մեք առաւել քան զնոսա առցուք յանձն զերկայնմոութիւն և զհամբերութիւն, զի տեսողք և լսողք ճշմարիտ բանին այ պատրաստեսցուք լինել։ Այս ինձ այսպէս թուի, թէ ոչ միայն տեսողք մարտի նահատակացն պարտիսն լինել, այլ զի և իւրաքանչիւր որ 'ի մէնջ ըստ իւրաքանչիւր մասին մտեալ 'ի մարտ գտանիցի. քանզի հարցողք եմք և խնդրողք մեծաբանչ գործոցն այ, և սերևոյթ ծածկելոցն՝ որ յոյժ և անչափ հեռի են 'ի մէնջ իւրեանց ծածուկ և ճշմարիտ իմաստութեամբն։ Ողողեսցուք ամենեքին, եկայք[1] լինել լսողք, զի 'ի մերոց մտաց ինքնագէտ իմանացուք զանհարկեն պատճառանացն աբրաածոցս, որ հաստատեալ կան առաջի աչաց մերոց ճանաչել զնոցանէն։ Օ՛ի 'ի մարտ պատերազմիս՝ յոր ես մտանեմն, և դուք ընդ իս ըստ իւրաքանչիւր կաւրի հաղորդեալք գտանիցիք առողջ լսելեօք, առանց սահեցուցիչ սքսանաց. ոչ զի 'ի քնին[2] մտեալ զիմ բանքս քննիցէք[3] թէ վրիպեսցէ ելցէ արտաքս քան զկէտն նշանակեալ, այլ զի օգնական և ձեռնտու լինիցիք ինձ սիրով. զի գուցէ անցից զանցից ինչ իւիք 'ի պատշաճից ճշմարտութեն, և զանցանելն իմ՝ ցնաս ամենեցուն հասարակաց լինիցի[4]։

1 Յօր. եկաք։
2 Յօր. քնէն։
3 Յօր. քննեցիք։
4 Յօր. լինիցին։

Լոյս արդ միտ էդեալ նայեսցուք՝ թէ վասն էր իցէն բանքս զոր Ճառէլս կամիմ։ Վասն հաստատութեան աշխարհիս է խնդիրս մեր, և վասն տեսլեան արարածոց կամիմք Ճառել զՃառս մեր, եթէ ոչ յիսմաստութենէն արտաքնոցն ուսաք զսկիզբն արարածոցս, այլ 'ի ծառայէն այ՝ որ վարժեցաւն և կրթեցաւն ծածուկ խորհրդով ՝ածութենն. ընդ որում դէմ յանդիման խօսեցաւ ՝ած՝ և ոչ տեսլեամբ քնոյ կամ երազոց ակնարկելով։ Զի որ զբանս զտեսիլ ինչ աշխարհիս սիրեցին պատահել՝ առանց կրթութեան մտացն ոչ կարեն պատահել՝ իրացն՝ որ կան առաջի աչաց նոցա. նոյնպէս և մեք ոչ կարեմք առանց կրթութեան մտացն արժանաւոր իրօք իմմանալ զբանչելնն այ ա բարածովքս՝ որ կան առաջի աչաց մերոց։ Պատահեսցէ քեզ արդեւք երբէք, եթէ եղեր 'ի խորհուրդս մտաց ցայգ, և առաքեցեր երբէք զհայեցուածս քո յերկինս, և զարմացար ընդ անպատում պայծառաւ գեղաւորութիւն աստեղաց՝ որ են 'ի զարդ երկնից, և ՝ածեր զմտաւ զմեծութեն արարչին նոցա, և 'ի միտ առեալ իմացար՝ թէ ո՛վ իցէ որ զարդարեաց նոքօք զերկինս։ Լոյս դարձեալ եղեր արդեւք 'ի խնդիր 'ի տուէ արթուն մտօք զուարթութեն, և ուսար զմեծասքանչ զարմանալնն այ՝ որ երևէն 'ի տուէ, և յեբևեռացս անկաւ 'ի միտս քո անեղեւոյթն՝ որ է ա բարիչ սոցա։ Լեր այսուհետև և լսող պատրաստական բանիս՝ զոր Ճառեմք, և տեսող պէսպէս տեսլեանց երևելի արարածոցս, որ մեծասքանչ զարմանալեօք հաստատեալ կայ, և նշանակերտ գեղօք զարդարեալ։ Լոյս իբրև այր մի քաղաքացի՝ որ տեղեակ իցէ հրապարակաց և փողոցաց քաղաքին, և պէսպէս վաՃառաց՝ որ 'ի նմա կարգեալ յօրինեալ կայցեն, և գայցէն մերձենայցէն 'ի նա օտարք անտեղեակք քաղաքին, և նա առեալ զնոսա սիրով ընդ քաղաքն շրջելցուցանիցէ, և զամ տեղիսն ցանկալիս քաղաքին ցուցանիցէ նոցա, նոյնպէս և ես աւասիկ առեալ տկար բանիւքս ցուցանել զմեծասքանչ գործսն այ յայսմ մեծ քաղաքիս աշխարհիս այ, որ է բնակուն

1 Յօր. գ՝՝հել։

մեր առաջին, յորմէ վերպեցոյց ընկէց զմեզ մարդասպան թշնամին, որ գերեաց զմեզ ի նմանէ, և ի նմին թշուառացոյց, և կապեաց զմիտս մեր ի հնազանդութիւն իւր։

Ա.ՐԴ ի սմին աշխարհիս եկայք տեսցուք զմարդն առաջին, և զլինելս արարածոյ նորա յաշխարհիս. ո՞ր ոք հասաք ի թշուառութիւն մահու, զոր ծնան մեղքն սպանիչք, նոյն եղև մեզ անդրանիկ չարեացն, սկիզբն անօրէնութեաց ի պատճառանաց դառնութեան թշնամոյն։ Ա.յսպէս փառաւոր էր մարդն առաջին, զի թէպէտ յերկրի արարաւ, այլ ձեռագործ էր ըստ քանչելեացն այ. զի թէպէտ և տկար է զօրութեամբ քան զբազումն յանասնոց, այլ տեսչութեամբն այ հրամանատար և անուանադիր նոցա է, խօսողութեամբն զոր ընկալաւ։ Այլ որչափ երևի տկար մարմնով քան զնոսա և ուժով, նոյնպէս փառաւորեալ և վայելուչ է, բանիւ և գիտութեամբն՝ զոր ունի. զի և մինչև յերկինս, եթէ կամեսցի, կարող է վերանալ երալնել խորհրդովք իւրովք առ ած, և ի սքանչելի առաջնորդութիւն նորա։ Ա.ՐԴ՝ եթէ ի սոյն լծեսցուք, և ի նոսին թելադրեսցուք զանձինս մեր, կարեմք իմանալ զած և ճանաչել, և արարչին մերոյ արժանաւոր երկրպագութիւն մատուցանել. և այ կամք ի պաշտամանն հնազանդութեան և հօրն մերում և տէրն մերում, մեծագոյն ողորմութեան նորա լինիմք փառաւորիչք, և ամենաբոյժ մատակարարին՝ որ ունի ի վերայ մեր զհանապազորդ տեսչութիւն՝ անհատուցումն սիրոյն լինիմք հատուցանողք, և ի բարերարին մերմէ ուսանիմք ամն ածել. այնպէս և պատճառք կենաց մերոց՝ որ աստ են, և տուիչ այնմ կենաց՝ որ հանդերձեալն է յաշխարհն մշանջենական. և որում՝ ոչն բաւեմք և լինիմք բաւական տալ ըստ նորա արժանաւորութեանն զփառաւորութիւն, որ եւ մեզ զմեծութիւն անցաւոր աշխարհիս ընդհօք, և հրաւիրեաց խոստմամբք աւետեաց հաւատացելոց իւրոց զերանութիւնն յաւիտենական աշխարհին. և այսու պարգևօք՝ զոր աստ ընդհեաց, հաստատեաց և հիմնեաց յուսով զայն՝ որ ոչն անցանէ։

Զ. Ի ԹԷ ժամանակեայքս այսպէս վայելուչ և գե-

ղեցիկք էն, ոՐչափ և առաւել զարմանալիք իցէն՝ որ անսպառ յաւիտենական մնան առանց եղծանելոյ. զի թէ երևելիքս այսպէս ցանկալիք էն, ոՐչափ և փառաւորեալ էն աներևոյթքն. զի թէ մեծութիւն չաւ փոյն երկնից մեծասքանչ զարմանալեօք անցանէն ըստ միտս մարդկան, որ կան մնան և ոչ անցանեն ոՐչափ և առաւել։ Այլ արդ ո՞վ իցէ կարող գիտել Ճանաչել և 'ի վերայ հասանել նոցա։ Այլ եթէ անցաւոր արեգակնս այսպէս քաղցրահայեաց և զարմանալի է մեծութիւնք, զի զա՞մ բաւական է լուսաւորել մեծատարած Ճառագայթիւք իւրովք, որ յօրինեալ յարդարմանէ չարժի խաղայ ելանէ, և ուրեք 'ի նկատեալ սահմանէն ոչ խոտորի. զի գեղ բնութիւն արեգականն յորդալոյս ական մեծի նման է, իւրով մեծապայծառ իմաստութեամբն լուսաւորել առ հասարակ զաշխարհս ա՞մ. զի թէ արեգակն այսչափ անյագ առնէ հայել 'ի տեսիլ լուսոյ իւրոյ, ոՐչափ և առաւել գեղ արեգականն ապրարութիւն, զոր սակաւք արժանի լինին տեսանել։ Այլ եթէ մեծ պակասութիւն կուրի է՝ որ զրկեալ է 'ի լուսոյ անցաւոր արեգականս, ոՐչափ և առաւել գտանիցին պակասեալ մեղաւորք՝ որ զրկիցին 'ի լուսոյն Ճշմարտութիւն։

"Այլ ասաց, ասէ, ա՞ծ. Այղիցին լուսաւորք 'ի հաստատուն երկնից, մեկնել 'ի մէջ տուրընջեան և գիշերոյ"։ Զարդ նախ եղեն երկինք և երկիր, յետ նոցա լոյսն լուսաւորել գնոսին. և մեկնեցան տիւ և գիշեր, զի զաւուրս երևեցուսցեն. ձգեցաւ և հաստատութիւնն, մեկնել զջուրս 'ի ջուրց. յայսմեցաւ և ցամաք, այսինքն երկիր, 'ի բաղմութիւն ջուրցն՝ որ ուներին զերեսս նորա. ժողովեցան և ջուրքն յիւրաքանչիւր կայսն. ընկալաւ և երկիր զկատարումն պտղոց ծննդոց իւրոց արմատովք, բուսովք, տնկովք և ծառովք։ Այլ արեգակն և լուսին չև ևս էին առեալ հրաման լինել, զի մի տացի նմա գլխաւորութիւն և կանխութիւն ըստ բանի մոլորելոցն, որ զնա դնեն պատՃառ ա՞մի։ Ա՛յա և ոչ լինել պատՃառս բուսոցն՝ որ բուսանն յերկրէ՝ տուաւ նմա. զի որ զա՞ծ ոչ կամեցան Ճանաչել՝ զարեգակն համարեցին պատՃառս ամենայնի։ Այլ վասն այնորիկ 'ի չորրորդում աւուրն

ասացաւ, եթէ «Լղեցին լուսաւորք 'ի հաստատուն երկնիս»։ Լաւ դու յորժամ լսես՝ թէ ասաց, ած վաղվաղակի մնդրէն զմտաւ և զոյնմանսն՝ որ ասացն։ «Լաւ ասաց, ասէ, ած. Լղեցին լուսաւորք. և արար ած զլուսաւորս»։ Լաւ արդ ո՞վ է որ ասացն, և ո՞վ է այն՝ որ արարն. 'ի միտ առ անդամտին 'ի բանէ անտի զկերպարանս երկուցն երեսացն. զի յամ տեղւոյ ցուցանէ քեզ ած զՀնմարտութիւն իւր, որ փառաւորեալ խորհրդով դրոշմեալ է 'ի գիրս։ Արդ արարիչ է ած լուսաւորացն, որ յաւելան լուսատու լինել երկրի, իբրև կայր 'ի պաշտաման լոյսն առաջին։

Բայց 'ի վերայ մերկ բանից գրոց մերոց, որ չէն պՃՆեալ պաՃուՃանօք յոյն լեզուի, մի ծիծաղեսցեն իմաստունքն Յունաց. քանզի չէն բանք գրոց մերոց պաՃուՃեալք և յղկեալք յօրինեալք Ճարտարապետութեամբ լեզուի՝ կշռեալ կշռորդովք. զի մի հակեալ միտիցեն[1] ուրեք 'ի հասարակաչիւռն կշռոց բանից։ Ոչ ունի Ճարտարութիւն մեր բանքս Ճախարա կեայս բոլորեալ լեզուաւ, և ոչ բարբառս վերնազարդս. այլ ունիմք բանս յայտնիս, ու պաՃուՃազարդ անօգուտ բարբառովք, այլ ուրախարարք[2] և հանգուցիչք Ճաւիւք, որոց ոչ 'ի բարբառոց գեղ վայելումն իւրեանց, այլ 'ի մեծկակ Ճշմարտութենէ անտի ունի զպատիւ փառաւորութիւն իւր։

Արդ լոյսն առաջին՝ որ տուաւ լուսաւորել զերկիրս, ցիր քՆութիւն ունէր. և տարրն արեգականն կազմեցաւ լինել ամսն առաջին լուսոյն։ Օ 'ի զոր օրինակ այլ ինն հուրն է, և այլ ինն Ճրագն. զի մինն ունի յարարածոյ իւրում զզօրուն լուսոյն, և մեւսն յարդարեալ կազմի առ 'ի լուսաւորել. սոյնպէս յստակ և սուրբ անաղտ լուսոյն կազմեցուսն լինել ամանք լուսաւորքն՝ որ եղեն։ Օ որ օրինակ կոչեաց Աբրահամն զմարդիկ՝ լոյս աշխարհի, իբրու յայտնի և երևելի է Ճշմարիտ լոյս աշխարհի. վասն զի 'ի մոլորութենէ՝ որ է խաւար, հանին զմարդիկ և ածին 'ի Ճշմարտութիւն լուսոնին գիտութեան. սոյնպէս և արեգական՝ որ կոչեցաւ լուսաւոր, վասն զի եղև իւրով արագընթաց գնա-

1 Յոր. գէպ դէյեն։ 2 Յոր. ուխարարք։

ցիւքն ցուցիչ առաջին լուսոյն՝ որ հաստատեցաւն։ Օ ի ամենագործն ասե զնոյն լոյն վառեաց ակն յա-ղեգակն, և հաստատեաց եդ լուսաւորել զարարածս։

Լ։ այս որ ասացաւ՝ մի ումեք չհաւատալն կարծեսցի, թէ այլ ինչ է լոյն լուսաւորիչ, և այլ ինն ամենն լուսաւոր՝ յորում բնակեալ է լոյն։ Բայց նախ զայս գիտասցուք, եթէ ամ իրք՝ որ յօդեալք են, զատ և որիշ 'ի միմեանց բնութիւն իւրեանց, թէ-պէտ և ընդ միմեանս յօդեալք իցեն բնութեամբքն իւրեանց. զի յորս դիպին և լինին, և առնուն հա-զորդութիւնքն 'ի միմեանց իւրաքանչիւր զօրութեցն, գիտեմք ընտրել զնոսա 'ի միմեանց մտօք մերովք՝ ո-րով տեղեակ եմք։ Օ որ օրինակ այլ ինն բնութիւն ապիտակ է, և այլ ինն թուիս, սոյնպէս են այլք որ 'ի մէջ ասացաւ, և այ զօրութեամբն կարդեալ կան։ Օ ի թէպէտ զատ և որիշ են 'ի միմեանց բնութիւն իւրեանց, այլ հաւասար և միաբան են զօրութեամբն՝ որ կազմեցան, զի 'ի միասին միաբան եղիցին 'ի պաշ-տօնն իւրեանց, յայսմանէ՝ որ հաստատեաց զնոսա։

Լ։ թերևս ասիցէ ոք, թէ մարթ իցէ 'ի նոցանէ մեկնել 'ի միմեանց։ Օ այս լուիցէ, թէ զօրութիւն բանիդ՝ զոր ասացեր՝ ոչ յիմ է և 'ի քո ձեռս է մեկ-նել զայս արեգականն յամենայ անտի նորա. զի զոր 'ի մեր ձեռս առեալ է և մեք իշխեմք, զնոցանէ որ-չափ կարող եմք՝ ածեմք զմտաւ մեկնել. և որոց ածէ արարիչ, նմա տամք զորոշմունս նոցա։ Օ ի մեզ մարդկան զկիզիչ զօրութիւն 'ի լուսոյ հրոյ չէ հնար խափանել և մեկնել, և ոչ լուցանել և վառել առանց կիզիչ զօրութեան նորա. և այս առանց հարցուածոց[1] յայտ է ամենեցուն. իսկ ածէ փառաւորեալ և սքան-չելի[2] տեսլեամբն իբրու կամեցաւ զծառայն իւր առ-իւր դարձուցանել, վառեաց հուր բորբոքեալ 'ի մա-ռեխին լուսաւորութիւն, և դարձոյց 'ի նմանէ զայրիչ զօրութիւն, որ կարող էր վառել այրել յորժամ առ-նոյր հրաման. ըստ այմմ՝ զոր ասէ 'ի Պաղմոսին, թէ Զայն՝ ոն հատանէ զբոց 'ի հրոյ։ Լ։ դարձեալ որք առնուն զհատուցումն ըստ չարուն գործոց իւրեանց

1 Յօր. հարցուածոց։ 2 Յօր. 'ի սքանչելի։

'ի հուրն հանդերձեալ, լոյսն խափանի 'ի նոցանէ, և այրիչ զօրութիւն կայ մնայ անդէն. քանզի 'ի խաւարի է բնակութիւն տանջանաւորացն, որպէս ուսուցանէ բան վարդապետութեան այ, զի խրատեսցէ զմեզ արգելուլ 'ի գործոց չարեաց, և յանհնարին տանջանացն փրկեսցէ և ապրեցուսցէ. ըստ այմմ՝ զոր Դաւթեալ ասէ, թէ Հուրն որ ուտիցէ զհակառակորդսն։ Եւ ասէն մեր ասէ, եթէ Երթայք անիծեալք 'ի հուրն յաւիտենից. և թէ Հանէք զդա 'ի խաւարն արտաքին։ Վասնզի դիւրին է և մեկին այ բաժանել յերկուս կերպարանս, տալ զլոյսն և զհանգիստն նորա արդարոց, և զայրիչ զօրութիւն մեղաւորաց 'ի հալումն և յորոշումն, զի ուտիցէ և ոչ նուազեսցի 'ի չարչարելոյ զտանջանաւորսն՝ զոր տանջիցէ։

Եւ վասն լուսնի դարձեալ, և վասն փոփոխմանց և դիպուածոց նորա կարելիք իմանալ ճշմարտիւ, թէ այսպէս են, զի 'ի մաշիլն և 'ի սպառիլն՝ ոչ եթէ ամենեին յամենոյ անտի սպառեալ գոնանի, այլ 'ի լուսոյն՝ որ հաղորդեալ է ընդ նմա, որ գնովաւ պատի և դարմանէ, և 'ի նմին սկսանի և աճէ և փոքրկանայ և մեծանայ, զարմանալիս և աքանչելիս ցուցանէ մեզ ինքեամբ։ Բայց զի ոչ ամենեին յայմ յամենոյն իւրմէ պակասէ և սպառի, ունիմք զվկայութիւն ճշմարիտ և յայտնի. զի կարես տեսանել զանիւն լուսնի յորժամ պարզ և վՀիտ և յատակ իցէ երկինք յամպոյ. մանաւանդ յերեքօրեայ ժամանակի երևելոյ լուսնի, եթէ միտ դիցես՝ տեսանիցես զամենն լիով առանց լուսոյ դրոշմեալ նկարեալ ամենեին այմ ամենիւն իւր բովանդակ. ըստ այմմ կերպարանաց՝ յորժամ տեսանես զնա լիով լուսով նկարեալ, այնպէս տեսանես զնա բոլոր բովանդակ դրոշմեալ 'ի ծոց իւր հովանւոյ՝ 'ի պարզ ժամանակի օդոյն լուսաւորութեան, և յայն կերպարանաց չէ հնար նմա պակասել։

Եւ զայս մի ոք ասիցէ, թէ այլ ուստեք իցէ լոյսն լուսնի. զի յորժամ, ասեն, երթայ դիպի արեգականն, սկսանի պակասիլ 'ի լուսոյն իւրմէ. և յորժամ հեռանայ 'ի նմանէ, աճէ և ընդ։ 'Ի հարց և

1 Յոր. Ը-Գ։

'ի փորձ առնուլ այժմ զՀառա՝ չկայ ինչ հարկ 'ի վերայ. զի զոր օրինակ ամենն լուսոյն այլ ինն է, նոյնպէս և լոյսն նորա այլ ինն է։ Իսկ նմին մնաց պարտիմք առնուլ օրինակ և վասն արեգական. զի արեգական թէպէտ և չիք մաշիլ և առՀել, քանզի մի անգամ էառ զկատարեալ միատարրութիւնն կալ մնալ այնպէս, այլ ըստ այսմ օրինակի է և նորա լուսոյն հաղորդութիւն։ Բայց լուսինն մերկանայ զլոյսն ինքն յինքեանէ և ինքեանմէ՝ ըստ կարգին զոր եղեալ է նմա։

Լուս յայտ է՝ եթէ լուսաւորքն մեկնեալ զտիւ և զգիշեր հաստատեցան. և վերագոյնն ասէ 'ի լինել զլուսոյն առաջնոյ, «Մեկնեաց, ասէ, ՀԱԾ 'ի մէջ լուսոյն և խաւարին»։ Ընդ զնուութիւն լուսոյն մեկնեաց 'ի խաւարէն, այնու զի եղեն հակառակ միմեանց, ոչ միասնալով, այլ կարգեալ յօրինուածով առ 'ի կանգնումն արարածոց. ոչ հրամայեաց ունել ընդ միմեանս հաղորդութիւն տուընջեան և գիշերոյ, զի մի լինիցին շփոթել 'ի խառնակութիւն։ Ընդ զի մի լինիցի հաւասարութիւն նոցա ընդ միմեանս, մեկնեաց հեռացոյց զնոսա ՀԱԾ 'ի միմեանց։ Օ յ զստուերն՝ զոր 'ի տուէ տեսանեալք, սոյն է և 'ի խաւարն՝ որ լինի 'ի գիշերի. զի յորժամ երևեսցի լոյսն, ըստ յայտնել լուսոյ՝ նոյնպէս լինի փոփոխումն ստուերին. զի 'ի կողմանց տարերցն՝ որ կան ընդդէմ՝ անկանի։ Օ յ յորժամ յարևելից կողմանէ երևի լոյսն, ստուերն յարևմուտս կոյս ձգէ զանձն. և յորժամ 'ի հարաւակոյս անցանէ լոյսն, ստուերն 'ի հիւսիսի կոյս փոփոխի. և յորժամ յարևմուտս կոյս կայցէ լոյսն, ուղիղ ընդ արևեալ գնայ լուսոյն ստուերն։ Ընդ այսպէս գտանի լինել գիշեր յաշխարհի 'ի փոփոխելոյ Հառագայթից արեգականն. և յայտ է՝ եթէ ոչ այլ ինչ է գիշերն, այլ ստուեր տարերցս լուսոյն. զի որ ինչ կայ ընդ երեսաց լուսոյն, նա է [1] պատՀառ երևելոյ խաւարին. սոյնպէս լինի և գիշերն 'ի մնանել լուսոյն, և խոնարհելոյ ստուերի օդոյն, և 'ի տարրել երկրի մնանել տիրել խաւար աշխարհի։ Լու այս է զոր գրեալն է, եթէ «Մեկնեաց ՀԱԾ 'ի մէջ լուսոյն և 'ի

1 Յօր. նա, Նայ է։

մէջ խաւարին »· զի խաւար փախստական լինի յե-
ւրևել լուսոյն ։

Եւ զդ յերեւի արար ՅԾ զլուսաւորսն իսկզբանէ հա-
կառակագնացս միմեանց · զի արար չափոզ տուընջեանս
զիշխանութիւն արեգական , և ետ հրաման լուսնի՝
զի յորժամ կատարեսցէ զընթացսն 'ի շրջելն իւրում,
եղիցի սկիզբն գիշերոյ · չափով կազմեաց և եդ ՅԾ
զլուսաւորսն, զի իւրաքանչիւր յիւրում տեղւոջն ծա-
գեսցէ ։ Յորժամ ծագէ արեգակն 'ի լիութեանն լուս-
նի , խոնարհի մնանել լուսինն , զի մի երևեսցի · և
ընդ մնանել արեգակամն՝ բազում անգամ վերանայ
լուսինն յարևելից ։ Բայց վասն ազգի ազգի փոփոխ-
մանց և կերպարանաց՝ զոր ունի լուսին, զի զամ պաշ-
տօն գիշերոյն ոչ կատարէ երբէք լուսով իւրով , չկայ
ինչ հարկ 'ի վերայ մուծանել 'ի խորին պատմութիւն
զսակիս [1] ռամիկ մարդկան · զի մի անգր մնանելոյն
անագանել զտանջիցիմք 'ի Ճառիս՝ զոր արկեալ էաք ։
Եւ դարձեալ և իսկ երբեւ կատարէ լուսինն զընթացս իւր,
սկսանի լինել լոյսն նորա սկիզբն գիշերոյ · և 'ի ծա-
գելն նորա՝ առաւել պայծառանան աստեղք [2] , և
լուսաւորի նոքաւ երկիր 'ի խաւարէն՝ որ ունի զերեսս
նորա ։ Բայց չափով եղեալ է և լուսինն՝ մեկնել զընդ-
երկարութիւն ժամանակաց ըստ նմանութեանն արե-
գական ։

Այլ դարձեալ ասէ , եթէ « Եղիցին 'ի նշանակս և
ժամանակս և յաւուրս և 'ի տարեկանս [3] »։ Յոյժ պատ-
շաճ և պիտոյ էն աշխարհի և մարդկան նշանք՝ որ լի-
նին 'ի լուսաւորաց , եթէ ոք ըստ կէտ [4] սահմանին
ոչ ելանիցէ օտարոտի քմնութիւն ։ Զի որ միտ եդեալ
ընտրիցէ զգեղեցիկ փոքն նոցա , յորժամ չխառնիլ-
ցէ 'ի նեղքս զամբարշտութիւն , ազգի ազգի հնարս
օգտութեան գտանէ 'ի նշանաց անտի ։ Զի վասն խո-
նարհոյ ժամանակաց բազում անգամ վարդապետք լի-
նին մեզ , օգոյն պղտորութեան և գառնաշունչ հողմոցն
սառնամանեաց ։ Զանգի է ինչ՝ որ երևի յարեգակ-
նէ · և տեր մեր յայտնեաց մեզ յասէն , թէ Յոր-

1 Յոր· զսէնի։
2 Յոյն ասէ, ասասէ դոյ-
ծասանոյ ։ան զասիքս։
3 Յոր· 'ի գարնանոյ։
4 Յոր· ոտ վէտ։

ժամ տեսանիցէք զի գայ ամպ յարևմտից, և ասէք՝ թէ անձրև լինի, և լինի. և յորժամ հարաւ շնչիցէ, ասէք՝ եթէ խորշակ ընթանայ, և լինի այնպէս. և յորժամ դարձեալ ընդ երեկս կարմրանայցեն երկինք, զպարզայ յայտ առնեն. և յորժամ ընդ առաւօտուն կարմրանան, զանձրևի նշան ցուցանեն։ Այլ ըստ նմին օրինակի այլ ևս բազում կերպարանօք և փոփոխիւք յայտ լինին։ Օ ի յորժամ ընդ ծագել աբեգականն մթագոյն երևանիցէ, և արեան և կայծական նշանակ ունիցի Հառագայթիւք ըստ փոփոխմանց խստաշունչ օդոյն, և եթէ՝ ի նմին կերպարանս կացցէ, օդն պղտորեալ և յուզեալ ոչ յստակեսցի, և գոյնն մթագոյն ոչ լրթասցի, և հողմք խստաշունչք ևս յաւելցին, և ամպն ևս քան զևս բազմասցի, զերկար խոնաւայուզից և զսաստիկ անձրևաց յայտ առնեն, յորժամ այս ամենայն կերպարանքս միաժողով երևեսցին։ Այլ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն ամպոց, և ունիցի մնայլ զարեգակն ամպոց, ջուրք բազումք յօդոց յերկիր առաքին, կամ զարամուր փքոց և զգաւառաշունչ ջրոց ամբոխելոց յայտ առնեն։ Այլ դարձեալ յորժամ յամպոց [1] ամպ մնանիցէ և ելանիցէ արեգակն՝ զջերմակիծ շող ամպն յերկիր առաքելով, զխոնաւութիւն օդոյն յայտ առնէ։ Այլ դարձեալ յորժամ աղեղն յամպս երևեսցի երբին երբին գունովք զգաւազանսն ձգելով, զսաստիկ անձրևաց և զգողացուցիչ յորդութեանց յայտ առնէ։ Դարձեալ բազում նշանս ունիմք ուսանել՝ ի լուսնոյ ասելն և՝ ի մաշելն, յայտնանէ՝ որ միշտ հայելոցն տեղեկացան նշանացս, որ լինին՝ ի նմանէ։ Օ ի յերեքօրեայ ժամանակի՝ յորժամ յստակ և պարզ և վճիտ երևեսցի, զյստակ պարզոյ յայտ առնէ. և յորժամ՝ ի մահիկ եղջերան զնշանակ կարմրութեան կամ զմթաբութիւն ունիցի՝ մթութիւն, ջուրք բազումք յամպոց յերկիր առաքին, և հարաւ յորդաշունչ բռնութիւն յօդս բարբառի։

Այս այսու ամենայնիւ յայտ է, թէ նշանք՝ որ՝ ի լուսաւորացն երևին, ՝ի շահ օգտութիւն են աշխարհի.

1 Յօր. յամպոյն.

և ոմ՝ որ ոչ օգտեսցի յայսցանէ, բայց այնոքիկ՝ որ կամին առնել զնոսա անձանց իւրեանց։ Եւ զի նշանացն՝ որ են գուշակք՝ նաւավարն զգուշասցի, և մի խառնեսցէ զնաւն 'ի ծովն. այլ անդրէն զետեղ առեալ պահեսցի 'ի նաւահանգստին, զի մի պաշարեալ գայցի 'ի մէջ ծովուն 'ի շնչել հողմոյն ամբոխելոյ։

Եւ Ճանապարհորդն զգուշասցի, զի մի ելցէ 'ի տանէ երթալ աշխատել բքայոյզ և կամ յանձրևաց ժամանակի։ Այսպէս և մշակն զգուշասցի՝ յառաջագոյն սերմանել զսերմանիսն, և անկել զտունկս 'ի պատուհաճ ժամանակի։ Եւ ոչ զայս միայն ունիմք ուսանել 'ի լուսաւորագրէ, այլ և զլուծումն աշխարհի հասարակաց, 'ի նշանակաց՝ որ լինին յարեգակն և 'ի լուսին և յաստեղս. ըստ այնմ՝ զոր ասաց Ցէբն, եթէ Արեգակն խաւարեսցի, և լուսին մի տացէ զլոյս իւր, և աստեղք թափթափեսցին յերկնից։

Իսկ վերիպեալքն 'ի ճշմարտութենէն և անցեալք գլորիսեալ՝ յարդարմամբք, որք մոլար գիտութիւնք կամէին անցանել զանցանելիօքն, զծննդոցն իմն զաստեղատանց յայտ իմն առնել կամէին։ Եւ այսպիսի իմն ասեն. զի կեանք մեր և յառաջնորդութիւն յայնս որ յերկինս 'ի վերայ մեր գնան՝ հաղորդեալ են, և վասն այնորիկ յաստեղացն լինին նշանք պատահարացն մերոց։ Օ այս ասեն քաղդէացիքն[2], որ միշտ ընդ աստեղս հային։ Բայց ճաճեղէն քանն, որ 'ի գիրս դրոշմեալ է, պարզ և յայտնի պատմելոյ ասէ, եթէ "Եղիցին 'ի նշան և 'ի ժամանակս և յաւուրս և տարեկանս"։ այս ինքն է, 'ի փոփոխմունս օդոց և յլինելոցս ժամուց և 'ի գնացս ժամանակաց, որով կարգեն զկարգ աշխարհիս։ Իսկ կամակորքն ըստ խոտորնակ մտացն իւրեանց կամակորել կամին զուղղորդ բարբառս ճաճեղէն գրոց, և զաստեղսն դնեն վարիչս աշխարհիս. և վիճակք իմն, ասեն, բաժանի 'ի նոցանէ, և բաշխից բախտից զմասունսն դնեն կենաց ամենայն մարդկան. և զՀնմարիտ պատգամն սուտ մեկնութեամբքն մեկնեն, և ըստ իւրեանց կամացն արկանեն

1 Յոր. զբինեալ։
2 'Ի լուս. գոնիկն. իմա գաստղագէտք, որ է գաղդեայն։

զամբարշտութեա՛ն լսելիս այնոցիկ՝ որք ունկնդիր լինին նոցա։

Այսն. աստեղքս այս յանկակիցք են պատկերաց և աստեղատանց կերպարանաց, և զնոքսք շրջին, և ընդ նոսա գնան ըստ իւրաքանչիւր ընթացից իւրեանց։ Այլ յայս պատճառս, ասեն, պատահէն միմեանց. զի յաստեղատանց ծննդոցայն բաշխեսցեն տացին ըստ բախտս իւրաքանչիւր՝ որ ծնանիցին։ Այլ ինձ այսպէս թուի, թէ ամ հոգաբարձութեա՛ն համարոյն նոցա հակառակ լինի բաշխիչ վիճակաց իւրեանց, այնոքիւք՝[1] որ լինին և դիպին յաշխարհի։ Բայց մեզ չէ ինչ դանդաղելի երկրորդել զանհամ պատմուելս նոցա. քանզի՝ ի հաստատաբան ճշմարտութենէն մերմէ կշտամբեալ գտանին։ Այլ արդ դարձցուք զնոքիսք վերստին. և ահա կամիմ ասել՝ իբր ոչ զիմ ինչ բանս խառնել՝ ի նեղքս, այլ՝ ի նոցունց բանիցն երկրորդեմ ընդդեմ նոցա, կշտամբել զնոսա անդատին յիւրեանց բանիցն. զի թերևս որք կանխասն անկան յամբարշտութեան նոցա՝ բժշկութեան գացին, և որ չիցեն գայթակղեալ և անկեալ՝ ի պատրանս նոցա՝ զգուշութեա՛ն ստացին, զի յայսպիսի բանս՝ որ նման նոցին իցեն՝ մի՛ յօժարեսցին անկանիլ։

Օ՛ի ահա տեսանեմք, զի և գտողաց զաստղագիտութեան[2] և մեկնչաց աստղագիտացն, ուստի զծնունդն բաշխեն, բազում իրք վրիպեն, յորժամ սկսանին հաւմարել. այնպէս զի և ոչ ինքեանք իւրեանց արուեստին բաւական լինին հասանել։ Օ՛ի զչափ ժամուցն անհամար բոպկիւք ժամուցն համարեցան. քանզի՝ ի պէսպէս մասունս կոտորեցին զրոպէսն, այս ինքն զթափել ական, ըստ այմ՝ զոր Դաւթեանն ասէ, եթէ Յանկարծակի իբր զական թօթափելոյ. զի տեղի բազում ժամուց է ընդ ծնունդն և ընդ ժամս իւր։ Այլ որ ծնանի, ասեն, յայն միայն յընդաղօտ՝ ի բոպէ ժամուն, ոմն ճոխ լինի, ասեն, և գլխաւոր քաղաքաց և մեծատուն և զօրաւոր. և մեւսն, ասեն, որ ծնանիցի՝ ի միւսումն, և՝ ի սակաւ ինչ փոխելոյ

1 Յօր. այնոքիսի։
2 Յօր. գիտողաց աստղագիտութեանն։

յանկարկէզ ժամն՝ տառապեալ և մուրող լինի, և այսպէս թափառական ընթի տուն 'ի տանէ և տեղի 'ի տեղւոջէ, և հաղիւ կարէ ժողովել զաւուրն զուռձիկն։

Եւ զբոլորակ պատկերաց աստեղատանցն յերկոտասան մասունս բաժանեն, քանզի ըստ թուոց երկոտասան ժամու աւուր՝ երեսուն աւուր կազմեալ է զբոլորակն. և արեգակն տարւոյ տարի գայ շուրջ զերկոտասան աստեղատամբքն [1] բոլորակին։ Արդ երկոտասան մասն յերեսուն մասն բաժանի. և զմի մի յերեսուն մասանցն 'ի վաթսուն ժամն կոտորեն, և զմի մի 'ի վաթսուն ժամուցն 'ի վաթսուն [2] վայրկենի հատանեն. և այսու անձառ ժամուք, անհամար և յանկարծածին բոպէիւք սահմանեցին զծնունդս այնոցիկ՝ որ ծնեալս լինին։

Արդ տեղեկացուք՝ եթէ կարիցէն կալ 'ի վերայ արագախարդաց վայրկենաց ժամուց իւրեանց։ Ծնանի մանուկ գԺուարին երկամբք մօրն՝ որ ծնանին, և կայ մանկաբարձն դեգերեալ, տեսանել թէ արու է ցէ մանուկն, եթէ էգ. կատարեալ կայ լսել զաղաղակ լալոյ մանկանն, զի այն է նշանակ կենաց նորա, և 'ի լալոյ անտի իմանայ՝ եթէ կենդանի իցէ որ ծընեալն։ Արդ զայնչափ ժամանակն քանի՞ արդեւք ըստ պէս համարիցիք անցանել 'ի մասանց բոպէից միոյ միոյ վաթսնիցն [3]. զի մի 'ի վաթսուն մասանցն ունի վաթսնից վաթսուն բոպէ, այսինքն է ական թօթափել։ Եւ յետ այսչափ անցանել բոպէից՝ ասացաւ աստղագիտին յընտանեաց այնմ որ ծնեալն. արդ ո՞րչափ ժամն վայրկենից և բոպէից համարիցի անցեալ աստղագէտն մինչ կայր ուշ ունէր մանկաբարձն լալոյ մանկանն։ Եւ գարձեալ եթէ այլ ուրն ևս գիպեսցի ժաւմաքաշին և բոպէհամանն՝ արտաքոյ տանն որ ծնեալ մանուկն, և 'ի նմին ժամաքաշն բոպէհամար աստեղագիտին պարտ և պատշաճ է բազում փոյթ յանձին ունել՝ առ 'ի գիտել ճանաչել գԺամ մանկանն՝ որ ծնեալն, եթէ 'ի գիշերի իցէ և եթէ 'ի տուէ։ Եւ թուի ինձ այլ այդ. բազում անգամ բազում ժամք

1 Յօր. ասպէզամբն։
2 Յօր. յերէսուն։
3 Յօր. ասա և զկնի վանն։

անհամար բոպէիւք անցանէն, մինչև յայց ելեալ ինդրէ աստեղագէտն գտանել զժամ ծննդեանն մանկանն՝ թէ որ ժամ իցէ։ Եւ զարձեալ թէ որ աստղ իցէ տուիչ ժամանն, և յորում մասանց յերկոտասանից աստեղատանցն երևեցաւ ժամն նորա, և յորում կարգի թուոց նոցա եկաց ժամն յիւրաքանչիւր վաթսուն վայրկենից, յորոց լինի 'ի վաթսնիցն վաթսուն բոպէիցն։ Եւ այս ՝ամ՝, ասէն, նուրբք և առանց հասանելոյ գիւտք անհամար ժամուք յիւրաքանչիւր յաստեղատանցն, որ անուանեալ կոչին մոլորեցուցիչք, լինին, և 'ի սիրոյ և 'ի մերձաւորութենէ զոր ունին ընդ աստեղսն մոլորեցուցիչս, որ անուանեալ կոչին աստեղատունք։ Եւ վասն այնորիկ է, ասէն, մերձենալն և պատահելն նոցա 'ի միմեանս[1], զի ըստ ծննդաբախտն 'ի ծննդոցն հաստատեսցեն։

Եւ մեծաւ փութոնէն զոր ունին յանձինս՝ վերիպէ ցուցեալ 'ի կորուստ մանանէն զժամն իւրեանց։ Վասն զի ընդ վայրկեանս և ընդ բոպէս յաշխարեալ բազմանան և 'ի վերայ նոցա փոփոխմունք ժամուցն և աստանդին[2]. քանզի վերիպեալ զարտուղին խորհուրդք նոցա բազմութիւն արագաշնաց ժամանցն իւրեանց. զի երաշուութիւնն երագափոփոխ ակարկութեց նոցա 'ի յապուշ և յիմարութի կործանեաց զնոսա, և լինել այսպէս կատականաց գատարկացոյց մշանջենաւորութիւն 'ի մտոտիսն։ Օ ի և ես զարմանամ, եթէ զնարդ այնպէս գատարկացեալք 'ի գործոց՝ են միշտ զհետ մտոտեաց առանց ամաթոյ և պատկառանաց. և առաւել աբանչանամ ընդ այնս՝ որ հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել զարի կամ զաղտի կեանս նոցա. զի ցոփաբերանք և թանձրամիտք են, զի ոչ իմանան՝ եթէ զորոյ զհետ երթան և ուր հաւատան զանձինս իւրեանց, մեկնել թէ զինչ կեանք լինիցի նոցա յաշխարհի։

Այս անուն, ասէն, գանգրահեր և ծաւի և փարփաւ է 'ի ծնեալ, 'ի խոյի յաստեղատանն կայր ժամ նորա. քանզի այնպէս է անասունն այն զուարթեւրեաս և մեծ։ Այեծ, ասէն, և Ձոխ լինելոց է՝ որ յայս

1 Յօր. Ի ԴԻՈՆ։ 2 Յօր. ԱՆԴՈՔԻՆ։

պիսի կերպարանս ծնանի, քանզի և խոյն գլխաւոր է հօտին. և պարգևատու և շահաւոր, քանզի և խոյն առանց տրտմութեան մերկանայ յասրոյ անտի իւրմէ, և դարձեալ և անդստին յիւրմէ բնութեան ըստ նմին նմանութեան զգենու հանդերձ հանապազորդ։ Այլ դարձեալ ասեն, թէ որ յեղին աստեղատանն ծնանի, գործուն և հնազանդ լինելոց է, ըստ օրինակի եղին՝ որ միշտ ընդ լծով և հնազանդեալ կայ ի վար։ Այլ որ, ասեն, ի կարգի աստեղատանն ծնանի, մարդասան գայ ըստ օրինակի կարգին՝ որ ի հարկանելն ևեթ կազմ կայ։ Այլ որ, ասեն, ի կշռոց աստեղատանն ծնանի, արդար լինի ըստ օրինակի կշռոց՝ որ զարդարութեան և զատուգութեան ունի։

Այլ եթէ ի խոյէն առնուն աստեղագէտք բաշխել զծնունդս մարդկան, զինչ մատ էցէ խոյն յերկինս, զի անդ մասն ինչ գտանիցի սորա, որ և ի մուտ աստեղ երկոտասան աստեղատանցն համարեալ լինիցի։ Զի ընդ այս աստեղատունս, ասեն, անցանէ արեգակն ի ժամանակս գարնանոյ, և ընդ կշռոց և ընդ եղին և ընդ ամ մասունս բոլորակի պատկերացն՝ որ կոչին աստեղատունք։ Զի թէ յերկնից դնեն աստեղագէտք զսկիզբն ծնողաց, զպատճառս ամ իրաց՝ որ լինելոց են մարդկան, զինչ պիտոյ եղև զկերպարանս անասնոցն՝ որ առ մեզ ճարակեն՝ նկարել յերկինս և մեկնել ի նոցանէ զծնունդս մարդկան և զդէպս նոցա։ Զի խոյ անասուն է յանասունս, որ առատաբեր է ասրոյ. ոչ վասն զի ունի զայս տալ բնութեամբ, մասն և տեղն ունիցի ի յերկինս. զի ամ ոչխարի նոյն բնութեան է։

Այլ ցերբ վերիպեցուցանիցեն աստեղագէտք ըզմարդկութիս. զի դնեն երեսս պատուականս զանուն աստեղացն, և զմեկնութեն իրացն յանասնոցն՝ որ առ մեզս բառաջեն՝ առնեն։ Զի թէ յանասնոց առնու երկինք զօրութեն՝ գիտել և ճանաչել զդէպս և զկիրս մարդկանս, ապա և երկինք հնազանդեալ են այլոց պատճառականաց, զի ի խոտակեր անասնոցն առցեն սկիզբն իրացն մեկնութեն։ Այսպէս եթէ ծաղուս արժանի է այս, զի յիմաբէ՝ որ յերկինս չէ մատ և ոչ հաղորդութեն բնութեամբ ինչ ունի ընդ նոսա՝ ժարհել տալ

հաւանութիւն անհամ և ստայօդ պատմութեամբքն։ Որոց իմաստութիւն իւրեանց և ինքեանք սարդիոս-տայնի և սարդից նման են. զի մէիս միայն և Ճանճ, և ինչ որ սոցին նման է տկարութիւն, ըմբռնին նովաւ և կապին. և յորժամ զօրագոյն ինչ քան զնոսա եկեսցէ յարեսցի 'ի տորդս սարդիոստայնի բարակա-ման և կթուլիցին առնջոյն անՁան և անխափան պա-տառէ զնոսա և ապականէ։

Այլ ոչ միանգամ ցայս վայր ՃգԷն զանհամ պատմու-թիւնսն, այլ մինչև ցայս՝ որ ամենեցուն յայտնի է, զի տեառքք եմք մտաց և գործոց մերոց, և այսր ժամբր-հին լինել խափանիչք, յասելն՝ թէ բարիք և չարիք ոչ 'ի կամաց մարդկան լինին, և պատՃառք նոցա յերկնից կախին. զի անտի, ասէն, լինին մարդիկ բա-րիք կամ չարք։ Դարձեալ և ընդդէմ այսց ասել՝ որ անչափ ծաղռս արժանի են, գործք աւելի համա-րեալք. բայց քանզի բաղումք ըմբռնեալք և կապեալ կան 'ի մոլորութիւն նոցա, չէ պարտ և պատշաՃ մեզ անփոյթ առնել և լռել։

Ա.յլ նախ զայս հարցցուք, եթէ որպէս ասէնն՝ հանապազ բիւրաւոր կերպարանս փոխիցէն աստեղք առ միմեանս. զի որ մոլորեցուցիչքն կոչին, հանա-պազորդ գնացս ունին, և կէսքն երագընթաց գնա-ցիւքն հասանեն միմեանց, և կէսքն մեղմագնաց գնացիւքն յամին և անագանեն. և 'ի միւսմ յան-կարծելիեաց ժամու տեսանեն զմիմեանս, և դար-ձեալ՝ ասեն՝ զօրեալ թաքչին 'ի միմեանց. և որպէս ասեն՝ զօրուն իմն մեծ ունին գնացք նոցա, և ծնրն-դաբաշխ ծննդոց կազմեն։ Այլ է տեղի, ասէն, որ տեսանէ աստղ բարի զընկեր իւր, զծննդեանէ բարե-գործի [1] յայտ առնէն. և 'ի միւսում տեղւոջ, ասեն, ուր դիպեսցի աստղ չար իւրում ընկերի, զծննդեանէ չարագործի յայտ առնէ։ Այլ է, ասեն, մեւս ևս տե-ղի, եթէ դէպ լինիցի անդ երևիլ բարիոք աստղ, առ-նեն զերևեալ բարի աստեղն [2] ծնունդ թշուառականի. և յորժամ ոչ կարէն հասու լինել բոպէիցն ստայօդ ակնարկութիւք իւրեանց, ածէն դիպեցուցանեն բարի աստղ ծննդեան թշուառականի։

1 Յօր. Բարեգործէ։ 2 Յօր. ասպէ։

Այ արդ զինչ արարից, զի իբրու հարկ իմն հա-
մարիմ երկրորդել զանհամ պատմուիս նոցա. քան-
զի որպէս վերիպեալք են ստայոդ Հառքն նոցա 'ի մնաց
ձնմարտութեան, նոյնպէս անքաւ բաղում են ամբարշ-
տութիւք նոցա։ Օ՛յ ոչ ածէն զմտաւ, թէ արդա-
բև՝ որպէս ասեն՝ աստեղք իցեն պատճառք չարեաց,
առ այն՝ որ արար զնոսա՝ ընթանան պատճառք չա-
րութեան նոցա։ Այանզի եթէ 'ի ինքն չարք իցեն, յոյժ
չար է և արարիչն՝ որ արար զնոսա. և եթէ արձակ
կամն ունիցին լինել չարիք, եթէ այդ այդպէս իցէ,
կենդանութիւնն ունին զչարժումն, և հանձար է ընտ-
րողութիւն 'ի զնացսն իւրեանց. ապա և նահանջել
զգնացսն յանդուգն չարութեանցն իւրեանց կարողք
են։ Այ զայս ասեն զաստեղաց, և այսպիսի իրաք
բամբասելն զանշունչսն և զանմեղունչսն մոլորութիւն
մեծ է։ Որչափ ինչ արդեւք վերիպեալ գտան վար-
դապետք անհամ ուսմանն ստայոդ արուեստին. և զի
բարիքն և չարիքն, ասեն, ոչ որպէս արժանի իցեն որ
առնուն զնոսա՝ բաշխին, այլ որպէս դիպեացի ատտն՝
որ և իցէ 'ի տեղւոջն յորում և դիպիցի։ Բարե-
գործ լինելոց է, ասեն, որ ծնանելոցն է 'ի սակա-
ւիկ ինչ բոպէիցն այնր ժամու. և քանզի ընդ այլ
կողմ լինին հայեցուածք նորին աստեղն, չարագործ
լինելոց է՝ ասեն՝ որ ծնանիցի 'ի փոխել ևս միւսոյ բո-
պէի. և դարձեալ եթէ սակաւիկ ինչ թիւրեսցէ նոյն
աստղ զշարժումն և զդէմն իւր, փոխի՝ ասեն՝ չարա-
գործաբաշխ բոպէն։

Այդ եթէ այսչափ անհամար բոպէիւք և անչափ
վայրկենաւք արագափոխ ժամուցն լինիցի փոփոխումն
աստեղացն կերպարանաց 'ի բեւր ազգի գնացս և 'ի
շրջանս, որչափ արդեւք թագաւորք ծնանին հանա-
պազ 'ի փոփոխմանցն, որ լինին ըստ պէսպէս կերպա-
բանաց աստեղացն։ Այդ ընդէր ոչ հանապազ ծնանի-
ցին թագաւորք, և վասն էր 'ի հարց առ որդիս կար-
գի գայ ժառանգութիւն թագաւորաց. քանզի ոչ ոք
երբէք 'ի թագաւորաց պահեաց գտանել զժամն որ-
դւոյ իւրոյ աստեղաքն՝ տեսանել թէ հասանիցէ նմա
վիճակ թագաւորութիւն, եթէ ոչ. և ոչ 'ի ծառայից
ոք երբէք եղև տէր, թէ զայս այսպէս մեկնիցեմք։

Ա.յլ աւասիկ տեսանեմք, զի Ողիա ծնաւ զՅովաթամ, և Յովաթամ զԱքազ, և Աքազ զՀեզեկիա։ Այլ զիմբդ արգելեալ ոչ ոք պատահեաց ժամանակ[1] ծննդեանն ծառայութեան միում ումեք յայսոց թագաւորաց, որ կարդ ըստ կարգի թագաւորեցին։

Այլ եթէ դարձեալ, որպէս և ասեն, չարեաց և բարեաց[2] ոչ 'ի մէնջ է յօժարութիւնն և ոչ առ 'ի մէնջ լինի սկիզբն նոցա, այլ ծնողաբաշխ ծննդոցացն, ակամայ կամովք մերովք. թէ այդպէս իցէ, ապա աւելորդ են և օրէնքն որ դնեն սահմանս և պատուիրան զոր ինչ արժան է գործել և զոր ինչ ոչ։ Աւելորդ են դարձեալ և դատաւորք, որ պատուէն զաղբեգործսն և առնեն պատիժ չարագործաց արդար դատաստանովք. քանզի ըստ[3] բաշխին ծննդոցացն՝ ժողովութիւն և չարութիւն գողացն ոչ յիւրեանց կամաց է, և ոչ անօրէնութիւն սպանողին իւրով յօժարութիւ. զի ոչ եթէ և կամէր արգելուլ զձեռս 'ի սպանանելոյ, կարէր[4] ապրել 'ի չարիսն գործելոյ, զի բնութիւն ծննդեանն իւրոյ հարկ առնէր նմա գործել 'ի գործ սպանութեան։ Այս և մեծ վաստակն արուեստագիւտաց ընդ ունայնս ցրէր[5], և վարն և աշխատութիւնն մշակացն անօգուտ եր. զի իբրև ոչ կարկառեցեն ըզձեռս 'ի գործ, գայցէ դարման կենաց իւրեանց առանց մուրակ շրջելոյ։ Այս վաճառականի նոյն կամք էին, եթէ գայցեն դիպեացին նմա շահքն բազում մեծութեամբ, յորժամ խաղաղ նստիցի յաշխատութիւն ճանապարհաց, եթէ 'ի բաշխիցն բախտ ժողովիցին նմա մեծութիւնքն ձրի։

Այս եթէ ընդ արգարութեան՝ զոր փորձէին մարդիկ, ոչ լինէր նոցա պատիւ և պարգև, և ոչ պատիժ և դատապարտութիւն չարագործացն, ապա 'ի զուր և ընդունայն է յոյս քրիստոնէից. և առանց սանձաց նահանջելոյ ընթանային ամենեքին յամբարշտութիւն. զի ոչ գոյր վրէժխնդիր՝ որ խնդրէր զվրէժ չարեաց գործոց. քանզի ոչ մերովք կամք լինէին, որպէս ասեն մոլորեալքն. և զոր ինչ ոք յիւր կամն ոչ գոր-

1 Յոր. դիմանաւ։
2 Յոր. 'ի չարէաց և 'ի բարեաց։
3 Յոր. ընդ։
4 Յոր. կամէր։
5 Յոր. ընդ ուսեալն աւարեր։

ծիցէ, զնարդ ընդ այնր կրիցէ պատուհաս. և ուր հարկ և ծննդաբաշխ բանսն ունիցին իշխանութիւն, չկր տեղի վրէժխնդրութիւն անօրէնութեան, թէ արժանի գործոց իւրեանց առնուցուն զկատուցումն չաբարգործք արդար դատաստանովք։ Շատ և բաւական լիցին մինչև ցայս վայր որք ասացան՝ ընդդէմ ՃՐՇմարտակորոյս վրիպելոցն. զի չէ ինչ օգուտ՝ թէ և այլ զոյն յաձախեսցուք ձեզ. զի կամքն այ ձեր ողջմտութիւնդ 'ի ձեզ հաստատեալ կայ, և նա և ոչ ժամն հրամայէ անցանել ըստ սահմանի կարգեալն պիտոյից։ Եւ արդ անդրէն 'ի նոյն ՃԱՌ գրոցն դարձցուք։

"Լղեցին, ասէ 'ի նշանս և 'ի ժամանակս, և յաւուրս և 'ի տարիս"։ Մեկնութեան[1] նշանացն եղև կատարումն առաջին բանիւքն. ասասցուք արդ վասն ժամանակացն՝ որ էն փոփոխմունք օդոց և գնայք ժամուցն, և երևիլ սառնասառոյց սառնամանեաց ձմերայնոյ, և քաղցրախառն հնձել օդոյն գարնանայ, և բոցախառն հրատք տապոյ ժամանակաց ամարայնոյ, և մեղմախառն ցրտութիւն ժամանակաց աշնայնոյ. և զի՝ այս ՅԱՄ փոփոխմունք ժամանակաց աստիճանացս արդարագնացիւք լուսաւորացն շրջեալ անցանեն 'ի վերայ մեր կարգ ըստ կարգի յօրինեալ յարդարմանէ՝ ըստ ակնարկելոյ զօրութեանն որ պատշաձեաց գնոսա յիւրաքանչիւր կարգս և 'ի ժամանակս։ Օ՛ի ձմեռն այսպէս լինի, յորժամ հեռանայ մերժի ինքնել արեգակն՝ 'ի հարաւ մշանջենաւորէ զշնացս իւր, յայնժամ յաձախեալ բազմանայ աստ 'ի մերում կողմանս երկայնութիւն ստուերացն գիշերոյ, որ է խաւար։ Եւ յիջանել արեգականն 'ի հարաւակողմ կոյս՝ հնձեն ցրտաշունչ սառնամանիք ընդդէմ օդոյն՝ որ տաբաձեալ կայ զերկրաւ[2]. և 'ի պատձառ շրջոյ խոնաւութեան՝ որ զարթնուն 'ի վերայ երկրի, առնին անձրևայոյզք և թանձնկեցք և բալաձիգք և ձիւնաբերք։

Եւ դարձեալ յորժամ սկսանի արեգակն աստիճանել՝ և առնել 'ի հարաւակողմն կողմանց գալ հասանել 'ի հասարակած հաստատութեան երկնից,

1 Յոր. ԴԻՒՐՔ։ 2 Յոր. ԷՐԻՐԱՒ։

զհաւասարութիւն տուրկիան և գիշերոյ կատարել իւրով յօրինեալ գնացիւքն։ Այլ մեծասքանչ զարմանալեօք բաժանին կարգ ժամանակաց. և որչափ վերացան ելցէ արեգակն փոփոխելով զգնացս իւր 'ի ծագելն յերկիր, և 'ի նոսին զետղ առեալ դադարեսցէ, նշանակերտ յօրինուածով յարդարէ ըստ իւրաքանչիւր ժամանակաց։ Այլ այնպէս քաղցրանաւան յօրինուածով յարդարի գարունն իւրով մեծագեղ վայելչութեամբն. զի 'ի նմա արձակեն արմատք ըզբոյսս, և մարգք զուարճանան, և ծաղիկք պայծառանան, և տունկք ցոլցուին, և ծառք արձակեն զտողբոլոր իւրեանց, և անասունք երկրի հանդերձ թըռչնօք, և ծովային և ջրածնունդ զեռունք, գան ամենեքեան հասանեն ըստ իւրաքանչիւր աղգաց 'ի ծընունդ և 'ի սեր և 'ի մուտ։

Այլ յետ այսորիկ դարձեալ սկսանի մտել դալ արեգակն 'ի փոփոխմունս ամարայնոյ. երևեցուցանէ զգնացս իւր 'ի կողմանս հիւսիսոյ, ձգել երկայնացուցանել զաւուրսն։ Այլ քանզի յամրաշնաց[1] ժամովք անցանէ զօդովք, յերկարաձիգս գնացիւք ջերացուցանէ 'ի վերոյ զօդս, և ծծէ 'ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, առնի գործակից և վաստակակից սերմանեաց՝ պաշտել զպէտս նոցա. սնդէ և սպարէ, զի եկեսցեն հասցեն 'ի կատարեալ չափ իւրաքանչիւր մնդոց. նոյնպէս և զպտուղս ծառոցն ձեպէ աձեցուցանէ 'ի հասուցանել զպտուղս։ Այլ յորժամ զգենու արեգակն զկիրպարանս բոցոյ հրոյ տարերց տապովք, սկսանին փոքրկանալ ստուերքք[2] տարերց երկրի և կարձել շուքն հասարակաց 'ի միջօրեայ ժամանակի, յորժամ 'ի վերին բարձանցն ծագեսցէ զլուցաձաձանչ Ճառագայթսն։ Այլ աւուրքն երկայն լինին, յորժամ ստուերքք տարերցն կարձ լեցին. և յորժամ երկայն իցեն ստուերքն, աւուրքն փոքրանք լինին։

Այլ աստ մեզ՝ որ 'ի կողմանս հիւսիսոյ բնակեալ եմք, այլ ազգ անկանին 'ի մէջ ստուերքն, և յայլում աշխարհի միոջ այլ ազգ։ Զի զերկուս աւուրսն յամ տարւոջ 'ի միջօրեայ ժամանակին առանց ստուերի

1 Յոր. յարմարագնոյ։ 2 Յոր. խորխանան գարերք գարերոյ։

լինին, քանզի կշիռ 'ի վերայ գլխոյ ամենեցունց է Ճառագայթք արեգականն, և հասարակ ամենեցուն յամ՚ կողմանց արկանէ զլոցաՃաՃանչ նշոյլս պայծառութեանն, մինչ զի և 'ի ներքին խորս ջրհորոցն ընդ նուրբ և նեղ բերանն մտանէ և լուսաւորէ։ Այս ոմանք այսպէս անուանեն զաւուրսն՝ անստուեր միջոցեայ։ Այս այլք՝ որ 'ի հեռաւոր աշխարհի ճնակեալ են, որ է անդր քան զերկիրն՝ ուստի գան խունկք անուշահոտութեամբ, և ստուերք հասարակաց մարդկանն յերկոցունց կողմանցն երևին։ Այս այսպէս անուանեն զաւուրսն՝ երկրստուերեան աւուրք։ Այս այս ամ՚ 'ի փոփոխելոյ զգնացս իւր արեգական 'ի հիսիսի լինի։ Այս յայսցանէ պարտիմք իմանալ զլոցախառն Ճառագայթից արեգականն՝ որ անկանի զոգովք, եթէ որչափ օգտութիւն ունին, և որչափ կատարումն պաշտաման առ ամ՚ իրս։

Այս իբրև հասուցանէ 'ի կատարեալ չափ մենդեանն զսերմանիս և զմիրգս, ապա սկսանի առ սակաւ սակաւ մեղմանալ 'ի բոցաՃաՃանչ տապոյն։ Սկսանի այնուհետև մերձենալ աշունն, ցուցանել 'ի նմա զմեղմախառն զգնացս իւր, և գայ հասանէ այնուհետև քաղցրախառն յօրինուածովք՝ որ ունի զմիջնորդութիւն. և ըստ աստիՃանելոյ սակաւերևեաց նշանակ ցրտոյ՝ կարգին մտանեն այնուհետև սառնատաղոյց սառնամանիք ձմերայոյ, 'ի շրջել արեգականն՝ որ ի ջնանէ մեղմով 'ի կողմանց հիւսիսոյ երթալ երևեցուցանել զգնացս իւր 'ի կողմանս հարաւոյ։ Ելդ այսպիսի փոփոխմամբք ժամանակաց և գնացիւք շրջանաժամուց վարի աշխարհս ակարկեալ արարչին։

"Այս եղիցին, ասէ, յաւուրս"։ Ոչ զի աւուրս կատարեսցին, այլ զի եղիցին սկիզբն աւուրց։ Քանզի զի լինելն տուընջեան և գիշերոյ երեց է քան զկազմելն [1] լուսաւորացն. որպէս ուսուցանէ զմեզ Սաղմոս վասն լուսաւորացն յասելն, թէ Ելբար զարեգակն իշխանական տուընջեան, և զլուսին և զաստեղս իշխանական գիշերոյ։ Ելդ ի՞ [2] ունի արեգակն իշ-

1 Յօր. վասելն։
2 Յօր. որդիս. եդաք ըստ լուս. և ըստ յոն։

խանութեն տուընջեան , եթէ ոչ զլոյս իւր ցուցանէ 'ի նմա գնացիւքն : Եւ զոր յորժամ վարեսցի արեգակն երևել 'ի վերայ օդոյս՝ որ է սահմանիչ , մերկացու-ցիչ խաւարահալած տուընջեամբքն լինի . քանզի ոչ անցանէ այն՝ որ սովուն հաստատեալ է : Եւ կոչեաց օր զօդն , որոյ արեգակն է լուսաւորիչ . զի օրն մասն ինն և չափ մի է ժամանակաց , յորժամ 'ի վերոյ քան զկէս գնդին առնիցէ արեգակն զգնացս իւր :

Դարձեալ և 'ի տարիս եդան լինել արեգակն և լուսին . քանզի լուսին , յորժամ երկոտասանիցս կա-տարէ զընթացս իւր , 'ի տարին մի կատարէ , մնա-ւանդ ամամտիւն և ստեպ միտ գնեալով ընթացից ժամուց նորա արժանաւոր փուութով ըստ օրինակի թուոցն երբայեցւոց , որ կատարեն զընթացս տարւոյն 'ի հին կտակարանաց . և ըստ օրինակացն Յունաց , որ ըստ թուոյ նախնեաց իւրեանց համարին զտարին արեգական 'ի հասանել՝ 'ի կիսէն մինչև 'ի մեւս կէսն , նշանակել զընթացից շարժմանցն՝ զոր ունի արեգակն . նոյնպէս առնի նոքօք կատարումն տա-ւրոյն իւրոյ :

" Եւ արար , ասէ , ՀԱԾ զլուսաւորս մեծամեծս " : Եւ միտք բանին որ ասէ՝ թէ մեծամեծս՝ այսպիսի իմն են . իբրու թէ ինչ մի միանձնութիւն մեկնակի մեծ է , իւրով բնութիւնքն ըստ միանձն մեծութիւն երկնի և երկ-րի և ծովու . իսկ այլքն , որ կոչին ևս մեծամեծք , ըստ օրինակի բնութեցս՝ որ գտանին առ մեզ են մե-ծամեծք քան զընկերս իւրաքանչիւր : Որպէս զի մեծ իցէ ձի քան զձի և եղն քան զեղն , ոչ եթէ ըստ մե-ծութիւն այլ ինչ տարբեր [2] , այլ ըստ հաճելմատութիւն իւրոյ ընկերին ասի մեծութիւն նորա : Իսկ արդ զիարդ ինչ կարծեսցուք զիմեքէ՝ որ մեծն ասիցէ . միթէ որ-պէս մեծ իցէ մրջիւն քան զմրջիւն , կամ որպէս ինչ որ բնութիւն մի իցէ և անձամբք բազումք , և բազում փոքունք քան զընկերս իւրեանց . այսպէս անուանեմք մեծամեծս զմեծամեծն քան զփոքունս իւրեանց : Նոյնպէս և զմեծութիւնն լուսաւորացն այսպիսի կար-ծիս պարտ ինչ իցէ կարծել , որոց մեծութիւն ինքեամբք

1 Յօր. 'ի հաստատել: 2 'Ի լուս. յորմէր :

և իբրեանց կազմուածոյն երևին։ Այլ արդ ես զայս[1] կարծեմ ընդունել, եթէ ոչ որպէս աստղ քան զաստղ մեծ է, այսպիսի իցէ և մեծութիւն լուսաւորացն, այլ այնպիսի ինն մեծատարած մեծութիւն ունին՝ որ բաւական են լուսաւորել առ հասարակ զամ լայնատիւռ լուսաւորութեամբն, և ծագել ծաւալել միանգամայն 'ի վերայ ամ կողմանց, յերկինս և յերկիր և 'ի ծովս, և շուրջանակի յամ ծագս երկրի։ Այլ քանզի զամ բոլորն բոլորակ երկնից տարածանին ունին լուսաւորքն 'ի ծագելն և 'ի մտանելն, և զամ վայրս միջավայրացն իբրև զմի ինչ ունին միանգամայն, վասն այնորիկ հասարակ ամ մարդկան միապէս միով կերպարանօք երևին։

Այլ ունիմք օրինակ պատշաճ Ճառիս Ճշմարիտ վերայութիւն վասն առաւել մեծութեան լուսաւորացդ, զի չիք 'ի նոսա դրոշմ ինչ և կամ նշանակ՝ որ ցուցանէ զփոքրութիւն կամ զմեծութիւն նոցա յամ մեծատարած վայրս աշխարհիս. զի ամ ինչ որ 'ի հեռաստանէ երևեսցի մեծ, թէպէտ և մեծ իցէ յիւրում տեղւոջ՝ մեղ իբրև զփոքր ինն թուի. և յորժամ սկսցուք մօտ երթալ 'ի նա, ապա տեսանեմք զմեծն՝ զի մեծ է և ոչ փոքր։ Իսկ առ արեգակն չիք ոք որ մօտ իցէ կամ հեռի, այլ միով հաւասարութիւն միատարր 'ի վերայ ամի մասանց աշխարհիս ցուցանէ զծագումն Ճառագայթից իւրոց, և այս է օրինակ Ճշմարիտ։ Զի որ քնակեալ իցեն անդ յաշխարհին Հնդկաց և կամ աստ 'ի Իսիբիտոնի աշխարհիս՝ միով հաւասարութիւն միակիրս տեսանեն զծագել արեգականն. զի ոչ յորժամ մտանէ առ արևմտեայս՝ նուազի ինչ 'ի մեծութենէն անտի առ արևելեայս, և ոչ յորժամ ծագէ առ քնակեաց արևելեայց՝ թերի ինչ և պակաս երևեսցի քնակացն արևմտեայցն. և ոչ յորժամ գայ հասանէ 'ի հասարակած երկնից՝ փոխի ինչ 'ի կերպարանացն զոր ունէր։

Արդ մի խաբեսցէ զքեզ սակաւատեսութիւն նորա որ երևի, և մի վասն զի չափ կանգնոյ միոյ երևի շուրջանակի շրջան նորա տեսողացն, կարծեսցուք՝ թէ

1 Յօր. այս։

այնչափ միայն իցէ։ Օ՜ի մեծամեծ իրք՝ որ 'ի բաց ոստ նկնատեսակ[1] երևին, մեծայաղթ տարերքն նոր ցա իբրու սակաւիկ ինչ երևին տեսլեան ական. քանզի զի քայքայի սակաւ տեսիլ ական 'ի տկար զօրութիւն լուսոյն՝ զոր ունի, և չառնի բաւական ձգել հասուցանել զՀայրեցուածս իւր յերկայնաձիգ վայրսն՝ որ կան 'ի միջի. այլայլի պչրեալ տեսիլն, և զլոյսն իբրև զմնայլ ինն տեսանել. և յորժամ կարի քաջ զաչս 'ի վերայ եդեալ պչնուցու ընդ երկար հեռաստանն, սակաւիկ ինչ տեսանել 'ի մեծութենէ անտի, և հաւմարի՝ թէ այնչափ միայն իցէ որ երևեցաւն։ Բայց գիտասջիր՝ թէ կարիք տկարուն մարդկուս փոքրկացուցին զմեծատարը մեծութիւնն՝ որ երևեցաւն 'ի հեռաստանէ, ստեաց խաբեաց ակինն, զի մեծ ինն իբրև զփոքր ետես. չէ՞ Ճշմարիտ տեսիլն այն. քանզի չէ հնար մարդոյ 'ի հեռի վայրաց Ճշմարտիւ զերան նրշմարել։ Ցիշեսցուք այսուհետև և զընտաբոյս կարիս մերոյ մարդկութեաս, և ահա ուսանիմք 'ի մտաց մերոց զՃշմարտութիւն իրացն՝ որ պատմեցան։

Ցիցէ՞ արդեւք տեսեալ քո 'ի բարձրաբերձ բարձրավանդակաց զդաշտ ընդարձակ և մեծանիստ, յոլովմամ վարիցին[2] հարկիք եզանց 'ի բացավայրի ուրեք. զկարդ արդեւք թուեսցին քեզ հանդերձ եզնոց ողանան[3] որ վարիցեն զնոսա, այլ թերևս իբրև զմիրջինս գեռնագնացս, յոդոյ անտի՝ որ այլայլեաց զտեսիլ աչաց քոց։ Եւ կամ ցիցէ՞ տեսեալ 'ի գլխոյ բարձրացեալ լերինն զծուլ մեծ իւրով մեծանիստ լայնութեամբն, և հայեցեալ պչուցեալ ընդ նա և ընդ կոգզիսն՝ որ իցեն 'ի միջի նորա. ոչչափ ինչ փոքր արդեւք երևեսցին քեզ մեծութիւնք նորա. և կամ յոչչափ սակաւութի տեսանիցես զմեծութի նաւու, որ բարձեալ բերիցէ աղխաղխեալ օդերձեալ զլաղմաշահ վաճառսն, հանդերձ սպիտակ առագաստիւն՝ որոյ խորշ առեալ՝ գոգ գործեալ տանի զնա յարշաւանի, ձեռեալ ճօճեալ 'ի վերայ վայելուչ ջուրցն մկանաց. այլ թերևս իբրև զձագ մի աղաւնոյ տեսանիցես ըզ-

1 Յօր. սխնոգէսակ։
2 Յօր. Վարեցին։
3 Յօր. էն ողղանան. այլ 'ի լուս. ողանան։

նաեւ ակաղձուն, յայլայլել օդոյն՝ որ քաջայէ զոհ-
սիլ աչացդ լուսաւորաց, որ ոչ ետ Ճշգրտիւ նշմարել
զտեսիլ իրացն լուսաւորաց. քանզի չառնի բաւական
լոյս աչացն զՀեռաւորսն իբրև զմօտաւորս տեսանել։
Օ ի զերկնս բարձունս և զմեծամեծս, որ զատեալ
և մեկնեալ են 'ի միմեանց խորաձորովք, յորժամ
հայեցեալ տեսանիցեմք 'ի հեռաստանէ, այնպէս տե-
սանիցեմք՝ եթէ շրջանս առեալ գայցեն շուրջ զմեզ.
քանզի այլայլի տեսիլ աչացն երկնահայեաց տարա-
ծիւք, և վատեղ զօրութիւն լուսոյն աչացն, և ոչ կարէ
Ճշգրտիւ նշմարել զկոորաձորոցն անջրպետսն։ Այլ ոչ
զկերպարանս և զնշմարանս տարերցն կարէ նկատել
հաւաստեաւ 'ի հեռաստանէ. զի աշտարակքն չորեք-
կուսիք՝ բոլորակք երևին, և այնպէս թուին՝ թէ
շուրջ գայցեն. և մեծութիւք՝ ետեղակալք տարերց
'ի բացուստ իբրև շարժունք երևին, և ոչ որպէս հաւ-
աստեալ կան՝ 'ի տեղւոջ՝ նովին կերպարանօք երևին
'ի հեռաստանէ։

Այլ յայսմ ամէ յայտ է, եթէ մեծ է արեգակն
ըստ վկայութեան գրոցն՝ որ եղև 'ի վերայ Նոյա, և բիւ-
բապատիկ և անբաւ մասամբք մեծ է քան զայն, որ-
չափ երևի։ Այլ յայսմ օրինակէ յայտնի 'ի միտ առ՝
զինչ չափ է մեծութիւն Նոյա. տես որչափ բազմութիւն
աստեղաց են յերկինս, և ընդ ամենեսեսեան ոչ են բա-
ւական լուսաւորել զտիւր տրամութիւն գիշերոյն,
և արեգակն միայն միով անձամբ, յորժամ երևի և
տարածեսցէ 'ի վերայ օդոյ զլոյսն, զամ սահմանս աշ-
խարհիս միանգամայն լուսաւորէ, և զայս ամ տեսու-
զաց՝ որ 'ի Նոյա հանդիպումն կարկառեալ յառեալ
հայեսցին։ Այս և մինչ չեւ երևեալ և ընդ երկիր ծա-
ւալեալ իցէ քաղցրահայեաց Ճառագայթիւքն, ցրուէ
մաշէ զխաւարն, և հետակորոյս առնէ զաղջամուղջն,
բառնայ զտխուրն տրամութիւն, և 'ի տարածեալ մե-
ծապայծառ լուսոյն ծածկէ զլուսաւորութիւն աստե-
ղացն. և զթանձրամած օդոյն զստուերն մերկանայ
յերեսաց երկրէ, և զխաւարն մթապատ հարածա-
կան 'ի տիեզերաց երկրէ։ Այլ ընդ նմին օդ քաղցրա-

1 Յոր. ԺԸ--ԺԹ։ 2 Յոր. Ի։

չունչ հնդէ ընդ առաւօտս յաշխարհի, և ընդ արևա-
ծայրս լուսաւորին՝ արկանէ ցօղ մանրացօղ ի ժամա-
նակս ամարայնոյ ընդ ամ երեսս երկրի։ Այլ ուստի՝
կարող է լուսաւորս այս զանչափ մեծութիւն երկրի
միոմն երևեալով յանկարծածին ժամուն լուսաւորել,
եթէ ոչ զի 'ի բարձրացեալ բարձանցն՝ որ ունի զմե-
ծատարած բոլորն բոլորակ, զանչափ Ճառագայթսն
լուսոյ արձակէր։

Այլ ուսիր յայսցանէ զմեծաքանչ իմաստութիւն
արարչութեան Ճարտարապետին արարածոց. զի՞նդ
այսմ մեծի լուսաւորի յօրինուածս չափով է տուեալ
զվերմութիւն հասարակ առ ամ մեծամիգ ծոց աշ-
խարհիս. զի զհուրն և զլոյսն միակիւռ խառնուա-
ծովք խառնեաց արկ 'ի նա, զի մի բազմութիւն հրոյն
խարշեսցէ զերկիր, և մի պակասութիւն նորա ցրտա-
ցուսցէ զերկիր և լինիցի անբոյս և անպտուղ։

Զարձեալ և Ճառք պատմութիւն լուսնին մեծ էն
'ի սոյն միտս՝ որ պատմեցան զարեգակնէ. զի մեծ է
ամենն լուսնի, և յետ արեգականն և նա լուսաւո-
րիչ է աշխարհի։ Այլ ոչ հանապազ լիով երևի լու-
սին 'ի լոյսն իւրոյ մեծուն. այլ երբեմն կատարեալ
լինի բոլորն, բոլորակաւ երևի լոյսն իւր, և երբեմն
պակաս է և մաշեալ 'ի լուսոյն։ Զ պակասութիւնն
իւր նախ ցուցանէ լուսին 'ի վերայ միոյ միոյ կողմանց
իւրոց. զի յորժամ առնէ մի կողմն, մեւս կողմն զնա-
նակ աղջամղջին ցուցանէ. դարձեալ և յորժամ սկը-
սանիցի պակասիլ՝ մի կողմն ամփոփի ինքն յինքն, զի
ծածկեսցի 'ի մի կողմն։ Այլ յորժամ սկսանիցի ե-
րևիլ յարևմտից, յարևելս կոյս ցուցանէ զհայե-
ցուածն բոլորն բոլորակ. և յորժամ յարևելս սկսա-
նիցի մաշիլ, յարևմտաս կոյս ցուցանէ զմահիկ եղ-
ջերան։

Յայսմ ամ մեծասքանչ զարմանալիս և պէսպէս
փոփոխմունս՝ զոր տեսանեմք 'ի նմին Ճառիս զիմաս-
տութիւն արարչին դրոշմեալ, և յայտնի օրինակաւ՝ որ
նկարեալ կայ առաջի աչաց մերոց, մեհնութիւն բնաւ
մերոյ յայտնի լինի, թէ չէք ինչ 'ի մարդկանէ՝ որ կաց-
ցէ ինասցէ առանց անցանելոյ։ Այլ որպէս յոչնչէ է-
ղէն որ եղէնն, և առին զկատարումն, զի յիւրեանց

դարձցին, նոյնպէս ըստ պատուական կերպարանացն՝ զոր զգենլոց են՝ առնուն զաչմունսն մնդեան, որում ոչ տիրէ ապականութիւն։ Եւ դարձեալ յորժամ դարձեալ առ սակաւ սակաւ սկսանի լուսինն պակաս ել, մաշի պակասի սպառի, զի յայսմ կերպարանաց լումի առցուք խրատ բնութեան մերում։ և յերա-գայեղ բնութեանց փոփոխմանց՝ որ միշտ առ մեզ և զմեզ շրջին, ստասցուք հանձար իմաստութեան։ Օ յ յորժամ վայելեցեմք հանգստեամբ անցաւոր իրօք աշխարհիս, մի մոռասցուք զանձինս մեր, և մի կաց-ցուք ի միտս ամբարշտութեան, որ անցանեն ըստ չափ պայմանի մերոյ։ և մի յուսասցուք ի զօրութիւս ի-խանութեան, և արասցուք փնաս կենաց մերոց։ և մի հպարտասցուք ի մեծութեան և պատրեսցուք զբօսա-նօք նորա, զի ազգի ազգի փնաք՝ որ և ի միտս ան-գամ ոչ անկանին՝ ծածկեալ կան ի նմա։ Եւ զայլ դարձ-ցուք հայեսցուք ի մարմնոս մեր, որ եղծանելոց է ի մատոյ և մոռանելոց է ի պահանջմանս արդար դատաս-տանին։ և հոգասցուք զշահաւոր հոգս հոգւոց, որոց կան մնան անխափան առանց եղծանելոյ բարուեան։ Եւ եթէ տրտմեցուցանէ զքեզ լուսինն մաշելովն և պակասելովն առ սակաւ սակաւ ի լուսոյ անտի իւր-մէ, առաւել ընդ այն տրտմեաջիր՝ եթէ չիցեն հո-գիքդ համբարեալ հաճոյիւքն այ, և առ ի ծուլանէ և ի յուլութենէ պակասեալ գտանիցիս յամպակաս երանութեան։ Եւպա եթէ այսպիսի ինչ միտք գտա-նիցին ի քեզ, և եթէ ի բարի ինչ և ի հաւատա-ցիսի ոչ կամեսցիս կալ հաստատեալ, այլ վաղվաղակի ի պարտութիս կործանեալ գտանիցիս, ունիս քեզ նմանութիւն զլուսին ըստ բանի գրոյն, զի ասէ՝ թէ Եղգամն իբրև զլուսին փոփոխի։

Ի փոփոխմունսն՝ որ լինին ի լումի, անասունք զլուութեն առնուն, և տունկք օգնականութեան գտա-նեն աչմանն մնդեան իւրեանց։ քանզի ի մաշելն այլ ազգի գտանին, և ընդ աչելն այլազգ փոփոխին։ զի յորժամ սկսանի մաշել՝ լուծուութեն և ունայնութիւն գտանի ի նոսա, և յորժամ աչել սկսանի՝ լրութեն և պնդութեն առաւելու ի նոսա։ Եւ զանազի լուսինն ի ջերմութենէ և ի խոնաւութենէ ունի խառնուած,

և մինչև 'ի խորս իրացն հասանել պիտոյիւքն՝ տալ 'ի նոսա զպաշտօնն յանդգաստս։ Այլ իրագէտք իրացս այսոցիկ են, ասեն. որ ընդ լուսով լումին հնչիցեն, առաւել խոնաւութեամբ ելցի 'ի գլուխս նոցա. և զմիս դալար յորժամ 'ի լոյս լումնի ոք կախիցէ, վաղվաղակի հոտի և ապականի. և որոց 'ի ջուրս իցէ ընակութիւնն, պակասութիւն և լիութիւն գտանի 'ի նոսա. և 'ի սիրտս ծովուց ըստ նմին օրինակի պաշտի։ և ամենեքին սոքա ընդ փոփոխել լումնի առնուն փոփոխումն։ Այլ եթէ ոչ զի մեծ ինն և առաւել էր, ոչ շրջէին ընդ նմա այնչափ իրքն ամ՝, ըստ վկայութեան գրոյն՝ որ եղև վասն մեծութեան նորա։ Այլ փոփոխմանցն որ լինիցին յօդս՝ բազում անգամ 'ի փոփոխմանց լումնի տեղեակ լինիմք, ըստ պատմութեան ոմանց որոց փորձեալ է զսկիզբն երևելոյ նորա, որ է ամսամուտ ծագմանն իւրոյ։ Օ 'ի բազում անգամ յորժամ յստակ[1] և խաղաղ իցէ օդ, յանկարծակի խռովութիւն 'ի սաստիկ հողմոց յայտնին 'ի նմա մրրկեալ, և ամպք 'ի վերայ ամպոց դիզանին յահ և երկեւղ մեծի տագնապի։

Այլ գնացք ինն են, ասեն, յաշխարհին եւրիպեցւոց յովկիանոս, որ երբեմն ցուցանեն գյաւելուածս լիութեան իւրեանց, և երբեմն զլինջանէ 'ի լիութենէ անտի. և այն, ասեն, ըստ գնացից լումնին փոփոխի։ Այլ որ զայնս պատմեն՝ մերձաւորք և սահմանակից են եւրիպեցւոց։ 'Ի սկիզբն ծննդեանն լումնին անշարժ կան, ասեն, գնացք խաղացիցն, և ըստ յաւելումն և ըստ աճելն լումնի՝ սկսանի զեռալ և շարժիլ. և այսպէս, ասեն, ըստ գնացից լումնի առնի փոփոխումն տեղացն, զի ընդ նմին աճեսցեն, և ընդ նմին պակասեսցեն, ընդ նմին զեղցեն, և ընդ նմին ցածիցեն։ Այլ յայմմ ծովու՝ որ անուանեալն կոչի երեկոյեանց, նմանութեամբ սրուակաց է՝ ասեն՝ 'ի միջի, իբրև եթէ ձգեն և ծգեն, կալ մնալ 'ի պակասութեան՝ ընդ պակասելն լումնի, և իբրև թէ բոլորեալ բոլորեն վերանալ ելանել[2] փոքելով զջուրսն՝ զի ընդ ընուլ լումնին յորդեսցին։

[1] Յօր. յԻոպաւ։ [2] Յօր. ելանէն։

Այլ զի ածի զայս ամ պանչելիս այ 'ի պատմուիս Ճառիս, զի Ջանացայց ցուցանել զմեծութիւն լուսաւորացն, թէ որպէս կոչեցին զնոսա գիրք մեծամեծս՝ նոյնպէս և են մեծամեծք. և եթէ չիք բանք յածեղէն գիրս, որ դատարկ ինչ կամ վայրապար ասացեալ իցէ։ Լսեա այսպէս թուի, թէ այսչափ Ճառիւք՝ զոր խօսեցաք՝ և ոչ սակաւ ինչ կարացաք մեծ լինել 'ի Ճշմարտութիւնս իրացն առաւելութիւն. քանզի բազումք այնք են՝ որ մնացինն 'ի մէնջ, և ոչ կարացաք հասու լինել մեծութեանցն և պանչելեացն՝ որ նկարեալ են յարեգակն և 'ի լուսին. մեծամեծ գիւտք որ ծածկեալ կան 'ի գնացս պաշտաման լուսաւորացն. քանզի ոչ ինչ է 'ի նոսա դատարկ և խափանեալ 'ի հանգստից և յօգտութիւնց մարդկան, բայց միայն 'ի նշանաց ատեղագիտութիւն։ Այլ յայսմ փոքունցս՝ որ պատմեցաւ, ածցուք զմնաւ զմեծամեծ գործս այ, թէ որչափ մեծամեծք և վայելուչք իցեն, և որչափ իցեն՝ որ մնացինն, և քանի ինչ իցեն՝ որք ոչն հասանեն և ծածկեալ կան 'ի քնութիւն արարածոյն իւրեանց։ Այլ արդ զմեծութիւն լուսնի մի տկար տեսլեամբ աչացդ չափեսցես[1], այլ մեծատարած մի տօգդ. զի տեսանել աչօք մեծութիւն տեսչութիւն՝ որ գտանի 'ի նմա, որպէս արժան իցէ, չէ հնար։

Բայց անհամ և մեռոտի պատմութիւն որ իբրև ըզբարքանչ ծերութիւն զառանցելոյ անկելոյ 'ի մտաց իցեն, անչափ ծաղու և արհամարհանաց արժանի են. զի ամ ումեք յայսմի և երևելի է, զի 'ի ստեղծուածոյ մտաց կատարեն զստայօդ պատմութիւն։ Շարժելով, ասեն, շարժեն մարդիկ զլուսին և յերկիր է Լուսնանեն։ Ինչ զոր ած հաստատեաց եդ անշարժ 'ի տեղւոջ իւրում, և յօրինեաց եդ զնա 'ի մշտագնաց, զիսնդ կարիցեն գիւթութիւք կախարդաց շարժել 'ի տեղւոյ. քաւ և մի լիցի ասել մեզ զայս կամ լսել։ Այլ ո՞ տեղն բաւական էր ընդունել զայն՝ որ սահմանեալ կայ 'ի մեծ աստիճանին զօրութեամբն այ։ Այլ եթէ կամիցես լսել յայնցանէ՝ որոց ոչ է չափ ամբարշտութիւն իւրեանց, ցուցից քեզ 'ի սակաւ նմա-

[1] Յոր. լուսնոյն։

նուԹԵ առնուլ օրինակ, Թէ ո՛րչափ մեծուԹի իցէ լուսնի։ Ասէր 'ի քաղաքաց, որ ընդ ամ տիւղերս չի նեալ էն, և իւրաքանչիւր մեկնեալք և զատեալք սահմանաք նստին 'ի միմեանց հեռացեալ. նայեաց ընդ փողոցս նոցա, որ ողորդ ընդ արևելս նայեացին։ Այս զայս անչափ քաղաքս ակօսաձևս հրապարակաքն և փողոցաք՝ զիարդ միանգամայն լուսաւորեցին. և կամ զիարդ ամենեքին ընդունին զլոյս լուսաւորուԵ լուսնի. և ԵԹԵ ոչ զի ընդդէմ ամենեցուն է մեծուԹեամբ, և կշիռ յերեսս ամենեցուն արձակէ զլուսաւորուԹիւն, զիարդ կարէր զմի լոյն միատարր տարածանել 'ի վերայ ամենեցուն առհասարակ, և միով կերպարանով տեսանիլ։ Ոչ 'ի լուսաւորէ զամ նրբափողոցս և զամարաստոնս, և բաւական է լայնատարած ծագումն նորա սփռել յամ կողմանս, և գրաւել ունել զաշխարհս ամ միով միատարած պայծառուԹեամբն՝ զոր արկանէ 'ի վերայ ամի, և տիրէ 'ի վերայ ամ ազգաց իւրով յորդաձգաց ընԹացիւքն։

Այս արդ 'ի տկարուԹէ լուսոյ Հրագին ուսիր զմեծուԹիւն լուսոյ լուսնին. քանզի յայժ տկար է լոյս Հրագին, այսպէս զի յորժամ գտանիցին բազումք 'ի միում տան՝ յորում լուսաւորիցէ, և 'ի միոյ 'ի նոցանէ՝ որում կայցէ ուղղորդ ընդդէմ Հրագին՝ անկանի ուղիղ ստուերն, և յայլոցն ստուերքն այսր անդր ձգին և խուսափեն. և այն ոչ միով կերպարանաք։ Այս իբրու ԵԹԵ չիք մեծուԹիւն նորա, վասն այնորիկ ոչ կարէ տալ միակերպ զստուերն ամենեցուն. զի որ մօտ իցէ 'ի լոյն՝ զնորա ստուերն մեծացուցանէ, և որ հեռագոյնն կայցէ՝ զնորայն փոքրկացուցանէ։ Արդ ԵԹԵ ոչ մեծ ինչ իցէ բոլորն բոլորակ լուսնի, և աքսն չելն և զարմանալն մեծուԹի ծագման նորա, ոչ կարէր այնպէս հաւասար տարածանել 'ի վերայ ամի ըզլոյս իւր։ Զանազն միշտ հանապազ միատարր ծագէ 'ի տեղւոջէ իւրմէ 'ի վերայ այնոցիկ՝ որ բնակեալ իցեն 'ի ցրտաշունչ աշխարհն հիւսիսոյ, որ մերձաւոր դրացիք են շրջանաց սպրակերպն[1] աստեղաց, և 'ի վերայ այնոցիկ՝ որ 'ի ստորին աշխարհն հարաւոյ բնաւ

[1] Յոր. պյուլերդ։

կեալ իցէն սահմանակիցք բոցաշունչ աշխարհին՝ ա-մենեցուն միանգամայն ցուցանէ զլոյս իւր միատա-ռած, իբրու մի է և բաւական է զմեզ զգաս լուսաւո-րել։ Այլ թուի ինձ՝ եթէ բաւական է այս վկայութիւն լմնել օրինակ մեծութեան լուսոյ։ Այլ ասդ ոմն իցէ՝ որ յամառել կարիցէ, թէ չէ մի տարբ անուշն լուսոյ, որ զայսչափ ամ վայրս՝ որ են 'ի ներքոյ երկնից՝ ունի 'ի միում հաւասարութիւն միատարբ իւրով լուսաւո-րութեամբն։ Զարդ և բաւական են այս ամ վկայութիւք լմնել օրինակ մեծութեան արեգական և լուսոյ։

Այլ այն որ ետ մեզ փոքու արարածովքս 'ի միտ առ-նուլ զանքնին մեծութեան իմաստութեան արարչութեան իւրոյ, նոյն ասցէ և մեծամեծացն գտանել միտս ար-ժանաւորս, խորհել իմանալ՝ թէ որչափ իցէ մեծ ա-րարիչն մեր։ Օյ ոչ եթէ 'ի համեմատութենէ ա-րեգական կամ լուսոյ և մթոյ և մրջեան ուսանի-ցիւք զմեծութեան նորա. քանզի չեն արժանի՝ եթէ 'ի սոցանէ ուսցուք զմեծութիւն այ, այլ օրինակք փո-քունք և մթինք են, որք ոչ զմեծութիւնն այ յայտ առնեն մեզ, այլ առ ճշմարտութիւն նորա մերձեցու-ցանեն։ Բաւական են իւրաքանչիւր մանունք՝ որ պատմեցան, թէ զանամոց և թէ զարմատոց[1], ստա-նալ 'ի նոցանէն զհանճար և իմանալ զարարիչն մեր։ Այլ ես գոհանամ զայսմանէ՝ որ ետ ինձ զմատակա-բարութիւն սակաւ բանիցս, որ եղիւ բաւական լսելեաց ձե-րոց. զի նոյն գարձեալ իւրովք մեծամեծովքն լցուա-ցէ զձեզ հոգւովս կերակրոփն։ Զայլ իմ տկար բանքս ըստ օրինակի գարեղէն հացի են, որ հարին սակաւ մի զվարաք քաղցիդ ձերոյ. զի նոյն՝ որ կարողն է յարգել և մեծացուցանել, յաճախեսցէ զհանապա-զորդ կերակուրս ձեր, և ըստ չափոյ հաւատոց ձերոց տացէ ձեզ զլուսաւորիչ գիտութիւն 'ի յայտնութենէ Հոգւոյն սրբոյ. արժանի լմնել առ հասարակ գոհա-նալ և փառաւորել զՀայր և զՍրդի և զսրբ զՀոգին, որ է օգնական կենաց մերոց, այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից. ամէն։

1 Յօր. զարմատոց։

ԱՐԱՌ ԵՒԹՆԵՐՈՒԴ

ՎԱՍՆ ՎԵՑՕՐԵԱՑ ԱՒՈՒՐՑ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

«Եւ ասաց, ասէ, Ա՛ծ. Թողեսցէն, ասէ, ջուրքդ զեռուն կայտառ, շունչ կենդանի ըստ ազգի իւրում, և թռչունս թեւաւորս ըստ ազգի իւրում՝ ի վերայ երկրի, որ թռիցեն ընդդէմ հաստատութեան երկնից ըստ ազգի իւրում»։ Յետ լնելոյ լուսաւորացն, ապա և ջուրքն առնոյին հրաման բղխել զեռուն կայտառ շունչ կենդանի. զի և նոքա զարդարեսցին նոքաքոք, որ ի նոցանէն լինիցի, և ի նոսին յաւելուցուն։ Թնկալաւ երկիրք զզարդ բուսովքն, որ ինքն յիւքեանէ բղխեաց. առն և երկինք զվայելչութիւն իբրև զծաղիկս՝ զաստեղս ամ, հանդերձ երկուք երկաւորեակ աչօք, այս ինքն՝ մեծութիւն արեգական և լուսնի, որ են զուգակիցք միմեանց մեծագեղն զարդուք՝ զոր ունին ըստ իւրաքանչիւր լուսաւորութեաց։ Յետ սոցա ապա և թերութիւն ջուրցն առնոյր զկատարումն զարդարեալ զեռնովքն, որ անդստին՝ ի նոցուն բղխեցին. և եղև՝ ի վերայ նոցա հրաման արարչին, և ՀԵՍԵԱՑ ստիպեաց զգետս՝ տալ՝ ի նոսա զկենդանութիւն. ՀԵՍԵԱՑ և զսակաւանիստ ծովակս՝ բղխել և ՀԱՌՑուցանել. և՝ ի միոյ ամ խոնաւութիւն բղխեաց կենդանութիւն ազգի ազգի թռչնոց յերկնից։ Ծնանի և ծով պէսպէս ազգս և կերպարանս զօղակաց և գազանաց. և ոչ մոլը և ոչ ջրաշեղջք և ոչ սկսիանն խոնաւութիւնքն լինէին դատարկք՝ ի հրամանէն, եթէ ոչ բղխեն զկենդանութիւն զեռնոց առ՝ ի կազմութիւն աշխարհի. զի գորաք և ՀԱՆՁք և մէիկք յայտ է. եթէ՝ ի սկսիանն խոնաւութենէն բղխեցին. զի ինչ որ այժմ լինի, վկայէ այնց՝ որ իսկզբանէն լինէին։

Լ.զդ ամ ջուրք՝ որ էն ընդ ամ տեղիս, փութայնոյ կատարել զհրամանս արարչին. ազգս ազգս զեռնոց յիւրաքանչիւր խոնաւութենէնէ բղխէին, որոց ոչ թիւ

լիներ և ոչ համար բովանդակեին։ Զանգի յանձնառելի և 'ի փառաւորեալ զօրութենէն լիներ երագրեալ թաց հրամանն 'ի վերայ ջուրցն, զի 'ի միասին միանգամայն բղխեսցեն զնամ կենդանութեան զեռնոց. զի վաղվաղակի առ ժամայն առցեն 'ի մէջ նոցունց ըզգնացս իւրաքանչիւր՝ փոքր մի ակարկէտիցն[1]. և զի եղեցի ծնանեալ և մնուցանեալ 'ի մէջ նոցա իբրև գնոսա։ "Զղբխեսցեն ջուրք զեռուն կայտառ շունչ կենդանի ըստ ազգի իւրում,". այս ինքն կենդանի, ինչ որ ունիցի ազգուն։ Զու այսպէս առնոյին ջուրքն ծնանեալ և սերեալ։ Զայց մնկոց և ծառոց թէպէտ և ասի՝ թէ ունին կենդանութիւն, մնունդ և աճումն դարմանով և խնամութիւն ջուրցն՝ զոր առնուն՝ կոչի կենդանութի, և ոչ իբրև զանասունսն են՝ որ շարժումն բղխմանց և ազգուն և գնացս ունին։ Զու վասն այսորիկ ասաց եթէ բղխեսցեն ջուրք, զի ամ ինչ՝ որ 'ի մէջ ջուրցն զօղեսցի, և 'ի նոսին շրջեսցի, և ըզնոյնս ձևիցէ, զեռուն բնուի է. թէպէտ և 'ի տարը ջուրցն քարշիցէ զանձն և խաղայցէ։ Զու թէպէտ գոն 'ի մէջ ջուրցն զեռունք՝ որ ունիցին ոտս և գնացս, և ցամաքային անասուց նմանիցեն, իբրև զիոկս և զկոկորդիլոսս[2] և զձիս ջուրց և զգորտս և զնեցգեւտինս, այլ բան զրոցն զղօղակ ազգաց զեռնոց ձաւռեաց։

"Զղբխեսցեն, ասէ, ջուրք,". Զու այսու ճշմարտաբար բան պատգամաւս, որ իբրև փոքր ինն երևի, որ ազգ զուղղակաց էին՝ որ ոչ գոյին վաղվաղակի 'ի հաստել, և որ ազգ զեռնոց էին՝ զոր ոչ էած 'ի լինել հրամանն արարչին. եթէ գազանքն՝ որ ըստ իւրեանց կերպարանացն ծնանին զիւրեանց սերմանիսն, այս ինքն փոկք և դլիինք, և ներկէսք, որ անուանեալ կոչին սեղակք, հանդերձ բազմովք՝ որ սոցին նման են. դարձեալ և այլք որ ձուս արկանեն, և բազում ազգ ամ ձկանց՝ որ ունին պէս պէս կերպարանս, կէսք թեփամորթք և կէսք լերկամորթք, կէսքն խայտաբղէտք և կէսք միատարք, և կէսք թեաւորք և կէսք անթևք։ Զրդ այս սակաւ բարբառ հրամանի, այս ինքն՝ ոչ բարբառ,

1 Յոր. արկանէլսն։ 2 Յոր. կոկոդրոս։

այլ շարժել ակնարկելոյ կամաց ՝ այ. և արդ ո՞ կարիցէ կալ[1] 'ի վերայ զօրութեան հրամանին և մեծաց մտացն՝ որ ծածկեալ կայ 'ի նմա, եթէ որպիսի ազգս ծնաւ. և նշանակ երգոյ թէ նորա ո՞ր բան բաւական իցէ պատմելոյ, և կամ ո՞ր միտք քննելոյ զզարմանագործ հրամանն։ Ա՛յլ թերևս յոյժ դիւրին իցէ զալիս ծովու թուել, կամ զլազմութիւն ջուրցն չափել ափով, և ոչ զհրամանն ՝այ պատմել բանիւք՝ թէ որչափ ունիցի արագութիւն առ 'ի գործս։ "Ասղնեսցէն, ասէ, ջուրք զեռուն կայտառ "։ Այս այսու հրամանաւ երևեցան յական թօթափել ՝ամ զեռունք, որ 'ի խորս ծովու շրջին և շուրջ առ եզերքն զեռան։ Ոչ կէսքն վտառ վտառ երամ երամ շրջին, և կէսքն ցիր և ցան 'ի մէջ խորոց ծովուն, և իբրև մոլեկանս բանդագուշեալս յածեալս սահին։ Այլ կէսք վասն մեծութեան զօրութեան՝ զոր ունին՝ միայն առանձինն շրջին, այսինքն՝ գազանք մեծամեծք, որ անուանեալ կոչին կէտք, հանդերձ այլ ևս խառնաձաղանձ բազմութիւն ձկանցն՝ որ անթիւ և անհամար են։ Այս այսու զօրութիւն հրամանի արարչութենն ՝այ զեռան մանանուշքն հանդերձ մեծամեծովք. եղէն վաղվաղակի ըստ իւրաքանչիւր ազգաց և կերպարանաց յանկարծակի ծննդեամբք 'ի բնութենէն ջուրցն արարածոց։

" Ասղնեսցէն, ասէ, ջուրք "։ Ա՛հա ցուցան քեզ բնութիւնքն, որ են ջուրցն յանկակիցք։ Որ 'ի նոսա բնակեալ է, և 'ի նոսին շրջի և զեռայ 'ի կեանս. և եթէ սակաւ ինչ հեռասցի յառնոյդ զդարման յօդոյն որ ծծէ 'ի նոցանէ, եղծանի կորուսանէ զիւր շարժուն զկենդանութիւն։ Ասղնի չէ հնար ձկանց առնուլ զայս օդ առ 'ի կենդանութիւն, այլ 'ի մահ. զի զոր օրինակ է ցամաքային անասնոցն օդս այս 'ի կեանս, սոյնպէս են ջուրքն օդ կենաց ՝ամ զօրակն զեռնոցն՝ որ 'ի նմա շրջին։ Որպէս զայս զմեր օդս՝ պատճառք որ են 'ի մեզ՝ ձգեն առ մեզ, այս ինքն թոյլ թոքքն՝ որ 'ի մեզ հաստատեալ կան, և նոսաւ տամք և առնումք զշունչն՝ զոր ընդունիմք յօդոյ, և քաշիսկ ընդ ՝ամ զգայունսն մարմնոյն, զի ընդ փողս լանջացն առնի

[1] Յօր. Ի՞սաւ։

մուտ և եկ առ մեզ օդոյն դարմանչի. և նորոք ընդունի փոր մեր զամբարտաւն խառնուած ջերմուն և ցրտութեն, զոր տամք և առնումք միշտ անդադար առ 'ի դարման կենդանութեան մարմնոյ։ Իբրև ունիմք դարձեալ զխօսուն և զնմանատուն զոգին՝ որ ոչ ունի խառնուած, անպնին և անկերպարան, անեղծ և անմահ, որ է կառավար և առաջնորդ մարմնոյ. և իբրև այսպէս զարմանալի է, որ երբեմն չէր և ասպա է. զի, և այսպէս մարմին կարօտ է դարմանոյ օդոյ, որ մտանէ միախառն խառնուածով, և լինի իբրև կերակուր 'ի կենդանութեան։ Այոյսպէս և որ 'ի ջուրն զեռան, անուանի շնչէն 'ի նոցանէ կենդանութեան. և ըստ օրինակի օդոյ ընուն ջուրք զպէտս զեռուն կայատառայն, զի առցեն 'ի նոցանէն զկենդանութեն։ Այս այսու յայտ է, թէ այլ ջոկ է ձկանց՝ որ 'ի ջուրն շրջին, և այլազգ է բնութեն՝ որ ունի զայլակերպ շարժումն. և զատ և միանձն բնութեն, որ կայ միշտ յիւրում կայանի անդ, և այլ անփոխ գնացիւք ըստ պատշաճի իւրոյ կենդանութեն։ Անպզի ջրածին ծնունդք ոչ երբեք գան 'ի մուտդ մարդկան և հնազանդին մտանել ընդ ձեռամբ մարդոյ։

"Բոզնեսցէ, ասէ, ջուր զեռուն կայատառ, շունչ կենդանի ըստ ազգին իւրում"։ Այս ինքն սկիզբն ամենայն ազգաց զեռնոց. քանզի հրաման բանին այ զբնութեան որ ուներ զսերմին 'ի սերել՝ բազնեցոյց, և բազմութիւք նոցա յետոյ յորդեցին ծնունդքամբք իւրեանց. քանզի իբրև զհամբարս բազմամթերս եդ 'ի նոսա արարիչն զօրհնութիւն յասելն, թէ Աճեցէք և բազմացարուք։ Արդ մի այն ազգ՝ որ խեցմորթքն կոչին, այս ինքն կոնքն և կտինքն և կոբզիք և ստրոմք. և բազումք այլք են՝ որ այլազգի կերպարանս ունին, և անուանեալ կոչին ոստրիք։ Այս մեւս ևս ազգ օտարակերպ 'ի սոցանէ, և անուանեալ կոչին ոզորկապատենք. այս ինքն կապք և խեցգետինք, հանդերձ այլ ևս բազմովք՝ որ սոցին նման են։ Դարձեալ մեւս ևս ազգ՝ որ այսմ ոչ ևս նման են, և անուանեալ կոչին թուլատարք. քանզի ոչ պէտք մարմնոյ ունին, այլ թոյլ. այս ինքն պոլիպոտք [1], սպինք, և որ սո-

[1] Յոր. դեւիդոտք։

ցին նման են։ Լոյս դարձեալ այլակերպք այլանչանք, որ անուանեալ կոչին դրակոնտես և միւռնեսս[1] և Էնիբեղեսս, որ 'ի սիկս գետոց և յատակս ծովակաց 'ի խորս տեղիս լինին, որ առաւել ցամաքային օձից նման են, և ոչ ջրածին ձկանց. և այլ բազումք՝ որ նոցին նմանք են։ Լոյս այլ այն ազգք են՝ որ ձուս արարկանեն, և այլ այն՝ որ ըստ իւրեանց նմանութեան ծնանին կենդանիս, որ անուանեալ կոչին դեղաղք և ենջրիք և սեղակք[2], և հանդերձ այլովք՝ որ կոչին կետք և դելիենք և փոկք։ Լոյս որպէս ասեն զծնունդս փոկացս, մինչդեռ մատաղքն են՝ թէ յանկարծ ահ ինչ կամ տագնապ Ձեպեալ 'ի վերայ հասանիցէ, և քանզի չիք ուրեք փախուստ նոցա 'ի մէջ ջուրցն, արդանդ մօրն իւրեանց քանայ՝ զի մտցեն անդ զօղեալ թագիցեն, մինչև անցցէ մնոբօք երկուցն։ Լոյս զայս դժուարաւուր հնարս ՅԱՇԵՂԷՆ իմաստուին կազմեաց արարածոյն՝ զոր արար. և զայս բազումք պատմեն, թէ արդարև այսպէս է։

«Լուսեսցեն, ասէ, ջուրք»։ այս ինքն է՝ զկիտս մեծամեծս հանդերձ մանրերամ ձկամբք, որ պէս պէս կերպարանս ունիցին ըստ իւրաքանչիւր ազգաց, և այլափոխ անուանս և գոյս և մարմինս և կերակուրս, և կողմանս 'ի բնակութիւն՝ 'ի մեծն և 'ի յանդորր ծովուն։ Լոյս որ որսորդքն իցեն, որ միշտ 'ի ծովանդր շրջիցեն, բաւական լինեալ արկանել ընդ թաւոյ զանուանս բիւրազգի ազգաց ձկանց, որ վտառ վտառ երամ երամ շրջին։ Լոյս կամ ոմ՝ զոր 'ի մարդկանէ, որ անդէն 'ի բարձունս կղզեաց ծերացեալ իցէն, և զամ աւուրս կենաց իւրոց 'ի խոնաւ բնակութիւն հանեալ իցէ, թէ կարիցէ տալ զնշանս կերպարանաց ըստ իւրաքանչիւր ազգաց և կերպարանաց ձկանց։ Պատմեն որսորդքն՝ որ 'ի հնդիկ ծովուն ունին միշտ զյատակս, զձկանց. և զայլ ազգ կերպարանաց յայտ առնեն որսորդք՝ որ յեգիպտացւոց ծովուն աշխատին. և զպէսպէս նմանութեամբ ձկանց տան զոյց մարիսացիքն, որք լինին 'ի ծովուն՝ որ է 'ի սահմանս նոցա. և զնորանշան կերպարանաց ձկանց պատմեն՝ որ 'ի

1 Յոր. դրակոնտես և մասուսնէս։ 2 Յոր. անբրիս և սիլուդ։

կղզիս հեռաւորս ընակեալ էին։ Օ այս ամ ազգիազգի ազգս ձկանց հանդերձ մանուամբք և մեծամեծովք, անպատում[1] զօրութեամբն առաջին հրաման բանին այ Ժողովեաց ած 'ի կենդանութիւն։

Եւ այսր ամի խառնաղանձ զեռնոց ոչ մի բարք և ոչ մի բնութիւք է, և ոչ միազգի ծնունդ. այլ կէսքն ձուս ծրտեն, և կէսքն կենդանիս ծնանին. և ոչ ստեամբք և աշխատութիւք մուցանեն, այլ իակ և իակ իբրև անկանին 'ի ջուրս, եթէ ձուք իցեն՝ կենդանի ձկունք գտանին, և եթէ ծնունդք իցեն՝ առանց աշխատ ինչ առնելոյ զմարմն[2] մանին։ Եւ իւրաքանչիւր ամ ազգ ձկանց առանց խառնակութիւն ընդ միմեանս կան մնան յիւրաքանչիւր ըստ ազգի իւրեանց բնութեան, և ոչ որպէս աստ առ մեզ լինին, զի խառնակութիւք ընդ միմեանս՝ կորուստնեն զազգս իւրեանց յորոց ծնանին իշակէսք՝ այս ինքն է ջորիք, կամ իբրև զընտանի հաւ, որ ըստ նմին օրինակի գործէ։

Եւ ոչ ունին ձկունք կէս ատամանց 'ի բերանս իւրեանց, որպէս ունի արջառ և ոչխար՝ որ առ մեզ մնանի. և չիք 'ի ձկունս՝ որ որոշիցէ, բայց միայն մի ազգն՝ որ անուանեալ կոչի սկարոս[3], որպէս և պատ մեն զնոցանէ ոմանք։ Եւ վասն այնորիկ ունին սուր ատամունքք՝ առ արագ մանրել կլանել զինչ ուտիցեն. զի մի յորժամ յամիցեն 'ի ծամելն, թափիցէ 'ի բերանոյ նոցա ջուրն զկերակուրն՝ զոր ուտիցեն. զի եթէ ոչ սուր ատամամբք վաղվաղակի մանրէին կլանէին զոր ինչ ուտէին, կորուսաներ հաներ 'ի բերանոյ նոցա ջուրն զկերակուրն։

Եւ կերակուր ձկանց բազում անգամ ինքեանք ինքեանց լինին. Թէպէտ և է կիսոցն այլ կերակուր յայտ կարգեալ. քանզի կէսքն զմամուռս ջուրցն[4] ուտեն, և կէսքն զսիկն և զաւազն, և կէսքն զնոսա ինչ՝ որ բուսանի 'ի մէջ ջուրցն ձարակին, և նոցն բաւական լինի. հանդերձ այլ ևս բազում ձկամբք՝ որ զմիմեանս ուտեն. զի փոքրն որ 'ի նոսա, կերակուր է աւագին. և դարձեալ եթէ աւագն այլում աւագի

1 Յօր. Ե. անդադար։
2 Յօր. մարմնոյ։
3 Յօր. սակրոս։
4 Յօր. ջուրոյն։

դիպեացի, նա նորա լինելի կերակուր։ քանզի մի-
մեանց որովայնից հնազանդեալ են 'ի փոքրկանց մինչ-
չև 'ի մեծամեծս։ Այլ որպէս երևի մեզ, 'ի մարդիկ
ըստ նմին օրինակի գործ գործին ըստ կամաց մերոց։
զի որ տնանկն է 'ի մինչ[1] հարստին կայ 'ի ծառայու-
թիւն։ Այլ զինչ առաւել իցէ մարդ աղքատ քան
զմինիին փոքրիկ առ մեծատանն, որոյ բացեալ զբե-
ռանն յագահութիւն, և յանյագ ժողովեացէ զարարս
այլոց։ զի մինն առնու ինչ որ ոչ իւր իցէ՝ յաղքատոյ
անտի, և առնէ յաւելուած 'ի վերայ մթերից իւրոց,
և դարձեալ մեանս ևս ըստ նորին նմանութեան՝ որ քան
զնա հարստագոյն իցէն՝ գայ հասանէ բռնաբար 'ի
վերայ նորա, և հանէ զառ և զաւարն՝ որ յայլոց
յափշտակեալ է։ և անդ է տեսանել չար քան ըզ-
չարս, և ագահ քան զագահս, որ զմիմեանսք ելեալ
խաղայցեն։ Այլ զայս պարտի ածել զմտաւ ագահն
անաւագակեր[2], թէ գուցէ իբրև ձկան հասանիցէ 'ի
վերայ նորա ցանց կորստեան։ և յորժամ համարեսցի՝
թէ վաղեաց անց զամ չարեօք և մօտ իցէ զերծա-
նել, հասցէ նմա յանկարծակի կորուստ ապականութեան։
իբրև զի հանդերձեալ պահին չարեացն նորա պա-
տիժք պատուհասից, որ յայտնելոց է 'ի վախճանին՝
յորմէ չկք հնար զերծանիլ և ապրիլ։

Այլ դարձեալ զգուշացուցանեմ զքեզ փախչիլ
'ի բարոյից տկար զեռնոյ միոջ՝ որ շրջի 'ի ծովս, թէ
սրչափ խորամանկ է և նենգաւոր։ Կարկինոս, որ
Թարքիմանի խեցգետին, ցանկայ ուտել զմիս զեռնոյ
միոջ, որ անուանեալ կոչի ոստրէոս։ և քանզի դը-
ժուարորս է ոստրէոսն, զի իբրև խեցեղէն պատեանս
ունի շուրջ զիւրեաւ, և իբրև ընդ ամրածածուկ
պարսպով զգուշացեալ պահի փափուկ մարմին իւրոյ
կակուղ բնութեն, և մրթն 'ի վերայ սեպ և ողորկ
խեցանման է, և այսպէս իմն կոչեն զեռունն զայն խե-
ցեմրթ։ Այլ քանզի կերպարանս պատենից գաղ-
տակրի ունի 'ի միջնորումն, զի այնպէս կազմեալ է
զեռունն զայն արարիչն, և ոտք խեցգետնոյն ոչ կա-
րեն դամն գտանել յուղղիկ և 'ի սեպ պատեանս զեռ-

1 Յոր։ 'ի հէր։ 2 Յոր։ ---գ-ներ։

նոյն, ժամապահ դարանակալ լինի, միտ դնէ՝ եթէ երբ ելցէ ոստրէոսն 'ի խորոցն երթալ յեզին որ անքոյթ իցէ 'ի հողմոյ։ Այս իբրև երթայ հասանէ յանքոյթ տեղին, սկսանի քանալ զպատեանսն՝ զոր ունի 'ի մկանունսն 'ի նմանութիւն գաղտակրի՝ ընդդէմ արևուն՝ զի ջերցի. յայնժամ երթայ վաղվաղակի խեցգետինն ընկէնու քար ընդ անջրպետսն պատենիցն, զի մի կարասցէ անդրէն զնուրեաւ ամիտիլ՝ զպատեանսն, և ընկիցի նմա դիւրաւ ըմբռնել զոստրէոսն և ուտել։ Այս այսպիսի հնարիւք գտանի տկար ոյժն խեցգետնոյ ընուլ զտեղի մեծ ուժոյն. և ընդ այս է զարմանք, զի այսպիսի խորամանկութիւն յանասունսն յանմտունչս գտանիցի։

Այս այսպիսի տամ քեզ խրատ, զի խորագիտութիւն խեցգետնոյն առ 'ի հնարս հաճոյից և գործոց արդարութեան առցես, և մի առ 'ի մեղանչել ընկերին. քանզի խեցգետնոյ նման է, որ նենգուութիւն մերձենայցէ առ մերձաւորսն, և ընդ միամիտ ընկերին նենգաւ և մանկաւ գնայցէ, և ընդ չար եղբօրն ուրախ լինիցի ոսոնհարութիւն։ Փախիցուք այսուհետև 'ի ծուռ բարոյից ծռոցն՝ որ նենգէն առնեն չարիս մարդկան, և բաւական համարեսցուք զայն՝ ինչ արդարութիւն ստացեալ ունիցիմք. զի լաւ է աղքատութիւն՝ որ սակաւիկ ինչ ունիցի արդարութիւն, քան զամ մեծութիւնս և զփափկութիւնս՝ զոր մեղօք ոք և անօրէնութիւն ունիցի։

Այլ ոչ է պարտ և պատշաճ անփոյթ առնել անցանել զնենգութիւն և զխորամանկութիւն միւսոյ ևս զեռնոյ, որ անուանեալ կոչի պոլիպոդէս։ Օ՛ի ամ՛ քար կամ խարակ՝ յորում հասանէ 'ի մէջ ծովուն՝ զնորուն զգոյն առնու. և ձկունք և յանհոգս և ապահովս երթան զուռնն շուրջ զնովաւ, և համարին թէ քար իսկ իցէ։ Այս իբրև կամին իբրև ընդ քարիս մտանել ընդ նովաւ, ըմբռնէ անդրէն առ իւր զորսն պատրաստական իւրով խորամանկութեամբն։ Այս պէս են և մարդիկ որ թագուցանեն զնենգութիւնն՝ զոր ունին՝ բարի կերպարանօք զոր ցուցանեն, և խաբեն շրջեն զմիտս այլոց իւրեանց յեղյեղուկ խորհրդ-

1 Յօր. ՍՓՈԲԷԼ։

գովքն։ Այլ կալ մեծ միաբանիլ 'ի միում բանի կամ 'ի միում խորհրդի ոչ երբեք յօժարեն, այլ այլք ընդ այլոց երևին յամ գործս և 'ի գնացս. ընդ սուրբս պատուիչք սրբութեան երևին, և ընդ չարագործս հաւ զորդ չարեացն գտանին. և ընդ ամ կամս միաբանեն զմիտս իւրեանց։ Այլ անհնարին է խորշել և մերժել յանկիրաւութենէն զոր ունին, և զերծանիլ ապրիլ 'ի վնասակար խորամանկութենէն. զի իբրև հանդերձ զգեցեալ ունին զարդեկամութիւն 'ի վերայ խորհրդոց չարեաց՝ որ կան 'ի սիրտս նոցայ։ Այլ զայնպիսիսին անուանեաց ոմն մեր գայլս յաղիշտակօղս, որ հանդերձիւք գառանց ծածկեն զդառնութիւնս իւրեանց։ Փախիցուք այսուհետև յամ կեղծաւորս խորամանկութեանց, և յամ կերպարանաւոր նենգաւորութեց, և հաստատեալ կացցուք 'ի ստոյգ ճշմարտութիւն և յանպաճոյճ միամտութ։ Խորամանկուն՝ օձից բարք են. և քանզի եղև նենգաւոր, կալաւ ըզդատապարտութիւն՝ որ 'ի պորան սողեսցի։ Այ մարդ արդար ոչ գտանի կերպարանք պաճուճազարդք, որպէս և Յակոբ, զի միամիտ էր յարդարութիւն. և այն՝ որ գրեալն է, թէ բնակեցուցանէ զամուրն 'ի տան, 'ի վերայ մարդոյ՝ որ զմի ուղիղ վարս ունիցի՝ կատարի։ Այ կեսցուք այսուհետև յայնս զորոց և Ճառս իսկ արկեալ է։

Այս, ասէ, ծով մեծ և անդորր, 'ի սմա զեռուն առանց թուոյ, գազանք մեծամեծք և մանունք։ Այդ այս ամ զեռունք՝ որ 'ի նմա գտանին անթիւք և անհամարք, յօրինիչ իմաստութեամբն ունին զգնացս իւրաքանչիւր։ Այ զի յիշեցաք 'ի Ճառի աստ զնորամանկուին՝ որ 'ի ձկունս գտանին, ոչ զի լիցուք բամբասիչք զեռնոցն՝ որ շրջին 'ի ծովու. և դարձեալ եթէ պատմեմ զգեղեցիկ վարս 'ի բնութեան նոցա, ոչ եթէ գովիչք ձկանց փոյթ յանձին եդեալ լինիցիմք, այլ արարչին յիւրոց արարածոց տամք զփառաւորութիւն։ Այ եթէ գոն ձկունք՝ որ զբարի բարք ունիցին յարարածին իւրեանց, մեզ ևս պարտ և պատշաճ է լինել բարեբարք մերով արձակ կամաք, զի մի նախատիցիմք անամովք, որպէս նախատեցան ոմանք՝ որոց բարձան Ճառք իւրեանց։

Լ.ԸՆ. բաղում են ձկունք ըստ իւրաքանչիւր ազգաց, և զատեալ մեկնեալ են 'ի միմեանց բնակութիւք իւրաքանչիւր. 'ի նոսին գետսն և 'ի նոսին ճարակին, և ոչ երբեք ժպրհին եկանել երթալ յայլոց սահման, այլ յատաջին կայանսն՝ յոր սկսանին 'ի նոսին մշտին ջնեաւորին։ Ձկք 'ի նոսա երկրաւոր, եթէ բաժանեսցեն տացեն զսահմանս իւրաքանչիւր. չկք անդ նկարեալ բնակութիւն[1] երևելիս, և լռեալ դադարեալ կան յիւրաքանչիւր տեղիս. չկք 'ի խոնաւ բնութեանն պարիսպք շրջապատք, և ոչ ոք համարձակի յանցանել յայլոց բանակետղ։ Ձկք անդ սահմանաց արձանագիրս կանգնեալ, և իւրաքանչիւր ամենեքին ամենայարդար իմաստութեամբ արարչին զետեղեալ առանց շփոթութեան կան յիւրաքանչիւր սահմանի։ 'Ի մի գոգ ծովուն, ասեն, մի ազգ ձկանց ճարակի, և 'ի միասում խորշի այլ ազգ բնակեալ է. և թէպետ 'ի միում վայրի բաղումք իցեն և 'ի միասուն սակաւք, սակայն կարգք յօրինեալ պաշտին 'ի մէջն նոցա։ Եւ սահմանեն վերինք բարձունք զկայանս նոցա, և ոչ գետք մեծամեծք կարեն և անջրպետեն զտեղիս իւրաքանչիւր շրջանացն. այլ օրէնք ընդաւրոյք բարոյաց ծինք հաստատեալ կան 'ի բնութեն նոցա, զատեալ մեկնեալ ըստ իւրաքանչիւր պիտոյից զտեղիսն 'ի միմեանց։ Դ. զինչ ասասցուք, զի մեք ոչ եմք այնպէս արձակ կամքք՝ զոր ունիմք, այլ զսահմանս հինս և զառաջինս՝ զոր եդին հարքն մեր՝ փոխեմք. անդ ընդ անդ խառնեմք, և տուն ընդ տուն կցեմք, և ագարակ ընդ ագարակ խառնեմք, զի զընկերին զրկեալ զանալ մարթասցուք։

Յոյժ տեղեակ և հմուտ են կէտք անգնդայինք ուսնել զիւրաքանչիւր սահմանս կայենիցն. քանզի արտաքոյ քան զնմա նաւագնացս գնացից ծովուն շրջին։ Քանզի յայնմ ծովէն՝ զոր ոչ ոք երբէք կոխեցին զմկանունս նաւք իւրեանց, ճօճին պերճն մեմք. քանզի յանապատի ծովուն և 'ի ներքին կղզիսն ոչ ոք երբէք անց կոխեաց ոտն մարդոյ, և բնակութիւն նոցա՝ յոր ոչ երբէք եղեն պէտք ինչ նաւորդաց. նա և

[1] Յոր. բնութիւն։

ոչ նայել ընդ նա համարձակ իշխեն, և ոչ ժոմն[1] և ժպրհին երբէք խառնել նաւ յանապատ նորա։ Ա՛ռդ յայնմ ծովու յոլով բնակեալ են կէտք՝ յորում ոչ երբէք եղև շունչ մարդկութեա. և որպէս պատմեն՝ որոց զկերպարանսն տեսեալ լեալ, ասեն՝ լերանց նման են մեծութեա անձանց անարեաց, և անդրէն ունին զսահմանս իւրեանց կայեանս իւրեանց։ Ոչ են մօտ 'ի կղզիս բնակութեա և ոչ 'ի քաղաքս՝ որ շուրջ կան զափամբք ծովուն, քանզի ապականէին կորուսանէին զնոսա՝ եթէ երևէին մօտ 'ի նոսա։

Ա՛ռդ իւրաքանչիւր ամ ազգ ձկանց իբրև նմանուն քաղաքաց և գիւղից ըստ մերում օրինակի ունին, և իբրև վիճակօք ունին բաժանեալ զիւրաքանչիւր կայանս։ Բայց գոյ և 'ի ձկունս ազգ շրջող, և իբրև միով խորհրդով հասարակաց դումարին յելանել յիւրեանց սահմանացն. ամենեքեան միագունդ միահամուռ խաղան՝ յորժամ հասանէն 'ի նկարեալ ժամանակ ծննդեանն, և իբրև 'ի միոջէ ծոցոյ 'ի բազում ծովուցն յամ կողմանց դղրդին, անվեալ 'ի չուս ըստ ընտաբոյս օրինացն՝ երթալ հասանել 'ի ծովն հիւսիսային։ Ոչ 'ի ժամանակին՝ յորում խաղալ ելանել երթալ 'ի ծովն յայն, իբրև զբուս ինչ մեծաց բանակաց է տեսանել զժամանակեայ ժողովս բազմութեա ձկանց, միով հաւասարութեա դիմեալ ընդ Պրոպոնտոս ծովք երթալ հասանել Այ՛ւքսէնիս[2] ծով։ Ոչ անդ ոմ իցէ՝ որ զայնչափ բիւրաբազի զվտառս ձկանց շարժեսցէ հանցէ՝ չուել խաղալ միագամայն, և որ[3] թագաւոր սնդիցէ զնոսա յայն գործ յօժարել, և որպէսի ինչ գիր գրեալ հաստատեալ կայցէ 'ի ջրեղէն և 'ի խոնաւակերտ հրապարակս նոցա՝ ընթեռնուլ հասանել 'ի վերայ նկարեալ ժամանակին, և ոմ իցէ՝ որ լինիցի նոցա առաջնորդ հեռաւորք և ընդ երկար ճանապարհին։ Ցեսանես զհրաման իսնամութեան արարչին, զիարդ կատարեալ բովանդակ ամիւ, որ մինչև յայսպիսի փոքրկութեն խոնարհի իւրոմն ամենավարն առաջնորդութեամբն։

1 Յօր. ժխրին։
2 Յօր. ՀԷՔՍԷՆԻՍ։
3 Յօր. որոյ. յայնն, որ երա. մեն թագաւորի։

Զուին մի փոքրիկ ոչ կարէ ասպտամբել յօրինացն ոյ, և մեք մարդիկ ժպրհիմք համարձակիմք անցա-նել զպատուիրանովքն ոյ՝ որ տուեալ է վասն մերոյ կենաց և փրկութեան։ Արդ մի ինչ վայրապար համա-բերացիս զգործ անչունչ և անխօսուն ձկանցն. այլ երբ կիր, զի գուցէ և անանցոցն ոչ նմանեսցիս պատուի-րանաւն՝ զոր առեր յոյ, և դատեսիցիս յանցուցեալ զպատուիրանաւն հակառակ արարչին։ Այս արդ ունի կընդիր լեր ձկանցն, մի բանից բարբառովք, այլ ար-դեամբք գործոցն նոցա. տես վասն որպիսի՞ ինչ օգ-տի առ 'ի պահպանութեան ծննդոց իւրեանց հատանեն անցանեն զանչափ վայրս հեռաւորս։ Օ ի ոչ ունին բանս 'ի բնութեան իւրեանց, այլ ունին օրէնս ընտա-բոյս հաստատեալ բնութեան, և անտի ուսանին զինչ արժան իցէ գործել։ Ամենևս այսպիսի ինչ խաղայ-ցէ 'ի բարս բնածին, ասել՝ թէ եկայք ջուեսցուք խա-ղասցուք գնասցուք երթալ 'ի ծովն հիւսիսային, զի քաղցր են ջուրք նորա քան զջուրս այլոց ծովուց. քանզի սակաւ ինչ ժամանակս հասանեն անդր գնացք արեգականն, և զքաղցր ջուրքն՝ որ են 'ի նմա՝ ոչ ամենայն չատ ծծէ։ Ճառագայթն արեգականն, քանզի ուղիղ կարէ յանել անդ։ Օ ի յոյժ յօժար են ձկունք ծովուն երթալ 'ի ջուրս քաղցունս, որպէս տեսա-նեմք՝ զի բազում անգամ ելանել 'ի ծովէ երթալ 'ի ջուր գետոցն. վասն այսորիկ յոյժ յօժար են երթալ 'ի Պոնտոս ծով՝ քան յայլ ծովս. երբու թէ կարի ինն պատշաճ իցէ 'ի մունդս ծննդոց նոցա քաղցրուն ջուրցն հիւսիսային ծովուն։ Այս յորժամ կատարի գործ ծննդեանն 'ի սակաւ ինչ ժամանակաց մնունդն, դարձեալ միասնագամ միաժողով անդրէն 'ի տեղիս դառնան՝ երբև յիւրաքանչիւր բնակութեան։

Լուիցուք դարձեալ երբև բանս 'ի համրացելոցն. տեսցուք զինչ ասեն զհիւսիսային ծովէն։ Ծով մե-ծանիստ՝ ապալեպ շեպ՝ անխորշ անգոգ է, ասեն, ծովն այն, և բնութիւնք ցրտաշունչ հողմոցն միշտ ան-դադար շնչեն 'ի նմա, քանզի լայնանիստ մեծութիւն տարածեալ կայ առաջի նոցա, և միշտ մրրկեալ ամ-

1 Յոր. ՀՈՎՐՈՒԷ։ 2 Յոր. ԺԺԷՆ։

բոխեն զնա ալիք. և իբրև զառ 'ի թափ իմն են գնացք ծովուն։ Լ�չ 'ի նեղբին անդընդոց յատակացն դարձուցանեն հողմքն զջուրս նորա, և զսիկ և զաւազ ծովուն ընդ կուտակեալ ալեան խառնեն։ ԼՉ 'ի ժամանակ ձմերայնոյ սառնատաւոյց սառնամանիք փչին 'ի նմա, և բազում գետք յորդաջուրք մտանեն 'ի նմա։ ԼՉ յորժամ ընդունին 'ի նմանէ երամք ձկանցն սակաւ ինչ հանդիստ 'ի ժամանակս ամարայնոյ, դարձեալ ելնանեն ձմեռն կոյս 'ի ձմերոց 'ի մեւս ծովն, որ խորշիւք և գոգովք խորոցն անքոյթ և պատսպարան լինի նոցա 'ի դառնաշունչ հողմոցն ամբոխելոց, զնա ցեալք փախստեայ 'ի ցրտաշունչ մրրկացն հիւսիսայնոյ ծովուն ըստ ջերուցանելոյ արեգականն յայլ ծովս՝ որ յաստահուն իցեն 'ի խռովութենէ։

ԼՉս իմով աչօք տեսի զայս, և զարմացեալ սքանչացայ ընդ ամենատես իմաստութիւն ՝այ, զոհացայց և փառաւորեցեալ։ զի եթէ համբացեալ անասունքն ունին փոյթ յանձին, ինդրել հնարս առ 'ի պահպանութենէ կենաց իւրեանց, և գիտեն ճանաչել զոգուտ և զվնաս իւրեանց, մեք զինչ ասասցուք մերոց անձանց։ Օ՝ի եթէ բանիւք ասեմք՝ պատուական եմք, և եթէ օրինօք՝ վարժք և կիրթք, և եթէ աւէ տեսքն ՝այ՝ միշտ յառաջ գալ և զարգանալ յորդէն, և զգեցեալ զսուրբ հոգիս՝ որով իմաստացուքս և խրատեսցուք, և գուցէ որպէս երևի իսկ՝ լինիցիմք այսու ամենայնիւ անհամք, և պակասեալք 'ի նմանութենէ ձկանց գտանիցիմք։ Օ՝ի ձկունք վասն հանդերձելոյ իրաց հոգալ գիտեն. իսկ մեք իբր յուսահատութիւն իմն ունիմք առ հանդերձեալսն վասն հանգստեան աշխարհիս ցանկութեաց, և զկեանս մեր իբրև զանասունս ծախեմք 'ի նոսա։ Օ՝ի ձկունք վասն հանգստեան իւրեանց անձանցն զայսչափ ծովս փոփոխեն, իսկ մեք զի՞ գործեսցուք, զի կեանքս՝ մեր միշտ դատարկացեալ 'ի բարեաց գտանին, և դատարկուն սկիզբն է չարեաց։ Ո՞ւրդ մի՞ որ դիցէ բարուրս, եթէ չեմ տեղեակ բարուց իմոց. զի թէ կամիք՝ 'ի քնէ յարարածոյս մերոյ յանկեալ ունիք զընտանուն հաճոյիցն՝ զօտարութիւն չարութեցն։

ԼՉ արդ զինչ արարից, զի ոչ կամին բանք իմ ե-

լանել ՝ի պատմութենէ զեռնոց՝ որ ՝ի ջուրս շրջին , զի վասն նոցա իսկ արարաք զՀառս։ Լուայ յառնէ միոջէ , որ կայր ՝ի սահմանս ծովու , ասէ . Լ,քինոս անուն զեռուն մի փոքրիկ անարգիկ է ՝ի կղզին ՝ի մէջ ծովուն . և բազում անգամ , ասէ , վարդապետ լինի ցածութենէ և ամբոխելոյ ծովուն նաւավարաց՝ որ միշտ շրջին ՝ի նոսա . և զայս գործելով իբրու թէ գուշակ ինն կանխաւ խռովութենէ ծովուն և խստաշունչ հողմանցն , երթայ , ասէ , եքինոս խթի ընդքարիւն , և մածնու կայ ՝ի նմա իբրև զանկիրոս [1] , որ ինչանէ մածնու կայ ՝ի վերայ երկրի . և զծանրուն քարին՝ թիկունս և ապաստան առնէ իւրոյ անզօր թեթևութենէ , զի մի առնուցուն ալիքն և այսր անդր կոծեալ կոչկռտիցին . և իբրև տեսանիցին զնա այսպէս նաւավարքն , անդէն իմանան՝ եթէ հողմայոյզք լինելոց է։ Զիք քաղդեայ և ոչ աստղագէտ , և ոչ իմանայցէ յայնց գնացից աստեղաց յառաջագոյն ըզփոփոխումն օդոց և զամբոխել հողմոց ։

Լ,ուդ ոմ ուայց զայս՝ եքինոս տկար զեռնոյ , եթէ ոչ այն՝ որ ՝ներն է հողմոց և ծովու . և սակաւ ինչ նշան իւրոյ մեծասքանչ իմաստութենն նկարեաց եղ յայտ յանդիմանն նմա ։ Լ,ս յայտ է՝ թէ չիք ինչ որ հաստատեցաւ , եթէ իցէ առանց առաջնորդութենէ ՝այ . և չիք ինչ յարարածոց՝ որ յանփոյթութենէ առանց տեսչութենէ կայցէ ։ Զ՝ամ ինչ բաւական է տեսանել ակն մեծութենէ նորա , և ՝ամիւ առաջնորդել . զի ակն է նա արթուն իմաստութենէ ՝ամի , և առ ամենեսեան մերձ է տալ զկեանս և զօգնականութիւն ։ Լ,թէ զեքինոս առանց տեսչութենէ իւրոյ մեծութենն ոչ արար ՝ած , զմեզ զիարդ իցէ՝ զի անտես առնիցէ ։

Լ,ուք , սիրելքէք զկանայս ձեր . թեպէտ ՝ի հեռաստանէ վայրաց եկեալ պատահեալ էք միմեանց , այլ զուգութիւն ամուսնութենն հաղորդեցայք՝ եղեալ էք մի մարմին . քանզի կապանք արդարութենէ է ամուսնութենէ , և իբրու թէ ՝ի ճակ արարածոց ՝ի մի մարմին հաստատեցայք , և ՝ի մի լուծ ՝ի մի կշիռ լծեցայք երկոքին օրհնութիւն ։ Լ,թէ իւր , չար գաղան և դառն

1 Խմա ԷՐԲԼ ՁԼԱՐԻՈՒ . զոր Նշանակէ յայնն ՈՒՂԻՐ։

'ի սողունս երկրի, 'ի զուգութեան ամուսնութեան հաղորդի ընդ միւռեռնէս՝ զեռնոյ, որ բնակեալ է 'ի ծովու։ Եւ այսպէս զայս նշանս ցուցանէ զսէր իւր իժն. երեթայ կայ առ ծովելերին և չէ, այսու բարբառով կոչէ ածէ 'ի ներքուստ 'ի խորոցն զմիւռեռնէսն 'ի հաղորդութեան ամուսնութեան, և գայ հնազանդի խառնակեալ ամուսնութիւն ընդ դառնագոյն գազանին։ Օ այս ասելով 'ի Ճառիս՝ կամիմ ուսուցանել, զի թէ խիստ ոք և ստամբակ լցէ մեր ընտանի, հարկ է համբերել, քանզի լծակից մեր է. և մի իւիք ընցուք պատճառս որոշելոյ 'ի միմեանց. և եթէ վաղվաղուն ձեռաք լցէ առ 'ի հարկանել, սակայն պարտ է մնոջն համբերել, վասն զի այր իւր է. և եթէ արբշիռ լցէ, որովհետև 'ի մի մարմին համարեցայք, օրէն է ներել. և եթէ չարաբարոյ և ընդունայն լցէ, անդամ պատուական է, քանզի գլուխ քո է, ով կին դու։ Ոուիր ցէ և այրն զօգտակար խրատն 'ի մէջ. եթէ լիժ վասն սիրոյն զոր ունի առ միւռեռնէս, առանց ինասելոյ են թոյնքն, և թերևս հեղու ընկենու 'ի բաց զթիւնն առ սեր ամուսնութենն, արդ դու ընդէր ոչ հատանիցես ընկենուցուս 'ի քէն ամենևին զնստութիւն և զչարաբարութեան, և միտ եղեալ վարեսցիս խաղաղութիւն զհասարակաց միաբանութեան։

Ա.ՍԼ թերևս յայլ երեսս պարտիցեմք լսել զչար լիժն և զմիւռեռնէս զեռնոյ. զի հաղորդութեան նոցա ոչ սուրբ ամուսնութեան է, այլ պոռնկութեան. և առ տի խնասցին որք ժաղջհինն խառնակել ընդ այլոցն ամուսնութեան, թէ որում դառնաթոյն սողոյ նմանեն չարութեամբ գործոց իւրեանց։ Ոանզի 'ի մի միայն կէտն միտ եղեալ ընթանամ՝ ամ բանիւքս՝ զոր խօսիմ, զի եկեղեցւոյն՝ այ օգնական և չինիչ գտայց. և եթէ յաձախեմ բերել օրինակս յերկրէ և 'ի ծովէ, կարձել զյանդգնութեան չարեացն հնարիմ յայնցանէ՝ որք ոչ արժանաւոր գործովք վարիցեն զվարս իւրեանց. զայս ամ ասելով խրատ անխրատիցն յաձախեմ։

Եւ արդ սովին Ճառիս կատարեալ զանս՝ զոր խօս-

1 Յոր. ասա և զնի Դ-ԲԻԼ. 'ի լուս. Մ-ԲԻԼ։

սիմն, վասն տկարութեան մարմնոյս իմոյ և զի ժամն երեկոյի եկն մերձեցաւ, բազում ինչ ունիմ առնել յաւելուածս լսողաց՝ որք ախորժելով և ուրախութիւն կամին լսել զհրաշակերտ զարմանալիս զեռնոց՝ որ շրջին 'ի ծովս, և զծովուն մեծի զպատճառս ջուրցն աղութիւն, և զպատուական և զծանրագին ականն, որ անուանեալ կոչի կորալոն։ Օ՝ի սկիզբն ականն ախորիկ իբրև զդալարի կանանչագեղ բուսանի 'ի մէջ ծովուն, և անդէն վաղվաղակի իբրև մեկնի 'ի տեղոյ անտի, յընդունել զօգն քաղցրաշունչ՝ սկսանի խստանալ լինել իբրև զքար հաստատուն։ Այս ուստի իցէ՝ ոստրէոն տկար զեռնոյ յղանալ ծնանել ըզմարգարիտն պատուական, եթէ ոչ 'ի միոջէն միայն 'ի ներսէն և յարարչէն՝ որ կազմեաց եդ զնա 'ի բնումն նորա։ Օ՝ի իբր մեծամեծք և պատուականք՝ արժանաւորք գանձուց թագաւորութեան 'ի ծովս աղխաղխեալ կուտեալ կան, և ընդ անջրպետս վիմաց նորա ցանեալք և ցրուեալք, և 'ի խորս և 'ի պատեանս գաղտակրեաց համբարեալք և ծածկեալք։ Այս ուստի՞ իցէ դարձեալ ասին ոսկերէն, զոր Եպիփան [2] գաղանք մնուցանեն. զի 'ի նոցանէն լինի ասին այն, որ ոչ երբէք ուրեք յիմաստուն նարօտաներկաց կարաց յայտնիսի գոյնս ներկել յաշխարհի։ Այս կամ ուստի՞ իցէ խղճունջնաց տալ զծիրանիս թագաւորութեան, որ առաւել անցանեն պայծառութիւն քան զամ ծաղիկս՝ որ յամենայն մարգս պայծառացեալ փայլին։ "Ողնեսացէն, ասէ, ջուրք"։ Այս ո՞ր զարմանալի իրք էին, որ ոչ եղէն այսու պատգամաւ. կամ ո՞ր ծանրագինք էին, որ ոչ տուան աշխարհի 'ի սկիզբ մերում այսու հրամանաւ։ Օ՝ի կէսք 'ի նոցանէ՝ որ հաստատ տեցան 'ի ծովս, 'ի պաշտօն մարգկան տուան, և կէսք 'ի տեսիլ աքանչելի, և յահ և երկեւղ մերոյ խրատու։

"Ա՞բար, ասէ, ՝ՃԾ զկէս մեծամեծս"։ Ա՛յ զի քան զկարիդոս և զմենիդոս [3] մեծամեծք են՝ վասն այնորիկ մեծս կոչեաց զնոսա գիրքս, այլ զի լերանց նման

1 Յօր. Խրոգիէն. 'ի լուս. Խրոգիէն։
2 Յօր. Էպանիս. Լոգաք ՝ի լուս։
3 Յօր. Զմարիդոս և զմենիդոս։

են մեծութիւն վերթխարիք[1] մարմնով։ Այս բազում անգամ վասն անարի մեծութեան կղզեաց նման են, յորժամ երևեցուցանեն սակաւ մի 'ի մարմնոցն 'ի ջուրցն վերայ. և այնչափ նշանակերտ ահագին մեծութիւն գազանացն ոչ յերևելիս ծովուն գտանին, և ոչ առ եզերս ծովուն շրջին, այլ յայնմ ծովու՝ որ անուանեալ կոչի անտղանտիկոս, մշտնջենաւորեալ բնակին։ Այս այսպիսի ահագին գազանք յահ և երկեղ մեր հաստատեցան։

Լսէ կամիս՝ լուր և մեաս և սքանչելի պատմութիւն. զի մի 'ի մեծամեծաց նաւուց՝ որ գոգս առեալ ուռուցեալ առագաստիւք ասպատակի 'ի վերայ միանոց ծովուն սլացեալ, ոսոխ իցէ ձկնիկն մի փոքրիկ՝ որ անուանեալ կոչի եքինեիս, որոյ այսպէս թարքմանի անուն իւր՝ նաւակալ, այսպէս դիւրաւ ունի զմի մի 'ի մեծամեծաց նաւաց, ոչ սակաւ ժամս քնաւ ամենևին ոչ տայ շարժել 'ի տեղւոյ անտի. և այնպէս տեսանին կապեալ կծկեալ զնաւն ակաղձուն[2] 'ի վերայ ջուրցն՝ իբրև զտակ առեալ հաստատեալ կայ անշարժ և անտատան։ Այս այսու փոքր զեռնով և նշանակերտ գործոնի՝ ոչ ահա զմեծ զօրութիւն արարչին ուսանիմք։ Վասնզի ոչ եթէ միայն որ անուանեալ կոչի քսիփիէ, պրիտնէ[3] և ինջրիք և կեփաղք, և զիրն իցեն[4] ահագինքն և ահարկուքն, այլ և խաչաթոգք արիգտնին, որ է ձուկն ծովուն, որ և յետ մահու իւրոյ մեղանչական է։ Այս նաւապատակ ծովու ոչ սակաւ ինչ ահաւորութիւն ունի՝ որ ածէ վաղվաղակի ատուերածս[5] օրհաս 'ի վերայ մարդոյ, և ոչ տայ զանձամբ զառածանել և զփաղել ուրեք։ Այս արդ զամենայն արար արարչին, զի յաձախեսցէ նոքօք զօրուն մտաց քոց. զի յորժամ հաստատեսցի յոյս քո 'ի նա, ապրեսցիս յայն ամէն վնասակար գազանաց։

Այս արդ այսուհետև փոխեսցուք 'ի Ճառից ջրածին գազանաց և երթիցուք առ 'ի Ճառս պատմութերկրի. քանզի յայլոց այլք բղխեն, և մի զմիով եալ նեն մեծասքանչ զարմանալիքն այ. և իբրև զկուտա

1 Յօր. Վերթխարիք։
2 Յօր. Ակաղձուն։
3 Յօր. Պրիտնէ, պրոնէ. 'ի Լուս. Գոնէն, գոնրնէ։
4 Յօր. Զի գինիցեն։
5 Յօր. Պատերազմս։

կեալ ալիս Ծովու զմիմեանսիք դիպեալ զերծուն ըստ իւ-
բաքանչիւր արագընթացն արշաւանացն։ Եւ արդ
հեղան զերծան զարմանագործ աքանչելիքն այ 'ի վերայ
տկար բանիս իմոյ, և իբրև թէ ընկղմեալ ծածկեցաւ
'ի փառաւորութիւն մեծաց զարմանալեացն։ Եւ ընդ
այս առաւել ևս զարմանամ, զի ևս այնչափ մեծա-
մեծք այնք են՝ որ գալոց են. և անցանեն մեծութիւնք
աքանչելեացն ըստ խորհուրդս մեր այնց՝ որ դարձեալ
միւսանգամ յերկրի պատահելոց իցեն մեզ։ Եւ յոր-
ժամ նայիմ ընդ այն ամ, առաւել լաւ համարիմ
անդէն 'ի Ծովուն կալ մնալ իբրև փախստական 'ի
աքանչելեացն այ՝ ըստ նմանութեան Յովնանու, որ եղև
փախստեայ յայ։ Եւ արդ զիարդ անկայ յայսմ ամ
զարմանալիս այ, և մոռացայ զպայման տկար բնութեան
իմոյ։ Ի,ման եմ այնոցիկ, որ ընդ Ծովնաւովք գնայ-
ցեն. և քանզի ոչ աշխատութեամբ գնացիցն զգան ան-
ցանեն, վասն այսորիկ ոչ իմանան զչափ վայրացն զոր
հատանեն՝ թէ որչափ ինչ գնացին. նոյնպէս և բանք
մեր, քանզի ընդ ոլորտս մտեալ ընթանալ 'ի Ճառս
կազմածոյ արարածոց, վասն այսորիկ ոչ գիտեմք ըզ-
բազմութեան Ճառիս զոր խօսեցաք՝ թէ որչափ ինչ իցէ,
մանաւանդ 'ի մէջ այսպիսի աքանչելի Ժողովրդոց, որ
սիրով և ախորժելով լսելեաց ընդունին զՃառս քաղ-
ցուցեալս, որ պատմին վասն զարմանալեաց գործոց ՅԾ-
ութեանն։

Ի.ընդ ասա և 'ի սմին ժամու արասցուք հանգիստ
բանիս. և այսու հայեցեալ սպասեսջիք, զի հատու-
ցանողք լինելոց եմք ձեզ 'ի սկիզբն տուընջեանն վա-
ղուի՝ մնացորդաց Ճառիս, զոր լսելոց էք 'ի մէջ։ Եւ
'ի վերայ այսր ամի զոր խօսեցաք՝ յարիցուք և տա-
ցուք գոհութիւն այ, և խնդրեսցուք 'ի Ճշմարիտ պար-
գևատուէն կատարումն Ճառիցն՝ որ գալոց են։ Եւ
արասցէ ձեզ ամ, զի առ մարմնաւոր սեղանս յորժամ
ուրախ լինիջիք, սոյն Ճառք պատմեսցին 'ի բերան
ձեր. զի զոր ինչ լուայք 'ի մէջ ընդ առաւօտն և զոր
ընկալայք բանից 'ի ժամ երեկոյիս՝ ընտիրցեն ձեզ
հանապազորդ, և խառնեսցին քաղցր և անուշ Ճա-
շակքն ընդ քունս ձեր, զոր ընկալայք մնօք 'ի զուար-
թութիւն տուընջեանս. զի եթէ ունջիցեք և եթէ ար-

թուն իցէք, եղեցի Հանդիստ ձեր յաւծ, և զայս ա-
սասջիք՝ եթէ մեք ենջեմք և սիրոք մեր արթուն են։
Օ ի եթէ 'ի տուէ իցէ և եթէ 'ի գիշերի, յօրէնս
այ մերոյ խորհեսջիք, և յամենեցունց փառք և պա-
տիւ տացին Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՀԱՐԻ ՈՒԹԵՐՈՐԴ

ՎԱՍՆ ՎԵՑՕՐԵԱՑ ԱՒՈՒՐՑ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

« Եւ ասաց, ասէ, ՏԾ. Խղճեսցէ երկիր զեռուն կայտառ շունչ կենդանի ըստ ազգի իւրում՝ չորքոտանի, և զեռուն և գազան երկրի ըստ ազգի իւրում. և եղև այնպէս »։ Զոր եկն հրամանն և հորդեցաւ Ճանապարհ գործով երագընթաց ակնարկելոցն, առնոյր և երկիր զարդ անդամոն յիւրմէ հաստատել աներնամտոցն Տամի։ Եւ որպէս 'ի Ճառին[1] զոր ասացաք, զի ասէ « Խղճեսցէն ջուրք զեռուն կայտառ շունչ կենդանի ըստ ազգի իւրում »։ Նոյնպէս և աստ դարձեալ ասէ, « Խղճեսցէ երկիր շունչ կենդանի »։ Զոր զի՞նչ ասացուք, մինթէ չնչաւո՞ր իցէ երկիր. և պատճառս գտին յայսմ բանէ ստայոգ մանկբեցիքն ասել՝ թէ չնչաւոր իցէ երկիր։ Ոչ վասն զի ասացաւ՝ թէ բղխեսցէ երկիր, իբրու թէ զիւր ինչ զոր ունէր բղխեաց. այլ հրամանատուն արկ 'ի նա զզօրութիւն բղխեալ ինչ՝ զոր ոչն ունէր։ Եւ ոչ յորժամ առնոյր երկիր հրաման բղխել զբոյս խոտոց՝ սերմանեօքն հանդերձ ըստ ազգի իւրում, և զծառ պտղաբեր՝ որ առնիցէ պտուղ ըստ ազգի իւրում, ծածկեալ ժողովեալ կային[2] 'ի նմա սերմանիքն և ծառք, և ապա բղխեաց. քանզի ոչ եթէ 'ի սանդարամետս երկրի զողեալ կային տունկք և բոյսք, և ապա եկին ելին 'ի վեր երևեցան. այլ բանն այ է կազմիչ ամ բնութեց իւրով մեծազօրն հրամանատրութեամբն։

« Խղճեսցէ երկիր սերմ 'ի սերմանել »։ Ոչ եթէ զիւր ինչ ունիցի տալ, այլ զոր ինչ ոչն ունիցի[3], և եւ նմա ՏԾ ունել զոր ինչ ոչն ուներ, և բղխել ըստ հրամանատարի իւրոյ զօրուէն։ Եւ այսու դարձեալ

1 Յօր. 'ի Ճառին։
2 Յօր. կայ 'ի նմա։
3 Յօր. զոր ինչ զոր ունիցի։

զոր ասաց, եթէ «Դողխեսցէ երկիր զշունչ կենդանի», ոչ եթէ զոր ինչ կայր 'ի նմա՝ անխարկեաց բըղխել, այլ ինչ զոր ինքն իւրով հրամանաւն ետ նմա տալ՝ կատարեաց վաղվաղակի արդեամբք։ Դարձուցցուք զանս մեր առ այնոսիկ՝ որ հնչաւոր գնեն զերկիր։ Օ՛ի եթէ հնչոյն երկրի հրաման տայր ելանել՝ ըստ խոստմանակ մտաց կամակորացն որ զայն ասէին, ապա յոչինչ և 'ի կորուստ դարձուցանէր զերկիր՝ հաւնելով զշունչն 'ի նմանէ։ Դանի՝ խոստեալ քանն մանրեցուց է՝ որ աստի ունի զվկայութիւն։

Դ.ուդ վասն ելոյ արդեւք առին հրաման ջուրք բըղխել շունչ կենդանի, և կամ երկիր ըստ նմին օրինակի առնոյր հրաման բղխել շունչ կենդանի։ Օ՛ ջրայինն զեռնոց և լուղակաց զանուանէնէ այսպէս ածեալք զմտաւ, թէ ոչ լիով ունին զկենդանութիւն ըստ հաճմատի ցամաքային անասնոց։ Դանդն 'ի մէջ թամձրութեաց ջուրցն է քնակութիւն նոցա, և ծանր լսէն, և ընդ աղօտ տեսանեն։ Ել ուշ յիշատակի ունին ձկունք, և ոչ տեսիլ՝ որ ընտրիցեն զգէմն 'ի դիմաց, և ոչ համբայրս ծանօթիցս։ Դ.ա զկենաց՝ յորում կանն մարմնով ցուցանէ մեզ բան գրոյն, այս ինքն զայնցանէ՝ որ 'ի ջուրսն ունին զկենդանութիւն, թէ զարժումն միայն ունին զնչաւորութիւն։ Դակ ցամաքային անասունք երբեւ իմացումն ինն ունին, և դիւրագոյնս գիտեն ընտրել իմանալ. և երագս տեսանեն, և զանցեալ իրս յիշեն. քանզի բազումք 'ի ցամաքին չոքըն տանեաց ունին զայս առաւելութիւն։ Ա՛ ամն այսորիկ ինձ այսպէս թուի, թէ զմարմինս՝ որ ունին 'ի կենդանութիւն շնչաւորութեան, ունին և զեռունք ջրայինք, զի շունչ կենդանի զոր բղխեսցին ջուրք՝ 'ի նոսին կան մնան լինել։ իսկ վասն հնչոյն, զոր ցամաքային անասունքն ունին, եղև հրաման՝ զի մարմին հնչաւորութիւն և զօրութիւն ընտրողութեամբն առնիցեն աւելի քան զջրային զեռունս։

Դայց երկոքին ազգք առանց բանի ունին զկենդանութիւն. այլ ցամաքային անասունք ունին ըստ իւրաքանչիւր բնութեան և բարբառս և ազգմունս։ Օ՛ի

1 Յօր. փանդ։

ուրախ լինին ընդ դեւր, և տրտմին ընդ դժուարիսս, և հանապազորդ համբուրին, ունին զմտրողութիւն, և իմանան զնուազութիւն դարմանոց իւրեանց, և հեռանալ 'ի միմեանց հաւանութեաց գիտեն, և բաղում անգամ զկարիս տրտմութիւն բարբառովն յայտառնել ջանան։ Լայց ջրային և ծովային զեռունքն ոչ միայն բարբառս ոչ ունին կենդանութեան, այլ և ոչ համբոյր ընդ այնմ՝ որ մերձենայցեն 'ի նոսա. և ոչ յուսումն գալ յօժարին և ոչ 'ի հաղորդութիւն և 'ի կերպարանս մարդկան։ Լսկ զցամաքային և զերկրաւոր անասունս ասացեալ է, թէ Օ՝ասեաւ երկն զստացիչ իւր, և եէր զմնուր տեառն իւրոյ։ Զուկն զդարմանիչ իւր ոչ գիտէ Ճանաչէլ, բայց էր զբարբառ համբոյր մարդկան անվրէպ Ճանաչէ. և Ճանապարհ ընդ որ մի անգամ անցանէ՝ այլ ոչ մոռանայ, և դէպ լինի՝ զի իշավարն մոռանայ, նա իբրև տեղեակ՝ զուղղորդն տանի։ Լ՝այլ երագ լսելոյն, որպէս և ասեն, և ոչ մի ինչ յանանոց է այնպէս սուր լսելիք։

Լսկ ոխակալութիւն և չարայուշ բարոյից ուղղոց, որ մրմնջալ լի դառնութիւն պահեն ոխս, զիարդ կա՛ ելիցեն նմանել ջրային զեռունքս։ Օ՝ի յորժամ հարկանիցէ զք զուղղ և զայրացուցանէ, և բաղում աւուրք 'ի վերայ գանին անցեալ լիցեն, պահէ 'ի մտին զոխսն և ոչ մոռանայ. և սպասէ այնմ՝ որ Եհարն, թէ զիարդ կարասցէ անկանել 'ի վերայ. և եթէ գտանէ ժամանակ պատշաճ, հանէ զվրէժն և ոչ թող։ Լ՝ուիցեն զայս ցասկոտք և ոխակալք. զի զոխս 'ի սրտին բունեալ պահեն, իբրև լաւ իմն և մեծ համարին։ Լ՝ու արդ տեսցեն որո՛ւմ չարաբարոյ դազանի բերեն զոբինակ նմանութեան, և զչարիսն որ լինելոց են 'ի նոցանէ առ մերձաւորս իւրեանց՝ մնուցանեն 'ի փորի և զօրացուցանեն. զի առ զայրուցս բարկութեան զոր ունին 'ի մտի՝ արասցեն յետոյ դիւրաւ զնիսս ա պականութեան։ Լ՝ու նման են կրակի՝ որ ծածկեալ կայ յանթեղն. զի ցայն վայր է դաղարիլն նորա յայրելոյ, մինչ զի գտցէ ինչ՝ որոյ տիրեսցէ. և յորժամ գտանէ տեղի՝ վառեալ բորբոքի հանդերձ բազում փայտիւ. յորժամ Ճեպեալ բոցոյն և տոչորեալ հրատիսյն, ցուցանեն զնուազդ նորա 'ի ինչս ապականութեան։

«Ղղխեսցէ, ասէ, երկիր շունչ կենդանի,» Ա ամն էր ղղխեսցէ շունչն կենդանի այն յերկրէ. այլ զի դու իմասցիս զառաւելութիւն հնչոյն՝ զոր ունին մարդիկ՝ քան զշնչոյ [1] անասնոց. և զմեկնութիւնս նոցա յառաջագոյն կոյս Ճառիս լսելոց ես։ Ասէ ցուցանէ լոյ գրոց՝ շունչ ամ անասնոյ արիւն իւր է. քանզի յորժամ հեղուցու արիւն անասնոյ, և կամ յորժամ մեռանիցի, արիւնն կապի և 'ի միս դառնայ. և միսն յորժամ եղծանի, 'ի հող շրջի. և յայտ է թէ յերկրէ է շունչ անասնոց։ «Ղղխեսցէ երկիր շունչ կենդանի,»։ Լաւ այսու քանիւ շունչն եղև արիւն 'ի մարմինս անասնոցն, և եղ երևեցաւ աշխարհի։ Այսեաց ընդ կարգս բանիցն և տես, զի շունչ արիւն անուանեցաւ, և յարիւնէ անտի հաստատեցաւ մարմին, սոյնպէս և լուծանի. զի որպէս յերկրէս եղ լեալ հնչաւորութիւն, նոյնպէս ըստ նմին նմանութեան անդրէն 'ի յերկիր դառնալոց է։

Դարձուսցուք դարձեալ զսոյնս յայլ դէմս երկրորդել։ Յերկրէ եղեն անասունք, և անդստին յերկրէ առին զմարմին, և 'ի մարմնոց երևեցաւ արիւն, և յարիւնէ անտի եկաց հնչաւորութիւն։ Լաւ այսու՝ զի բղխեաց եղ կենդանութեան նոցա կատարեալ անձամբ յերկրէ, յայտ է՝ եթէ յերկրէ է շունչ նոցա արեամբն։ Լաւ մի կարծիցես՝ եթէ շունչ անասնոցն երեց է [2] քան զկազմած անդամոց նոցա, և ոչ եթէ յետոյ եղև մարմինն որ կազմեցաւ։ Լաւ մի զայս ածիցես զմտաւ, թէ յետ լուծանելոյ անասնոյ՝ մնացէ 'ի նմանէ շունչն անձամբ, կամ փոխեսցի ուրեք 'ի մարմնոյն՝ յորում էնն։

Փախիցուք 'ի շատախօսութենէ փիլիսոփայիցն, և 'ի հպարտութենէ ամբարշտութեան նոցա. զի ոչ ամաչեն ընդ այն զոր ասեն, թէ շունչք իւրեանց կերպարանակիցք են հնչոց շանց։ Վասնզի այսպէս ասեն և զշնչոցն իւրեանց, թէ երբեմն 'ի կենդանիս մտանեն, և երբեմն յարմատս, և երբեմն 'ի ձկունս գտանին։ Լաւ եթէ զձկանց և զշանց շունչ ունէին, որպէս ասենն, ապա բաղում բանք՝ որ կարծին թէ իմաստունք իցեն և նոքին իսկ գրեն զնոսա, ոչ գտա-

1 Յօր. փանդ ընդ։ 2 'Ի լուս. յեռոյ է։

նին 'ի նոսա . քանզի հնչեալքն անսանոց ոչ կարէին ի-մանալ զայսպիսի բանս իմաստունս . այլ առանց բա-նից և առանց հաճեստ հանձարոյ էին ըստ օրինակի շանց և ձկանց , թէ արդարև [1] զնոցա ունէին ։ Լու-ինձ քաւ լցի ասել զնոցանէ , եթէ արդարև այնպէ-սի շունչս ունէին զնոցա . բայց զայս վկայեմ , թէ որովհե-տև այնպէս ածէն զմտաւ՝ վատթարագոյնքն ևս գտա-նին քան զանասունս ։

" Խղճեսցէ , ասէ , երկիր շունչ կենդանի " ։ Լու-արդ զինչ պատճառք եցեն այսր , զի մինչդեռ յաս-պատակի երթայր բանս՝ յանկարծակի էառ զկայ , լռեալ ոչ սակաւ ժամն . այնպէս զի բազումք զարմ-մացան , թէ վասն Կր լռեաց ։ Բայց գիտեմ , թէ վէն վերկրեալ 'ի մտաց փոյթ քննողաց պատճառք մերոյ լուութեան . զի 'ի լռել բանիս տեսի զբազումն ընդ մի-մեանս հայեցեալս՝ միմեանց ակնարկեալս . իբրև դարձուցի զերեսս հանդերձ բանիւն առ նոսա , գիտացի՝ թէ իմացան զինչ մոռացաքն ։ Զանզի զկազմածն ազգի միոջ որ եմուտ յաշխարհս մոռացաք 'ի ճառիս , և ոչ սակաւ ինչ ազգ , յարագել [2] և յանսատել բա-նին առանց զգուշութեան կորուսաք զպատմութիւնն ։ Զ'ի այսր ճառի՝ որ ասէ , եթէ " Խղճեսցէն ջուրք շունչ կենդանի " կատարեցաւ մեկնութիւն , որպէս ձեռնտու եղև մեզ ժամն՝ որ յառաջ քան զերեկոյն էր . այլ զայնմանէ՝ որ ասէ , " Ածուցուս թեւաւորս , որ թռչիցին 'ի վերայ երկրի , և անդստին 'ի ջուրցն , ըստ հաստատութեան [3] երկնից՝ ըստ ազգի իւրում " , պարտիմք խօսել ։ Լուկեացուք այսու հետև բանիս առ այն ինչ՝ որ մնաց 'ի մէնջ , և 'ի վերոյ քան զերկինս՝ որ խաղան յօդս ։ Զ'ի մոռանալով զյիշատակ ճառիս , նման եմք մարդոց՝ որ 'ի ճանապարհ ուրեք կա-մին չուել , և մեծ վայրս խաղացեալ յառաջ երթիցեն , և ապա ուրեմն յիշեն , թէ իրս ինչ՝ որ կարի [4] պիտոյ էին՝ մոռացան , և անհարց անդրէն մնդ կրկին դառնայցեն ։ զի տայցեն զտոկոսիս ծուլութեն և յու-լութեն աւելի աշխատութեամբն՝ որ առնիցի նոցա

1 Յօր. Եթ էր արդարև ։
2 Յօր. արարեր Լ ։
3 Յօր. 'ի ջուրցն հաստատութեն ։
4 Յօր. որ կարդի ։

'ի Ճանապարհին։ Այնպես և մեք ըստ նմին նմանութեան առցուք յանձն աշխատուել. քանզի ոչ եթէ արհամարհանաց ինչ արժանի են իրքն՝ որ անցին ըզմտաւ, այլ ազգ մի էր երրորդ[1] յայտնանէ՝ որ մտին լինել յարարածս, եթէ պարտ և պատշաճ իցէ առնուանել զնոսա ազգս երիս. զի մինն է անասուն երկրի, և մեւսն թռչուն օդոց, և մեւսն զեռուն ջուրց։

"Ասղեսեսցին, ասէ, ջուրք շունչ կենդանի ըստ ազգի իւրում, և թռչունս թեւաւորս 'ի վերայ երկրի ըստ հաստատութեան երկնից, ըստ ազգի իւրում"։ Իսկ վասն էր արդեւք 'ի ջրոյ արար զազգն թռչնոց. այլ քանզի որպէս երեւին՝ ազգակից միմեանց են թռչունքն օդոց և լուղակք ջուրց։ Օ՜ որ օրինակ ճկունք ջուրց տիրեն, և այսր անդր թեւահանեն, լոզան խաղան առ 'ի հատանել անցանել ձեպելով զջուրցն խոնաւութիւն յամ կողմանս յոր և կամին խաղալ, և զկնք ինչ նոցա արգել 'ի ջուրցն բաղմութենէ, նոյնպէս և թռչունք ըստ նմին նմանութեանէ լոզան խաղան յօդս և այսր անդր թեւեն, պատառեն զլոյծ և զտարածք ինութիւն, և անդէն երթեւեկս առնելով լուղին անխափան և անարգել։ Այս արդ թէպէտ և այլակերպք իցեն կերպարանաք, սակայն մի ինութիւն են. քանզի 'ի ջրոյ են ամենեքին, և զնոյն գնացս և զնոյն լոզս ունին ամենեքեան։

Բայց 'ի թռչուն ինութենէն զկնք ինչ որ առանց ոտից իցէ. քանզի յերկրէ է կերակուր ամենեցուն. և ըստ իւրաքանչիւր պիտոյից տուան 'ի պաշտօնս իւրաքանչիւր։ Իսկ գիշակեր հաւուցն՝ որ յորսոյ կեան, և ձիրանունք և սարկեաւառք տուան. և այլոց թռչնոց առ 'ի ընուլ զիւրաքանչիւր պէտս դարմանոցն յերկրէ՝ տուան ոտք, քանզի սակաւք 'ի բազում թռչնոց են՝ որ խիստ ոտիւքն հաստատագիրք իցեն։ Վասն զի ոչ 'ի գնացս ինչ բազում վայրաց տուեալք են ոտքն, և ոչ 'ի պէտս որսոյ. որպէս ծիծառանց և այլոց թռչնոց, որ անուանեալ կոչին մանչալուկք, ոչք յօդոց զմանրամաղ իրս ինչ թռուցեալ բերեն զդալամանս իւրեանց պիտոյիցն. և ծիծառն, վասն զի ոչ

[1] Յոր. երեքերդ։

կայ քնակաւոր կամքը ոտից առ երկրաւորս Թռչել իբրև 'ի հանգիստ։

Այլ արդ բազում ազգք են Թռչնոց, որ ունին զպէս պէս կերպարանս. և եթէ միտ եդեալ նայեսցի զոր ընդ իւրաքանչիւր կարգս նոցա, և ըստ նմանութեանն ձկանցն օրինակի գտանէ զնոսա իւիք իւիք։ Այլ Թէ պէտ ամենեքին մի Թռչուն անուանին, սակայն բազում կերպարանս ունին, այլազգ մեծութեամբ և կերպարանօք և գունովք և քարոյիւք և խաղալեօք և գործովք. և անցանեն ըստ մարդկեղէն բանից՝ անբաւ յօրինուածովք և կերպարանօք իւրեանց։ Իսկ ոմանք այսպէս հնարեցան, զի ըստ կերպարանացն և զանուանս ազգաց նոցա եղին. և որպէս յայտ յանդիման ցուցանէ գրոշմաձառ դրշմ՝ յայնմ որ ընդունիցի զնարանս նորա, նոյնպէս և անասունքն ընտրեցին 'ի միմեանց զազգն ըստ իւրաքանչիւր երամի, որ միմեանց ինչ ոչ նմանեն, և իցեն օտարացեալք 'ի հատարակաց միաբանութենէ։ Այլ զի զկէտն հերձաթեաս անուանեցին, այս ինքն զարծուիս, և զկէտն մաշկաթեաս, այս ինքն զղղիկանս գիշերոյ. և զկէտն սրաթեաս, այս ինքն զմեղու. և զկէտն պատեհաթեաս, այս ինքն խաղողեփեցս և բզեզս և որ սոցին նման են, որ իբրու 'ի պատեհաս ունիցին զթեան, և յորժամ բանան պատեհանքն, յայնժամ առնի նոցա գիւրին լինել 'ի Թռչելն։ Այլ մեզ այն անուանք բաւական են, որ 'ի գրոց տուան, Թէ որ սուրբք իցեն և որ ոչ իցեն սուրբք։

Արդ այլ ազգ գիշակեր հաւուցն է. քանզի այլակերպ կերպարանքք իբրև առ 'ի պէտս որոյն պատշաձեալ են, մագիլս սուրս և հաստաբեստս[1] ունին, և կտուցս կոր և սուր և խիստ, և Թեւս երագունք առ որոյն պատրաստութեն, և որ ինչ 'ի բուռն գայ՝ իբր գիւրաւ ինն յօշեն և պատառեն։ Այլ այլ կերպարանք այնց են, որ 'ի կտոյ սերմանեաց դարմանին. և այլ կազմած այնց՝ որ յորսոյ կեան։ Այլ բազում այլակերպ նմանութիւք գտանին 'ի Թռչունս. զի կէս ազգք երամ երամ միաժողով շրջին, բայց 'ի գիշա-

[1] Յօր. հաստաբէբս։

կերայն՝ որ միշտ յորսոյն կէան և սպասէն. քանզի ոչ ունին համբոյրս ընկերութեան ընդ երամակիցս իւր, բայց ընդ միում միայն՝ որ է ընդ նոսա հաղորդակից ամուսնութեան։ Այլ բազում այլ ազգք են՝ որ համա-գունդ երամ շրջին, իբրև ծիծեռունք և կռունկք և Ճայք և հոլամուկք և սարիկք և տարմահաւք։ Կէսքն առանց գլխոյ և իշխանի՝ բնածին օրինօք ունին զե-բամն իւրաքանչիւր, և կէսք ընդ առաջնորդովք հնա-զանդեալք, այս ինքն են խորդք։

Այլ դարձեալ՝ի նոսին պէսպէս փոփոխմունք գտա-նին. զի կէսքն՝ի նոցանէ չուօք յաշխարհէ յաշխարհ շրջին, և կէսքն անդէն շրջին՝ յիւրաքանչիւր տեղիսն կան մնան զետեղեալք. և կէսքն մնան՝ի ձմեռն չուէն խաղան՝ի ձմերոցս յաշխարհ հեռաստան։ Այլ կէսք՝ի թռչնոցն գան՝ի ձեռս մարդոյ՝ի համբոյր և՝ի մնունդ, բայց միայն՝ ի տկար թռչնոցն՝ որ ահաբե-կեալ զարհուրին, և ոչ ժուժայ եթէ մերձեսցի՝ի նա ձեռն մարդոյ։ Հանդերձ այսու թռչնով՝ որ ընդ մեզ բնակեալ է, են թռչունք՝ որ առ մեզ կային առ-նել զանակութիւն, և են՝ որ լեռնասէրք անապատա-կան բարոյս՝ ապաստան ամրոցս ունին։

Այլ բազում փոփոխմունք գտանին յիւրաքանչիւր յազգս թռչնոց, և կերպարանօք և բարուիւք և բար-բառովք։ Օ՛ի կէսքն՝ի նոցանէն խորամանկք են, և կէսքն միամիտք. կէսքն բարբառօղ են, և կէսքն անբարբառք. կէսքն գեղեցկաձայն և քաղցրաբարբառք, և կէսքն խստաձայնք և ոգեղաբարբառք։ Այլ կէսքն ընտաբոյսք՝ բնութիւն ունին նմանեցուցանել զարբառս իւրեանց, և կէսքն՝ի՝ կրթելոյ և՝ի սովորեցուցանել-լոյ՝ որ ուսուցանիցէն զնոսա, և կիսոցն չէ հնար ու-սանել և փոխել զարբառսն։ Քաղաղ հպարտ է և սեգ, և սիրամարգ զարդասէր է և պայծառաթև։ Զանազան ցանկասէր է՝ հանապազ ամուսնանալոյն, հանդերձ ընտանի թռչնով, զի և նա միշտ ամուսնա-նայ։ Կաքաւ նենգաւոր է, և խորամանկ և նախան-ձոտ և հնարագէտ և որսորդասէր է։ Այլ որպէս աւ սացաք՝ բազում իրք և բարք գտանին՝ի բնութիւս իւ-րաքանչիւր ազգ թռչնոցն։

1 Յօր. պակասին Ն ԷՈՒՆ Ի։

Դարձեալ էն և 'ի Թռչունս բարք բնածինք աղ-
նուականք. զի ամենեքին միաժողով միաբան յորդո-
ւմին, և 'ի մի գործ [1] հասարակաց միահամուռն ելա-
նեն մեծաւ փութով, ինքնակամ յօժարութեամբ. զոր
ունին առ պէտս գործոյն իւրաքանչիւր ամ պարք մե-
ղուայն, զորս տեսանեմք 'ի գործ միով հաւանութեամբ
միաբանեալք. քանզի 'ի միասին կեան, և 'ի միասին
գնան, միանգամայն ժողովին, և միանգամայն թրռ-
չին, և միագործ ՀԵպեալ վաստակեն համարին։ Այս
մեծ քան զամ այս է, զի ընդ իշխանաւ և ընդ առաջ-
նորդաւ էն. և ոչ մատչին 'ի գործ, և ոչ իշխեն եր-
թալ ծաղկաբաղ 'ի մարգս, մինչև տեսցեն զթռչուն
թագաւորն իւրեանց սկսեալ 'ի գործ վաստակոյն իւ-
րեանց։

Այս ունին թագաւոր՝ ոչ որ նկատեալ ընտրեցաւ
'ի վերայ նոցա թագաւորել, այլ որ անդատին յիւ-
րեանց բնութենէ և 'ի նոյն ծնեալ. ոչ որպէս առ
մեզս անարժան գործք գործին, զի առանց քննելոյ
և ընտրելոյ կացուցանեմք մերով ընտրութեամբ մեզ իշ-
խանօրէն։ Այս ոչ մատամբ և վինակաւ առնու զիշ-
խանութիւն բնածին իշխանն թռչնոց, քանզի առանց
բանի և առանց խօսից էն մեղուք 'ի պատահել իւ-
րեանց միաբանց, և ոչ ունին մասն ինչ կամ վինակ
կամ ընտրութիւն 'ի միջի միաբանց։ Օ 'ի բազում ան-
գամ որ յետոյ և յետուստ ծնանիցի 'ի նոսա, լինի
բնածին ծնունդեամբն 'ի վերայ նոցա իշխան և առաջ-
նորդ 'ի փառս արարչին։ Ալ եթէ ըստ կարգի թա-
գաւորութեան՝ ժառանգութիւք իբրև 'ի հօրէ առ որդի
կարգիցի [2] թագաւորութիւն թագաւորին իւրեանց,
քանզի առանց ուսմանց և առանց վարժից յաջողութ-
մարդկան էն. և մեք այսպիսի յաջողութիւք ոչ կա-
միք ստանալ զՀշմարտութիւն։

Այս ոչ, որպէս ասատ առ մեզս լինի՝ զի վասն փափ-
կութեաց և գրգռութեաց ցանկութեանց գլին անկանին
մարդիկ յիշխանութենէն, նոյնպիսի ինչ և առ տկար
ազգս թռչնոց գտանիցի. այլ յընտաբոյս բնութենէ
ունին զիշխանն առ 'ի կարգել 'ի նոսա զկարգս ար-

1 Յօր. Ն 4 գ-ոլ։ 2 Յօր. Խրգեցի։

ժամաւորս։ Եւ այսպէս ունին աղուսական արդասիս յանձին, շքեղ մեծութիւն, գեղեցիկ կերպարանք, հեզ, ցած և համեստ։ Ունի խայթոցս և թագաւորն, բայց ոչ ինչ ուանք մեղանչէ. քանզի օրէնս սա գիրս ընտրեցոյս բնութիւն ունի առ 'ի յօրինուած սա ձանց թռչնոցն, և որ ոք անցանէ զօրինաւքն՝ գտանէ 'ի նոցանէ ինաս անձինն։ Եւ նոքա իսկ մեղուքն, եթէ ոչ անասայցեն երթալ զհետ բարոյից առաջնորդացն՝ զոր ունին գլուխս, վաղվաղակի զղջանան ընդ ժպրը-հուութիւն՝ զոր գործեն. քանզի իբրև հարկանեն զոք խայթոցքն, անդէն ինքեանք մեռանին։ Լուիցուք և մեք քրիստոնեայք, որ ունիմք զպատուէրն ՀՍ, զի մի ուանք ջարի ջար հատուցցուք, այլ յաղթեսցուք բարեաւն չարին, որպէս և Դաւաքեալ պատուիրէ։

Դմանեսցուք առանձնագործ գործոցն մեղուի, զոր իւրովին իւրոյ անձինն համբարէ. զի զինչ որ ոչ իւր իցէ՝ զայն ոչ ասպականէ. և այլոց արարածոց ոչ առնի ինասակար, այլ անձամբ ինքն իւր համբարս համբարէ։ Ո մանն մեղերին մամակերտ՝ գործով շէ նեալ յարդարէ. և զմոմ մաղուցն 'ի ծաղկաբեր մաղ գոցն՝ մեծաւ փութով անդադար ժողովէ. և զմեղրն՝ որ նման ցողոյ զբարամբք և զոստովք և զտերեւօք ծռ բեալ՝ [1] իջեալ կայ, քաղեալ առեալ 'ի բերանն ՀԵ-սպով բերէ, և 'ի խորս մամակերտս գբոցն ունչս արկեալ համբարեալ դնէ։ Եւ յառաջին նուագին 'ի սկիզբն սկսուածոյ գործոցն անգայտ մաղով անսոր գործոյն զգործած գբոցն յօրինէ, վասն ջրի և լոյծ նորոգ զմեղրն ժողովելոյ. իսկ յորժամ յաձախեալ բազմասցի մեղրն, խաւ 'ի խաւ մթեր առ մթեր ժո-ղովեալ կուտիցէ, և բազմօրեայ ժամանակաւք 'ի վե-րայ անցեալ գտանիցին, իբրու թէ առաւել ինն ա-ռաւելութիւն հասեալ Եփեալ գեղեցկանայ ապա յետ այնր ամենայնի։

Այսպս ուրեմն բարիւք գովեցաւ մեղու 'ի Սողոմոնէ յառակս օրինակաց նորա, և իմաստուն և հանձա-րեղ անուանեաց զնոսա 'ի գործ։ Եւ մեծաւ փու-

1 Յօր. փոմակերպ։
2 Յօր. ծողովեալ. եդաք ըստ լուս։

թով և բաղում պատրաստութեամբ առնէ անձամբ անձին դադար, և զլաստակս նորա թագաւորք և մանկք 'ի բժշկութիւս մատուցանեն։ Որ հնարագէտ իմաստութիւն 'ի շտեմարանս մեղս կազմէ, և մեծաւ աբանչ գործով առագաստաձև թաղանթաղարդ խէրեւէշս խերեւէշս զմոմն անօսրկ, և անդէն 'ի նմին խիտ առ խիտ մի առ միոջ դորակաձև բոլորակս զծակս գբոցն բոլորէ. որմ յորմ կցեալ, 'ի մի շինուած կապեալ, միմեանքք զմիմեանս հաստատեալս, զազաւնս 'ի մի գործ շինուածոցն բովանդակեալս. և այսպէս բաղում գուբք մանակերաք զմիմեանք հոծ՝ հանդէպ միմեանց հայեցեալս, մի զմիով յարեալս։ Այս դարձ ձեալ անդրէն 'ի նմին շինուածի գտանես յարկս զյարկսվք շինեալս՝ երեքգմբեթակիրս զմիմեանքք յօրինեալս. և բերանք գբոցն ոչ դէպ ուղիղ միմեանց հանդիպեալք, այլ 'ի կողմանց անկեանց գբոցն ակիզն արկեալ և համբարձեալ՝ ըստ օրինակի առաջին գբոցն, և զնոցն ծածկեալ խաղաղեալ մանակերտ ծէփոքն՝ սահմանեալք անջրպետեալ զատեալ առ 'ի միմեանց, միմեանքք մեկնեալ։ Այնքան մեծաւ զգուշութիւն և հնարագէտ իմաստութիւն փութացեալ ձեռին անշարժ զշինուածն հաստատել, զի մի յորժամ թափանցանց ծակք գբոցն բերան 'ի բերան զմիմեանս համբուրիցեն, ծանրաբեռն ծանրութիւն մեղերն պաւրուտակատ լաստակոտոր զգուբս մաղոցն առնիցէ, և իւրովն յետևափաղաց խոնաւութեամբն արտաքոյ ամբաձածուկ շտեմարանացն ծորեալ ելեալ հեղուցու։

Այս արդ, եթէ միտ եդեալ հայիցիս ընդ զարմանակերտ կազմութիւս շինուածոցն Ճարտարութեան, զգիւտս երկրաչափ Ճարտարութիւն իւրով բովանդակ հնարագէտ իմաստութեամբն տեսանես։ Ո՞վ ի վեց անկեանքք առ հասարակ ամ կողմանքք գբոց մաղոցն հաստատեալք, ոչ 'ի միմեանս հայեցեալք և ոչ մի 'ի վերայ միոյ դիզեալք, զի մի յողղողդեալք խորտակեսցին մանակերտ հիմունք մաղոցն. քանզի ոչ եթէ 'ի վերայ հաստաբեստ ինչ զօրութեց հիմունք մաղոցն հաստատեալ լցեն, այլ 'ի վերայ բաղում յողղողդութիւն և անզօր պատրաստութիւն։ Այս նոցա հնարագէտ հնարիւքն զանկիւնս կողմանց գեանատանցն

սիւնս և մոյթս հաստատեալ ընդ նեցուկս երկրորդն՝[1] յարկաց. զի մի, յորժամ մեծաբերձ բարձրութեամբ շինուածն 'ի վեր համբառնայցէ, ծանրութիւն վերնամասնցն ոյժ 'ի ներքնատունսն[2] տայցէ, և կքեալ ի-ջեալ ամենևին յերկիր կործանեսցի. այլ իւրաքանչիւր ծակք գբոցն[3] յիւրաքանչիւր կարգս հաստատեալք, յորժամ անկանիցի 'ի նոսա խոնաւութիւն մեղրին՝[4] բուսական լինիցի հանդուրժել։

Զ. Դ որովք յօժարութիւն կարացից անցանել առ՝մի իրաք, զոր ունին յիւրաքանչիւր ազգացն թռչնոցն բնութիւն. կամ թէ զնա՞դ խորդք կան իբրև զպահապանս 'ի պահու՝ և ունին պահ միմեանց 'ի գիշերի. կէսքն ննջեն, և կէսքն արթուն կան, շուրջ գան ըզբունովքն, և յաճախեն[5] զգուշութիւն մինչդեռ այլքն 'ի քուն կան և հանգչին։ Զ՝ի իբրև անցուցանել մինն զժամն իւրոյ պահուն, բարձրանայն բարբառի 'ի լեռնին նուագի, և այնուհետև ինքն 'ի քուն մնանի. և ասպա յօրինեն յետ նորա մեւս ևս այլ՝ հատուցանել արթնութեամբն զգուշութիւն որ եղև 'ի վերայ նորա ընկերին՝ մինչ դեռ ինքն 'ի քուն կայր։ Զ՝ի դարձեալ թէ ևս համբառնան 'ի թռիչս խորդեանն, կարդեալք կազմեալք ճակատեալք խաղան, և անդէն 'ի թռչանին անդ անցանեն զմիմեանսիք՝ լինին միմեանց առաջնորդք, և 'ի յայտ նկատեալ 'ի ժամն՝ յորում պարտ իցէ յառաջել քան զընկերն 'ի թռչանի, զի միտ եդեալ ընկերն եկեսցէ զնոսա յոր կողմն և առաջնորդեսցէ. և յետ սակաւ միոյ՝ լինի յառաջն յետոյ, զի արասցէ պատիւ ընկերին՝ երթալ առաջի իբրև զգլխաւոր։

Դարձեալ ճառք ճայիցս չեն ինչ հեռի 'ի մտաց խօսանց, զի այնպէս միանգամայն ամենեքեան դրբեալ խաղան 'ի միում նկատեալ ժամանակի յաշխարհ 'ի մի յոր և իցէ։ Զ՝րթան առ 'ի պատիւ նոցա առ նոքօք և օրիք. և ինձ այսպէս թուի, թէ իբրև 'ի թիկունս ինչ օգնականութիւն երթայցեն ընդ նոսա 'ի մարտ պատերազմի, և այնպէս իմն երևին՝ թէ 'ի

1 Յօր. յերկրորդն։
2 Յօր. յոյթ 'ի ներքնոտանսն։
3 Յօր. փբոն։
4 Յօր. մեղրն։
5 Յօր. յաճախբէն։

կուիւ ուրեմն երթան ընդ Թուչունս։ Լաւ յայտնի է վկայութիւն բանիս՝ թէ արդարււ այսպէս է այս, զի յայնմ ժամանակի ընաւ ամենևին աստ 'ի մերում աշխարհիս որի ոչ գտանի. և ապա յետոյ որիք խորդք գան այսրէն փետեալք, և ունին վերս 'ի մարմնիս. և յայսմանէ յայտ է, թէ պատերազմն ուրեմն առնեն, և անտի գան այսպէս միաժողովք վերաւորեալք։

Լաւ ասէ՝ որ եդ օրէնս Թուչնոցն, զի ընկալցի զընկերն իւր 'ի բունի իւրում, ըստ օրինակի որպէս ընդունի որ զօտարս։ Լաւ ասէ իցէ՝ որ բարբառեցաւ ըստ պառնալիս Թուչնոցն, զի մի հեղգասցեն յապաղեսցեն երթալ 'ի Թիկունս յօգնականութիւն ընկերաց իւրեանց, և մնասցեն 'ի միմեանց 'ի յուղարկաւորութէ։ Լաւ արդ լուիցեն զբարս համբացեալ Թուչնոցն՝ մարդատեացքն, որ փակեն զդուրս ընդդէմ՝ օտարաց, և ոչ կամին ընդունել ընդ յարկաւ զաղգակիցս իւրեանց 'ի ժամանակ ձմերայնոյ, գտնե գիշերի խիք տակաւ։

Դարձեալ ձառք ձայնց, ծերացելոց հինօրեից հռ գաբարձումն՝ որ անդէն 'ի նոցանց նոցին լինի՝ բաւական է լինել որդւոցն 'ի պատուել զհարս և սիրել զծնօղս իւրեանց։ Դանցի չիք որ 'ի մարդկան, որ այնչափ խոնարհագոյն, որ պակասեալ 'ի մտաց և 'ի գիտութենէ իցէ, քան զԹուչունս գտանիցի, եթէ ոչ ամենայն և պատկառանաց լցցի արժանի։ Լրբու տեսանէն, ասէ, ձայք Թուլացեալ զեւս հօրն իւրեանց 'ի ծերութենէն, աստի և անտի մնանէն և բառնան գնա 'ի վերայ Թևոց իւրեանց, և առնուն խաղան և մեղմով ըստ նմա գնան. և ջամբէն կերակուր ինչ զոր և գտանէն, և որպէս պտորժէ երթալ նա, այնպէս ըստ նմին երթան հանդարտիկ, շուրջ պատեալ զնովաւ յաջմէ և յահեկէ. և այսմ՝ զոր ասացաքս, բազումք վկայեն՝ թէ այս այսպէս է։ Լաւ մարդք բարեգործք՝ որ առնեն բարիս ընկերաց, այսպէս անուանեալ կոչին. Ճայից պէս պատուադիրք։

Լաւ մի՝ զ որի յոյժ տրտմեսցի վասն աղքատութեն, և մի՝ զ այնչափ մուսացի՝ զանձին հատանել զայս, յորժամ ոչ ինչ գտանիցի 'ի տան։ Լայեսցի ընդ ծիծաւն անջատ և միանձն. տեսանէն զիարդ դալակիցի, տկար զօրութեամբն առնիցէ դադարս

անձին։ Օ ի յորժամ զտառապանաց բունիին կամ-
ցի շինել, բերանացի քաղէ տանի շիղ. և քանզի ո-
տիւքն ոչ կարէ կրել կաւ, զծայրս մաղլայն 'ի ջուրն
թանայ, և ելանէ ընդ մանր փոշի գնայ, և յայսպի-
սի տառապանաց՝ Նարիւք ընու զկարօտութիւն կաւոյն
կրելոյ։ Այլ առ սակաւ սակաւ հնարի շինել զվարա-
նացն զբունիին. դնէ նախ զկաւն, և ապա զշիղն 'ի
վերայ իբրև զպահանգս կապէ, և այնպէս կատարէ
զշինուածն բունոյն, զի հանէ 'ի նմա ձագս, և մնու-
ցանէ 'ի սմա զձագսն։ Այլ եթէ դէպ տացէ ցաւել
աչաց միոյ ուրուք 'ի ձագուց անտի, և կամ հարցի
ընդ իմիք և ինասեսցի, գիւտս բժշկութեանն բնութեան՝
մնուցանել աչաց ծննդոց իւրոց և բժշկել։ Օ այս
ամ հնարս այսմ տկար թռչնոյս առցէ մարդ աղքատ
'ի միթարութիւն իւր, զի մի վասն աղքատութեանն
անկցի 'ի գործս չարեաց. և յորժամ վիշտք ինչ ան-
հնարինք հասանիցեն 'ի վերայ մեր յաչխարհի, մի
վշատեալք և լքեալք անյոյս լինիցիմք. այլ յուսա-
ցեալ ապահովեսցուք յամ՝ որ և 'ի վերայ ծիծառանց
ունի հոգաբարձութիւն, քանզի նորա արարածք են։
Այլ մեզ առաւել քան նոցա լիցի օգնական, թէ յա-
մենայն սրտէ խնդրեսցուք զնա, և ոչ բախեսցուք ըզ-
դուռն նորա պատրանօք մարդկան՝ որոց 'ի կորուստ
են հրապոյրք իւրեանց։

Զկիոնն դարձեալ թռչուն է, որ առ ծովեզերք
բնակէ, և անդրէն առ ծովեզերքն դնէ բոյն յաւա-
զոյն վերայ. և արկանէ զձուս, և 'ի մէջ ձմերայնոյն
տատի 'ի ձուս թխել, յորժամ բռնութիւնք հողմոյն
և դառնաշունչ սառնամանիքն ամբոխեալ զծովն՝ ա-
լեկոծս առնիցեն զեզերսն։ Այլ յայնպիսի մրրկեալ
ժամանակի կակղանան բռնութիւնք հողմոյն, և ցած-
նուն ալիքն ամբոխեալք, և դադարէ ծովն 'ի խռո-
վութենէ, մինչև տկար թռչունն աղկիոն թխէ զձուս
զեւթն օր, և 'ի կատարել եւթն աւուրն հանէ ըզ-
ձագս 'ի մեռեալ ձուոցն 'ի կենդանութիւն. և յոր-
ժամ հանիցէ զձագսն, զեւթն օր քանայ մնուցանել
և զարգացուցանել։ Այս ամ պարգևք առ տկար
թռչունն յամենատեսն այ տեսչութենէն՝ որ ամե-
նայնի առաջնորդէ. և զայս ամ տեսչութիւնն՝ որ 'ի

վեցայ տկար Թռչնոյն լինի, եմ նաւորդք խմնան, և զաւուրսն զայնոսիկ [1] յանուն աղկիսն Թռչնոյ ա-նուանեն. և այսպէս կոչեն՝ Աղկիսի տեսակ աւուրք։

Այս եմ լեցին քեզ վարդապետք և յորդորիչ և օրէնք և կտակարանք, խնդրել զՀմարիտ կեանս յոյ-զի Թէ 'ի վերայ անխօսիցն այնչափ տեսչութիւն կայ, որչափ ևս առաւել 'ի վերայ քո յաՀաչախիցէ տեսչուն նորա. զի եմ պանծալիքն վասն քո եղէն, որ 'ի պատ-կեր արարչին քո հաստատեցար։ Այս եթէ վասն տկար Թռչնոյն մեծ և ահագին ծուն առնու հրամանն դա-դարիլ 'ի խուսիլութենէ 'ի մէջ ձմերան ժամանակի, իսկ որպիսի բիւրազգի օգնականութիւնք իցեն՝ որ ոչ վասն քո գործեսցին, եթէ դու միայն յուսացեալ պաշտպանիցես յոգորմութիւն այ։

Այս զէգ տատրակէ այսպէս ասեն, Թէ յետ ամուս նութիւն առաջին ամուսնոյն այլ օտար ամուսնութիւն ոչ խնդրէ, ոչ 'ի կեանս իւրոյ վարուժանին և ոչ 'ի մահու, այլ նովին յիշատակաւ անձկաբեկ կեայ և մեռանի, և ոչ խառնակի յայլ օտար ամուսնութիւն։ Լուրիցեն զայս կանայք, Թէ որչափ գեղեցիկ է այ-րութիւն պարկեշտութիւն՝ քան զխառնակ հաղորդութիւն ընդ բազում ամուսնանալով։

Այս արծուոյ յոյժ տաղտուկ Թուի մնուցանել և կերակրել զձագս իւր. երկուս միայն ձագս հանէ, և զմին 'ի բաց մերժէ ընկենու, յարագանեալ յարալը-լուկ տանջեալ մերժեալ ընկենու 'ի բաց վարագա-թևաքն. քանզի զմին միայն մատուցանէ և մնուցա-նէ, և վասն այնորիկ մերժէ և ընկենու 'ի բաց ըզ-ձագն, զի բազում աշխատութիւք է մնունդ ձագուցն։ Այս ևս Թռչուն, որ անուանեալ կոչի եղեանէ, առ-նու զընկեցեալ ձագն արծուոյն՝ ժողովէ առ ինքն և մնուցանէ։ Այստ նմին օրինակի են հարք անգութք, որք ոչ կամին մնուցանել զորդիս իւրեանց, այլ մեր-ժեալ ընկենուն 'ի բաց 'ի պատՀառս [2] աղքատուն։ կամ իբրև զայլ հարս, որ ոչ հասարակաց տան որ-դւոց բաժինս՝ վասն ատելութեան և անՀանՀար սիրոյ, որ մուծանէ բաժինս 'ի գութ հասարակաց. զի որ-

1 Յոր. զայսոսիկ։ 2 Յոր. Հրդեհ ընկենու 'ի բաց պատՀառս։

պէս արդար ամուսնութիւն՝ ծնանի զնոսա գալ յաշխարհ, նոյնպէս արդարութիւն հաստատակ պարտի տալ զլաւութիւնս որդւոցն, զի այն է դարմանիչ կենաց նոցա։ Զոր մի նմանիցեն հարք չարաբարոյ և հպարտ և անգութ և կորակտուց թռչնոյն, զի յորժամ տեսանեն զձագն՝ թէ սկսանիցի զարգանալ թէ հանել, մերժէ ընկենու ՝ի բունոյ անտի զնոսա, և այլ ոչ ևս առնէ փոյթ զնոցանէ։

Օ արմանալի փոյթ և առաւել փոյթ ունի ագռաւ՝ առ իւր ծնունդս. այնպէս՝ զի և ՝ի թռչնոյն կուտ ջամբէ ձագուցն, և բազում ժամանակս յետ մուսցանելոյն շրջի ընդ նոսա։ Զոր բազում ազգ են թռչնոց, որ ոչ յոլութիւն և ամուսնութիւն ամուսնոց ծնանին. և է մեւս ևս թռչուն, որ ՝ի հողմոյ ծնանի։ Որպէս և ասեն, բազում անգեղք են՝ որ առանց ամուսնութեան ծնանին, և երիսայնակեազք լինին. զի մինչև ցհարեւր ամն, ասեն, ձգին ամք կենաց նոցա։ Դիցուք ՝ի մտի նկատել զպատմութիւն բանիս, որ ցուցանեն զթռչնոյ՝ եթէ առանց ամուսնութեան ծնուն նին. զի յորժամ լսիցեմք ոմանց՝ որ առնիցեն ծաղր զշնմարիտ խորհուրդն մեր, զի դժուարին համարին զերան լինել այ։ Զանգի արտաքոյ բնութեան է՝ կուսի ծնանել առանց առն, իբրու ոչ անկանիցի ՝ի կուսութենէ, այլ ողջ անարատ պահեսցի առանց ապականութեան։ Զիցուք զմտաւ, յորժամ լսեմք զայս յանհաւատից, զայն՝ զոր Զաքարիա ասէ, թէ Յիմարութիւն քարոզութեամբն կամեցաւ ապրեցուցանել զհաւատացեալսն։ Զոր բազում ևս այլ իրս ունիմք բնութիւնք կազմեալ յայ, որ մերձ են ՝ի աքանչելիսն հաւատոց մերոց։

“Զողնեսցեն, ասէ, ջուրք զեռուն կայտառ շունչ կենդանի ըստ ազգի իւրում, և թռչուն թևաւոր՝ որ թռչիցի ՝ի վերայ երկրի ըստ հաստատուն երկնից։” Դրամանն՝ որ եղև ՝ի վերայ թռչնոց թռչել ՝ի վերայ երկրի, զի կերակուր նորա ՝ի յերկրէ է, և բոյն դարձեալ յերկիր դնէ։ Զոր զի ասէ “Զողնեսցեն հաստատութիւն երկնից”. յառաջին ճառն ասացաք զկերպարանս հաստատութենն. զի վերացի և երևեա

1 Յօր. բնութենէ նոսի։

ցի յօդս թռչելոյն։ Լ՝ այն զի ասէ՝ թէ երեսս հաս-
տատութեան. զի զհոգ և զմարմն բնութեան նեղբին
օդոյս, որ տարածեալ կայ ՝ի վերայ գլխոց մերոց,
յայտ արասցէ. զի նմանութեամբ է սա վերին եթերայ,
որ թեթևութիւն զհոգ և զմարմն բնութեան ունի։ Լ՝ զրդ
ունիս դու քեզ յառաջին Ճառն՝ որ ասացան, զեր-
կինս պայծառացեալ Ճառագայթիւք լուսաւորացն,
և զերկիր զարդարեալ վայելչութիւք պտղոցն, և զծով
փառաւորեալ բնութեամբ զեռնոցն, և զօդս լցեալ
թռչմամբք թռուցելովք, և զի այս ամ՝ որ եղև՝ ՝ի
չգոյէ եկն ՝ի գոյ հրամանաւ ՝ի։

Լ՝ազում ունիաք ասել ՝ի Ճառիցն թռչնոց, և ՝ի
նմին ընդերկարել, այլ արդ դադարեսցուք զբանս,
զի մի երկնիցեմք արտաքոյ չափոյն պատշաճից պի-
տոյից ժամուս։ Լ՝ զայսպիսի օգտակար խորհուրդս
ածցուք զմտաւ, իբրև զմարդս՝ որ ոչ իցեն բաւական
հայել յամենատեսչութիւն ՝ի և յիմաստութիւն, որ
տնկեալ կայ յամ խմբ՝ որ հաստատեցան. և սոքօք
տալ անդադար փառաբանուն ՝ի վերայ սքանչելեաց
արարչին արարածոց։ Լ՝ արդ ունիս դու ՝ի գիշերի ազգ
թռչնոց՝ որ բնակին ՝ի խաւարի, և ունիս ՝ի տուէ մեւս
ևս թռչուն՝ որ զբոյն ածէ, և ՝ի նմին երևի։ Ջ զը-
ջիկանք և բու և հաւալուսն, խաւարասէրք և խա-
ւարակեացք գիշերայինք. զի յորժամ քեզ քուն ոչ
գայցէ ՝ի գիշերի, ասասջիր զարթնութիւն՝ խորհրդ-
գակից լեալ բարուց գիշերային թռչնոց, ածեալ
զմտաւ՝ թէ զիարդ և նոքա ունին իրս արժանի փա-
ռաւորութեան ՝ի արարչին։ Ջ արմացիս
դարձեալ և յորժամ լսիցես զձայն սոխակի, և լուիս
ջիր ՝ի՛ոպէս հնկէ գեղգեղէ քաղցրաձայն ազգի ազգի
նուագաք[1], մանաւանդ յորժամ ՝ի ձուս և ՝ի թուխս
նստիցի։ Ջ արմացիր դարձեալ և ընդ ղղջիկանի, որ
իբրև զթռչուն է և զբոլորտանեաց արար ունի, և
յամ թռչնոց՝ նորա միայն գտանին ատամունք, և իբ-
րև զբոլորտանիս ծնանի։ Լ՝ զ թռուցեալ առ գետ-
նաւ շրջի ՝ի վերայ օդոց. քանզի ոչ եթէ երագ և
հերձ թևօք թռչի, այլ թաղանթագեղ մաշկաթև

[1] Յոր. Նոյեմ։

թեազք։ Այսեաց դարձեալ ընդ նոսա ինքն ՅՂՄԻկան, զիարդ ունի զնութիւն սէր ընդ ընկերսն, իբրև թէ կա սելալ ընդ միմեանս իցեն սիրովք, և միաբան յօրինուածովք ընդ միմեանս պատին ի Թռչնանի, և միաբանութիւն [1] ՅՂՄԻկանացն իբրու թէ դժուարին ինն գտանիցի առ մեզ մարդիկ. քանզի ոչ եմք հայց և խնդիր նորա. քանզի բազմաց ի մէնք մեռակեաց զնութիւն հաճոյ թուի քան զՀաղորդուն միաբանութիւն ընդ բազումս զնակելոց։

Տեսցուք դարձեալ որչափ նման իցեն տեսլեան հաւաքուսան [2], որք միտ հանապազ մնոտի խմաստութիւն աշխարհիս խաղութեան. զի աչք հաւաքուսանն՝ գիշերոյ գէշ՝ են առ ի տեսանել, և իբրև ծագէ լոյս՝ խաւարեն և ոչ տեսանեն։ Այսպէս և միտք խմաստնոց, զի առ մնապարծ դատարկաբանս սուր են, և առ վարդապետութիւն Հշմարիտ լուսոյն՝ խաւար են։

Յողովեսցուք այսուհետև յերկեղեալսն՝ որ երկիւղ ի տուէ, զփառաւորութիւն զարմանագործ արարչին տեսանել։ Ո՞ խարդ մնդակից Թռչունս՝ որ ընդ մեզ զնակէ, զարթուցանէ զմեզ ի գործս իւրով սուր և սաստիկ բարբառովն, և ի բացէ ի բաց ազգ առնէ տալ աւետիս՝ եթէ ահա այսուհետև եկեալ հասեալ իցեն քաղցրահայեաց Ճառագայթք [3] արեգականն, և որոց ի միտ արկեալ զՀնամապարհ գնալ, հրամայէ իբրև հրամանատար՝ յառնել կազմել խաղալ պատրաստական, և զմշակս յանդս և ի գործս յորդորել։ Ո՞ արմատցուք դարձեալ ընդ հսկեցօղ ազգն սագաց՝ զոր ինչ ի մնաց մարդկանէ վրիպէ առ ի չգիտել՝ նոքա զգան և կան յայնր վերայ։ Այր բեմն, ասէն, արքունական քաղաքին մեծանիսան Հռոմայ նոքա եղեն ապրեցուցիչք ի պատերազմէ։ Ո՞ օր ուստեմն, ասէն, օտար եկին, և անյայտ ընդ գետ նաւիորսն մերձ եին ի քաղաքն մնանել. և նոքա իբրև զգացին ի գիշերի՝ ի բարձր ձայն ղաղաղակ բարձին, և այնպէս ի նոցա պատճառս ապրեցաւ քաղաքն։

1 Յօր. պոփին և Ռ-լանի. և դիբանուռնք։

2 Յօր. հաւուլուսանն. ուղղեցաք ըստ յաջորդին։

3 Յօր. ճառաթագիկք. դուցէ հասնել իբրեւ փաղդրահայեաց ճառաթագիկք։

Բ.Ը յոր ազգս 'ի Թռչնոյ ոչ գտանիցես զարմանալիս ընդաբոյս բնութիւն։ Որ՝ իցէ՝ որ դարձեալ ազգատացէ, լինիցէ գուշակ անգեղց զմահուանէ մարդկան, յորժամ 'ի վերայ միմեանց դիմեալ երթայցեն 'ի մարտ պատերազմի. երամ երամ բազում զոքանգեղց յուղի անկեալ ընդ բանակս մարդկան երթան ստիպաւ 'ի Հակատատեղն։ Օ՛ի 'ի պատրաստութիւն զինուցն և զարդուցն և 'ի նշանաց միշտ զրահս ընդանձն անկանելոյ, իմանան՝ թէ կռիւ լինելոց է, և բազում դիակունք 'ի զօրացն անկանին։ Այս այսպիսի ընտաբոյս բնութիւն բաքք անգեղց՝ չէն ինչ ընդատ 'ի մնաց մարդկան, որ 'ի տեսլենէ զհանդերձեալքն իմանան։

Այս կամ զիմաստ պատմեցից քեզ զսհագին բազմութենէ զօրաց միանգամայն ժողովելոյ մարախոց. որ իբրև միով ժամագիր ժամու շարժեալ շողացեալ միահոյլ 'ի չու անկեալ, և իբրև բազմութի զօրաց 'ի միասին ժողովելոց զմեծամիստ լայնատարած դաշտովքն բազուկ առ բազուկ իջանեն բանակաբ։ Այս ոչ իակ և իակ իբրև իջանեն՝ 'ի գործ ապականութեան պտղոց անդաստանն ակամենն. մինչև առնուն հրաման յակնարկելոյ վերին զօրութենն, ոչ իշխեն մնաբերել 'ի գործ ապականութեան։ Այս կամ զիմաստ դարձեալ տարմահաւն և սարիկն, յորժամ առնուն հրաման զմեզ բժշկելոյ 'ի հարուածոցն՝ և զնոսա սատակել կորուսանել, գան հատանեն յանկարծակի 'ի վերայ և ապականեն։ Այս կամ զիմաստ ճծ իւրով մարդասէր զօրութեամբն կազմեաց եզ փոքր [1] Թռչնոյն երագահալ խածիս և վազվազընկեցս անցս՝ յօգնական նութի կենաց մարդկան, որ արար զնոսա անյագս ընտաբոյս բնութիւն։

Օ՛արմանալ պարտիմք դարձեալ և ընդ քաղցրանուագ բարբառ՝ զոր գեղգեղեալ յօրինէ ՀԵպիոն [2] Թռչուն. զիմաստ մեջբրեայ ժամանակի զնածեանն զոր ունի 'ի լանջան՝ ձգեալ պրկէ առ 'ի հանգչել և թեթեւանալ առ 'ի յոգոյն ծանրութենէ. և այնպէս անդադար գեղգեղէ զարբբառն քաղցր և հեշտ նը-

1 'Ի լուս. եդ 'ի բ՝ որ ի Ռ՝ ընդ։ 2 'Ի լուս. Ճգ։ առ։

լագովք[1] առաւել քան զերգս արուեստականաց։ Այլ Թուի ինձ եթէ կամեսցի բանիւքս առ 'ի պատմել զաքանչելիս այլ ևս Թռչնոց՝ զոր ունին ընտանի ընտ. Թեամբ, զազգս մանուկս և զանազան Թռչնոց զնիասատան և զբրիտաց, որք խառնեալք և միջատք անուանին, քանզի ըստ կերպարանաց միջատաւն տեսլեան՝ նոյնպէս և անուանեն զնոսա. որոց չէ մարթ առնուլ զոդ 'ի փոքն և հանգչելոյ, քանզի չիք նմա կազմած Թռ. քոյ և կերպարանաց. այլ ամենևին համ կենդանուՄ Թեամբն իւրեանց արտաքոյ օդոյն կայ և կերակրի։ Այս եթէ անկցի մի 'ի մեղուացն յերեւ և Թօթափեսցի, անդէն պակասեալ գտանիցի 'ի կենաց. քանզի ընտ պարարտութիւն իւղոյն զնեալս նորա։ Իսկ եթէ ցանիցէ զք փոչի իսկ և իսկ մինչև յերեւն[2] Թօթափեալ իցէ, անդէն 'ի նոյն դարձցի 'ի կենդանութիւն. քանզի բանան խելք նորա 'ի խստութենէ մանրամաղ աւազոյն։

Ա. Զդ չիք ինչ՝ որ յայլ կազմեալ իցէ, Թէ աւելի քան զպէտսն իցէ. և չիք ինչ Թերի որ ոչ ունիցի լիով զիւր զպէտսն։ Զարձեալ է մեւս ևս Թռչուն ջրասէր, որում տեղեկացեալ իմաստիս իրաց նորա. այլազգի կազմած ընութիւն գտանես 'ի նմա. զի ոտս ոչ հերձ իբրև օրոյ ունի, և ոչ կորակտուց և խիստ մագիլ՝ որպէս ունին գիշակեր Թռչունքն, այլ ոտս լայնչիս մաչկեղէնս, զի լիցի նմա 'ի ջուրն 'ի նմանուել զեկաց՝ յորժամ զնորսն խառնիցէն՝ հերձուլ մերժել յերեսաց նորա զջուրսն խոնաւութիւն։ Զարձեալ եթէ կամեսցիս տեղեկանալ մեւս ևս Թռչնոյ՝ որ անուանեալ կոչի կիկնոս[3], այս ինքն փոր կամ ձկնաքաղ, Թէ զնարդ կիկնոսն հաւ մինչ[4] զերկայն պարանոցն 'ի ջուրն, զի 'ի խորոց անտի 'ի վեր ածիցէ զպէտս իւրոյ կերակրոյն։ և նոսաւ իմաստուն արարչին քարոզի։ Ա՝ ան այնորիկ երկայն է պարանոց քան զոտսն, զի իբրև զնորամեւաս[5] լուղէ 'ի միջոց ջուրցն խորոց, երկայն պարանոցաւն զծածուկ կերակուրսն՝

1 Յօր. հէլա նուգանովք։
2 Յօր. գիլա ինչ։
3 'Ի լուս. խոնոս։
4 Յօր. գէ։
5 Յօր. պարանոցն զպան, զի իբրև ն զնորս մեսպս։

որ զողեալ կայցէ ի Ջուրն՝ գտցէ հանցէ դարման կենաց իւրոց։

«Զողեսցեն, ասէ, Ջուրք զեռուն կայտառ շունչ կենդանի ըստ ազգի իւրում, Թռչունս թեւաւորս ի վերայ երկրի ըստ ազգի իւրում, որ թռչիցին ընդդէմ հաստատութեան երկնից»։ Տեսէք որչափ մերկ ի զարդուց և սակաւ ընթերցուածովք էն պատգամք բանիս, որ գրոշմեալ են ի գիրս. և յորժամ մտիցէ որ քննել զմիտսն և զզօրութիւնն՝ որ ծածկեալ կայ ի նոսա, զզարմանալիս մեծաբանչ իմաստութեանն այդ գտանէ ի նոսա։ Այս արդ, եթէ որչափ փոփոխմունքն լիցեն ի թռչունս ըստ իւրաքանչիւր արարածոց և ազգաց և կերպարանաց, որ ոչ նմանեն միմեանց, զօր մի ողջոյն չէ որ բաւական առ ի պատմել զզարանչելիսն, որ ի յօդախաղաց թռչունս գտանին։ Այս զայս զինչ արասցուք, զի արդ երկիր առ իւր կոչէ զմեզ, կՀատ[1] կատարեալ կայ պատրաստական, պատմել մեզ զՀառս իւր[2] գազանաց և զամ զեռնոց, որ ի նմա Հաճ բակեսցեն. որք զուգակից համատարած ծովէն, ի խոտոց և ի ծառոց որ յերկրի բղխեսցին, և ամ ազգաց զեռնոց՝ որ ի Ջուրս լուղայցեն, և ամ թռչնոց՝ որ յօդս խաղայցեն։

Արդ զինչ ասասցեն անհաւատքն՝ որոչ հաւատասցեն[3] Պատղոսի Առաքելոյ, որ քարոզէ գյարութիւն և զփոփոխումն նորոգութեան՝ որ լինելոց է մարդկան ի մահուանէ ի կեանս, յորժամ տեսանիցեն զլինիցի փոփոխումն և նորոգումն իրիք որ ընդ օդս շրջիցին, որ գայ հասանէ շրջել ի կերպարանաց ի կերպարանս. իբրու նոյն է որ յօրէն յառաջնմէ յարաբածոց իւրոց առ զիւր կենդանութիւնն։ Օ հնդիկ որդնէ այսպէս ասէն՝ որ տեղեակք էն իրաց նորա, թէ եղջերս ունի ի գլուխն. և ի սկզբանն, ասէն, ի կերպարանս թրթռոյ երևի փոքրիկ. և յետոյ, ասէն, գայ լինի ի կերպարանս այլ իրի ինն՝ որ անուանեալ կոչի բոմբիլոս։ Այս դարձեալ և ոչ յայնմ կերպարանս կայ մնայ, այլ յայլ ինն կերպարանս շրջի. և թևք թռչլք և անսօրունք երկայնատարած լինի նոս-

1 Ի լուս. ՀՀՃԿ։ 2 Յօր. զՀառս որ։ 3 Յօր. հաւատասցեն։

բա։ Լաւ նա՝ որ զայն ամ կերպարանս առնու, նիւ-թիչ է մեռաբին կերպասու. զի դուք կանայք յոր-ժամ նստիցիք մանել կամ անկանել զմետաքս նորա, յիշեսջիք զմտաւ ածելով զյարութիւնն և զնորոգումն մեռելոց. քանզի յայնմ ժամանոյ որ կուշի շերաս, այս ինքն կերպասաբերք, դանձէ զվաստակս նոցա 'ի հան-դերձս կակուղս և 'ի սպասս ազնուականս։ Լաւ ազգի ազգի նորոգ փոփոխմամբք՝ որ գտանին 'ի կերպասա-գործ ժեռուանն, առցուք օրինակ մեծի յարութեան ողջամիտ մտօք. և մի լինցուք անհաւատք առ փոփո-խումն նորոգութեան՝ որ լինելոց է մարդկան 'ի յա-րութեան, որպէս Պաւղոս Աստուածաբան է քարոզ ածա-բարբառ աւետեսքն։

Գիտեմ, զի կարի երկի ըստ չափ[1] բանիս յերկա-րութիւն ժամուս։ Յորժամ հայիմ 'ի բազում բանսն՝ որ յինէն պատմեցան, երեսալ արտաքս քան զչափ պի-տոյիցն պատշաճին տեսանեմ զիս. և յորժամ մտ-երեսալ նկատիցեմ զիս պէս ազգսն յօրինեալս զար-մանագործ արարչութեան՝ այնպէս համարիմ թէ բնաւ ամենևին և ոչ 'ի սկիզբն սկսուածոյն մերձ-ցայ։ Ասել ունել և պահել զձեզ առ իս զայս չափ ժամն չեղև միաս. քանզի զինչ ինչ գործ ունիցիք յայսմ հետէ ցերեկոյ գործել[2]. հրաւիրակքն՝ որ զձեզ 'ի Ճաշ և 'ի յընթրիս հրաւիրիցեն[3], ոչ ինչ ստիպեն. և բազմանամս[4] գինարբուաց ոչ ուրեք պատ-րաստեն։ Իսկ եթէ կամիք ըստ[5] պահոցդ՝ զոր ունիք 'ի բերան, ուրախ առնել և զհոգիս ձեր հոգևոր ճաշ-ուիք, ահա գիւտս մեծամեծս և հոգևորս գտանիք։ Գիտէք, սիրելիք, զի բազում անգամ ընկալան մարդ-մինք ձեր զհանգիստ ուրախութեանց. համբերեցեք մնալ առ մեզ՝ առնուլ զհանգիստ և զօրուն հոգւոյ. ցնծացեն հոգիք ձեր 'ի Տեր, և նա տացէ զուրա-խութիւն սրտից ձերոց։ Եթէ ընչասէր՝ ցանկացող մե-ծութեան իցես, ունիս զընչաւէտ հոգևորն մեծութեան, այս ինքն զպատուիրանս՝ որ ուղեղ էն և ուրախ

1 Յօր. եւ զչափ։
2 Յօր. գործեալ։
3 Յօր. հրաւիրեսցին։
4 Յօր. Ի բազում անգամ. 'Ի Լուս. Ի 'ի բազմանս։
5 Յօր. յամէ զպահոցդ։

առնեն [1] զսիրտս, և ցանկալի են քան զոսկի և քան զանանս պատուականս բազումս։ Այլ եթէ հանգըստասէր իցես, մի կարծիցես՝ թէ այլ հանգիստ մեծ և կարևոր կայցէ քան զՀանգիստ պատգամացն այ. զոր թէ առողջ մնաք ոք ունիցի, քաղցրանան 'ի քիմն նորա քան զմեղու խորիսխ։

Այլ եթէ թոյլ տաց և արձակեցից զձեզ 'ի պարակեշտ ժողովոյս յեկեղեցւոյ, կէաք 'ի ձէնջ 'ի լիցս ընթանան, և կէաք 'ի տապեղելոյնն, ուր ստութիւն է և անկարգ յամառութիւն, և հանդերձ շահասէր ապականութիւն, որ նովին նման իսկ են։ Օ՛ի դև քնակաւոր կայ յայնոսիկ՝ որ 'ի ներկածոյ և 'ի տարագիր ուլունն հարեալ իցեն, և վառեալ բորբոքէ 'ի նոսա զմոլորութիւն՝ միշտ 'ի նոյն մնոտի մոլորութիւն յօժարել, և տանի բերէ զշահ կողմանցն երկոցունց։ որ զվինն ուրախ առնէ յաղթութիւն, և զմեւամ տրտմեցուցանէ տրտմութիւն։ զմեւամ մեծամտեալ հպարտացուցանէ, և զմեւամ ընդ ամօթ հարեալ կորացուցանէ։ Այլ զ'նչ օգուտ իցէ այնմ, որ մարմնոյն պահիցէ՝ և մոռցի 'ի բազում չարիս ներկեալ գտանիցի։ Այլ մեւամ որ յայն խաղ չիցէ, դատարկացեալ այլ ինն չարեաց պատեալ գտանիցի։ Այլ արդ ո՞ր երգ և զուր մտոհք իցեն՝ որ ընդ նորա բերանն ոչ ելանիցեն. զի դատարկութիւն՝ որ առանց ՅՃՏպաշտութեան իցէ, վարդապետ չարեացն լինի։ Այլ թերևս ոմանք ոչ ինչ օգուտ գտանիցեն 'ի բազում բանիցս զոր լուան, բայց այսչափ միայն, զի մինչ առ մեզս դադարեալ կայք՝ արգելեալ էք 'ի մեղաց. և որչափ յաճախեսցուք ունել զձեզ առ մեզ՝ խնայեալ լինիք 'ի չարեաց։

Այլ թուի ինձ՝ եթէ բաւական իցեն որ ասացանս 'ի մէնջ՝ առողջ և ընտրող մնաց. ապա եթէ ոք 'ի կշիռ մուծանել կամեսցի զմեծութիւն մերոց բանիցս ընդ զարմանալիս արարածոց, անչափ տկարութեամբ գտանին բանքս՝ զոր խօսեցաք։ Այլ ըստ մերում տկարութեան և ըստ ձերոյ անձանցդ ուրախութեան՝ բաւական են զոր լուարուքդ։ Այնպէս զձեզ երկիր իւրով մեծագեղ բուսովքն, հանգոյց զձեզ և ծով

[1] Յոր. «որոյ էգն։

իւրով լուղական զեռնուվքն, ուրախ արար զձեզ և
օգ իւրով սլացեալ թռչնովքն, որ հանդէպ նորա և
'ի նմա լողան խաղան վայելչութ։ Այլ արդ դարձեալ
միւսանգամ երկիր պատրաստեալ է ընդունել զձեզ,
ըստ օրինակի այնց զորոց երկրորդեցաքն, թէ ընկա-
լայք։ Այլ արդ պատմութեն չափով կերակրեցայք 'ի
մէնջ, և ոչ աւելի քան զյագելն ձեր ուղղեցաւ սե-
զան Ճառիցս, զի մի լեցի լրութեն բազում բանիցն զոր
լուիցէք՝ խափանիչք այնց ուրախութեց, զոր երեկոյն՝
առաջի ձեր կարգելոց իցէ։ Այլ այն որ ետ մեզ յա-
մենայն մեծութեց՝ որ յառաջեալ կայ յարարածս,
նոյն տացէ զիւր սքանչելեացն, որ 'ի մերում [1] յան-
ձինս մնկեալ հաստատեալ կան, նկարել զյիշատակ
նորա 'ի մեզ, և առաւելուլ միշտ զմտաւ ածելով զաչ-
ըերարուն նորա, լցեալ զեղեալ զհոգևոր ուրախութն
նորա, 'ի սիրաս մեր 'ի ձեռն տն մերոյ Յիսի Քրիստի,
զի նմա և Հօր իւրում և սուրբ Հոգւոյն նորա վայել
է փառք պատիւ յաւիտեանս. ամէն։

1 Յօր. Էրէնէ։ 2 Յօր. 'ի Դեմ։

ՀԱՐԻ ԻՆՆԵՐՈՐԴ

ՎԱՍՆ ՎԻՃՕՐԵԱՑ ԱՌՈՒՐՑ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

Սեղան որ առաջի ձեր կազմեցաւ ընդ առաւօտս՝ ՝ծծեղէն բանին, որպիսի՞ ինչ արդեւք ձեզ Հաշակեցաւ։ Օ՛ի ինձ այսպէս ինն պատշաՀ Թուի նմանեցուցանել զտկարութիւն բանից իմոց՝ աղքատութեան առն տառապելոյ, որ հրաւիրեսցէ զկոչնականս յուրախութիւն, և Համարիցի՝ եթէ մեծամեծ ինչ սպասուք կարող է ընդունել զնոսա։ Օ՛ այն ոչ իմանայցէ, եթէ մեծամեծ սպասքն արՀամարՀ Թուի յաչս կոչնականացն, այնու՝ զի զկարօտանաց զնորտիկն կարգէ զնսէ առաջի։ և այն ՝՝մ՝՝ առաւելութիւն՝՝ որ նմա ծախք մեծամեծք եղէն, անդէն ՝՝ի նմին լինին նմա նախատինք. իբրև առն միոյ, որ առ չքաւորուն կարօտութիւն չիցէ տեսեալ սպասս մեծամեծս։ Ըստ նմին օրինակի է և բանքս իմ առ ձեզ, թէպէտ՝ և դուք ոչ ինչ ասէք. քանզի տեղեակ գիտեմ՝ թէ ոչ անդամանէք զոր և լսէք յինէն։ զի և ոչ ՝՝ի մարգարէն՝՝՝ այ Յողնէէն հրաժարեցին իբրև յաղքատէ ՝՝ի Հնասակար հրաւիրակէ՝ բարեկամք, որք ընկալան ՝՝ի նմանէ վայրենի բանՀարեղէն խորտկաւն։

Ամենք առ ամբարշտութեան մտաց իւրեանց՝ փութ փոխմանս իմն կամեցան մուծանել յ՝՝ծծեղէն բանս գրոց։ Այս և՝ ոչ եթէ անգիտակ եղէ բանից նոցա, այլ զիպելով իսկ զիպեցայ՝ որ յայսմ աշխատութիւն իսկ աշխատին, զի զանս գրոց ոչ ըստ նմին մտաց՝ որ պէս ասացեալն են՝ ընդունին։ Օ՛ի ջուրք, ասէն, ոչ ջուրք են, այլ այլ իմն բնուն են. և զՀկունս այլ աղգ իմն ըստ իւրեանց մտացն մեկնէն, և զաղգս անասնոցն և զեռնոց յայլ միտս շրջէն. այսպէս ասէն, որ պէս են ոմանք՝ որ առնիցեն առՀղուածս երազոց. և որպէս նոքայն՝ բանդագուշեալ երթան զՀետ ցնա

1 Յոր. Նոգ. ոյն։

րից քնոյն Թմրութեան, նոյնպէս և նոքա ըստ խաւա-
բեալ մտաց իւրեանց դանդաղելոյ առնէն զմեկնու-
թիւնս։ Բայց ես եթէ խոտս լսեմ՝ ի գրոց, խոտս
գիտեմ զնոսա. սոյնպէս ցծառս և զանասունս և ըզ-
ջրոսանսիս և զձկունս և զդեռունս երկրի և զամ-
ենս՝ որպէս գրեալ է ի պատմութեան արարածոց, նոյն-
պէս և ընդունիմ։ Այլ ոչ ինչ պակասուի համարիմ
ընդունել զամս գրոց ըստ իւրաքանչիւր ասացուա-
ծի. ըստ այնմ՝ զոր Յաբաբեալ ասէ, թէ Ոչ ինչ ա-
մաչեմ յաւետարանն այ. և ոչ դարձեալ, վասն զի
ասացին ոմանք ի Յունաց այլազգս և զձառս աշխար-
հիս գրեցին և զկերպարանս երկրի դրոշմեցին ըստ կա-
մաց իւրեանց, ձգիցիմք։ երեթալ զհետ նոցա։ Բայ-
զի կէսք այսպէս ասացին զերկրէ, թէ զգնդի կեր-
պարանս ունի, և կէսքն զուղղանի նմանեցուցին, և
կէսքն սկտեղ, և կէսքն ասեն՝ թէ հարթ հաւասար
իսկ է յամ կողմանց, և կայ ի միջավայրս վայրաց,
և ձախարակագործ կերպարանաց նման է. և կէսքն
նքուրի կերպարանաց նմանեցուցին, և ոմանք խորա-
միջոց անուանեցին։ Այլ յայսմ ամենայնէ կարծեացս
խնասանոցն Յունաց՝ և ոչ մի ինչ կարաց կալ՝ի կայն
և ունել զանձն ի հաստատուն. զի ամենեցուն իւ-
րաքանչիւր քանք զմիմեանս լուծանեն. զի իւրաքան-
չիւր ոք ի նոցանէ ընդդէմ ընկերին պատրաստեաց
զիւր պատմութիւնն։

Բայլ ես ոչ յողդողդիմ և ոչ պատկառեմ ինչ՝ ա-
սել զարարածս աշխարհիս որպէս ընկալայ յածեղէն
գրոց, և ի ծառայէն այ Մովսիսէ։ Ոչ եթէ կեր-
պարանաց և զչափոց աշխարհիս փոյթ եղև պատ-
մել, այլ թէ արարած է՝ որ արարաւ յարարչէն իւր
մէ. քանզի ոչ ասաց Մովսէս՝ որպէս ոմանք ի բա-
ղաղեալ մտաց ասացին զերկրէ և եղէն նմա բանիւք
չափ, յասելն՝ թէ ութուտասան բեւր ասպարէզ է
չափ երկրի։ Այլ ոչ դարձեալ ասաց, եթէ յորժամ
կշիռ արեգակն ի ներքոյ երկրի է դէպ ուղիղ լուս-
նոյ[2], բարձրութիւն՝ ասեն՝ ստուերի երկրի ելանէ

1 Յօր. յիեչէմ։
2 Յօր. իւր՝ արեգակն ի ներքոյ երկրի դէպ ուղիղ լուսնոյ։

ծածկէ զլուսին, և յայն տակ՝ ասեն՝ պակասէ և խաւարէ։ Այլ որ ի մեզ չէն հուպ և ոչ պիտոյք և պատշաճ, և գիրք լուեցին ի նոցանէ։ Այլ այսու ամենայնիւ համարիմ զիմաստութիւնն Յունաց յիմարութիւն և բարբանջ, զի ի ստայոգ պատմուէս հարեալ հաստեալ էն. և հոգևոր բանք ՝ այ այսու էն մեծամեծք և գովելիք, զի ի մտտիս և յանօգուտս ոչ տան աշխատել մտաց մերոց. այլ ՝ամ ինչ՝ որ տուաւ մեզ ի նմանէ գրովք՝ ի շինուած հոգւոց և յօգուտ կենաց մերոց էն։ Այլ այլք՝ չնայեցօղք արժանաւոր մտաք ի գիրս, նորոգել իմն Ճշմարտութիւն հնարեցան, և՝ի կերպարանս պաճուճաղարդ բանիցն յողդյողդեալ՝ ոտ նառեցին։ Այս՝ ի ժպիրհ մտաց նոցա գործեցաւ, զի զուղղագիր պատգամն գրոց եղծանել հնարեցան կամակորութիւն. և փոխանակ նոցա զիւրեանց դնել ջանացին. իբրու թէ իւրեանց կարկատուն բանքն աւելի իմն իմաստութիւն քան զպատգամն Հոգւոյն ՝այ ունեցին, որպէս զի իւրեանց ստայոգիւքն արացէն գրոց պատմութիւն։ Այլ մեք այնպէս իմասցուք ըզգրեալսն, որպէս յայ մեզ աւանդեցաւ։

"Այս ասաց, ասէ, ՝ամ բղխեսցէ երկիր զեռուն կայտառ շունչ կենդանի՝ ըստ ազգի իւրում, չորքոտանի և զեռուն և գազան երկրի՝ ըստ ազգի իւրում"։ Այ միտ առցուք՝ թէ զիարդ և ո՞րպէս ընթացաւ բանն՝ ՝այ ընդ արարածս. և որպէս սկիզբն երևեցաւ, նոյնպէս և ՝ամեայ փուԹոյն հաստատեցաւ. բանն յայնժամ բորբոքեցաւ, և գործն մինչև ցայժմն ևս կարգի գայ՝ ՝ամ ազգ զեռնոց, և մինչև ի կատարումն ժամանակի նոյնպէս կայ մնայ յարարածս։ Այլ որպէս ընկենուցու զը գունդ՝ ի գետնի և դիպեսցի զառ՝ ի թափ տեղի, ոչ դադարէ՝ ի գնացից մինչև գտցէ հարթ տեղի, և ապա զետեղեալ անդ դադարեսցէ, սոյնպէս և բնութիւնքն՝ որ եղէն՝ ի միոջէ հրամանէ՝ խաղան կարգին գան ազգ նոցա՝ ի ծնունդ և յապականութիւն՝ ի մէջ արարածոց. շարժին և գան մեղմով՝ ի պէս պէս ազգաց՝ ի ծնունդս, և անվրէպ պահին կարգ ազգաց նոցա՝ ի նոսին, մինչև կատարումն՝ ի վերայ

1 Յար. ԸՆԹԱՑՈՒԹԻՆ։

ամենեցունց սահմանեսցի 'ի վաղճանին։ Օ յ ձի 'ի ձիոյ կարգի, և առեւծ յառիւծէ երեւի, և արծիւ յարծուոյ ծնանի, և ՝ամ՝ անասունքն և թռչունք յիւրաքանչիւր ազգաց կարգին անդադարք մշանջենաւոր բեալք, մինչև եկեսցէ հասցէ կատարումն ամենայնի։ Այս արդ չիք ժամանակ՝ որ եղծանէ զասուիճանեալ կարգսն, որ խաղան գան յանասունսն ըստ ընտանեաց իւրեանց բնութեան, այլ որպէս այժմ իբրև նոր ինն տեսանեմք զծնունդսն՝ որ կարգին գան ըստ իւրաքանչիւր ազգաց, նոյնպէս նոյնք են՝ որ իսկզբանէ անկան 'ի կարգ, և խաղան գան միշտ որպէս և էին։

« Խղխեսցէ, ասէ, երկիր շունչ կենդանի՝ ըստ ազգի իւրում՝»։ Այս նոյն սահման հաստատեցաւ, կայ յերկրի և ոչ դադարէ առ 'ի պաշտելոյ զկամս արարչին։ Բայց գոն կէսք 'ի տկար թռչնոց օդոց և 'ի մանր զեռնոց յերկրէ, զի ոչ ըստ օրինակի այլոց անասնոց կարգելով ծննդեամբ մնանեն յաշխարհս, այլ անդրստին յերկրէ բղխեալ ելն կենդանուին իւրեանց։ Այանզի ոչ եթէ միայն ազգն ճպռան բղխէ յանձրևոյ ժամանակի, այլ և այլ ևս բազում ազգ՝ որ թռչին ընդ օդս, և ոչ գան 'ի կոչումն անուանց վասն մանր կերպարանաց իւրեանց։ Այլ և մկունք և գորտք, հանդերձ և այլ ևս զեռնովք, անդստին յերկրէ բղխեն. և այս 'ի Մեբայիդ աշխարհի և Այգիպտոս լինի։ Օ յ յորժամ անձրև սաստիկ 'ի տօթային ժամանակի գիպեսցի, իսկ և իսկ անդք և դաշտք բազմութիւն մկանց բղխեն։ Այս մեծիս և մեծազուկ ոչ այլ ուստեք լինի, այլ 'ի սկզ և յաղտոյ ջուրց. քանզի չիք մեծոյ և մեծկի արկանել ձուս և ոչ այլ ինչ՝ յոլոյ՝ կարգիցի ազգն իւրեանց. անդստին յերկրէ 'ի ձեռն խոնաւութեան կարգին լինել։

« Խղխեսցէ, ասէ, երկիր շունչ կենդանի՝ ըստ ազգի իւրում՝»։ Այս ինքն են անասունք, որ յերկրէ առ յերկիր խոնարհեալ հային. իսկ մարդ տունկ երկնաւոր է, որպէս և կերպարանքն իւր ստեղծուաւ ծոյն յայտ առնեն, զի առ ստեղծիչն իւր նայեսցի. սոյնպէս և շունչ մարդոյ մեծարգոյ է և պատուական։

1 Յոր. ՀԺ։

Բարար անասնոցն ամենևին 'ի խոնարհ կախի, և գը-
լուխն յետ կորացեալ ընդ երկիր սլշուցեալ հայի, և
տեսիլ իւր ընդ երկիր պատշաՃեալ յորովայն իւր
հայի, և ՅամՄ իրօք և պիտոյիւք յերկիր կոյս կախի
բերանն իւր. իսկ մարդոյ գլուխ 'ի հանդիպումն երկ-
նից բարձրացեալ ՃգեալկայՃ, աչք իւր անդր նային,
և երեսք իւր հանդերձ մտօք անդր պատշաՃեալ յօ-
րինեալ է։ Եթէ իցեն և ինքեանք անՃամբ մարդիկ
մարմնաւոր կարէօք, խոնարհեսցին ինքեանք 'ի հնազան-
դութիւն՝ որովայնից իւրեանց, և վասն նորա անար-
գեսցին և անկցին 'ի պատուէ՝ նմանեալ անասնոց, որ-
պէս և մարդք՝ որ զպատիւս իւրեանց 'ի միտ ոչ առ-
նուցուն ըստ բանի գրոյն։ Բայլ ՃշմարիտՄ հոգք և
խորհուրդք մարդկան այս են, զի զվերինն խորհեսս-
ցին, և մի զերկրաւորս, այլ ուր Աստուծոյ ընդ աջմէ
Տօր ՅայՄ։ Եւ արդ 'ի վերոյ քան զերկիրս արասցուք՝
զխորհուրդս մեր, և ըստ կազմուածի կերպարանաց
մերոց՝ նոյնպէս և վարք մեր եղիցին յաշխարհի. և
ուշ եղեալ հայեցուսցուք զմիտս մեր յերկինս 'ի ՃՇՄ-
մարիտ աշխարհն մեր և 'ի վերինն Երուսաղէմ, ուր
անուանք ազգատոհմիցն մերոց գրուեալ են, այս ինքն
անդրանկացն ՅայՄ։

Բդ ոչ եթէ էր շունչ կենդանութիւն երկրի, և
վասն այնորիկ էառ հրաման բղխել և երևեցուցա-
նել. այլ ընդ բարբառել հրամանին եղև ՅամՄ ինչ՝ յո-
րում հաստատեալ կան իրք կենդանութիւն. բղխեաց
ետ միանգամայն առ ժամայն մի շունչ յանասունսն
ՅամՄ՝ որ ունի զմի նշանակ անխօսութիւն։ Բայց փոփոխ-
մունս անՃանց և զատ կերպարանս այլանմանս ունին
զատ իւրաքանչիւր ազգաց անասունք։ Օ յ եզն հաս-
տանդամ և զօրաւոր է, էշ հեղգաՃնայ, և ձի ջեր-
մանդամ և բուռն առ 'ի ցանկութիւն, և գայլ ասլըս-
տամբ է 'ի շինոյ և 'ի հնազանդութիւն ձեռաց մարդ-
կան, աղուէս նենգաւոր է և խուստիուկ[3] և խաբու,
եղն վատասիրտ է և երկչոտ, մրջնիւն գործունեայ և
վաստակաւոր է, և շունն պատակ՝ որ անվրեպ եղեալ

1 Յօր. 'ի հնազանդութիւն ան-
որովայնից. և ապա չակերտիս
թուի ակնարկել թէ բարձ։

2 Յօր. յան զերկինս ասասցուք։

3 Յօր. խուսուֆուտ։

'ի մահ պահէ զերախտիս և զսէր իւրոյ բարեկամի։ Լաւ այս ամ որ երկրորդեցաք զմնասունս, հանդերձ այլ ևս բազում անասնովք, միանգամայն 'ի միասին եկին լմնել, ընդ նոսին բարք իւրաքանչիւր և կերպաւ բանք։

Լաւ էին անդստին ընդ նմին 'ի քնէ գազանութիւն առիւծու, մենակեցութիւն՝ որ ոչ ունի հաղորդուն ընդ տոհմակցի իւրոյ, այլ զվայրենամիտ յերկուզակութիւնն զմենակեցութիւն սիրէ՝ վասն ահաւոր կերպարանաց սաստիկ բնութեան, և ոչ առնէ արժանի զոք համարել երամակիցս իւր։ Ի բարձրացեալ հպարտացեալ ունի 'ի վերս զանձն քան զամ անասունս՝ վասն ուժգնութեան զօրութեան իւրոյ մեծութեան. այնպէս՝ զի և 'ի նշխարս անգամ գիշոյ՝ որ յայգ ելանիցէ՝ ոչ կամի մերձենալ. և եթէ որպիսի զօրութիւն ունի՝ յաղթանդամ բնութեանն գոչիւն յայտ առնէ, այնպէս՝ որպէս զի բազում գազանք, որք ուժաւորք ուժովք իցեն քան զնա և յաղթանդամք մեծութեամբ, զարհուրեալ սրտաբեկին 'ի ձայնէ ահագին բարբառոյ նորա։ Լաւ ինձ թեթևանդամ է և արագոտն, զի 'ի թեթևութեան կազմեալ են անդամք բնութեանն, և անխափան է արագութիւնն 'ի ծանրութենէ խոնաւ մարմնոյն, և դիւրաւ շրջի յամ կողմանս՝ յորս և կամի։ Լաւ արջ ծանրանդամ է մարմնով, և անհնարին գնացս ունի անձինն, և փորել և որջամուտ եղեալ լմնել յօժարի խոնաւ մարմնոյն. և որպէս արտաքին կերպարանքն անհեթեթ և գարշելի են, նոյնպէս և 'ի բարս ունի գնեղութեան և զկամակորութեան. տգեղ անդամաք, անյօգ և անպատշաճ, իբրու կապզաղալ ինն զոտսն՝ շարժէ, և ժամանակս խստաշունչս սառնամանեաց՝ ամիսս ամեալ յորջն ամրաձաձուկ լինի։

Լաւ եթէ երթիցուք բանիւք զհետ Ճառիցն անասունոցն, քանի գտանեմք՝ զի առանց ուսման ունին 'ի բնածին բարուցն զպատշաճ պիտոյից կենաց իւրեանց։ Լաւ եթէ նայեսցուք Ճշմարտիւ յանխօսունսն՝ յոյժ և անչափ քան զնոսա պակասեալ գտանիմք ծուլութեամբ

1 Յոր. փթէղ անդամոք անօգուս և անպատշաճ ... զգոսն շարժէ։

անփութութեան զոր ունիմք առ անձինս մեր։ Զի արդ յորժամ վերս առնու յանձին, ինքն զանձն բժշկել գիտէ հնարիւ՝ բնաձին բարոյիւք՝ զոր եդիտ իւրովք յիւր օգնականութեան։ Լրեթայ խլէ զարմատ մի՝ որ անուանեալ կոչի փղոմս. բնութեան արմատոյն այնորիկ ցամաքեցուցիչ զորութիւն ունի՝ ուր և դնիցի. վաղվաղակի փութով դնէ 'ի վերայ վիրացն, զի առցէ բժշկութեան առ 'ի ցամաքեցուցանել դեղոցն զթաքսիս վիրաց իւրոց։ Դարձեալ և աղուէս ըստ նմին օրինակի ինն առնէ, և բժշկէ զվերս իւրոյ հարուածոյն 'ի հուզոյ՝ որ լինի 'ի ծառայ միոջ՝ որ անուանեալ կոչի պիտուս[1]։ Դարձեալ և ջրային կրաչ՝ եթէ ուտիցէ 'ի մսոյ իժի և տարգնապ ինչ հասանիցէ նմա 'ի կերակրոյն, երթայ ուտէ դաղձն, և այնու անցուցանէ զտապ նեղութեան 'ի մարմնոյն. զի մի ինասեսցի 'ի գիշոյն՝ զոր կերաւ։ Լու օձիդ ասէ յորժամ ցաւիցէն, երթայ ուտէ շումրայ՝[2] այս ինքն է սամիթ վայրենի, և ողջանայ։

Լ.յլ զոդոց փոփոխմունք կանխաւ իմանան անվրէպ անասունք[3], և թերևս յոյժ մտաբեր 'ի գիտութիւն մարդկան զգայուն բաքք նոցա։ Ինչաբք վաղագոյն իմանան զմերձենալ ժամանակի ձմերայնոյ, և վասն այնորիկ մեծաւ փութով համբարեն զանձինս մեծաւ դարմանօք, և աւելի կերակուրս ձեպին ամմանել յորովայնս. վասն զի գիտեն՝ եթէ նուազութիւն լինելոց է նոցա 'ի կերակրոց 'ի ժամանակս ձմերայնոյ։ Լու արջառք յորժամ բազում ժամանակս գումամբս լինիցին 'ի ձմերանի 'ի խստութենէն կարձմեռն ձմերայնոյ, իսկ և իսկ իբրև սկսանին օդքն պարզիլ և կակղանալ իմանան[4], և 'ի միասին միահոյլ խաղան ելանեն յիւրաքանչիւր կայանից, և զուարթութեան ցուցանեն յերեսս վասն դառնաշունչ սառնամանեացն կակղանալոյ։ Դարձեալ և ոմն 'ի մտադիր մարդկանէ, որ միտ եդեալ նայեսցի փութով ընդ փոփոխումն իրաց բազմաց, սպասեաց եդիտ զոր նի մի ցամաքային, զի երկուս դուրս օգամուտս արա-

1 'Ի լուս. պիպիս։
2 Յոր. Թուի զոմրայ։
3 Յոր. անասնք։
4 Յոր. իմանան։

բեալ էր ծակումն՝ յորում կայր. և յորժամ հիւսիսոյ սկսաւեր ընդ՝ զհիւսիսային կողմանն զծակն խնայր, և յորժամ հարաւ ընդ՝ զհարաւային կողմանն՝ ըզ-ծակն խնայր, և զառաջինն զոր եխից՝ բանայր։

ՅՀ. արդ զինչ ցուցանիցեն մեզ այս ամ՝ իբք՝ զորս յանատունն տեսանեաք, այլ զայս՝ թէ՝ ի վերայ ա-մենայնի է և իմաստութիւն տեսչութեան այ. զի մինչ և յանմեռունչ ղեռունս ձգի առաջնորդութիւն նորա, տալ՝ ի ճանաչին բարս նոցա զաղդումն առ՝ ի հնարս կենաց իւրեանց. զի մի ընդ այոց եւեթ՝ որ առաջի աչաց կայցեն՝ հոգացեն, այլ զի և զհանդերձեալն իմասցեն։ ՅՀ. մեզ մարդկան առաւել ևս պարտ և պատշաճ է զարթուցանել զմիտս մեր, և ոչ զբա-ղել՝ ի հոգս աշխատեցուցիչս կենաց, այլ վասն հան-դերձեալ աշխարհին վաստակեցուք յամենայն ար-դարութիւնս. աշխատեսցուք սակաւ մի ժամանակ՝ ի կեանս մեր վասն կենացն, որ կան և ինան յաւիտե-նից. և յանցաւոր աշխարհիս հանդերձեսցուք մեզ գանձս և պաշար, որ լինի մեզ՝ ի հանգիստ ճշմարիտ կենացն։

ՅՀ. նմանեսցուք գոնէ մրջեանն, որ ամարայնւոյն պատրաստէ աշխատութիւք զհամբարս ձմերայնոյ. թէ-պէտ և ոչ է մեծ նեղութիւն ձմերայնոյ, ոչ ծուլանայ և ոչ հեղգայ՝ ի պատշաճից պիտոյիցն նեղութիւն ժա-մանակին. այլ մեծաւ փութով անդանդաղ տայ զանձն՝ ի գործ և՝ ի վաստակ, մինչև ժողովեսցէ զէ-ցէ համբարս՝ ի շտեմարանս՝ բաւական իւրոյ դարմա-նին։ ՅՀ. զկերակուրն՝ զոր ժողովէ, ոչ ծուլութիւք համբարէ, այլ իմաստուն և խորագէտ հնարիւք զաբ-ժան իրացն կատարէ. զհատ կամ զկորիզ իրիք[2] յոր-ժամ տանի՝ ի ծակն, ընդ մէջ կտրէ և զնէ. զի մի բուսցին՝ ի հիւթոց խոնաւութիւն, և վրիպեալ եղա-նիցեն՝ ի դերեւ պիտոյից կերակրոց։ ՅՀ. դարձեալ եթէ խոնաւացին հատքն, հանէ առ եզերք մրջիւ-նոցին արկանէ տարածոց և ցամաքեցուցանէ։ Բայց ոչ եթէ հանապազ հանէ, այլ յորժամ դիտէ՝ թէ արևակայ և պարզ իցէն, և ոչ անձրև. և ոչ վայրապար

1 Յօր. ԼՈՂ։ 2 Յօր. ԷԲԹ։

առնէ ընդ ժամանակս յորում հանէ մինչեւն զցո-
ւբեանն յշտեմարանացն իւրոց ցամաքեցուցանել։

Լաւ արդ որ բանք իցեն բաւական հասանել առ 'ի
սքանչելիսն, և կամ որ ըստ ինքեան կարող լինիցին լսել
զզարմանալիսն, և կամ որ ժամանակք երկայնաձիգք
բաւեսցեն ընուլ զամս և զպատմութիւս մեծամեծացն
այ, որ կազմեալ կան յարարածս։ Այլ ասասցուք
ընդ մարգարէին այ, եթէ Վանդի մեծամեծ են
գործք քո, տէր. զամ ինչ իմաստութիւնս արարեր։ Լաւ
արդ ոչ ունիմք բարուրս ասել, թէ 'ի դպրութենէ
և 'ի գրոց ուսանիմք զգոտակարն մեր. քանզի առանց
ուսման ունիմք 'ի բնութեանէ մերում օրէնս տրնկեալս
և հաստատեալս՝ առ 'ի հանգիստ կամաց մերոց։ Զի
տես զոր բարի առնես ընկերին։ Օ՞ր դու կամիս՝
թէ քեզ յայլոց լինիցի։ Զիտես դարձեալ՝ թէ որ
ինչ չար թուեսցի ընկերին։ Օ՞ր թէ որ քեզ առ-
ներ, և չթուէր հաճոյ։ Զիք ճարտարութիւն արմա-
տագէտ, և ոչ փոռ իմաստնոյ խորաքնին, թէ եղէն
երբեք վարդապետք անամոյ՝ քննել և ընտրել ան-
ճանց իւրեանց խոտս և արմատս. այլ ամենեքեան
յանմուռնչ յանամոյ՝ անդտին 'ի բնածին բարոյից
գտանէն զշահս և զոգտակարս իւրաքանչիւր։

Լաւ առ մեզ գտանին հաճոյք մեծամեծք, զոր ա-
ռանց ուսման ունիմք բնութիւնք։ Օ՞ի ոչ որ եղև մեզ
վարդապետ, ատել զհիւանդութիւն, այլ 'ի մերոց ան-
ճանց գիտեմք՝ եթէ չարչարելի է, թէպէտ և ընդու-
նիմք 'ի հարկէ։ Այնպէս և ոգիք մեր առանց ուս-
ման գիտեն խոտորել 'ի չարէ. զի չարիք՝ հիւանդու-
թիւնք են ոգւոց, և բարիք նշանակ առողջութեան
ոգւոցն։ Այսպա ուրեմն բարիոք նկատեցին ոմանք զա-
ռողջութիւն, ասել՝ թէ հաստատութի [1] է՝ որ ունի
զնութիւն 'ի մնդութեան. և եթէ որ ասիցէ՝ եթէ
յայն [2] առողջութիւն որ հաստատութի է՝ վայելէ լս-
նել և ոգւոցն, ոչ ինչ մեղանչիցէ։ Օ՞ի առանց ուս-
ման իսկ ունին զայն ոգիքն բնութիւն, զի որում իմիք
ցանկանան՝ 'ի նոյն եկեալ յանգէ. վասն այսորիկ գո-
վի պարկեշտութիւնն և յամենեցունց ընդունելի է. և

1 Յոր. հաստատուն։ 2 Յոր. նոյն։

արդարութիւն առ բաղումս զարմանալի է. ընտրելի է և ժրութիւն յաշխարհի, և ցանկալի է գիտութիւն։ Այլ յայտ է թէ յանկ և մերձ են 'ի բնութիւն՝ մեր հաճոյքն որ լինին 'ի կամաց մերոց, առաւել քան օրէսք պիտոյ իցէ առողջութիւն մարմնոյ։ Որդիք, սիրեցէք զհարս ձեր, հարք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր։ Մի թէ բնութիւն չիցէ վարդապետ այսոցիկ. ոչ եթէ նոր ինչ նորոգեաց և ուսոյց Այաքեաւ, այլ զթուլացեալ կապս բնութեան կամեցաւ պնդել հաստատել, զի առաւել յաճախիցէ 'ի սէրն իւր։ Նթէ մատակ առեւծ, չար գազան, սիրէ զծնունդն իւր, և գայլ անագորոյն մինչև 'ի մահ մարտնչի առ սէր իւրոյ կորեանցն, զինչ ասասցուք վասն մարդոյ՝ որ չլսիցէ պատուիրանացն ՀՍ, և զգութ բնութեան իւրոյ համարձակեսցի ապականել. յորժամ ստահակեալ տղայն անդրէն 'ի մենդեանն ընդդէմ դարձցի և ըստ ծերութեան հօրն թշնամանիցէ, և հայրն դարձեալ երկուս կանայս առնելով՝ զգութ և զգորով որդւոյն մոռանայցէ։ Զմարթի այսպիսի անագորոյն բաղոյից գտանել յանասունս, եթէ վերիպեալ հարքն 'ի գթոյ որդւոյն գտանիցին, և կամ որդիքն 'ի հարցն և 'ի մարցն խնամոց։ Օ ի ՀԱԾ՝ որ արար զանասունս, զթերութիւն անխօսութեանն՝ զոր ունին՝ ընտրողութիւն զգայուն բարոյիցն նոցա ելից, լինել նոցա հանգիստ և միխիթարութիւն։

Օ արմանք մեծապանչ էն ընդ ընտրողութիւնն՝ զոր անկեաց ՀԱԾ 'ի բնածին բարս անասնոց. եթէ զիարդ 'ի բազմահոյլ խաշանցն 'ի միջի՝ անհամար գազուիւքն գոյթ [2] տուեալ դրդեալ ելանեն յիւրաքանչիւր որջոցն արգելանաց, և ամենեքեան զձայն իւրոյ մօրն անվրեպ ճանաչէ՝ առ նոցն ընթանալ և այլ ուրեք ոչ խոտորել։ Այլ գութ կալեալն ստեանց իւրոյ մօրն իբրև 'ի հարկէ ինն վարէ տանի. թէպէտ և ցաքանք իցեն ստինք մօրն, նա զայն խնդրէ և 'ի նոցն փութայ, հասանել ՀԱԾՊ. զի զիւրոյ զմօրն զկաթնն շահեսցի և հանգիստ ինն համարի։ Այլ բաղում անգամ առ այլոց ստինս հասանէ, և ոչ յօժարէ կալ

1 Յօր. ԷՆ ԲՆՈՒԹԻՆ։ 2 Յօր. Գոյթ։

մնալ անդ. զի զՀոգ մոր իւրոյ ոչ եգիտ 'ի նոսա։ Դարձեալ մաքիք բազումք 'ի մէջ գառանց զիւրաքանչիւր զծնունդսն յայլոցն գիւրաւ ի՛նն գիտէն որդ չէ։ Այլ այս են զարմանք, զի ձայն՝ մի, Թերևս և գոյնն նոյնպէս դիպէսցի, և մի հոտ ամենեցուն՝ որպէս և մեք կարծեմք։ Այլ ինձ այսպէս թուի, թէ սուր ևս զգայունս նոքա ունին առ 'ի հոտ քան զմեզ, և յիւրաքանչիւր բարս մակեալ է ընտրողութիւն՝ գիտել զընկերս և ՀԱՄԱՅԼԼ 'ի միմեանց։ Այլ ընդ այս է զարձեալ առաւել զարմանալ, զի չև ևս երևեալ էն բնաւ ամենևին կորեան մատաղոյն ատամունք, և որ գրգռիցէ զոք զնա՝ այնու տեղեաւ ընդ որ ատամունքն գալոց են՝ յարձակի առնու զանդրացուցիչն իւր։ Սոյնպէս և ըստ նմին օրինակի, մինչ չև բուսեալ իցէն բողկուկք եղջերուաց որթուց կամ գառանց, գիտէն զտեղին՝ ընդ որ գալոց են. և այնու վարին 'ի մարտ իբրև զնոսա։

Այլ այս ՀԱՄ օրինակք զարմանալիք զայս ինչ յայտ առնեն յանասունս[1], եթէ առանց ուսման ունին զորոշումն ընտրելոյս բնութեան. և չիք ինչ՝ որ անկարգ և անպատշաՀ հաստատեալ իցէ ՀՒ, այլ ՀԱՄ ինչ՝ որ եղև և հաստատեցաւ, զնշանակ իմաստութեան արարչն գրոշմեալ ունի յանձին։ Այլ այսպէս եկին եղեն անասունք ՀԱՄ՝ ըստ իւրաքանչիւր արժանի համբաւելոյ բնածին բարոյիւք, զի անդստին 'ի ինքն յարաբածոց գիտասցին զօգտակարս և զպատշաՀս իւրեանց։

Յայտնի է այսուհետև, թէ շուն՝ որ անխօսուն և անմտունչ է, զուգակից է զօրութեան խօսնոյ բնածին զգայարանօքն՝ զոր ունի. զի մարդիկ իմաստունք յաշխարհիս՝ որ միշտ նատին նկատել զիրս ՀԱՄ, Թերևս ոչ կարեն կալ 'ի վերայ մեծամեծ խորհից յեղեղեալ խորհրդոց իւրեանց։ և շուն զայս գիւտս յիւրոյ բնութեանց վարժից ստացեալ ունի. զի 'ի հետոյ չար գազանի ինչ զեռնոյ՝ հոտով գիտէ քննել և կալ 'ի վերայ։ Այլ յորժամ խառնակեալ սոսերիրեալ բազում հետք զայն հետ՝ զոր վարէ՝ գտանիցէ, և գիտէ՝ թէ բազում հետք են աղամողեալք յամ կողմանս, ոչ

1 Յոր. յանասնան։

ԷԹԷ մոռացածին խորհրդովք սկսանի խորհել իբրև զխօսսն՝ զոր գործելն կամի, ասէ՝։ Բնդ այս երթեալ իցէ չար գազանն, թէ ընդ այն։ Յայս կոյս, թէ յայն կողմ։ այն հետ իցէ՝ որ սակաւ մի ընդ աջոսս երևի, թէ այն՝ որ համարձակն երևի։ Բայլ իսկ և իսկ իբրև հոտոտի սուտ 'ի հետն, կայ վաղվաղակի 'ի վերայ ճշմարիտ հետոյն, և անտի յառաջ ընդ ուղղոյդս մոռեալ ընթանայ, երթայ ժամանել 'ի յարիշտակող գազանին։ Բրդ զինչ աւելի գործիցեն՝ որ երևելի նշանակաբն և մեծարգի պատուով նստիցին մշանջենաւորեալք առ 'ի զիմաստութիւն քննել, և 'ի վերայ հողմամաղ մոխրացան զետոյ նկարագիրս դրոշմեալ՝ գտանել զհասարակ երեքանկեան ինն ելս եքբոլորաձև դրոշմիւքն՝ զոր նկարեն։ և մինչև յերկուսն թողուն և մի մնան, ոչ կարեն կալ 'ի յստուգոջ վերայ։

Բսկ քնակաւոր յիշատակք երախտեաց՝ զոր յիշեալ ունի շուն առ երախտաւորս իւր, զի յապաշնորհ հաց [2] երախտաւորաց իւրոց ոչ ընդ ամենի հարեալ պատկառեցուցանիցէ։ Բյս քաղցրամանգամ յորժամ սպանանիցին տեարք շանց 'ի բաց 'ի վայրի ուրեք յանապատի, և շունք ընդ նոսին առ գուբ սիրոյ տեղանացն մեռանիցին, և զնոսա ոչ թողուն։ Բյս դարձեալ յորժամ՝ այն ինչ տեարքն սպանանիցին, առաջնորդ խնդրակաց սպանողացն լինիցին շունքն, և յայտ յանդիման ակն ցուցանեն զվրիժագործն, զի ընկալցին զպատիժ պատուհասիցն ըստ անօրէնն գործոցն զոր գործեցինն։ Բյս արդ զինչ ունիցին ասել առ այս օրինակ, որք զնոսն զարարիչն և զկերակրիչն իւրեանց ոչ սիրեսցեն, այլ ընդ այնս ևս բարեկամացեալ իցեն՝ որք զայ զամբարշտութիւս խօսիցին, և սեղանակիցք ևս նոցա իցեն, և պատրժելով լսիցեն առ սեղանս զՀայհոյութիւնն՝ որ ի ընդդէմ իւրեանց կերակրչին։ Բյս արդ այսուհետև 'ի նոյն ճառ զոր արկեալ էաք դարձցուք, այս ինքն 'ի պատմութիւն արարածոց անանունց։

Բնասունք՝ որ միշտ յորս և 'ի կերակուրս կոտորին,

1 Յօր. այսէ։ 2 Յօր. յապաշնորհէաց։

բաղմաճին ծնունդս ունին բնութիւն։ Այլ վասն այսրիկ նասպաստակաց բազմաճին ծնունդս կարգեալ է, և այծաքաղք և արտիկք բազում անգամ երկաւորեակս ծնանին, զի մի պակասեսցի սեր ծնունդեանն նոցա ի գիշակեր գազանաց։ Իսկ այլ ևս անասունք, որ ինքեանմեռք լինին՝ և ոչ յորս և ի կերակուր կոտորին, մի մի ծնանին։ Օ ի թերևս մի կորիւն առիւծու ծնանի մատակ առիւծ. և յորժամ հասանէ ժամանակ ծնունդեանն առիւծակորեանն՝ պատառէ մագլօքն՝ զարգանդ մօրն և եղանէ, որպէս պատմին՝ ողբ տեղեակ են իրացն նորա։ Այլ իժ դարձեալ, ասեն, ըստ նմին օրինակի ծնանի. և իժակորիւնն՝ որ ի նմանէ ծնանելոց է, ուտէ բերանովն զարգանդ մօրն և եղանէ. և արժանի են վարձքն այնմ ծնօղի ի ծնընդեանն՝ որ զնայն ծնանի։

Այլ արդ զի՞նչ յորոյ վերայ չիցէ տեսութիւն. և զի՞նչ՝ որ կազմեալ իցէ, թէ պակասեալ գոյանիցի ի մասանց յօրինուածութենէն։ Այլ թէ միտ եդեալ ընդ իմաստութիւն՝ զոր ունին անասունքն՝ հայիցիս, ոչ գտանիցես ի նոսա աւելի՝ որ ոչ ըստ կարգի պատշաձեալ իցէ յարարչէն. և ոչ՞՝ որ կարևոր պիտոյ էր, թէ ոչ գտանիցի ի նոսա։ Օ ի գիշակեր գազանքն՝ որ միշտ զշաղիզ ուտեն, ժամին սուրս հաստատեաց եդ արարիչն ըստ պիտոյից պատշաձին՝ որպէս և իրքն պահանջէին առ ի կերակուր շաղոյն։ Իսկ յայլ ևս անասունսն, զկնա ատամանցն ի միում կողմանն հաստատեաց եդ, և կերակուրս ազգիազգիս հաստատեաց եդ նոցա յերկրի։ Այլ քանզի յառաջին նուազին ոչ կարէին մանրել զոր ուտեին, պատշաձեաց եդ ի նմա արարիչն այլազգ հնարս, զի զոր ինչ մեծամեծ և ողջն ողջն կլանիցեն՝ դարձցի միւսանգամ անդրէն ի բերանն, և ապա մեղմաժամ որոձալովն մանրեսցի և լինիցի նոցա հանդիստ և ի շայեկանուն։ Վասանզի ոչ եթէ վայրապար ինչ գտանի յախմնդանս[2] կերպարանք խածողն և նմանութիւն երկուցն քաղոդաց. զի մինն ընդունի զմեծ ի մեծոյն՝ որ միւսանգամ յորոձն դառնալոց իցէ, և մեւսն

1 Յօր. մաքաւցան։ 2 Յօր. յասիրեանս. գուցէ յորովանս։

ընդունի զմանրեալն և զկալեալն. զի գործիք յօրինեալ և կազմեալ են ի փոր անանցոյն ընդ որս անցանիցեն կարևոր պէտք կերակրոց նոցա, և նոքօք կարգեսցի կերակուր նոցա ի շայեկանութեն։ Զանազի ելից կատարեաց զպէտս անանցոյն արարիչն անդէն ըստ իւրեանց պատշաճիցն։

Այլեւոյ դարձեալ և ընդ յօրինեալ յոգուածս անանցոյ։ Զսան այնորիկ է երկայն պարանոց ուղղատու, զի դիւրաւ լցցի նմա ձկտել ի բարձրաբերձ հասակէն առ ի հաւասարուն բարձրաբերեաց ոտիցն. զի յորժամ խանարհեսցի և հասցէ ի թաթուլն, համարձակ լցնի նմա առնուլ զդարմանս իւրոյ կերնայն ի թփոց և ի խոտոց՝ որ ունիցին զերեսս երկրի։ Իսկ արջ և առեւծ և վագր թիկնեղք և կարճապարանոցք են. և ամ ազգակիցք՝ որ նոցին նմանիցեն, զնոյն կերպարանս ունին. քանզի ոչ եթէ ի խոտոյ առնուն զդարմանս կերակրոյ իւրեանց, ոչ միայն է նոցա պիտոյ երկայնաձիգ պարանոցաց յերկիր խոնարհել. քանզի գիշակերք են, և յորսոյ այլոց երկոց է կերակուր նոցա։

Իսկ արդ զինչ մարթասցուք զմտաւ ածել և կամ խորհել զչնուռածաձև և ապարանազարդ կերպարաւ նոցա փղի, մեծ և ահագին գազանին. և ինչ մի այնպիսի է, որ անհնարին մեծանդամ յաղթամարմնով և վիթխարի է յանասունս՝ ամ՝ որ շրջին յերկրի, և ահագին տեսիլ կերպարանաց ունի յանձին, մարմնեղէն, շաղայեղց, անարի։ Իսկ բարիւք կազմեցաւ այնպիսի գործուած ահագին և յաղթ գազանին, որ իբրև զձին և զարդ ունի մարմնոյն՝ զմորթն հաստաբուն։ Իսկ եթէ պարանոց երկայն ունէր փիղն՝ որ կաշի։ Իսկ եթէ պարանոց երկայն ունէր փիղն՝ որ գայլ հասանէր յոտիցն հաւասարուն, ծանրագնաց և ծանրախաղաց առ ի պէտս իւրոյ դարմանոյն լինելոյ՝ վասն ծանրաբեռն մեծութեն, որ կախեալ զմամուկ և միշտ հանապազ յերկիր հակեր և կքեր։ Իսկ այժմ կարճ պարանոցաւ սակաւ ողնաբքն՝ որ անդ ուրեմն մնա՝ ի մկանունսն են, հաստատեալ կայ գլուխն՝ ի բարձրաբերձ վայրն. և փոխանակ երկայն պարանոցին

1 Յոր. Վիթխարն է յանասունս։ 2 Յոր. Ե երկայն ունէր փեղն։

ունի զերկայն պատիՃն , որ բաւական է ընուլ զտեղի երկայն պարանոցին , առ 'ի դարման կերակրոյ և առ 'ի պէտս ջրոյ ըմպելոյ ։

ԼՒ ոտք փղայ անյօդք են , և այնպէս հաստատեալ կազմեալ կայ 'ի նոսա , իբրև զսիւնս հաստատունս և իբրև զմոյթս [1] հաստաբեռուս բառնալ զմեծաբեռն ծանրութիւն բազմադեզ մարմնոյ ։ Օ՚ի թէ փոր և լի [2] ուղղակք էին սրունքն , և բազմակալ յօդիւք ոտքն , բազմայօդքն լքեալք անկանէին և յօդակոտոր 'ի միմեանց յօդքն քակտէին 'ի մեծամեծ ծանրութենէն՝ որ յենոյր 'ի նոսա և ՃՆՂէր ։ քանզի ոչ կարէին ոտքն յօդակապք հանդուրժել ժայռ ունել բազմակոյտ յաղթանդամ մարմնոյն թանձրութեան ։ ԼՒ պՃղամիքն [3] միայն 'ի խոնարհ կոյս կապին ոտք փղոյ , քանզի ոչ եթէ կրկնելով կրկնին ծունկք ըստ օրինաւ կի ուղտուց յօդից ։ զի թէ այսպիսի կերպարանս ունէր , ոչ կարէին յօդքն [4] ժուժել , այլ կոտորէր հատանէր 'ի սաստիկ ծանրութենէն՝ որ կայր 'ի վերայ ։ ԼՒ զպատիՃն երկայն որ մինչև 'ի յատն հասանէ , վասն այնորիկ հաստատեաց էդ 'ի նմա արարիչն , զի եղիցի 'ի պէտս դարմանոյ նորա ։

Զիցէ՞ տեսեալ քո կամ լուեալ , ըստ օրինակի գաւազանեղէն աշտարակաց խարակաՃևք հաստատեալ՝ կան ՃԱկատեալ ընդդէմ պատերազմողաց 'ի գլուխս բանակաց ըստ օրինակի մարմնեղէն ելլոց ։ ԼՒ չիք ինչ՝ որ կարող լիցէ կալ առաջի սաստիկ զօրութեանն նոցա , յորժամ յարձակեալ փլուցանիցեն զՃակատս պատերազմողացն 'ի պատերազմի , և այսր անդր թափանցանց ընդ գունդս մարտիկ նահատակացն անցանիցեն ։ Օ՚ի եթէ ոչ հաստահարուստ անդամս ունէին 'ի նեբրոյ ըստ հաստատեալ վերին ծանրութենն , ոչ այնչափ երկար ժամանակս կարէին կալ յաշխարհի ։ քանզի այս պէս ասէն զիրաց , եթէ աւելի քան զերեքհարեւրամ ՃգՃին կեանք նոցա ։ զի սեղմ են ոսկերքք փղայ , և ոչ բաղում յօդս ունին յանդամս իւրեանց ։ ԼՒրդ փիղ զերակուրն պատՃռին համբանայ հանէ յերկրէ 'ի

1 Յօր. վմոլն ։
2 Յօր. Ն զի ։
3 Յօր. առ որ ՃգամՄքն գիայ
խոնարհ կոյս ։
4 Յօր. յօդն ։

բարձրաբերձ մարմնոյն բարձրութիւն. և իբրև օձի փնթռնոցք երևին 'ի պատիժն՝ յորժամ այսր անդր շրջիշրջիցէ. քանզի ամենևին մեռեալն է։

Եւ որպէս վերագոյնն ասացաք, չիք ինչ աւելի յայնս՝ որ եղէն, և ոչ թեւք ինչ կամ պակաս 'ի կազմեալսն։ Եւ զայն ահագին գազանն՝ որ այնչափ մեծութեամբ և զօրութեամբ ունի, մեզ հնազանդեաց ոչ՝ և ընդ հրամանաւ մերոյ բանի եդ. զի յորժամ ուսուցանիցեմք զնա՝ անասցէ մեզ, և յորժամ կասիցեմք և հարկանիցեմք՝ յանձին կալցէ։ Եւ որպէս երևի մեզ և հասու լինիմք յայսմանէօքս, բանն այդ հաւանեցուցանէ, որպէս ասէ՝ եթէ Օ՝ամ ինչ հնազանդ ա բար 'ի նեղբոյ ոտից մերոց. քանզի ըստ պատկերի կերպարանաց իւրոց արար զմեզ։

Եւ արդ ոչ եթէ մեծամեծ անասունքն միայն երևի անքնին մեծութիւն այլ, այլ և ոչ մանուշքն թեւ բաւոյն գտանին՝ կացուցանեալ զմեզ վասն նոցա 'ի զարմանս։ Զանզի ոչ եթէ միայն 'ի լերինս մեծամեծս պարտիմք զարմանալ, որք բոլորեալս և սուլթեալս 'ի բարձրաբերձ բարձրութիւն ամպոյն հասանեն, և վասն մշտախաղաց օդոյն 'ի բարձրանէ նոցա հնչելոյ՝ ցուրտ բունեալ բնակեալ 'ի նոսա. այլ և ընդ խորաձոր ձորս նոցա պարտիմք զարմանալ, որ զխստաշունչ հողմն՝ որ անդ 'ի վեր միշտ զցուրտն հնչեն, ոչ ունին ատտ 'ի խմարտ ամենևին. այլ փոխանակ խստաշունչ ցրտոյն՝ որ 'ի բարձունս լերանցն հնչէ, ջերմն և քաղցրաշունչն օդ հնչէ 'ի խմարտ շուրջ զստորոտովքն նոցա։ Զարձեալ ոչ կարի յոյժ զարմանամ ընդ մեծութիւն զօրութեան փղն կամ ընդ այլ եւս մեծամեծ յանասունոց, որպէս զարմանամ ընդ միսն և ընդ մեղրն՝ որ խուռվիչք և դողացուցիչք են փղն, և ընդ նուրբ խայթոցքն կարձի՝ թէ զիարդ կորացեալ և կրկնեալ կազմի հարկանել ըստ օրինակի մեղ[1] և կոր կերպարանաց փողի[2]. և զիարդ արկանեն զթոյնն յայնոսիկ՝ որ հարկանեն։

Եւ արդ մի՞ ոք մեղադիր լիցի արարչին՝ թէ ընդ էր արար ընդ մեզ յաշխարհի զգազանս զնասակարս

1 'Ի ղուս. ման Ն ՀՈՐ։ 2 ՅՈՐ. ԷԷ։

և զսողունս դառնաթոյս, և կացոյց 'ի խեթի զկեանս մեր սոքօք։ Որպէս թէ բամբասիցէ զի զդաստիարակ իւր, թէ ընդէր լինի նմա վարդապետ և ուղղիչ 'ի բարիս՝ սաստիկ բանիւք և խիստ սպառնալեօք. յորժամ ածիցէ 'ի խրատ զմանկութեն նորա՝ հեռանալ 'ի յոռութեց և մեկնել յանձնէ զտատհակուիս ամ։ Զայս ուրեմն՝ դազանք չարք հանդերձ փնտասակար սող-նովք 'ի փորձ քոյոյ հանդիսի արարան, թէ օրչափ ունիցիս սեր առ ածծ հանդերձ ճշմարիտ հաւատովք։ Զոր եթէ իցէ յոյսն քո յածծ՝ որպէս պահանջէ ածծ, մարթի լինել առ քեզ այն՝ որ գրեալն է, թէ 'Ի վերայ իւժից և քարքից գնասցես, և առ ոտն կոխեսցես զառաւծն և զվիշապն։ Զոր եթէ յուսասցուք յածծ, ունիմք հաւատս 'ի բանէն Տեառն մեծաւ զօրութեբ, որով կոխեսցուք զօձս և զկարիճս, մանաւանդ եթէ միաբանեալ ընդ նմին գտանիցիմք։ Զնայիցիմք ընդ Զդաքեանն այ, որպէս և գրեալ է 'ի պրակս Զդաքեբոցն, թէ մինչ դեռ զկռիւն ժողովէր Պաւղոս՝ իժ մի քարքը կախեցաւ զձեռանէ նորա, և ոչ ինչ կարաց ազդել և փնասել սրբոյն. զի լի էր հաւատովք և Հրշ-մարտութեբ։ Իսկ եթէ անհաւատք իցեմք, երկնչել պարտիմք ոչ միայն 'ի փնտասակար գազանացն, այլ ա-մենի յանհաւատութենէն՝ որ 'ի կորուստ և յապա-կանութեն դարձուցանէ զմեզ։

Գիտեմ, զի խնդրեաք լսել վասն մարդոյն լինելոյ. ոչ վասն զի լուռդ էք և ոչ ինչ ասէք, այլ գիտեմ՝ թէ զայս խնդրեաք ընդ միտս, թէ վասն ստացուածոց մե-րոց և վասն աքանչելեացն արարածոց ուսաք, և վասն մերոց անձանց և մեծութեբ՝ որ գտանի 'ի մեզ, ոչ որ ուսուցանէ։ Հասեալ եմ այսուհետև ուսուցանել, թէ տկարութեն և դանդաղանք մարմնոյ փարատես-ցեն 'ի մէնջ։ Այլ թուի ինձ՝ եթէ անմտութեն է այս, յորժամ զկիր որ զանձն ոչ գիտասցէ, և զկիր ոգիսն ոչ իմանայցէ Հանապէտ։ Այլ թուի ինձ՝ եթէ ոչ ակն միայն է այս, թէ բայց զկիրոյ անձինն միայն զմտինն ոչ տեսանէ՝ և զիմ ինչ որ առաջի կայ տեսանէ։ այլ և միտք այսպիսի ինն բարս ունին, զայլոց մեզս տե-

1 Յոր. ազա։

սանէ, և զկնի յանցանսն ոչ առնուն 'ի միտ։ Ղղոյնս-պէս և մեք բանիւք մերովք՝ իբրև երագ ընթացս արշաւանօք՝ ընդ արտաքինսն ընթացաք պէսպէս ճառիւք, և զմերս զոր առանձինն ունիմք՝ Թերևս զրժուարաւ կարիցեմք պատմել։ Քանզի ոչ եթէ յերկնից և յերկրէ միայն կարիցեմք խմանալ զնոյն, այլ և յարարածոյ մերոյ անձանց՝ եթէ կամիմք՝ ուսանիմք զարարիչն մեր, ըստ այնմ՝ զոր մարգարէն ասէ, թէ Ապանչելի եղև գիտութիւն քո յիս, և մեծամեծ են գործք քո։ և անձն իմ յոյժ ծանեաւ։ քանզի մարդարէն զայս ինչ յայտ առնել կամի, թէ յարարածոյ իւրոյ անձինն խմացաւ զառաւելութիւն մեծութեան՝ ՝ՅՅ խմաստութեան։

"Նոյնս ասաց, ասէ, ՝ՅՅ։ Ուրասցուք մարդ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց մերոց"։ Ուրդ զինչ ասիցէ Հրեայն զՅՅ, որ խօսեցաւ իբրև զՀայրցող՝ որ Հայրանիցէ։ և իբրու թէ բաւական եղև կարգ բանին ցուցանել մեզ զՀնմարտութիւնն։ և որպէս ցուցանիցէ լոյս ընդ նեղ ծակ պատուհանից զնշանակ իւրոյ նշուլեցն։ որպէս և յայսմ ընթերցուածոց՝ օրինակ երկրորդ երեսաց երևի, յայտ յանդիման ճառագայթից Հնմարտութեան։ Լոկ Հրէին, մինչև լուեալ էր Հնմարտուին, մարտ եդեալ ընդ նմին կուռի։ ինքն, ասէ, ասաց ՅՅ ցանձն իւր։ և ինքն ընդ ինքն խօսեցաւ։ և ինքն է, ասէ, որ ասաց, և նոյն ինքն է՝ որ արար։ "Նոյնս ասաց, ասէ, ՝ՅՅ։ Նոյնցի լոյս, և եղև լոյս"։ Ցեսանէք որչափ պատրաստ կան Հրեայք ամբարշտել բանիւք զոր խօսէին։ Քանզի ամ՚ զոր երբեք դարբին և կամ հիւսն, կամ կարուակ[2], յոյժամ առնիցէ իւրով Հարտարութեամն անօթ ինչ, և ինքն միայն առանց ընկերաց նստիցի, ինքն ցինքն ասիցէ, արասցուք դանակ, կամ արկցուք արօր, կամ կարեսցուք կօշիկս։ այլ յոյժամ միայն իցէ Հարտարն, լուռ բերանով կազմէ՝ զոր ինչ կամեսցի գործել Հրշմարտութիւն։ քանզի չէ ինչ պատշաՀ՝ թէ ինքն ընդ ինքն խօսեսցի։ Այս իսկ են Հնմարտիւ բանք անօրէնութեան և լեզուանութեան և խորամանկութեան, ա-

1 Յօր. ԴԷՆՈՒՐ։ 2 Յօր. կարաուակ։

սել՝ թէ յորժամ միայն ոք առանց ընկերի նստիցի՝ թէ ինքն անձին հրաման տայ բանիւք , և սնդիչ իւրոյ քնուէն հարցուածովք , և վարդապետ իւրոյ կամայն բարբառովք , և ինքն 'ի վերայ իւր կացցէ երբև զտեր , և ինքն զինքն Ճեպեալ 'ի գործ ստիպիցէ , և ինքն ընդ անձին խօսեսցի երբև ընդ այլոյ ։ Ա.ըդ գնոսին իսկ զՀրեայն , որ զնած ոչ ակնարկեցին զպարտեալ , քանզի սուր էն լեզուք նոցա 'ի հայհոյել , և կերթք ' էն միաք նոցա առ 'ի ստել , բանն ՝ այ իւրով մեծաւ զօրութեամբն և Ճշմարիտ ստուգութեամբն բաւական է պապանձեցուցանել ։

» Լ.ռ ասայ , ասէ , ՝ած . Ա.ռասցուք մարդ ըստ պատկերի կերպարանաց մերոց ,, ։ Ա՝ի թէ մեկնակ երեսս ցուցանիցէ կարգ բանիցս այսոցիկ . զի մինչ և երևեալ և լեալ այն՝ որ յուսումն գալոց էցէ , երբև ծածուկ խորագիտութիւն զողեալ կայ 'ի նմանէ բանն՝ որ զայն քարոզէ . իսկ յորժամ սկսանիցի երևեալ արաբած մարդոյն ապա յայտնին հաւատքն , և քարոզի Ճշմարտութիւն և երևի ստուգութիւն , լինել 'ի վարդապետուն մարդոյն ։ Ա.ըդ այն՝ զոր լուար , ով Հրեայ քրիստոսամարտ , թէ " Ա.ռասցուք մարդ ըստ պատկերի կերպարանաց մերոց , ցայն՝ որ էր գործակից գործոյն իւրոյ , ասաց՝ թէ արասցուք , և ցայն՝ որով ա՝ ռաջ զաշխարհս ՝ամ , և ցայն՝ որ զՀամ ինչ ածէր զորութիւն բանի իւրոյ ։ Ա.ՍԼ Հրեայն ոչ կամի սխորժելով ընդունել զբանն՝ որ զՃշմարտութիւն քարոզէ ։ Լ.ռ զոր օրինակ մարդատեաց գաղանքն՝ յորժամ 'ի գառագիւղն արգելուցուն , զմնչէն և զմնչէն ևեթ կերթ ունին . և զայրուցս ցասմանն և զդաղանութիւնն գառնացեալ անձանց ընդ ծակս քանմնացն գայրագիլն ցուցանիցեն , և ընդ միջոց խաղխամանցն պէս պէս կերպարանօք ոգորին , և վՃռեն ինչ ոչ լինի զայրագիլն սպառնալեացն . սոյնպէս են ՝ամ թշնամիք արդարութեան և զլացողք Ճշմարտութիւն ։

Լ.ռ արդ Հրեայք յորժամ խեղդ ընդ անձինն հեղձամղձուկ [2] պաշարին բանիւն՝ որ ասէ , թէ " Ա.ռասցուք մարդ ըստ նմանութիւն պատկերի կերպարանաց

1 Յօր. Ա ԻԲԻ ԷՒ ։ 2 Յօր. հեղձամղձուկ ։

մերոց ,, , զայս պատասխանի առնէն , թէ բանս այս զլաղում երեսաց յայտ առնէ . ցՀրեշտակս , ասէն , ասաց , որ առ նա մնա կայցն , թէ արացուք մարդ։ Լաւ այսու բանիւ՝ որ 'ի խոտորեալ մնաց հրեշտեղէն ստեղծաւ , զի զՀիմարիտ որդին մի ընկալցին , և զլայողք նորա Հիմարութեամբ եղիցին , բազում դէմն երեսաց բերէն 'ի մէջ , և զփառաւորեալ զայ ընդ այ զկորհուրդն՝ ծառայիցն նորա կամին տալ . և տեր ստեղծուածոյ մարդոյն՝ զծառայակիցսն մեր ջանան առնել . զի մարդ 'ի պատուոյ հրեշտակաց չէ ինչ հեռի , հասանել թէ արժանի լինիցին առնուլ զպարգևս 'ի կեանս նորոգս և նորոգեալս։ Լաւ արդ ո՞ր ապրաած բաւական իցէ կրշտել ընդ արարչին իւրոյ։ Լայեսցուք և ընդ բանն զոր ասէ , թէ Աբրացուք ըստ նմանութեան կերպարանաց մերոց։ Արդ զի՞նչ խմանայցես , ով Հրեայ , յորժամ զայս բանս լսիցես , մի թէ այ և հրեշտակաց մի կերպարանք իցէն . այլ Հօր և Որդւոյ նոյն և մի կերպարանք լինել ամ հնաբերեալ պատշաճ է , որպէս և վայելէ իսկ նմանութենն այ գիտել զիւր նմանութեան։ Արդ յորժամ ասեմք զնմանութենէն , մի կարծեսցուք անուանք զնմանութենէն՝ թէ հասանիցէ այ նմանութեան . և մի իշխեսցուք արկանել 'ի սիրտս մեր՝ թէ մարդկան կերպարանաց նմանիցէ այ նմանութենն . այլ ըստ նմանութեան ուծութեան , նոյնպէս և նմանութեան իւր է։

Լաւ արդ լուր , ով Թլփատեալ 'ի նոր կտակարանաց , որ ընդդէմ՝ հրեշտեղն փոխանակ՝ քրիստոնէութեան մարտնչիս։ Արդ ցո՞ արդեաւք ասաց , թէ ,, Աբրացուք մարդ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց մերոց ,, այլ յայտ է՝ թէ ցայն , որ է լայս փառաց և կերպարանք մեծութեան նորա , ասաց . որ նմանութենն է աներևոյթն այ , որ կենդանի և Հիմարիտ կերպարանք[1] Հօր . որ ասէրն թէ Լաս և Հայր իմ մի եմք , և եթէ Որ եսես զիս , եսես զՀայր իմ . զՈրդին ասէր՝ թէ ,, Աբրացուք մարդ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց մերոց ,, Արդ եթէ մի նմանութի իցէ նորա և Հօր , զիարդ իցէ՝ եթէ ոչ նմանիցէ նմա։

[1] Յօր. Երդարանոյ։

Այս ասէ, եթէ «Աստուած ասաց զմարդն», և ոչ ասէ՝ եթէ արար զնա։ Աստուդ այսու բանիւ փոխեցաւ ի բանն, որ բաղում երեսացն յայտ առնէր. զի ասելովն՝ թէ Աստուածդ, զՏէրութիւն ուղղիցէ ածցէ ի ձիշմարտութիւն, և այնու՝ թէ Աստուած, զՏէրութիւնսուրթիւնն հեռացուսցէ ի բաղում ասածոցն։ Աստուդ եցոյց զնածութիւն թէ մի է, և ետ նովիմբ հաւանութիւն զՈրդւոյ՝ եթէ ընդ Հօր էր։ Այս զի ինայեցեալ զմեզ ի կարծեաց բազմաստուածոցն՝ ասէ, «Ի պատկեր այ արար զնա»։ Այնպէս դարձեալ յայտ արար զնորհուրդն Որդւոյ, և այսու բանիւ զարարչութիւն նորա ընդ Հօր. քանզի ոչ ասէ, թէ ըստ պատկերի անձինն իւրոյ ա՛ռար զնա, այլ թէ «Ըստ պատկերի կերպարանաց այ արար զնա»։

Աստ թէ ի՞նչ մարդն պատկեր այ, և կամ թէ ի՞նչ լինել նմանութիւն արարչին իւրոյ, եթէ տացէ ասծ, յայնս որ յետոյ ձառելոց են՝ մեկնեսցուք ձեզ։ Բայց առ այժմ զայս ասացից, թէ ուստի արկեր ի միտս ամբարշտել և ասել, թէ ոչ նմանի Որդի Հօր. թէ մի նմանութիւն էն, զիարդ իցէ զի ոչ նմանիցէ։ Ո՛վ զլացողութիւնդ՝ որ եղև ի քէն առ բարեբարին քո. զի ոչ կամիս տալ զՀշմարիտ նմանութիւն իւր այնմ, որ արժանի արար զքեզ արարածդ հնորհօքն իւրովն նմանութեանն. և առ քեզ հաստատեցան կացին որ հնորհօքն քեզ պարգևեցան, իսկ Որդւոյն ոչ ո՛չ տացես զնոյն նմանութիւն՝ որ Հօրն իւրոյ է բնութիւն։

Այս արդ լուել ի ձառէս հրամայէ մեզ ժամ երեկոյին. զի և արեգակն կատարեաց զընթացս իւր ի ժամու՝ երթալ հաստատել յարևմուտս։ և մեզ պատշաձ է տալ հանգիստ բանիս, իբրու բաւական էն մեզ ոքք ձառեցանն. զի մինչև ցայս վայր ուր պարտ և պատշաձ էր մեզ ձգել՝ հասաք բանիս, առ ի զարթուցանել զնախանձ սիրոյդ ձերոյ. և այնց զոր յետ այսց ի միտ եդեալ իցէ խօսել՝ լինիցք լեալ հատուցանօղք զօրուն պարգևաց Հոգւոյն սրբոյ։ Այրթայք այսու հետև խաղաղութիւն, մանկունք եկեղեցւոյ, սիրելիք սիրելոյն Աստի, լցեալք անուշահոտ կերակրովք և զմայլեալք մեծամեծ խորտկովք, և ուրախ արասջիք զսեղանս ձեր յիշատակովք ձառիցս՝ որ պատմե-

ցան։ Այլ ամաչեսցին որք զնմանութիւն Որդւոյ բառնան ի Հօրէ, ընդ նոսին և Հրեայք՝ որ ուրանան զաստուածութիւն Հշմարիտ Որդւոյն Աստուծոյ։ Այլ ուրախ լիցին և ցնծասցին սիրտք Հշմարտից և հաւատացելոց՝ ի վարդապետութիւն Հշմարիտ ուսմանն։ Իբրեանց։ Այս ամենեքեան առ հասարակ տացուք զփառս և զպատիւս սուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և անսպառ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յոր. [illegible]։

ՎԱԽ ՃԱՆ

ԼՈՒՍ ԱՍԱ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅՈՒՆԱՍԻՄՆԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՍԱՊԵՍՏԻՍԻ

Էջ	Տող	Տրիպակոբ	Ուղղելիք
118	1	Ժաման	Ժամուն
170	1	վեցայ	վերայ

[illegible]